Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

1875

II

92

891 99.-192
И-67

554-բ

1146

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ա. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ.

ՍՈԽԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼԻԱԿԱՏԱՐ ԵՐԳԱՐԱՆ.

ԽՄԲԱԳՐԵՑ

ԱՒԱԳ ԳՐԻԳՈՐԵԱՆՑ:

ПЕЧАТЬ АЗИАТСКАГО МУЗЕУМА
SIG. MUS. ASIAT. C. A. 1818.

Քանի կ'երգէ Հայաստանին
իմ Սոխակ,
Սրտիս խորքում վառ կ'թողէ
Նա միշտ սիրո՛յ, միշտ ազգայի՛ն
յիշատակ:

Բօն-Ամի:

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ Ե.

ՀԱՏՈՐ II.

ԲԱԳՈՒ

ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ.

1875

891.99-192
Ա-67

2011-05

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ա. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ.

ՍՈԽԱԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼԻԱԿԱՏԱՐ ԵՐԳԱՐԱՆ.

ԽՄԲԱԳՐԵՑ
ԱՒԱԳ ԳՐԻԳՈՐԵԱՆՑ:

Քանի կ'երգէ Հայաստանին
իմ Սոխակ,
Սրտիս խորքում վառ կ'թողէ
Նա միշտ սիրոյ, միշտ ազգային
յիշատակ:

Բօն-Ամի:

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ Ի.

ՀԱՏՈՐ II.

ԲԱԳՈՒ
ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ.
1875

Գրաշար Ս. Տէր-Յովհաննիսեանց:

20 1 AUG 2013
73 208

Дозволено Цензурою. Тифлисъ 19 Сентября 1875 года.

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
(23752-67)
60475-67

ИЗДАНІЕ А. ГРИГОРЬЕВА.

СОЛОВЕЙ АРМЕНІИ

ПОЛНЫЙ ПѢСЕННИКЪ.

СОСТАВИЛЪ

АВАКЪ ГРИГОРЬЕВЪ.

ТРУДЪ ПЯТЫЙ

ТОМЪ 2-й

БАКУ.
ТИПОГРАФІЯ АРМ. ЧЕЛОВѢКОЛЮБИВАГО ОБЩ.
1875.

ԳԱՆՁԱԿԵՑԻ

ՄԵԾԱՊԱՏԻՒ ՊԱՐՈՆ

ՆԵՐՍԷՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

ՏԷՐ-ՆԵՐՍԻՍԵԱՆՑԻՆ

ԽՈՐԻՆ ԶԳԱՑՄՈՒՆՔՈՎ

ՆՈՒԻՐՈՒՄԷ

ԽՄԲԱԳԻՐ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉԸ:

ՄԵԾԱՊԱՏԻՒ ՊԱՐՈՆ

ՆԵՐՍԷՍ ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆՑ·

Ես դեռ «ՍՈԽԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ» I հատորը հրատարակելու ժամանակ փորձեցի, թէ որքան վսեմ գրուածքներ էին անհետացել հնութեան աւերակների տակ և աքօղուել նոցա թանձր և աւերիչ փոշու մէջ։ փորձեցի, թէ քանի՛ քանի՛ ազգային խորհրդածութիւններ, ազնիւ զգացմունքներ, հասարակաց ուղղութեան յատկանիշներ և ժողովրդական ընտիր գաղափարներ հատ ու կտոր թղթերի վերայ փտում էին միայն խաւար և մութ պահարաններում և արկղներում։ Առանց ակսիօմայի կարելի է սոցանից եզրակացնել, թէ որչափ ընտիր քերթուածներ, տաղանդաւոր մտքի ծնունդներ և ազգու գրիչների արտադրութիւններ են անհոգութեան զոհ դառնում, որոնց հետքն անգամ չէ՛ երևում։

Այս տխուր երևոյթը աչքի առաջ ունենալով, և նոյն իսկ հեղինակների յիշատակը յաւերժացնելու հայ գրականութեան մէջ, ես աշխատելու եմ նոցա հատ ու կտոր գրուածքը տպագրութեամբ նուիրել Ազգին շարունակաբար, որքան կարող եմ և որքան կներէ ինձ ժամանակը, յուսալով, որ Ազգի անհատներն ես մասնակից կլինեն իմ աշխատութեան սեղանին, ուղարկելով ինձ, թէ իրանց և թէ ուրիշների հեղինակութիւններից, որոնց ընդունելու եմ ամենաջերմ շնորհակալութեամբ։

Իսկ այժմ այդպիսի գրուածքներից մի փնջիկ պատրաստելով, ահա՛ այսօր մի նոր և աւելի շքեղ զգեստով նուիրում եմ Ձեր գեղեցիկ անուանը, յուսալով, որ կ'ընդունէք սորան 'ի նշան այն բարեկամական սիրոյ և յարգանաց, որոնց կայծը միշտ վառ պահելով,

Մնամ ձեզ յարգող և մտերիմ բարեկամ

Աւագ Գրիգորեանց:

Բաքու, 1875 Թ. 9 Յունիսի:

„ՍՈԽԱԿԻ"

ԱԹՈՒԹԱՅԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ

Արդա՛ր դատաւոր, դու հասի՛ր . . . 1
Աղջի՛կ, մի՛ գնալ գալիս եմ . . . 2
Աշխարհի միջին դու մին հատ ես . . . 3
Ադամ պապից Թոռնը ես եմ . . . 4
Աղա՛ւնի, ինչ լաւ Թռչուն ես . . . 5
Ադամն դրախտի մէջ փորձանք տեսաւ . . 7
Անցաւոր աշխարհումն մի՛ պարծենալ . . 8
Անբարբառ անխօս սենեակում նստած . . 9
Ա՛խ ջօհրաս ինձ ամուսին ե՞րբ կ'դառնար . 10
Առաւօտ լուսաբեր, քաղցրիկ արշալոյս . 12
Ազնիւ ծնունդ օրիորդ եմ 13
Այս ի՞նչ ցաւ էր . . . . —
Ա՛հ իմ քնքուշ ինձ մոռացար . . . 14
Աղջի՛կս, ինչո՞ւ ես տխրած . . . 15
Այս ի՞նչ դառն օրեր . . . 16
Այրուբէ՛ն, ա՛խ այրուբէն . . . 18
Անցեալ օրը տեսի նորան. . . 21
Արեւելեան կապուտակը բորբոքվում է . . —
Աղջի՛կ անունդ Սխիդար . . . 22
Առաջ գլուխդ դարդարի՛ր . . . 24
Ահ ու երկիւղ չունեմ սրտիս . . . 25
Ա՛յ աշխարհ, աշխարհ . . . —
Առաւօտեան կարմրաշողշող արշալոյս . . 26
Աստուածատէր մարդկանց մին հարկաւոր բան. 27
Այդ ձեր ձօն, որ պահումէք . . . 28
Ականջ դիր, խղճմտանք . . . 29
Ականջ դրէք, լա՛ւ իմացէք . . . 30

Արևելքէն արշալոյս 30
Անգործ պարապ մանուկը 31
Աստղ, որ ցոլաս դու երկնքում . . . 33
Աշնան եղանակն էր 34
Ա՛յ քաղցրիկ առաւօտ 36
Անի քաղաք գահ արքայից . . . 37
Ասումես մի՛ լար, Անի՛ . . . 39
Աստուած հայր անծին . . . 40
Աղջի՛կ սուսամբար ունեհան ես . . 42
Անկիրթ ազգ կամ Օս անուանեալ . . 43
Արի՛ քո չարդ տանեմ 44
Արի՛ իմ սիրելի, բան եմ ասում քեզ . 45
Ահա՛ Հայաստան աշխարհ աւերուած . —
Ա՛խ քու ջամալիդ մատաղ . . . 46
Աստուած զԱրքայն պահեա՛ . . . 47
Ահա՛ անշշունչ բոլորն էլ անուշ քուն իմն մտած 48
Աղջի՛կ դու սիրուն չքեղ անունով . . 49
Աշխարհ, քո տեսած մարդիկն դիփ շրջումեն. 50
Ա՛յ աղջիկ, է՞ր ես ծածկել քո երես . . 51
Արեգա՞կ ես, թէ լուսնիակ . . . 52
Ահա՛ գայ գարուն, եղանակ սիրուն . , 53
Աշխա՛րհ, աշխարհ, ո՛վ անողորմ աշխարհ . 54
Արդ ահա՛ իմ չքնաղ Արուսեակ ծաղէ . 55
Բիւլբի՛ւլ, դու էլ ինձ պէս խղուր ես տանջվում 56
Բայց թէ հիմայ լինէր ձար . . . 57
Բօյդ բարձր սալբու չինար . . . 58
Բա՛րէ քանի՞ հրաշափառ . . . 59
Բա՛ւ է ննջէք, մանկունք Հայոց . . 61
Բարձր երկնքի տակ 64
Բարեաւ եկիր դու մխիթար . . . 65
Բոլորաձև պայծառ դէմքդ . . . 66
Գարնա՛ն եղանակ, ե՛կ մի՛ թող . . 67

Գոհանակ եմ քեզանից . . . 68
Գինի իմ գինի, փրփուրիդ մատաղ . . 70
Գորովագութ մեծն Բաքոս . . . 71
Գինունի հետ քար քաշելն հեշտ է խիստ . 72
Գինունը ազէտի բանից չի ցաւի. . . —
Գեղեցիկ մի օր, շաբաթ առաւօտ . . 73
Գո՞յ արդեօք ոսկի՝ քան զքեզ խորամանկ . 74
Գինեմ, գինեմ, ախչի ջան . . . 75
Գարնանաբեր, քաղցրիկ գիշեր . . 76
Գարուն գալուց խօշս կուգայ . . 77
Դու որ ապաւէն Հայկեան սերընդոց . . 78
Դաշնակ երգոց ձայն խնդութեան. . . 80
Դու խնդրում ես, որ քեզ գովեմ. . . 81
Դրախտից արտաքսան ընկամ այս աշխարհ . —
Դէպի կռիւ պատերազմի . . . 83
Դեռ չբացուած կեանքիդ օրերը . . . 84
Դու ամբիծ կեանքի սուրբ նպատակով . 85
Ես խմած եմ, դու հարբած ես . . . 86
Ես սիրոյդ հարբածն եմ . . . . —
Երանի՛ էր վարժապետիս 87
Երկձիւղ լեզու Նրբախօս 88
Ես քո սիրոյն ամեն օր, ջան դլուլում . . —
Ես ուզումեմ շատ չ՚քնես . . . 89
Եկէ՛ք իմ սիրելի՛ հայրենի Հայեր. . . 90
Ես կուգամ Կիլիկիայէն 91
Ես Հայ եմ, Հայ կտրիճ 92
Երբ Նաւը ծովը ընկղմի . . . 93
Երեսիս զարկեց լոյսն արեգական . . —
Ե՛կ տե՛ս Ստեղծողի կարգըն . . . 94
Եարա՛բ էս խօսքերս ձեզ էլ դուր կը գա՞յ . 95
Ես մեռնումեմ, ազնիւ Հայեր . . . 96
Երկին զուարթուն, երկիր բազմախինդ . . 97
Ե՛կ ցանկալի, ազնիւ թութակ . . , 99

Երանի՜ նորան, ով որ այս աշխարհում . 100
Երանի՜ թէ քարանամ 101
Եթէ որ դարդս պատմեմ . . . . —
Երկինք անամպ, տո՛ւր վեհ կայսեր . . 102
Զարթի՛ր թմրեալ իմաստութիւն . . 106
Զարկէ՛ր, վե՛ր կաց, ի՞նչ ես քնել . . 108
Զինուորիս երգերը, եղբարք, լսեցէ՛ք . . 109
Զուր ես էդքան մտածում . . . 110
Էլ ի՞նչ յոյս խղճալուս 111
Էս դամի դովլանի, զողվու սաֆայի . . 112
Է՛յ աղալար, մեան բիր եօլա դիւշմիշամ . —
Էշխից ջունուն եմ դեռել . . . 113
Էր ժամանակը, որ սուսերս շողշողուն . 140
Ընդէ՞ր լաս, Մասիս, ընդէ՞ր լաս, Անի . . 114
Թէպէտ ամեն տեղծուած 115
Թէ խրատ էր և թէ պատիժ . . . 116
Թէ որ հասնեմ աղօթքովդ իշխանական . . 118
Թնդայ երկինք ահեղ 'ի ձայն . . 119
Թո՛ղ կորչին, գնան նոքա մեր միջից . 121
Թուխան ելաւ իր ծուխերով . . 122
Ինչ բանից ահ չի քաշես . . . —
Ի չքնաղ տիպար աղնիւ երեսաց . . 123
Ի քաջախումբ յայս փառաւոր ասպարէզ . 124
Իմ գաւառի Հայ կուսին . . . . —
Ի յինչ վիճակ, 'ի յինչ պաշտօն . . 125
Ի սուրբ խանդից սէր ցանկացեալ . . —
Ի՞նչու կանգնած, դու Հայ աղջիկ . . 127
Ի՞նչ կայ առաւել երկրի երեսին . . 128
Ի՞նչ է քաղցր այս աշխարհում . . 129
Ինձանից հեռացար սիրտս մաշելով . . —
Լի՛գայ, կեանքս մաշեցիր . . . 130
Լուսանայ ահա՛, լուսացաւ ահա՛ . . 131

Լոյս ես լուսատու 132
Լա՛ւ լսիր դու իմ կտակը . . . 133
Լաւ չի խաղում մեր թամադէն . . 134
Խաւար քօղը երեսիդ 135
Խնա՛մք արա մօտդ գայ . . . 136
Խմեցէ՛ք, եղբարք, քաղցրահամ գինի . . 137
Խանութումս լաւ գինի կայ . . . 138
Խելքիս տունը աւերեցիր . . . 141
Խնդրումեմ Ստեղծողէդ . . . 142
Խեղճ կեանքիս օրերը . . . . —
Խղճա՛ ո՛վ իմ սէր 143
Խորհրդակից իմ աղնիւ . . . 145
Խաչաձև քաշ ես արել . . . 146
Խանում ջան, մին փախտ էլիր . . 147
Կոյս մի չքնաղ, գանդրահեր . . 148
Կանխեմ ձայնել 'ի խոր քնոյդ . . —
Կորուսի զվարդատեսակն . . . 149
Կերկերեալ միշտ ողբամ . . . 150
Կոկոն քաղցրիկ, ո՛վ նազելիդ . . —
Կշտացի՛ր, ո՛վ հողեղէն . . . 151
Կոլոր չանէդ դէ՛ս արա . . . 138
Հալած արճիճ պլոր ածել բերանն . . 152
Հոգի ջան, հեզահոգի . . . 153
Հազար անգամ, յամենայն ժամ . . 154
Հայ պատանի՛ք, աշխատենք . . 156
Հուրն սիրոյ իմոյս ազգի . . . 157
Հրաշունչ վիշապաց 158
Հազար ու մէկ փշտերու . . . —
Հայուն աչքէն ալ չ'հոսէ դառն արցունք . 159
Հայաստան երկիր դրախտավայր . . —
Հայկայ ենք մենք սերունդ . . . 161
Հանգիստ իմ անուշ 162

Հնչեցին լարք գեղգեղ 'ի սուլ . . . 163
Հայաստան, Հայաստան, անուշ Հայրենիք . —
Հառաչէ', գեղգեղէ, սիրահար Սոխակ . 164
Հայոց քաջեր, Հա'յ դիւցազունք. . . —
Հայաստան, քաղցրիկ իմ Հայաստան . . 165
Հերիք ա ոխ պահար 188
Հայրենիք մեր շքեղ փառաց . . . 167
Հոգիդ Աստուած աղբիւր շնորհաց . . —
Ձեռս առի մի բաժակ 168
Ճօճանակն անխրտ 169
Մա'յր Հայաստան, զի՞ ողբաս . . . 170
Մին ուրախ բիւլբիւլ ունեմ . . 174
Մնաս բարեաւ կըհեռանամ . . . 175
Միշտ քաշումեմ կարօտդ. . . 176
Մանկութեան օրեր երազի նման . . . 177
Մի' լինիր, ո'վ բնութիւն կեանքիս դառ աճան 179
Մնացեալ կաս սէր իմ 'ի բացեայ յինէն . 180
Միակ Թագուհի, ծաղկանց նազելի . . 181
Մինչի ե՞րբ, նազելի, չարչարուեմ . . 182
Մի' տանջիր ինձ դու չարաչար . . 184
Մի անգամ ես քեզ տեսնելիս . . . 185
Յերեկ անվերջ զիս կարծէի կենդանի. . 139
Յառա՛ջ յառա՛ջ, ո'վ Հայկազունք . . 179
Յաւուր նոր տարւոյս ժամէ մեզ ահա' . 186
Յարեաւ Քրիստոս 187
Նազըդ քաշելոյ հալ չունեմ Թէպէտ. . —
Նոր կըծագէ մեզ արեւ 190
Նորատունկ ծաղկունք Բուրաստանիս . . 192
Նոր կըծակէ արշալոյս 193
Նազլո'ւ, էդպէս մի անիր 194
Նամակ, բարեւ տա'ր պ. Աւագին . . 195
Շատ մի' հպարտացիր, Անթառամ խանում . —

Շքեղաշուք մայրաքաղաք Անի իմ . . 196
Շուշանագեղ դու օրիորդ . . . 199
Շնորհաւոր լինի նորամուտ տարին . . —
Շնորհաւոր մեծ զատիկ . . . 201
Շատ դժուար է, հոգեակ ջան . . 202
Շնորհաց աղբիւր, անապառ սուրբ Հոգի . 203
Ո'վ իմ սիրականս, մատաղ քեզի ջանս . —
Ոտիդ խուզուրիցն Աստուած ազատի . . 205
Որորանում ննջումէր. . . . 207
Ո՞ւր ես Թռչում, կռունկ. . . 208
Ո'հ իմ Հայաստան, անուշիկ երկիր . . 209
Ո'վ Աստուած անմահ 211
Որպէս զմեզ և դու Տէր մեր . . . —
Ո՞ր սրտով կըյուսաս 212
Որդի' ջան, անունդ Տիգրան եմ դնում, . 213
Ո'չ մի տեղ դեռ չեմ տեսել . . . 214
Ո'վ սիրտ իմաստութեան . . . 215
Ո'վ Տէր Աստուած, լո'ւր մեր բարբառ . . 216
Ո'վ մարդ, քեզի կ'ասեմ . . . 217
Ո'վ իմ Հայրենիք . . . . . —
Ո'հ զի չքնաղ զգացմանց 'ի վառ . . 218
Ո'վ առաւօտեան դու զեփիւռ քաղցրիկ . 220
Ողջո'յն քեզ ողջո'յն. . . . 221
Ո'վ պանդուխտ պատանի. . . 222
Ո'վ խնդութիւն, հի՞մ յինէն արդ . . 223
Ողջո'յն քեզ ազնիւ Հայոց Վարդավառ. . 224
Ո'վ դու մխիթար պանդուխտ սրտերու. . 225
Ո'ր 'ի սիրելւոյս ինձ բարև չկայ . . 226
Ո'վ որ քեզ գործ է անում . . . 227
Ո'վ որ քո սիրով լինի գրաւած . . 228
Պարսկաստանէն արձակումեմ հառաչանք . 229
Սիրուններն էլ քեզ սիրով չեն նայում . 230

Սէրդ սրտումս միշտ վառ է . . . 231
Սէր անրկածին ո՛ . սխրալի սիրաբուն. . 232
Սամաւարն տարան յոտէն . . . 233
Սիրո՛ւն աղջիկ, ե՛կ իմ հետ . . . 234
Սոխա՛կ ա՛յ Սոխակ 235
Սոխա՛կ, Սոխակ ես, վարդ ո՞ր է . . 236
Սիրանունդ սրտով սիրած . . . . —
Սոխա՛կ, իմ պատգամս տա՛ր Հայաստանին . 237
«Սոխակի» երգերն երկար կարդալով . . 238
Սո՛խակ, իմ Սոխա՛կ, քաղցրախօս Թռչնակ . 239
Սոխակն զարթնել է մերկ բուրաստանում . 240
Վրդովմունք ունի աշխարհին . . . 241
Վարդ կարմիր Թշնդ ալխատակ խալը . . —
Տալով մեզի հրաժարական քո բարև . . 242
Տո՛ւր ինձ Թևեր քո մօտ Թռչեմ . . 243
Տէ՛ր, Թէ սաեղծողս դու ես . . . 244
Տո՛ւք ինձ ճերմակ ձախրապաց . . . 245
Տգէտ բամբասողները 246
Տղայ եմ ես Հայու սէր 247
Տէ՛ր, մի՛ տար դատաստան ինձ . . . 248
Տրտմեցայ ես այսօր 249
Տա՛փը կոխեմ խոյեցունց 82
Ցանկալի է ինձ, ազգասէր հերոսք . . 250
Ցնծա՛, սիրուն Հայրենիք 252
Քաղցր է մեզ համար Հայաստան աշխարհ . —
Քա՛ջ Հայոց մանկունք 253
Քա՛ջդ կոյս, ըսէ՛ ինձ 254
Քրիստոս Տէրն մեր գնաց հարսանիք . . 255
Քանտակլիչ, բայց կեանք տուող . . . —
Օ՛ն 'ի հանդէս օրհնութեան . . . 256
Օտարի բնական գիտութիւնիցը. . . 257

ՍՈԽԱԿԻՆ.

Թռի՛ր, Թռի՛ր, իմ Սոխակ
Դէպի Հայոց բուրաստանը,
Ուր կան վարդեայ Թփիկներ
Խիտ ոստերով կոկոններ:

Սուլի՛ր, սուլի՛ր քո քաղցրիկ
Երգ սիրավառ դու նոցա,
Որ քո սիրով շուտ բացուին,
Բուրեն Հայոց մշտակայ:

Դէ՛հ սլացի՛ր, սլացի՛ր
Հայոց դաշտեր ու ձորեր,
Երգի՛ր, երգի՛ր հին անցքեր-
Հայ աշխարհի-Հայրենի:

Երբ դու դառնաս, իմ Սոխակ
Հայաստանի դաշտերից,
Խնդրեմ բերես ինձ մի հատ
Վարդեայ փնջիկ յիշատակ:

Ս. Գրիգորեանց.

Ա.

1.

Հոգւով մարդն կարդայ, իրա բանն իմանայ.

Արդա՛ր դատաւոր, դու հասիր՝ ինձ անապաստան մի՛ թողիր,
Ցմարդ անձանց վըրըս թեքել՝ մինչի օրն մահուան մի՛ թողիր,
Անիրաւ դատաւորների ձեռին դատաստան մի՛ թողիր,
Սուրբ սիրով վառեալ սրտերն կարօտ ու բաժան մի՛ թողիր:

Այգեբաններս քաղցած հպարտ՝ իշխաններս անողուհաց,
Այսպիսի անհոտ վարդերն՝ գարնան ցօղը է՞ր կանեն թաց.
Փոխարկելով ձեռն հաւատի միմիայն անունն մնաց,
Փութացի՛ր, ո՛վ քաջդ հովիւ, անբաղդ ազգը ձեռաց գնաց,
Սրտի մէջ որոմ ցանողաց երկուան մէկ տան մի՛ թողիր:

Կասկածանօք հայհոյեցի, տո՛ւր իմ մեղացս թողութիւն,
Լուսաւորեա՛ սիրան իշխանաց, նա է կրկին մարդեղութիւն,
Մատթէոս սուրբ Հայրապետի այժմեան կամքին կարողութիւն,
Որ երեւի ազգի միջին օր ըստ օրէ սէր, ուղղութիւն,
Քեզ է արեւ սրտի յոյսն, դու նորան փոշիման մի՛ թողիր:

Զի մեռնողն ազգի համար, այնպէս է կարծում մահ չունի,
Շուտ գնայ այնպէս իշխանն, որ իրա ազգին շահ չունի,
Մայիմի պէս աչքերն կոյր՝ ձեռին ազգային ջահ չունի,
Կասեն թէ յայտնախօս կլլի, ով որ ոչինչից ահ չունի,
Զարկեա՛ր, լեզուդ կարճ մի՛ պահիր կամ սրտումդ բան մի՛ թողիր:

Աբրահամ Մարտիրոսեան:

Չ

Նոր եղանակի.

Աղջի՛կ մի՛ գնալ գալիս եմ, ուզած մատանիդ տալիս եմ,
Դու արդար ես, ես մեղաւոր, դու խնդումես, ես լալիս եմ:

Օրիս նման զլփիդ սեն, ձեռք եմ քցում քո աջ թեն,
Սիրես եղբօրդ արեն, աղջի՛կ մի՛ գնալ գալիս եմ,
Ուզած մատանիդ տալիս եմ:

Կամք ես տալի միայն թերի, ապա աստմես համբերի,
Ջօվղ չեն անիլ անընկերի, աղջիկ մի՛ գնալ գալիս եմ,
Ուզած մատանիդ տալիս եմ:

Ինձ մօտ ունիս մի մատանի, ամենայն ժամ ինձ պիտանի,
Ո՞վ պիտի վարդեդ հոտ անի, աղջի՛կ մի՛ գնալ գալիս եմ,
Սրտիդ ուզածն տալիս եմ,

Ների՛ր եթէ յանցաւոր եմ, սև երես եմ պարտաւոր եմ,
Ջօվղի մէջ քեզ հարկաւոր եմ, աղջի՛կ մի՛ գնալ գալիս եմ,
Սրտիդ ուզածն տալիս եմ:

Մինչի ես չի լինեմ սաղի, չի կարդիլ բուլբուլն բաղի,
Բաս գուլաբդ ո՞վ կուշաղի, աղջի՛կ մի՛ գնալ գալիս եմ,
Սրտիդ ուզածն տալիս եմ:

Հաստատ սիրողը խաբ չի տալ, ամենի խելքն թափ չի տալ,
Մէկ ձեռն երբէք ծափ չի տալ, աղջիկ մի՛ գնալ գալիս եմ,
Ուզած մատանիդ տալիս եմ:

Թէ թուֆանկ է գնտակ պիտի, թէ մատանի է ակն պիտի,
Եթէ զանկ է լեզուակ պիտի, աղջի՛կ մի՛ գնալ գալիս եմ,
Սրտիդ ուզածն տալիս եմ:

Ջի տանես Մայիֆին հետդ, կու դառնայ քո վարդապետդ,
Ջարկեարն է հմուտ վարպետդ, աղջ՛իկ մի՛ գնալ գալիս եմ:
Ուզած մատանիդ տալիս եմ:

Աբրահամ մարտիրոսեան:

Յ.

Մուխամմազ:

՚ի հանդէպ «Աստմես դիմացիր»:

Աշխարհի միջին դու մէկ հատ ես, իմ նոր ծաղիկս,
Հոտով մանիշակս.
Զրկայ նրմանդ ողջ Հայաստան, ո՛վ օրինակս,
Բացուած արեգակս:
Քո արժողութիւնն ես գիտեմ, թանկագին ակս,
Լուսով լուսնեակս:

Նախշուն կաքաւ ես, խելքս է տանում ամեն խօսաղդ,
Եւ նազով մանգաղդ,
Ամեն տեսնելիս կու հարցանեմ քո խոշ ահվաղդ,
Ցեանեմ ծիծաղաղդ,
Որ քեզանից ես էլ լիանամ, առնեմ փափաղս,
Քաղցր աղունակս:

Նոր բացված վարդ ես, ես քեզանից հարկէ հոտ քաշեմ,
Եւ զոյնիդ թամաշեմ,
Եթէ հեռանաս դու ինձանից, ջանըս կումաշեմ,
Ինձ կրակով կու խաշեմ,
Պատճառ, քեզանով է անցնում իմ ժամանակըս,
Գարչին ու մեխակս:

Ամենակարողն պարգևեց քեզ ինձ համար,
Պսուղ ես նոր նուբար.

Ուրախանամ ես էլ քեզանով միշտ և մաղարար,
Եւ ինձ լինի ղարար,
Որ չի կորչի 'ի զուր տեղը իմ աշխատանքըս,
Մնայ' յիշատակս:

Յուսով խնդրում եմ, ե'կ հոռ քաշեմ էգ մարջանից,
Կոլիկ չանից.
Ինչ կամենումես դու պահանջի Շամչի-բալից,
Կարօտ եմ խալից
Փափաղս մի' թողալ ինձ քեզանից, հո'գուս ճրագս,
Ո'վ վարդի տեսակս:

Յովակիմ Շիմշիրխանեանց:

4.

Մի' փախչիլ աշխարհից, մեղք չի ծնիլ քարից.

Ադամ պապիս թոռնը ես եմ, ո'չ թէ սարի ճգնաւորըն,
Նման չի լինի բէջ կասեն' ով որ իրա հօրն ու մօրըն:

Պապս 'ի սէրն Եւայի ցանկալի դրախտն ծախաւ,
Բունաւ խանումի կուռնիցն կանանչ թուզի տակն փախաւ,
Թէպէտ նա յետ մեղանչելոյն ա'խ քաշաւ և ախուչն մնաւ,
Զարմանք չէ որ' կամ գործում է կամ փոշիմանում յանցաւորն:

Սկիզբ մեղքն աշխարհ անկաւ, կամէն թէ նորանից ջուխտից,
Եվ Ադամ չէր զանդատում, իրա անվայել բաղդից,
Քաշան վշտերթին տալով մերկ դուրս արին դրախտից,
Մարդ ու կին խելք խելքի տուին, յօրինեցին հացն ու շորն:

Մէկ մարդոյ պապըն որ լինի մէկ Եւայի ձեռին գերի,
Այժմ Եւայք բազմացել են, նորանից թոռն ո'նց համբերի,
Պալին ներող ողորմածն, պէտի որ թոռանցն էլ ների,
Ուզում է անմեղ երևալ քարի մէջի կեղծաւորն:

Ինչո՞ւ ես փախչում աշխարհից, ճգնութիւն անում մահանայ,
Թէ լաւ մարդ ես' տես, համբերի'ր, տանեմ խղճմտանքդ տանայ,
Կորեկի հացըն չես սիրում, ուզումես ուտես մանանայ,
Աշխարհումն տանել չես կարալ երանութիւնն մարմնաւոր:

Ի մէջ կրպտախօսութեանն' բանիր շատ կան միտքըն բարակ,
Ջէն ասիլ թէ պաս եմ պահում, որտեղ չ'լինի միս կամ կարագ,
Անհամբեր ես աշխարհի մէջ, փախումես լինես խայտառակ,
Բընութիւնըդ մէկ ցած ցաւ է, քեզ ձգելա սարն ու ձորըն:

Դու վարդապետ ես, ես ռամիկ, դու սարումն ես' ես աշխարհում
Ղայբ ընկեր ես, որ փախել ես, քեզ տեղ էլ ինձ են չարչարում,
Եթէ որբակաց էլ լինես, ես քեզի մարդ չեմ համարում,
Ջեռըս ընկնես կուշտ կ'ծեծեմ քեզի Յուդայ ուրբաթ օրըն:

Զարկե'ար, քո անդադար լեզուդ' մարմնոյդ դաւաճան իմացիր,
Ծածկեալըն յայտնի չեն խօսիլ, բանի միջից բան իմացիր,
Մայիթին մի' տար նեղութիւն, մարդոյ տարիճան իմացիր,
Իր խոստմանն հաստատ պէտի ամեն բանի ուխտաւորըն:

Աբրահամ Մարտիրոսեան:

5.

Խօսակցութիւն մարդոյ ընդ աղաւնոյ

Աղա'ւնի, ի՞նչ լաւ թռչուն ես, մին արու ես մին էգ ունես,
Նա քեզ է սիրում դու նորան, էլ ուրիշ հոգս չունես,

Դու որբոյ հոգուոյն նման ես, քննողի համար մեծ բան ես,
Եթէ ընկերդ մեռանի, դու բոլոր տարի սուգ կանես:

Ուզումեմ քեզ ասեմ ցաւս, ինձ դաղել ա իմ էգ հաւս,
Ես մէկին սիրահարուած եմ, օրն մին է հինգ է դաւս:

Աւաշուց ինքն սիրել ա, ձեռքս իլածն կերել ա.
Չիմիկ, որ ես զարդակուել եմ, սէրը սրտիցն քերել ա:

Առաջ կասէր, իմն դու ես, առանց քեզ կլինեմ բու ես,
Ես քեզանով եմ կենդանի, դու ինձ համար կենսատու ես,

Առանց քեզ օրս չ'լինի, դուստրն հօրս չ'լինի,
Քեզ ունենամ թո'ղ մուրանամ, հագնելու շորս չ'լինի:

Այս տեսակի ինձ խաբեց, ինչ ունէի առաւ լափեց,
Աղքատանալըս հասկացաւ, ղուրդ ղուրանին գլխիս թափեց:

Մի՜ն օր ասաւ ի՞նչ կեղտոտ ես, անքան ու անձեռն ու ոտ ես,
Վախումեմ փոխուեմ քեզանից, ասումեն դու փիս քոստ ես:

Դու ծեր ես, ես մատղաշ ջահիլ, ինչո՞վ պիտեմ սիրտս շահիլ,
Տեմնումեմ բանդ պակաս է, դու չես կարալ ինձի պահիլ:

Նայում էր երեսից ծուռն, ասելով չի գաս այս դուռն,
Եթէ ո'չ կանեմ խայտառակ, վրադ կու դնեմ արուռն:

Աստ, սիրական, երա՞զ է, դուցէ սաէլ մին ջոկ նազ է,
Սիրահարիդ ի՞նչ ես ասում, ճշմարի՞տ է՝ թէ տնա՞զ է:

Անցեալ տարումն սերացայ, մի՞թէ այդպէս շուտ ծերացայ,
Ծոցումդ պահածն ես եմ, կեղտոտներին ընկերացա՞յ:

Զուրկ պահեցի իմ խիղանն, լքցըրի նորանց ղազանն,
Վերջն տուեց ինձ դուրս քցաւ, ինչպէս տանից չար գազանն:

Իմ առածներս հաղնումէ, մին վիզը հաստի պագնումէ,
Աչքի թշնամին եմ դառել, ինձ տեսնելուց թագնումէ:

Աղաւնին ասաւ, ո'վ յիմար, տավար ես ո'չ թէ սիրահար,
Նա մին անտակ ծով է, նաւեր է պաթմիշել հազար:

Մի՞թէ լերըն քեզ սիրող է, նորա կարօտանքն փող է,
Ածելին սրած ծոցումն, օրն մի գլուխ սափրող է:

Այն օրն Մայիֆից թագուն, գնացել էր մտել փաքուն,
Մարմնոյ բաժինն կերել ես, հիմիկ ձեռւ ես ձգել հոգւոյն:

Զարկեար, տեսել ես քէչ ու շատ, խրատուել ես դու մին կիտատ,
Եթէ հաւատամ քարանամ, սեւին սապոն խւեն խրատ:

Աբրահամ Մարտիրոսեան:

Ե.

Առացեալ 'ի վերայ չար կանանց:

Ադամն դրախտի մէջ՝ փորձանք տեսաւ վատ կնկանից,
Աբրահամն հրեշտակից յամօթ քաշաւ շատ կնկանից:

Յակոբայ ազգին չէին յԵգիպտոսի մէջ չարչարել,
Յովսէփին չար նիւթ կպաւ՝ մի ձեռը առատ կնկանից:

Սողոմօն իմաստութեամբ յաղթաւ բոլոր գնդին դիւաց,
Փչացաւ անյիշատակ՝ առնելով խրատ կնկանից:

Դաւիթն մարգարէ էր անմեղ՝ նա էլ արիւն թափեց,
Սաղմոսի եզերի մէջ խօսումէ գանգատ կնկանից:

Յովհաննէս մկրտիչն ընդուր կերաւ մեղր ու մարախ,
Փախել էր աշխարհիցն, վախումէր հաստատ կնկանից:

Ով կամի կանանց ծածուկ արարմանցն ծանօթ լինել,
Թո'ղ նա իւր կնոջ մասին, հարցմունք անի եադ կնկանից:

Զի խառնուիլ եղանակ Փրթունէն չի լինել անքամի,
Զի պատահիլ դառնութիւն, որ չիլինի արմատ կնկանից:

Մայիֆն թէ հաւասի կանանց, նա էլ սխալուած է,
Քանի մարդկանց տեսել է տունները բարբադ կնկանից:

Զարկեարն որտեղ տեսաւ, որ կանանցից լաւ են խօսում,
Նա կասի դա'տ կնկանից, դա'տ կնկանից, դա'տ կնկանից:

Աբրահամ Մարտիրոսեան:

Է.

Մուխամմաղ անցաւոր աշխարհի վերայ.

Անցաւոր աշխարհումն մի՛ պարծենալ, մարդ հողածին,
Աւելի քեզ եմ ասում՝ Թուլամարմին մարդ կողածին,
Ըստ որում սուտ չի ասած՝ որքան մարդս երկար մնայ,
Իւր ժողոված գանձից զրկուած՝ մերկ եկել է մերկ կ'գնայ:

Շրջումենք շուքի պէս՝ մեզ անվերջ հաստատ ենք կարծում,
Թողել ենք անանց կեանքը՝ անցաւորով ենք զուր պարծում,
Մէկս միւսի հոր փորելով՝ մեզ վերայ մեղքեր ենք բարձում,
Չենք ասում պիտի մեռնենք՝ հրամանաւ Նախաստածին:

Տանջանաց տեղի կ'տանք Աստուածանման սուրբ պատկերին,
Եթէ որ յօժար կամօք, չի անարգենք զարշ մեղքերին,
Հարկաւոր է մեք բերել, Ճգնազգեաց անմեղ սրբերին,
Որ ինքեանք չարչարուելով՝ մեզ համար Ճանապարհ բացին:

Անունով անթիւ գանձիւ՝ և պատուով լի՛ չենք բաւական,
Ասումենք չափ չ'ունենանք՝ նստենք յաթոռ արքայական,
Մէկ խօսքով ագահութիւնն՝ արել ենք մեզ պարտ սեպհական,
Չենք կարծում ծառի մօտն՝ պատրաստ է մահուան կացին:

Բարուն զառնամք չէ պատիւ՝ արդարութիւն է պահանջում,
Տէրունական քաղցր բանը՝ պէտք է որ պահենք ականջում,
„Եկէ՛ք մօտս իմ հաճելիք" Աստուծոյ բերանն է կանչում,
Ըստ որում արժանի էք՝ յաւուհեան կենաց հացին:

Աշխարհի ունայնութեանն՝ թո՛ղ Հայ ազգը յոյս չ'ունենայ,
Եդեմական Ցաղին թողած՝ այս կեանքումն բոյս չ'ունենայ,
Անբաղդ ոսկին ու արծաթը՝ իրան խրախոյս չ'ունենայ,
Քաղցրութեամբ ականջ դնի Աւետարանի ասածին:

Կենաց կարճ շրջանումը, որքան մարդս հարատանայ,
Նորա հետ անստանելի ծանրաբեռն ցաւ կ'ստանայ,

Կ'թողայ Աստուած հոգին, ի՞նչ կասի թէ Հայաստան աս,
Վերջումն արժան կ'լինի՝ տարտարոսի վայ ու լացին:

Ցաւալը հարկաւոր է՝ մեր խղճալի հոգւոյ համար,
Ազքատին ողորմելով՝ յանցանքներս լանք անդադար,
Քանի որ ժամանակ է՝ արդարանանք լիակատար,
Կատարենք փրկչի բանը՝ ջախջախելով գլուխ օձին:

Ի՞նչ ասեմ, Հայոց զաւակ՝ դու աւելի պիտի լսես,
Քարացած սրտիդ միջն՝ կայլ. նման պիտի կասես,
Չլինի մտքդ փոխուի „'իզուր զատարկ բանէս" ասես,
Մարմինդ շատ փափուկ է՝ չես դիմանալ բորբոք բոցին:

Աշտարակեցի Խաչիկ:

Ը.

Երևակայութիւն Հայ երիտասարդի.

«Ակնապիշ անձայն» երգի եղանակով.

Անբարբառ անխօս սենեակում նստած,
Պատանի ո՞ւր ես մտքով մոլորած,
Հին ու նոր գրեանք առջևիդ փռած,
Որը ձեռագիր և որը տպած:

Տեսայ խոր մտքով շատ ես զբաղուած,
Զանձրութեան կէտեր դէմքիդ նկարուած,
Գիշեր ու ցերեկ գրիչդ ձեռիդ,
Շարժելով քանի՞ յայտնես ցաւ սրտիդ:

Գրչիդ բնադիրն է Հայ ու Հայաստան,
Որոց կ'յուսաս ցաւոց դեղ, դարման,
Անյոյս տարակոյս քանի՞ կաս մնաս,
Քանի՞ դադարած լռիկ մրմնջաս:

Յստակ տպանիք քո լաւմուտի,
Դարձան քեզ ձրագ շողշողուն լուսնի,
Բայց քո միտք, հոգի դեռ ես կխաշունչ,
Աշտղան կարդան ձայնիւ սրտառուչ:

Շուտով յո՛ւն կաց, լուսամուտդ բա՛ց,
Կանչէ՛ր Թափառումն Հայի զաւակաց,
Դառնայ Թո՛ղ շուտով սեննակդ պրտմութեան,
Աղքատիկ մանկանց նորբաց վարժարան:

Թո՛ղ ծծեն ուսման պտղակալ ատինք,
Ու ծաղկին նաև անուէր Հայկածինք,
Գոհութիւն առնինք, որ և յայս պատճառ,
Կայ կայսրն Ռուսաց և մեր վեհափառ:

Սարգիս Փիլոյեանց:

Գ.

Թանէ սալաս.

«Հոռոմսիմիս սազ ունենամ» երգի եղանակով.

Ա՛խ Ջօհրաս ինձ ամուսին
Ե՞րբ կ՚դառնար, որ միասին
Ուտենք անուշ Թանէ սալաս,
Քէֆեր ու քէֆեր.
Ջօհրաս դար ինձ Թանէ սալաս
Էփէր ու էփէր
Քէֆեր ու քէֆեր:

Իմ Ջօհրայիս սազ ունենամ
Առատ հաց ու աղ ունենամ,
Կերակուրներս չաղ ունենամ
Քէֆ է ու քէֆ է.

Իմ Ջօհրաս էլ միշտ Թանէ սալաս
Էփէ ու էփէ,
Քէֆ է ու քէֆ է:

Ջօհրաս ժողվի աշակերտներ,
Դաս տայ նոցա այբբեններ,
Քոռնայ դուշմանիս աչքեր,
Քէֆ է ու քէֆ է.

Դուն էլ, Ջօհրաս ջան, միշտ Թանէ սալաս
Էփէ՛ ու էփէ՛,
Քէֆ է ու քէֆ է:

Գինին կածենք բաժակի մէջ,
Ու կ՚ցնծանք ճաշակի մէջ,
Պարկենք մանիշակ մէջ,
Քէֆ է ու քէֆ է.

Ջօհրաս էլ միշտ Թանէ սալաս
Էփէ՛ ու էփէ՛,
Քէֆ է ու քէֆ է:

Ծխաքարշիս ծուխը հանեմ,
Դուշմանիս քթից մուխը հանեմ,
Ու Ջօհրայիս շուխը հանեմ,
Քէֆ է ու քէֆ է.

Դուն էլ, Ջօհրաս, Թանէ սալաս
Էփէ՛ ու էփէ՛
Քէֆ է ու քէֆ է:

Ուրախ մնամ մինչև 'ի մահ,
Մինչ հրեշտակս դէպ' ինձ կ'գայ,
Կ'ասեմ արի', սիրուն հրեշտակ,
Այսօր ես քեզ հրաւիրակ,

Մին տեղ ուտենք թանէ սպաս,
Հոգիս հանեն առնեն գնաս,

Հոգիս հանի երբ,
Ին ժամանակ էլ ի՞նչ քէֆ,
Ո՛չ Ջօհրա կայ ո՛չ սպաս,
Մարմինս մնաց սպասին սպաս:

Սարգիս Փիլոյեանց:

10.

Սուրբ խաչի աղօթք,

«Հայրենիք սրբազան» երգի եղանակով.

Առաւօտ լուսաբեր, քաղցրիկ Արշալոյս,
Ծագեա՛ քո աշխոյժ լոյս իմ թշուառ հոգւոյս,
Դու Աստուած արարող երկնի և երկրի,
Որ վասն մեր ելեր ՚ի վերայ խաչի:

Կարկառեա՛ քո սուրբ աջ՝ յառաջ առ յառաջ,
կորել գձայն ողբոց և սրտիս թառաչ,
Սրբել դառն արտասուք յիմ թացեալ աչաց,
Առ այս վախճան կարդամ, Արարիչ Աստուած:

Լինել ճար անճարիս յոյս տալ թշուառիս,
Լինել նեցուկ սրտիս, դառնալ աղէտիս,
Փութա՛ օ՛ն ՚ի խաչէդ, բառնալ զիս ՚ի յուս
Զմոլորեալ ոչխարս, քաջ հովիւ Յիսուս:

Սարգիս Փիլոյեանց:

11.

Օրիորդ կուսի խղճը.

«Գիշեր ցերեկ կ՚հառաչեմ» երգի եղանակով.

Ազնիւ ծնունդ օրիորդ եմ, թուխ աչքերով սև ունքով,
կարմիր այտով, բարակ մէջքով, նոճեայ ծաղիկ հասակով,
կամաց կամաց մեծացայ, եղէ տասնուհինգ ամեայ,
Յստակ մաքուր կերպարանքով, մատղաշ սիրուն և աչեայ:

Ես չեմ ուզի պատանեկաց՝ լինել տիկին ընդունայն,
Որոնք յաւէտ զուր կ՚սիրեն ոսկի, արծաթ փող ունայն
Թէ պատանին լինի չքնաղ և աչքերով սևորակ,
Թո՛ղ չ՚կարծի ինձի պէսին առնել իրեն հպատակ:

Իմ ամուսինս պէտք է լինի ուսումնական ազգասէր,
Արի, հսկայ, ձիս փառացի, սրտալինդ և գանգրահեր,
Թագաւորի հաւատարիմ, յօժարակամ անձնատուր,
Ջախջախենայ թշնամեաց դէմ, ձեռքին բռնած ահեղ սուր:

Այնպիսին ես մատաղ լինիմ, կեցցէ՛ այնպէս պատանին
Գիշեր ցերեկ սուրբ Սարգիսը կանգնի նորա քամակին,
Իմածին զաւակը պիտի լինիմ ուսուցիչ,
Որ սովորին լինել յաւէտ թշնամեացը հալածիչ:

Սարգիս Փիլոյեանց:

12.

Յուսակտուր պատանին.

«Տանկերէն Բօղղունի» եղանակով.

Այս ի՞նչ ցաւ էր եկան գլխիս պատեցին,
Աւա՜ղ ձեռքէս իմ սիրուհիս խլեցին:

Սիրտս օդը ինչո՞ւ այսպէս ցրուեցին,
Աւա՛ղ ձեռքէս իմ սիրուհիս խլեցին:

Դէմն իմ յուսոյս ցրուեցաւ ահն ի՞նչ անի,
Մեռած անթաղ դի մարմնոյս մահն ի՞նչ անի,
Սրտով գերի ադքատիս գահն ի՞նչ անի,
Աւա՛ղ ձեռքէս իմ սիրուհիս խլեցին:

Ո՞ր ցաւս լամ, առողջութեան ճար չ՚կայ
Ինձպէս անբաղդ բնաւին յաշխարհ չ՚կայ,
Ցաւս երգելու իմ քնարիս լար չ՚կայ,
Աւա՛ղ ձեռքէս իմ սիրուհիս խլեցին:

Հիւանդ մարմնով իբրև թշուառ պատանի,
Եկած էի սիրուհւոյս տունն աղցանի,
Ցանկարծ եկաւ մի մարդ նման սատանի,
Աւա՛ղ ձեռքէս իմ սիրուհիս խլեցին:

Թունդ սիրտ Մուխսին, նոր եկ էլչին տուն եկաւ,
Հէնց իմացայ, թէ մէկ մաղտ շուն եկաւ,
Վա՛յ տայի աչքիս մահուան քուն եկաւ,
Աւա՛ղ ձեռքէս իմ սիրուհիս խլեցին:

Սատանի պէս ջիբէն հանեց մատանին,
Տուեց թաղայ խնամի Ն..........ին.
Իմ սիրուհւոյս ահա՛ այսպէս նշանին,
Աւա՛ղ ձեռքէս իմ սիրուհիս խլեցին:

Սարգիս Փիլոյեանց:

13.

Անակնկալ հրաժարումն....

Ա՛հ իմ քնքոյշ ինձ մոռացար,
Իմ կեանքը ի՞նչ կ՚լինի,

Այսուհետև թո՛ղ ինձ համար,
Արևին լոյս խաւարի:

Թողնելով ինձ անմխիթար,
Սէ՛ր իմ դու ո՞ւր կ՚դիմես,
Ա՛հ որոշմունքդ է անարդար
Ես կ՚մեռնեմ առանց քեզ:

Երա՞զ է այս, որ կ՚տեսնեմ,
Եթէ ցնորք խօլական,
Ուշքս կ՚երթայ.... և ես ո՞ւր եմ,
Ո՛հ ցաւալի՛ տեսարան:

Քաղցրահայեաց քո թուխ աչեր,
Ալ չ՚պիտի երևնայ,
Կ՚մտածես արդեօ՛ք ի՞նչ էր,
Բայց չես խղճար իմ վերայ

Կ՚երթաս այո՛ թևթև ընթաց,
Եւ ինձ դու ո՛հ կ՚թողուս,
Այս ինչ վճիռ..ո՛վ իմ Աստուած,
Կ՚կորնչիմ ես անյոյս:

Սմբատ Միսակեանց:

14.

Մանկական լեզու.

Մոր խօսակցութիւն իւր փոքրիկ աղջկայ հետ.

ՄԱՅՐՆ.	ԱՂՋԻԿՆ
Ա՛ղջիկս ինչո՞ւ ես տխրած,	Ի՞նչ աշեմ քեժ, մայրիկ ջան,
Ձեռքդ այդպէս ծոց դրած,	Ախալ ինչի՞ չէ կաւ այն,
Քո այդ նախշուն աչերէն,	Որ պիտի ինձ դիւք բէրէր,
Է՞ր են արտօսր թափած:	Կալթայի ես վալժաստան:

ՄԱՅՐՆ·

Հա՛ աղջիկս հերդ գար,
Որ գիրք բերեր քեզ համար,
Վնաս չունի, աղջիկս,
Շուտով կ'գայ դու մի' լար:

ԱՂՋԻԿՆ·

Իմ հէլն իմ հէլն, մայրիկ ջան,
Թո՛ղ գայ բերի գիրքն այն,
Կ'համբերեմ էլ չեմ լայ,
Բայց ո՞ւր է նա, որ գայ տայ:

ՄԱՅՐՆ·

Աղջի՛կս իմ նազելի,
Հոգւոյս հատոր սիրելի,
Դու սիրումե՞ս կարդալը,
Որ կաս այդ պէս սիրով լի:

ԱՂՋԻԿՆ·

Ա՛խ, մայրիկ ջան, ի՞նչ պէս չէ՛,
Մի՛թէ քեզի զարմանք է,
Ախալ խալխի աղջիկնել,
Դիփ զաւել են փիլաւփէ:

ՄԱՅՐՆ·

Աղջի՛կս աղջիկս սխալ ես,
Դու կարդալը ի՞նչ անես,
Սովրի գործել ոսկէ թել,
Կարդալ գրելն ի՞նչ անես:

ԱՂՋԻԿՆ·

Ես սխալ չեմ, մայրի՛կ ջան,
Դէ՛ ուրիշնել թո՛ղ կալթան,
Կալթան զալնան իմաստուն,
Իմ վերայ թո՛ղ ծիծաղան,

ՄԱՅՐՆ·

Չէ, աղջիկս, էդ պէս չէ՛,
Նրանց ծիծաղըն ի՞նչ է,
Դու սովրի գործ անել,
Քեզ կարդալը պէտքը չէ:

ԱՂՋԻԿՆ.

Լաւ ես ասում, մայրիկ ջան
Թո՛ղ ուլիշնելը կալթան,
Ես կ'սովրեմ գործ անել,
Ու քու խօսքէն ջալաշ գան,

Սարգիս Փիլոյեանց:

15·

Հարբող մարդու կնոջ երգը·

Այս ի՞նչ դառն օրեր, ի՞նչ տխուր ժամեր,
Անց եմ կացնում ես անբաղդ կինս,

Ի՞նչ անտանելի դառն տանջանքներ,
Տալիս է ինձ իմ չար ամուսինս:

Երեխաներս մի հագուստ չունին,
Ամբողջ օրերով քաղծած են լինում,
Մինչդեռ նա հանգիստ, գինին առաջին
Գինետներում քէֆեր է անում:

Ձմեռն է գալիս ամենայն անհատ,
Գնած է լինում իւր պէտքերը,
Մենք չենք ունենում ո՛չ ածուխ, ոչ փայտ,
Դողալով անցնումենք մենք ցուրտ օրերը:

Տօներ են գալիս, ամենայն տանում,
Կերպ կերպ խորտիկներ եփած են լինում,
Բայց իմ որդիքներն զոցանից զուրկ են,
Մի ճաթիկ հացն է մեր խորտիկներն:

Իմ դժբաղդութեանց արդեօ՞ք որն ասեմ,
Կամ որն խնդրեմ մի ճար մարդկանցից,
Ծաղիկ հասակում ես զրկուած եմ,
Աշխարհի ամեն վայելչութիւնից:

Այս տարաբաղդ կեանքիս օրերը,
Լալով ողբալով ես անց եմ կացնում,
Բայց ես լռումեմ, իմ արտասունքները
Բացի Տիրոջից՝ ո՛չ ոք չի տեսնում,

Միայն նա է լսում իմ լացս,
Միմիայն նա է տեղեակ իմ ցաւերիս,
Գուցէ նա խղճայ անմեղ մանկանցս
Եւ վերջ պարգեւէ իմ այս վշտերիս:

Գաբրիէլ Ծաղիկեանց.

60475.67
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им А. Мясникяна

13.

Ունակութիւն այբուբենի

Այբո՛ւբէն, ա՛խ, այբո՛ւբէն,
Քու անմոռաց յիշատակ,
Սիրտս ու հոգիս կու մաշին,
Դարձած քեզի նահատակ:

Երբ մտայ ես այս աշխարհ,
Առի զգուանք մայրական,
Ազատ մնունդ ազատ օր,
Վայելեցի անպայման:

Մինչ քաղցր օրեր եօթնամեայ,
Ազատ արձակ անցուցի,
Տխուր արցունք իմ աչքից,
Երբեք ես ո՛չ ցօղեցի:

Այն ինչ հասի Այբուբէն,
Եօթնամեայ հասակիս,
Անունդ լսելու ականջիս,
Պղտորվեցաւ իմ հոգիս:

Խնդքս թռաւ, միտքս կորաւ,
Աչքիս լոյսը քաղվեցաւ,
Ձեռ ու ոտս դող ընկաւ,
Սիրտս փորս սարսեցաւ:

Ա՛խ, անի՛րաւ Այբուբէն,
Սիրտս ի՞նչ ես կոտրատում,
Անողո՛րմ դու անօրէ՛ն,
Իմ ջանից ի՞նչ ես ուզում:

Խաղից, բուրթուց, վէգ ու չիլլից,
Զրկեցիր ինձ թափառուն,
Քաշար, տարար անգթաբար,
Էն անիծած վարժատուն:

Վէգ ու գնդակ, չիլլիի տեղ,
Այբո՛ւբէն քեզ ձեռք առայ,
Խաղ ու ազատ պարզալու տեղ,
Ծեծ ու քեօթակ տարայ:

Ա՛յ անիրաւ Այբուբէն,
Ցաւս շատ էր կրկնեցիր,
Իմ սևորակ աչերից,
Որքան արցունք թափեցիր:

Քեզնէ փախայ շատ անգամ,
Բայց չպրծայ քո ձեռքից,
Անթիւ արիւն կաթեցին,
Փափուկ ազնիւ իմ սրտից:

Էլ աւելի ճար չ՛մնաց,
Անիրա՛ւ ինձ յաղթեցիր,
Կամաց կամաց համոզելով,
Ինձ քեզ ծառայ դարձուցիր:

Կամաց կամաց համտ առայ,
Քանի գնաց քաղցրացար,
Որ երբեմն թշնամի,
Այժմ ծանօթ ինձ դարձար:

Ունայն խաղից, զուր գործքերից,
Զարից ինձի պահեցիր,
Անկրթութիւնս, կոպտութիւնս,
Քաղցրութիւնով կրթեցիր:

„Ուսումն“ բառը, որ երբեմն,
Էր ինձի շատ զզուելի,
Այժմ անոյշ, քաղցր աղնիւ,
Սրտիս միակ ցանկալի:

Ա՛յբուբէն, ջան քո պտուղը,
Սրտիս մէջը շատ քաղցր է,
Ազնուութիւնդ որքան գովեմ,
Որքան պատուեմ արժան է:

Նոր իմացայ, հասկացայ,
Թէ քո արմատդ դառն է,
Բայց պտուղներդ համանոյշ,
Իբրև մեղու խորխիս է:

Ների՛ր ինձ, Այբուբէն,
Այբուբէն, ջան Այբուբէն,
Թէպէտ քեզ ընդդիմացայ,
Բայց զղջացի, Այբուբէն:

Աստուածն հանուրց Արարիչ,
Խնդրեմ երկնից քեզ օրհնէ,
Որ քո անուն քո զօրութիւն,
Ամեն տեղեր տարածուէ:

Խնդա՛ հայկածին զաւակներ,
Որոնք զրկուած քո անունից,
Գիւղերանքում կ'թափառին,
Անտեղեակ քո համբաւից:

Այբուբէն, ջան շու՛տ արա,
Գնա՛ մտի՛ր նոցա մէջ,
Որ ճանաչեն իւրեանց մայր,
Նորա համար թափին քիրտ:

Սարգիս Փիլոյեանց:

16.

Անցեալ օրը տեսի նորան,
Որ այգւոյ մէջ կ'զբօսնէր,
Թուխ մազերը թաւիշանման,
Թիկանց վերայ կ'օրօրուէր:

Ամօթից նա կարմրեցաւ,
Երբ որ նայեց իմ վերայ,
Թռչունի պէս շուտ մը անցաւ,
Թէ ո՞ւր գնաց՝ չ'տեսայ:

Դարձեալ տեսի միւս անգամ,
Առաջուանից շատ տարբեր,
Հեռու կանգնած և իմ վերայ,
Տխուր դէմքով կ'նայէր:

Ա՛հ ի՞նչ անեմ, մտածում էր,
Զգիտեմ թէ՝ ում համար:
Արտասուաց սուրբ կաթիլներ,
Կ'գլորէր իմ խոնարհ:

Սմբատ Սիսակեանց:

17.

Սիրահար.

Արևելեան կապուտակը բորբոքվումէ բոցավառ,
Ոսկի ճաճանչ արեգակը փայլեցնումէ դաշտ անտառ,
Քաղցր զեփիւռն շնչելով դաշտերումը փառահեղ,
Տարածումէ անուշահոտ ծաղկանց բուրմունքն ամեն տեղ:

Գեղածիծաղ հովիտները շողշողումեն ծաղկազարդ,
Նոցա չքնաղ տեսարանով կախարդվումէ ամեն տեղ,
Նոցա միջին թռչունները ուրախ ուրախ երգելով,
Ողջունումեն առաւօտեան ճաճանչներին մեծ սիրով:

Տերևների սօսափիւնը լսվումէ իմ առաջը,
Յետի կողմիս հնչրումէ առուակների կարկաչը,
Ահա՛ քնքուշ սոխակը և թաւ անտառի թփոց տակին,
Իւր հրաշալի երգն սկսեց հնչեցնել մեղմագին։

Ո՛հ, ո՛հ զարնան առաւօտը, ինչպէս սիրո՛ւն է լինում,
Ամենայն ինչ սրտիս կարծես, երջանկութիւն է ազդում,
Բայց այս ինչո՞ւ իմ աչերից արտասուքը հօսումէ,
Ինչո՞ւ սիրտս կարատվումէ, երբ սոխակը խօսումէ,

Ո՛հ մինչև ե՞րբ պիտի տանջուիմ, զրկուած սրախ բովէից,
Ո՛հ մինչև ե՞րբ սիրտ տրտմութեան մառախուղը պատէ ինձ,
Արի՛ արի՛ սիրոյս տառուած վերջացրու տանջանքս,
Առանց քեզի թառամումէ գեղաբողբոջ իմ կեանքս։

Քո սէրն արդէն հրոյ նման բորբոքուելով սրտիս մէջ,
Սինայ լերան մօրենւոյ պէս նորան այրումէ անշէջ,
Զգխուեմ արդեօ՛ք ես ո՞ւր փախչեմ, որ քեզ մի ժամ մոռանամ,
Ուր գնումեմ շրջակայքս ինձ տանջումեն անխնամ........

Սոխա՛կ, սոխա՛կ, բաւ է երգես, այլ չեմ կարող լսել քեզ,
Բաւ է որ իմ հին վէրքերը դու վերստին նորոգես,
Լսի՛ր լսի՛ր մի՛ նորոգիր, անթիւ վէրքերն իմ անբուժ,
Նոցա ցաւին դիմանալու այլ ես չունիմ ինձնում ուժ։

Գաբրիէլ Ջաղիկեանց։

18,

Ջան գիւլում, ջան ծաղիկ.

Աչքի՛կ անուշ Սիմիզար,
Ջան գիւլում ջան, ջան։,
Ջինի մեամ նեթիզար,
Ջան ծաղիկ ջան ջան։

Բօյդ սալբի չինարի,
Կանչումեմ մօտս արի,
Աշխարհիս հարուստ գանձը,
Հազիւ քեզ հետ գին արի։

Գիւլս գիւլում ա դառել,
Եարս լէյլում ա դառել,
Ո՞նց ասեմ որ հասկանաս,
Մի հատ զուլում ա դառել։

Դռանս փակ շեմակալ,
Խնձոր քցեմ արի կալ,
Քրոջդ եարի հետը,
Ինձ շինել ես քենակալ։

Երազ էր թէ ճշգրիտ,
Հաշվում էի քո տարիդ,
Որպէս թէ մեր տանն էիր,
Ծոցդ'ի լցնում մարգարիտ։

Զարդն ի՞նչ պէտքէ իմ եարին
Երբ դեռ չի անցել տարին,
Զէ՛ որ նորա լոյսն է,
Զարդ պաճուճանք աշխարհին։

Էն բարձր թառի տակին,
Նռնենու ծառի տակին,
Նրդ ասեմ անուշ քնիր,
Իմ քաղցր բառի տակին։

Ընկերներով միասեղ,
Ման ես գալի ամեն տեղ,
Թէ որ հետս սէր ունես,
Արի՛ գնանք հերանց գեղ։

Թուղ թեևս մոցնեմ,
Ցեռս ձեռիդ կպցնեմ,
Մին կերպ դուրս արի դուռը,
Բալքամ թագուն թռցնեմ։

Իմ եարս միշտ ալ կուզի,
Մէջքին թիրմա շալ կուզի,
Շքեղ պալատն ի՞նչ կանէ,
Ոսկով պատած շալ կուզի։

Կանգնել ես պատի բաշը,
Սիրտս էլաւ հաղ ու մաշը,
Արևելքից արևմուտ,
Նկել եմ քո թամաշը։

Գրուխս եմ դրել քարին,
Սիրտս է լցը արին,
Եարիս եփած մէլամը,
Դրէ՛ք իմ խոցուած եարին,

Երգս եօթն ոտնանի,
Մենակ քունս ո՞նց տանի,
Եգուց արի՛ մեր տունը,
Մառդ շարեմ մառանի։

Հաց առայ թաղայ թաղայ,
Բօյը թամամ մին դաղ ա
Մէջն եմ դրել ձուածեղ,
Որ տանեմ եարիս մաղայ.

Ման կ'գամ բաղի միջին,
Ոտներս շաղի միջին,
Թո՛ղ ողջքը ինձ մեշեն,
Սրտաշարժ տաղի միջին։

Աչքի՛կ դու ուհի ուհի,
Իմ նազե՛լի, սի՛րուհի,
Ես մի շքեղ թագաւոր,
Դու ինձ համար թագուհի։

Աշտարակեցի Խաչիկ։

19.

Դիվանի

Առաջ գլուխդ զարդարիր, յետոյ ժամիդ պատերը,
Թէ ուզումես մեղաց պատժից քեզ փրկութիւն տայ Տէրը.
Թէ գլուխդ չէ՛ զարդարուած կրօնի փայլուն զարդերով,
Քեզ պէններին չեն օգնելու՝ ժամի պատեր, զարդերը:

Թէ փող ունիս դու մի՛ վատնիր ժամի պատերի վերայ,
Անյարգ շէնքեր, շռայլ ճաշեր, ազգին վնասակար ա,
Դու աշխատիր՛ կարգին դպրոց, ճեմարաններ բա՛ց արա,
Ուր պատրաստուեն հոգևորներ, ահա՛ ժամիդ զարդերը:

Ուր պատրաստուեն հոգևորներ, ինչպէս գիտուն բանիբուն
Որոնք գուան, կրօն, լեզո՛ւ, ա՛զգ, հայրենի՛ք, հայութի՛ւն,
Առանց գիտնոց՝ եկեղեցին չէ՛ տայ քեզ երանութիւն,
Հրէից պէս քո բաժինդ կ՛ժառանգեն եաղերը:

Սովրի՛ր լեզուդ, որ հասկանաս ժամիդ սուրբ կարգմունքները,
Սովրիր կրօնդ, որ իմանաս որն է Աստծու պատուէրը,
Ժամի պատեր զարդարելն է՞, թէ սիրելն է՞ ընկերը,
Որոնց երբէք չես հարցնում հազար ու մին դարդերը:

Թէ ուզումես եկեղեցով դառնալ Քրիստոսի ժառանգ,
Նրա աղքատ զաւակների հոգսն անելու տրա՛ ջանք,
Դու տարածի՛ր արհեստ, ուսում, թո՛ղ քեզնով փայլեն նրանք,
Էսա խնդրում քեզնից ժամը, ահա՛ քու մեծ պարտքերը:

Էս էր, ա՛զգ իմ, իմ վերջին խօսք, որ դու պէտքէ իմանաս,
Ինչով ես լի, ինչո՛վ պակաս, էն գո՛րայ հոգալ ջանաս,
Դու ժամերով լի ես, հարուստ, դպրոցներով ես պակաս,
Ինչի՞ նրանց չես զարդարում, որ վայելես վարդերը:

Դու մի՛ վատնիր մի քանիսի կամքին շահին փողերդ,
Այլ բանացո՛ւր հասարակաց օգտին, ցո՛յց տալով սէրդ,
Չէն տո՛ւր, խօսի՛ր ու առա՛ջ տար քո ազգաշահ գործերդ,
Մի՛ թող դառնան գործիք խափան, քո մին քանի վատերը:

Կոյր-Աշըգ:

20.

Զղջումն

Տաճկերէն «Դիվանի» երգի եղանակով:

Ահ ու երկիւղ չունեմ սրտիս, որ վախենամ մեծերից,
Դառն արտասուաց կաթիլ չունեմ, որ լուացուեմ բիծերից,
Իմ ճանապարհս չէ՛ ընթանում Աստուածային գիծերից:

Եկեղեցու քաղցր զանգը կանչում է ինձ ժա՛մ արի,
Յայտնի, ծածուկ գործած մեղքդ մի առ մի խոստովանի.
Բայց ես թողած հոգուս ճամփէն, իմ մտքուս եմ հետևում,
Աստուածային ճանապարհի ուղղութիւնից եմ շեղվում:

Ես մի տղայ, հայի զաւակ, բնակիչ Հայաստանի,
Դու դարման տո՛ր այդւոյս այսմիկ, Այգեպանդ այգեստան,
Ի սէր սրբոց Թադէոսի, Գրիգորի, Վարդանի,
Ինձ ողորմեա՝ չհալածես յաւուր մեծի դատաստան:

Սարգիս Փիլոյեանց:

21.

Ունայն աշխարհ

Ա՛յ աշխարհ, աշխարհ, ցաւ ու սուգ աշխարհ,
Ինձ խաբեցիր, կեանքս մաշեցիր,
Դու երևելի քաղցր ցանկալի,
Բայց սակայն անմահ, դառն քան լեղի:

Շատրին ես խաբել, շատրին զուր սպանել,
Բայց ո՛չ մէկի դու կամքը չես կատարել,
Փառասէր մարդին տուիր գերեզման,
Աղքատ հարուստին մշտական դամբան:

Թէ բարի թէ չար գործոց յիշատակ,
Թէ մնաց անմահ, բայց վերջը դատարկ,
Ո՛չ գործը մնաց, ո՛չ գործի տէրը,
Շուտ անհետացան և 'ի չիք դարձան:

Սարգիս Փիլոյեանց:

22.

Առաւօտ

«Էր հեռանաս» երգի եղանակով:

Առաւօտեան կարմրաշողշող արշալոյս,
Բացում է մեզ բոցաձաձանչ ախորժ լոյս,
Առաւօտեան լուսափթիթ արեգակ,
Տայ երևիլ իր նշուլի ճառագայթ:

Առաւօտեան լուսազգեստ հրեշտակ,
Ձայնում է մեզ առած անուշ եղանակ,
«Զարթի՛ք ո՛վ արք, օրհնել զԱստուած միաբան,
Որ է օրհնեալ այժմ և միշտ և առ յաւիտեան:»

Նոր արշալոյս ծագեցաւ մեզ իր լուսով,
Զարթնացնել ներհող մարդկանց խոր քնով,
Լուսազուարթ և ցնծալի առաւօտ,
Տայ մեզ նոր կեանք և նոր հոգի, նոր խորհուրդ:

Հանգուցեալ Եփրեմ Մհերեանց:

23.

Թէջնիս հոգևոր

Աստուածասէր մարդկանց մին հարկաւոր
Բան կամենում եմ ասել բ, ու, աց.
Բաց արէ՛ք սրտներդ, հայելիի պէս,
Առցէ՛ք մին մինի կ, ու, աց:

Կացէ՛ք լաւ իմանանք, որ ասում եմ,
Թէ մարդուս կեանքն է իրաւ հ, ու աց.
Հացով կապրէ մարդն էս աշխարհումս,
Մին էլ տեսար գը, նու, աց:

Գնաց ուրիշ աշխարհք, ի՞նչ պիտի ուտի,
Խեղճն քաղցած մը, նու, աց.
Մնաց քաղցած նա, որ էս աշխարհումս,
Ջունի ծառն կ, ե, ն, աց:

Կենաց ծառն նա է, որ միշտ կենդան ա,
Եւ տամա մեզ պտուղ, լ, ու, աց.
Լացն կերակուր է մեր աննման հոգւոյն,
Թէ անենք աչքներս թ. ու, աց:

Թա՛ց արէք աչքներդ, որ լաւ լուանվայ,
Կեղտոտութիւն մ, ե, ղ, ու, աց.
Մեղաց կեղտն շատ վատ առելի բան ա,
Աստուծոյ կ, ա, մ, ու, աց:

Կամացն Աստուծոյ հաճոյանալն,
Առաքեալն, ա, ս, ու, աց.
Ասաց թէ մին մինի սիրէք ձեզ նման,
Կ'հասնէք փ, ա, ռ, ու, աց:

Փառաց Թագաւորի ու, պ, խ, գ,
Թիւն լռեալ ա, մ, ու, աց.

Ամաց եմ մօտ վաթսուն Բէչարայով,
Որ գնումեմ. ձ, ե, ու, ու, աց։

Առաքել վարժապետ Բէչարայով։

24.

Մուխամմազ խրատական ըստ հոգւոյ

Այդ ձեր ձօն, որ պահումէք, սիրոյ նշան չէ՛ ի՞նչ է պէս,
Բցած սեղաններդ սէյրում, կեւլու կեւլշան չէ՛ ի՞նչ է պէս,
Գարնանային բացուած ծաղկունք, հոտով շուշան չէ՛ ի՞նչ է պէս,
Կամ թէ նռներ միջումն լասս, կեւլովշան չէ՛ ի՞նչ է պէս։

Ռանգ ռանգ ծաղկանց վերայ վայելլումն անումենք սէր,
Երանի՛ էր ճանանչ էինք թէ ունեն սորանց ողջին տէր,
Տուվված են կարդալի համար, ինչպէս Աստուածային գրքեր,
Որ նորանցով լաւ իմանանք ի՞նչ է մեզի վնաս և խեր,
Որով առաջ մեզ պահպանենք ետով ճարենք շատ ընկերներ
Էապէս անողն շահ ուզող մարդոյ փեշան չէ ի՞նչ է պէս։

Աստուած մարդուն ստեղծել ա ո՛չ թէ լինի հէյվանի պէս
Որ զարդարի ամէն բանն իշխանների էյվանի պէս,
Ինչո՛ւ որ մարդն էլ պտուղ է հէնց ծառերի մէյվանի պէս,
Պէտք է սորան համ ունենայ, ուրախութեան փէյմանի պէս,
Եթէ էնպէս չ՚լինէր մարդն, հալ փարիշան չէ՛ ի՞նչ է պէս։

Քաղցր էք ասում պտուղներին, երբ ուտումէք հասած վախտն
Ցայանի է որ՝ ղուլլուղ կուզեն նորանք նոր նոր բուսած վախտն
Էնպէս էլ ձեզ ղուլլուղ արէ՛ք, սէրն նոր սկսած վախտն,
՚Ի հարկէ նա շատ պէտքական արշու քեւրշան չէ՛ ի՞նչ է պէս։

Եկէ՛ք ձեզի մին բան ասեմ, թէ կամենաք լաւ միտք արէ՛ք,
Հետևեցէ՛ք, որ սէրներդ սրտով լինի ո՛րքան կարէք։
Ջար աշխարհքի նեղութիւնն, թէ պատահի սիրով տարէ՛ք,
Սատանայի խորհուրդներն ամենայն ժամ չար համարէք,

ինչի որ հէնց աշխարհումս սխտի մին անմահ կեանք ճարէք,
Եթէ ճարէք նա է Տէրի, մին ղեմիշան չէ՛ ի՞նչ է պէս։
Լալով խնդրեմ թէ նեղանաք մեղքի արած եարայովն,
Բարերարն ձեզ բժշկի իւր պատուական չարայովն,
Սաղ սալամաթ անցկացնի աշխարհ քարվանսարայովն,
Ի հին Շամախումն է ասում Առաքել Բէչարայովն,
—18, 4, 6, 1, 2, 6, գրերի մին փարայովն։

Առաքել վարժապետ Բէչարայով։

25,

Երգ տէրունական

Ականջ դիր խղճմտանք, քեզ մին խրատ տամ,
Խստակ մաքուր սրտով միշտ խոնարհ կացի՛ր,
Օրէնք պատուիրանքըն գրէ՛ր սրտումդ,
Նախանձ, չ՚կամ, հպարտ բանից հեռացի՛ր։

Ցոյս հաւատով ստեղծողիդ միշտ սիրեա,
Եղբօրդ, ընկերիդ նոյն նմանապէս,
Տնանկ աղքատ ազգիդ օգնի՛ր ծածկապէս,
Էս ա կամքն Աստուծոյ ե՛կ դու իմացի՛ր։

Բամբասանքից չար խորհուրդից հեռանաս,
Թշնամիդ օրհնես խռով չի մնաս,
Ինչ որ այլոց կուզես էն կըստանաս,
Թէ ընկար նեղութեան, փառք տո՛ւր, դիմացի՛ր։

Քրիստոնեայ ազգին ի՞նչ կըվայելէ,
Սիրենք իսկ միմեանց էն ա գովելի,
Որբ և կարօտներին օգնենք լի ու լի,
Էստունք արա՛ հոգւով դու պայծառացի՛ր։

Իմա՛ն, ինքդ քեզի միտք արա՛ բարակ,
Ո՛վ ո՛ք Սուրբ օրէնքին լինի հակառակ,
Էն աշխարհ ատենին կ՚լինի խայտառակ,
Մինչ կենդանի ես փրկութիւն հոգացի՛ր,

26.

Երգ իրատական դիվանի,

Ականջ դրէք լաւ իմացէ՛ք տիրական պատուէրանին,
Յոյս հաւատով հաւատացէ՛ք էն սուրբ աւետարանին,
Տէրն ասէ զի՞ կոչես, Տէ՛ր, զոր ինչ ասեմ, ո՛չ առնես,
Թէ ես տէր եմ, դու ես ծառայ լսի՛ր իմ հրամանին:

Ո՛չ են պիտոյ մեծն արքայ Աղէքսանդր Մակեդոն,
Փիլիսոփայ Արիստոտէլ կամ իմաստուն Պղատոն,
Ո՛չ ընդունեմ և ոչ հաճեմ թէ որ աշխարհ առնէ տօն,
Ի մէջ սրբոց ո՛չ երևին էն իմ արդար առնելին:

Սէր հաւատով և յոյս գործով այն է իսկ ինձ հաճելի,
Չարն բարեաւ ե՛կ միշտ յաղթի՛ր լե՛ր դու ինձ ծառ պտղալի,
Ի՞նչ օգուտ քեզ աշխարհ շահես, վերջին լինես դատելի,
Էդ ունայն կեանքն մի՛ փոխիր հայրական օթեւանին:

Եղբայրական սէրն մի՛ թողիր, ընկերիդ մի՛ ատիր,
Վարձ մշակաց մի՛ հատանիր, այլոց մեղքն մի՛ դատիր,
Զրկողութեան մի՛ հետևիր պէտք ա արդար աշխատիր,
Հարուստ, տնանկ, Տէրն ա կարգել կամ աղքատ մեծատունին:

Եղբայրն ո՛չ կարէ օգնել և կամ բոլոր ընտանիք,
Բարի գործքեր են օգնական, եթէ հետներդ տանիք,
Յորժամ Տէրն յաթոռ նստի յաջակողմեան դասնիք,
Լացով հայցեմ, Տէ՛ր ողորմի՛ր էդ մեղաւոր Իվանին:

27.

Արևելքէն արշալոյս,   Արեգն յերկնից նայելով,
Ծագեց փայլուն կարմիր լոյս,   Իւր բիւրաւոր ճաճանչով,
Գունեղ զարդով շողացին,   Արարատայ գագաթէն,
Թէ կանաչներ և թէ բոյս: Յոլայ ողջոյն ձօնելով,
Ո՛հ սարեր, սարեր, սարեր,   Ո՛հ Մասիս, Մասիս, Մասիս,
Ո՞ւր է իմ լոյս, ո՛հ ձորեր: Զիմ Արեգակ տո՛ւր դու ջիս:

Ճերմակ շուշան սարերուն,   Ճռուողելով թռչուններ,
Բացեց թերթեր իւր սիրուն,   Գարնան սիրուն երգիչներ,
Ուրախ զուարթ անմարկեց,   Ողջունեցին զառաւօտ,
Իւր բոլորի բոյսերուն: Սաւառնելով դէպ յեթեր:
Ո՞հ Շուշան, շուշան, շուշան,   Թռչուններ ա՛խ թռչուններ,
Ո՞ւր է չքնաղ իմ Շուշան: Ո՞ւր իմ թռչուն սիրոյս Տէր:

Խոխոջալով ջինջ առուակ,   Արև ժողվեց իւր շողեր,
Սարէն սահնի դէպ ձորակ,   Համբոյրն իջաւ 'ի սարեր,
Թաւալելով հետ ընթաց,   Վերջնալուսի գոյներով,
Թողու մեղմիկ աղաղակ: Շողշողացին ծաղիկներ:
Ո՛հ առուակ, ծարաւ սիրոյս,   Ո՛հ արև, արև, արև,
Ո՞ւր անուշ ջուր գեղալոյս: Ո՞ւր իմ ծաղիկ, իմ բարև:

Լուսնեակն երկնի գեղահեր,
Շողաց վարդին 'ի թերթեր,
Արծաթափայլ շողշողաց,
Երբ լռիկ մունջ էր գիշեր:
Ո՛հ լուսին, լուսին, լուսին,
զԱստուած սիրես թէ վէրին,
Ինձ վարդիս տա՛ր 'ի պարտէզ,
Կարօտ կամ վարդի թերթին:

Մուշեղ Մուշեղեան:

28.

Դաստան

Անգործ պարապ մանկողը, Օրէնքներից պատռվածը,
Անմիտ խելագար չէ՛ ի՞նչ է Իրան խօսքով յամառուածը,
Միշտ մոլութեան սէր տուողը, Անօթեան թափառուածը,
Բնութեամբ տկար չէ՛ ի՞նչ է: Բուլին հաւասար չ'է ի՞նչ է:

Բարկացող յուսահատներուն
Վհքերը անփարատներուն,
Երկմիտ թերահաւատներուն,
Խելքերն անկատար չէ՛ ի՞նչ է:

Գլխին աճող մաւթ քողը,
Զտեմնող բարեբեր ցօղը,
Անկիրթ անուսում մեծցողը,
Անտաշ, կոպիտ քար չէ ի՞նչ է:

Բանական բարքից ելնողը,
Սրբազան վարքից ելնողը,
Մարդկութեան շարքից ելնողը,
Անասուն, յիմար չէ՛ ի՞նչ է:

Իրան արդար մարդ դասողը,
Աստիճանի սպասողը,
Իսկ ճշմարտին սուտ ասողը,
Իւր հոգւով խաւար չէ՛ ի՞նչ է:

Կենդանութեան կաթն ու հոգին
Թողած, սիրող աննիւթ շոգին,
Պատուիրանազանցի հոգին,
Բելիարին աւար չէ՛ ի՞նչ է:

Չի պահող իր բերնի սանձը,
Ծուռ մտքով նայող.......
Միշտ պղծութեան սիրող անձը,
Գազանից վատթար չէ՛ ի՞նչ է:

Գործը շատ ցրիւ է թոյլին,
Հաստագլուխ մտքով գայլին,
Տեղից չ՛շարժւող ծոյլին,
Դիւրինը դժուար չէ՛ ի՞նչ է:

Անունը թանգ չ՛ունեցողին,
Բարութեան ջանք չ՛ունեցողին,
Երջանիկ կեանք չ՛ունեցողին
Աշխարհը օտար չէ՛ ի՞նչ է:

Ո՞ւմ տայ իր ընծայ նուէրը,
Ո՞ւմով աւելանայ սէրը,
Անզաւակ մեծ փողի տէրը,
Անմխիթար չէ՛ ի՞նչ է:

Չի սիրուիլ թառամած վարդը
Քամուն ճաշակ կ'լինի յարդը,
Փտած ծառի նման մարդը
Կրակի պաշար չէ՛ ի՞նչ է:

Սառել է սրտի եռանդը,
Չունի ողջութեան աւանդը,
Անբժշկելի հիւանդը,
Մեռնելուն յօժար չէ՛ ի՞նչ է:

Յուսահատն է արմատախիլ,
Նորաբոյսը չունի նոր ծիլ,
Անյուսալի բանը գտնել
Բերելը՝ անկար չէ ի՞նչ է:

Ջիւանի հանճար չ՛գիտցող,
Ապրելու հնար չ՛գիտցող,
Պանդուխտ ճանապարհը չ՛գիտցող
Զինուորը շուար չէ՛ ի՞նչ է:

Սերովբէ Լեօնեանց:

29,

Հանգանակ սիրոյ

Ա՛ստղ, որ ցուլաս դու երկնքում,
Արդեօ՛ք տեսնո՞ւմ ես այդ բարձրից
Օտար երկրի մի խոր քունջում,
Սիրուհւոյս աչքն արտասուալից:

Ո՛հ տաս՛ ինձ, ի՞նչպէս նստած,
Մտածում է նա տխրադէմ,
Ի՞նչ էր արդեօ՛ք միտն ընկած,
Յոգւոց հանում սրտի խորքէն:

Զուն գլխեմ, դուլ ու դադար,
Այն երջանիկ երազներից,
Չի հանգչում նա ազատաբար,
Թշուառ սրտի հարուածներից:

Մին վէհ պատկեր նորա դիմացն,
Կանգնում է ուր աչքն դառնայ,
Մին վէհ պատկեր որքան գլուր անձն,
Սիրում էր և սիրում է նա:

Յափշտակուած թէ որ սիրէն
Երբեմն օդին հետ է խօսում,
Մի՛ ծիծաղեր դու նրա վերէն,
Իւր սերահարն է նա տեսնում:

Սիրո՛ւն աստղիկ, տաս՛ տեսնեմ,
Լո՞ւմ ես դու քնարին թել,
Այրած սրտի հրեշտակդէմ,
Նա որ երգէ՝ գլուխն Մ......

Նա է այո՛, նա՛ որ միայն,
Զիս է սիրել այս աշխարհքում,

Գիտեմ, զի իմ սիրտս էլ նըման,
Բացի Նրանից ո՛ք չի սիրում:

Քննէ՛ նորան և իմ ոգին,
Կ'գտնես զուտ սիրոյ զգացմունք
Որ չէ՛ կարող փոխել երկին,
Թէ և սպառնար մեզ շատ մահունք:

Այժմ թէ տեսնում ես Հայուհին,
Արևելքում որ չէ՛ այդպէս,
Նա չէ՛ իմ սէրն, իմ Սիրուհին,
Պտտի՛ր դարձեալ և երբ գտանես:

Տո՛ւր իմ ողջոյն սրտիս սրտին,
Ասա՛ սիրոյ է սա հաւատ,
„Ո՛ղջ եմ, սիրեմ զքեզ յաստիս,
Մեռնիմ սիրեմ անդ անընդհատ“:

Առանձար:

30.

Մուշէմ-Մէրէ (*)

Աշնան եղանակն էր, որ հասայ ես Եփրատին,
Մեղմիկ հողմն երերէր ալիքներն ծփալին,
Նորոգեցաւ սրտիս ցաւ, երբոր նորան ես տեսայ,
Հայաստանէն աստ կ'գայ, Եփրա՞տն է մեր արդեօ՛ք սա:

Կարող եմ ես հարցանել, թէ որ ինձ պատասխանէ,
Մեր Հայրենեաց դրութեան, գիտեմ որ լաւ տեղեակն է,
Ահագին է տարածուէր, խղճուկ ձայնս չ'հասնէր,
Նաւով պէտքէ որոնեմ, թէ որ ինձ հնար լինէր:

(*) Այս քաղաքս Պարսից Արաբիոյ ծայրում լինելով, է և սահմանագլուխ, սորա մօտ միանումեն իրար հետ Եփրատ եւ Քարուն գետերն:

Նստայ նաւն ձայնեցի, վշտալի սրտիս խորքէն,
Հեղի նորա ջրի մէջ, իմ արտասուաց ցօղերէն,
Նորան ասի պատմի՛ր ինձ, Հայրենիքիս լուրերից,
Հայաստանէն ես գալիս, ասա՛ նորա անցքերից:

Հայոց քաղաքք և գիւղեր պտտելով սահեցիր,
Նոցա գիւղ և ագարակ և արտորայք ցօղեցիր,
Սիրուն հարս և աղջկունք սափոր ուսին քեզ եկին,
Առին զով ջուր և դարձան ուրախ ուրախ գնացին:

Նոցա գոմէշ և ցուլեր, եզ, կով, ոչխար արբեցան,
Էծը, ուլը և գառնուկ ամեն քեզմէ լիացան,
Մի՛ շտապիր աղաչեմ մօտ է հասնես Թախեն ծով,
Պատասխան տո՛ւր պանդխտիս, որ սպասեմ անձկալով:

Ովկիանն է քո հանգիստ, շատ չի քաշեր կ'տեսնես,
Այդքան արագ մի՛ վազեր թէ շուտ թէ ուշ կ'հասնես,
Որոտալով ձայնեց նա „ինձմէ ի՞նչեր հարցանես,
Թէ Հայաստան դու սիրես, ինչի՞ այստեղ թափառես:

Միտքս մի՛ բեր իմ ցաւեր, թո՛ղ սգալով գնամ ես,
Իմ մեռած անցքերն կրկին ինչո՞ւ նորոգես,
Սրտիս խորքում լցուած է վերաւորող հին ցաւեր,
Ո՞րի համար ես պատմեմ որ չ'կայ հարցանողներ:

Իմ հարազատ որդիքն ինձմէ օգուտ չ'տեսնեն,
Իմ փառաց վայելչութիւնն Արաբներն ժառանգեն,
Հայոց քաղաքք և գիւղեր օտար ազգեր տիրեցին,
Հայաստանի հողերն անմշակած մնացին:

Նորա բերքը և բոյսեր լիացնէ քուրդերին,
Ձեռ տալ անգամ կարող չէք դուք օտարի բերքերին,
Կարօտ, կարօտ նայումէք ուտողների ձեռքերին,
Մեր բարելի երկիրն բաժին դառնայ օտարին:

Գնա՛ ինձմէ հեռացի՛ր չ'ըմտածող անփորձ ես,

Մինչև ե՞րբ դու թափառես, քո հայրենիք չը սիրես,
Հաշտ չեմ լինի ես քեզ հետ, մինչ չ'դառնաս քո երկիրն,
Գրգռես սիրով Հայ եղբարց տաս միութեան համբոյրն:«

Վերջացրուց իւր խօսքեր ոլոր մոլոր ընթացաւ,
Այնուհետ էլ չ'նայեց, դէպի ծովն փութացաւ,
Կայի անյոյս նայելով արագ երև անդ իմ անց,
„Հասիմք Բասրայ“ ձայնեցին „Նաւէն ե՛լ

Մ. Բժշկեանց:

31.

Տաղ 'ի ժամ գարնան

Ի գոյն «Դալայլի» խաղի:

Ա՛յ քաղցրիկ առաւօտ բարեկից գարնան,
Ընդ արշալոյս ծագեալ Արեգն աննման,
Ճառագայթ արևուն ընդ ամպս եթերեան,
Գոյն զգոյն ճաճանչեղ 'ի կամարս յողնմկեան
Ո՛հ ո՛հ և շարք աղեղան:

Ա՛յ այդ բարեսխըլ աւուրց ամարան,
Արդէն դաշտք և լերինք ծաղկեալ զանազան,
Երամք հրեղինաց և կաճառք մարդկան,
Առ քեզ, Տէր Արարիչ, փառք պատիւ կարդան
Ո՛հ, ո՛հ գոհանան:

Համօրէն կենդանիք ընդ այգուց,
Իսկոյն 'ի բաց առին զկապ զպախուրց,
Երամք մատաղ գառանց և պարքն ուլուց,
Խնդրեն ճարակ 'ի կուր և պարենս աւուրց,
Ո՛հ ո՛հ չեն զատ 'ի ծաղուց:

Երբ բացան բիբք մարմնոյ~աչաց պատուհան,
Տեսին լոյսն Արևուն լերանց յարտևան,

Խայտացին, խնդացին ընդ գալուստ գարնան,
Արծարծեալ շողշողայր բոլոր բուրաստան
Ո՛հ ո՛հ համայն անդաստան:

Երամք թռչնոց ճախրեն 'ի յօդս եթերին,
Գորք գազանաց շրջին բարձունս յերկրին,
Թորոս երբ ոսոգէր զմարգագետին,
Հիւսեալ շարս բանից ըստ խրեան կարին,
Ո՛հ ո՛հ, որ լուղք բերկրին:

Թէոդորոս վարդապետ Շիրակունի:

32.

Ողբերգութիւն առ մայրաքաղաքն Անի

Ի գոյն «Անի քաղաք նստէր կուլայ»

ՀԱՅԿԱԶՆ.

Անի քաղաք դահ Արքայից,
Շքեղ պարիսպ քաջ հսկայից,
Ազգանազեան Հայկ, Արամին,
Ամուր պատուար քաջաց գնդից,
Աւա՜ղ ո՞ւր է, ափա՜ս ո՞ւր է,
Զքնաղ տեսիլ գեղոյդ ո՞ւր է:

ԱՆԻ

Մի՛ յուշ ածեր զայդ ինձ, որդեակ,
Զուարճ օրերս գարնան քաղաք,
Շատ թափանցին յոյժ վաղվաղակ,
Թողին անխնամ զիս աւերակ,
Ալս մի՛ ասեր, ո՛հ մի՛ յիշեր,
Խղճուկ Անիս մի՛ մորմքեր:

ՀԱՅԿԱԶՆ.

Բազմաձայունն բամբիշն այրի,
Բամբիռն երգեմ քոյդ առաջի,
Ո՞ւր է փեսայդ թագ 'ի գլուխ,
Զի՞ լաս դշխոյ մեծ թագուհի: Աւա՜ղ և այլն:

ԱՆԻՆ.

Կարի ազդեաց բան քո առիս,
Իբր զսլաք, որ 'ի սրտիս,
Զփեսայէս զի՞ հարցանես,
Հի՞մ ասելուս վէրս 'ի հոգիս: Ա՛խ մի՛ և այլն:

ՀԱՅԿԱԶՆ:

Երբեմն էիր մեծ բուրաստան,
Բուրեալ ծաղկօք յոյժ զանազան,
Ի գաւառիս Շարայեան,
Բարգաւաճեալ զերթ անդաստան: Աւա՜ղ և այլն:

ԱՆԻՆ.

Իրա՛ւ իրա՛ւ, որպէս խօսիս,
Աղէ՛, եկ տե՛ս վիճակ կենիս,
Բաղդս բնաւ մեկուսացաւ,
Խեաք աղետից կացին յաղիս: Ա՛խ մի՛ և այլն:

Շիրակունին երգեաց զայս բան,
Ցանուն քոյին կանգնեաց զարձան,
Զքո անուն գոլ անմոռաց,
Ցորդւոց յորդիս միշտ յաւիտեան,
Ուրախացի՛ր ուրախացի՛ր,
Անի՛ քաղաք, զուարճացի՛ր:

Թէոդորոս վարդապետ Շիրակունի:

33,

Երգ առ Անի գահն Բագրատունեաց

Ասուես մի՛ լար, Անի՛, միթէ՞ եմ անիրան,
թէ անշունչ արձան.
Անի քաղաք ան պատուական Հայոց ազգիս
Հերիք մորմոքիս.
Անի քաղաք աջ լուսափայլ Արամեան ազգիս,
Հերիք իմ Անիս.
Անի քաղաք աջ մեծազօր Թորգոմեան ազգիս,
Զի՞ կաս 'ի կսկիծ:

Հերիք Անի, հերիք ջանի լաս քանի՛ քանի՛,
Իմ սիրուն Անի.
Հերիք հանի, հերիք նանի, հերիք ցաւալի,
Դշխոյ պատուելի,
Հերիք ողբաս, հերիք կոծես դու աղետալի,
Հայոց թագուհի:
Անի՛, քանի՞ հառաչելով զէտ բու փայրենի,
Խղճալի Անի.
Անի՛, քանի՞ 'ի լաց 'ի կոծ նստիս զէտ այրի,
Ձեռն 'ի ծնօտի:

Բա՛ւ է ողբաս, բա՛ւ է դու լաս, բաւ է, իմ Անի,
Բաւ է խնամի.
Բա՛ւ է մնաս միշտ երերուն, բա՛ւ է ջանի,
Աւա՜ղ քեզ, Անի.
Բա՛ւ է, Անի, ցա՛ւ է, Անի, մնալ դեռ այրի,
Կսկիծ քեզ, Անի:

Զարթի՛ր Անի, զարթի՛ր ջանի զարթի՛ր սիրտդ բա՛ց,
Սուգ ա՛րկ 'ի բաց.

Ահա՛ զարթեաւ քո Արարատ, Մասիս, Արագած,
ի ձայն կուսանաց.
Ահա՛ զարթեաւ քո Հայաստան Շիրակ, Երեւան
Ծաղկօք գեղ գեղան:

Ցնծա՛ Անի, ցնծա՛ նանի, տես քանի՜ քանի՜
Երգ առ քեզ հնչէ.
Արդէն ահա՛ հրճուի փառօք վեհ Վաղարշապատ,
Նոյն և Արտաշատ.
Արդէն ահա՛ հրճուի Դուին, Երուանդաշատ,
Նոյն և Բագրեւանդ.
Դու միայն կաս 'ի լաց, 'ի կոծ և 'ի խորին բանդ,
Զքեւ մթոտ ամպ:

Բաւ է՛, որդի իմ հարազատ, Թորոս ցաւալի,
Լաս քանի՜ քանի՜.
Շնորհաւոր լիցի որդւոյս նոր դար, նոր տարի.
Նոր ամ նոր բարի.
Թո՛ղ մնայ իմ սիրոս 'ի մէջ աղետի,
Միշտ տարուէ տարի:
Ասումես մի՛ լար, Անի, միթէ՞ եմ անբան,
Թէ անշունչ արձան:

Թէոդորոս վարդապետ Շիրակունի:

34.

Աստուած հայր անծին, որդին միածին, հոգւոյն բղխածին
եմ ծառայ,
Սուրբ Երրորդութիւն, մի Աստուածութիւն և մի տէրութիւն
անճառ ա,
Խօսքով բանալն լաւ հասկանալն, շատ իմանալն դժուար ա,
Ըստ որում անեղ ա քաղցր և համեղ ա նաև ահեղ ա հզօր ա,
Հոգևոր հէր ա և մարդասէր ա, համայնից տէր ա արդար ա,
Գա՛րաք ապաշէլ, բարիս ճանաչէլ, էն գործէն ամաչէլ որ չար ա,

Անձին փորձէլն մեղքից զարձէլն, բարիս գործէլն յարմար ա:

Ամենն կ'ասեմ, ինքս անմաս եմ հոգւոյս վնասեմ այս բանից,
Այլոց խրատեմ, բայց ինքս վատ եմ, ամէն զանգատեմ ինձանից
Աշխարհիս զանձով, զաղիր նախանձով ջոկվէլեմ անձով կենդանից
Մարմինս հող ա, միտքս զատող ա, հոգիս կ'դողայ տանջանից,
Աշխարհիս փուշն և թայխթուշն բարձէլայ ուշն ամենից,
Մարդ իւր մտքումն, ուժն ոտքումն, խելքն գլխումն յիմար ա:

Տես ի՞նչ պէս բան ա, որ մարդ հասկանայ, էլի մօտանայ մեղքերի,
Մարդ որ անբանի փորձանայ տանի, նա հարաքաթ կանի զալ հետի,
Բայց մարդ արարքով, իւր խղճմտանքով, հոգին իւր կամքով տայ
գերի,
Աստուածն անեղ, փրկիչ ահեղ, մինչև որքա՞ն տեղ համբերի,
Որ իւր պարգևն, պատկեր և ձևն, տանում ա դևն, որ երի,
Տուր մեզ թողութիւն, չո՛ւնեմք զօրութիւն, էլի օգնութիւն
դու արա՛:

Վա՜յ իմ հալիս ա, քու եղբալիս ա, միտքս գալիս ա յանցանս
Էգ էր իմ շահն, պէտքէ գայ մահն, պատել ա ահն իմ ջանս,
Հոգիս եմ մաշել, զովլան եմ քշել արժան եմ քաշել տանջանս,
Մեղքերս բացեմ, արտասուօք լաց եմ, ո՛վ վերանքցեմ իմ բանս,
Դևն աւել ա, ինձ բամբասել ա, ահա՛ հասել ա կործանս,
Մեղքերիս հետն եմ, որ քունջն մնեմ, ի՞նչ տեղան գտնեմ
ես չարայ,

Հայրն երկնաւոր, անմահ թագաւոր, խնդրեմ ահաւոր անհասին,
Որդին միածին, մեզ ողորմածին, հայցեմ գթածին, Յիսուսին,
Հոգին ճշմարիտ, Ամենաբարիդ, մեր բարերարիդ և լուսին,
Աստուածածին կոյս, Քրիստոնէից յոյս լե՛ր միշտ բարեխօս մեր մասին
Որ տայ դատաստան, արասցէ արժան, էն աջակողմեան իւր դասին,
Աղաչեմ կեցո՛ և ինձ լսեցո՛, ,,օրհնեալք հօր իմոյ‘‘, որ ասին,
Եւ դու լե՛ր արժան, խեղճ Սայեաթ-Օղլան, տես ինչ փրկական
բարբառ ա:

35.

Աղջիկ սուսամբար ռեհան ես, Թաղայ դուրս եկած նուբար ես,
Թագուհի ես, Թէ կայսր ես, գեղեցկութեան նշան ունես,
Նման նոյնպէս հրեղէն ղուշ ես, մարալի ջեյրանի պէս ես,
Ձլինի անմահական բաղ ես, ամեն ծաղկունքէն ծառ ես,
Երկնային լոյսին կամար ես, եարա՛բ էս ինչպէս ինսան ես,
Եաղութ զումրութ անգին մառ ես, Թագաւորին խաղնին մալ ես,
Արեգակին պէս պայծառ ես, մութը տեղ աստղեր ես, վառ ես,
Տեսնողի խելքին զարար ես, 'ի վերայ աշխարհին մին ես,
Թայդ չի գտնուիլ քեզ պէս, նաշխու նիկար յարմար ես,
Գաբրիէլ, Միքայէլ հրեշտակ ես, ետ ու առաջ հոգիս կառնես,
Մեղաւոր եմ մեղքիս տէրն ես, համեմես բալքամ ճար կ'անես,

Բէյղափալ, ամա՛ն, հանդիբար, մին բերան հետս չ'խօսար,
Ինչ սհաթ էր ռաստ եկար, գիշեր ցերեկ ջունուն արար,
Սրտումս դարդեր շարար, անկրակ խօշ ինձ էրար
Բա՛կամ քեզ ինչ արամ եա՛ր, ամ տեսնեմ, չո՛ւն բարկացար,
Ամեն տեղէն նաստղ արար, ջալլաթի պէս Թուրով կայնար.
Արիւն արտասուքս Թափար, էն ժամանակ չո՛ւն չ'սպանար,
Կարօտ փափաղ էշխից Թողար, մին ռահմից դուռն բացար,
Ինչ կ'լընի ինձ մի մօտդ տար, էյ անիրաւ ջանի բերար,
Ես խօշ քոյ ձեռնից լլամ զար, էլ որ մինն ասեմ քեզ, եար,
Ջիկարս փԹոԹար էրար, տոշակ բանդիվանի քցար,
Լողմանի հաքիմ եկ դու դա՛ռ, մեղք եմ մի Թողնիլ ինձ տկար:

Գլուխդ ոսկի սհաթ'ա, ունքերդ բուլբուլի բաղ ա,
Աչքերդ շամու չրաղ ա, երեսդ խալիս բիԹաթ ա,
Եարա՛բ էս ինչպէս սուրաթ ա, ստեղծողից ամանաթ ա,
Բօյդ սալբու չինար ա, ձեռներդ մարգարիտ բան ա,
Հէնց գիտես կանԹէղամանն ա, դանդնած տեղը խմրաթ ա,
Ծոցումդ լիքը զինեաթ ա, բան խըրալից յասուկ բաղդ ա,
Ծառ աշուղ դառնանք 'ավարայ, քո ճամբին էլանք գիվանայ,
Ման եկեցինք եանայ եանայ, լալով հաղկանչելիս կօրայ,
Մի Թող ջանումս արդու մնայ, մին յետս ծիծաղիր, հաղա,
Ի վերուստէն քեզ բուԹայ եմ, բուլբուլ եմ շինիր ղափաղայ,
Մէջն քցիր դուսաղ արա, մի Թող քո ճամբին աւարայ:
Դուռնումդ կանգնել եմ ղուլ եմ, քոյ խաԹրին խօշ մոլորվել եմ,

Մին մեղքդ բեր ես էլ խեղճ եմ, չեմ իմանում, ո՛ր կուման փախչեմ,
Որ մին կերպով ազատ լինեմ, չ'եմ էլ մեռնում, որ պրծնեմ,
Էլ ինչպէս էլ ղաւդ չի անեմ, էնքան սովդալու սիրեմ,
Էշխիցդ ջունուն դառել եմ, Թէ որ տեղքատեղ էլ պատմեմ,
Դաւթար ղալամ պէտք ա սարքեմ, նստեմ դանայ դանայ գրեմ,
Թող իմ մահովս մեռանեմ, դարբէդար չոլէր չ'նկնեմ,
Կամբդ ասա միշտ ծառայ եմ, համ ծառայ եմ բէչարայ եմ,
Առանց էն դարդի բիմիեայ եմ, եկ ազատիր քրիստոնեայ եմ:

36.

Անկիրթ ազգ կամ Օս անուանեալ, նորանց աւետարան չի լինիլ,
Կրակապաշտից ճգնաւորին ձեռին դաւազան չի լինիլ,
Ամէն բանից կ'ազատուի մեռած մարդը, նրան հէչ մէկ բան չի լինիլ,
Ագահ մարդուն աշխարհն տաս, այն էլ բաւական չի լինիլ,
Գայլն որքան ոչխար ուտէ, նրան դատաստան չի լինիլ:

Անհնար է հնար չ'կայ, կուպրն սպիտակ ծիւն չի դառնայ,
Հազար վարպետ, որ ուսում տան, էշն իմաստուն չի դառնայ,
Ով աւազի վերայ տուն շինի, այն հիմնաւոր տուն չի դառնայ,
Բամբասողն շնից վատԹար, աղտնին խոկ շուն չի դառնայ,
Վա՛յ տարաբաղդ յիմար մարդուն, խելօքն էշապան չի լինիլ:

Հողն օծի կերակուր է, ինչքան ուտի բաւական չի,
Հարիւր տարի հողի տակին երկաթն անժեւ չի կանաչի,
Խողի առաջ մարգարիտ ածես, երբէք խոզն չի ճանաչի,
Մանկից մարդն Յուդայի պէս, ում որ մատնի չի ամաչի,
Զարն չարիւ կ'սատակի, նրան ճողենան չի լինիլ:

Անգլին քարն ուրիշ քար է, նորա նման ակն չի դուրս գայ,
Ո՛չ տեսել ենք, ոչ լսել ենք, ջրիցն կրակ չի դուրս գայ,
Նմանապէս էլ չար մարդուց, բարի նշանակ չի դուրս գայ.
Այն պատճառին չար է ծնուել, բարին բնական չի լինիլ.
Անզունդն, որ միշտ խաւար է, անդէն լուսնեակ չի դուս գայ,

Ծովի միջին որ ցանք անես, այն տեղ հնձի յոյս չի մնալ,
Ինչ բաղդաւոր որ տեսնես ուրախ, այն բաղդն իրան չի մ'նալ,
Յանկարծ բաղդն կփոփոխուի, բաղդից նշան չի մ'նալ
Վերջն ամենն էլ հող կ'դառնայ, էլ աշխարհիս բան չի մնալ,
Դու էլ մեղաց որդի Յովէփի, չ'ասես ինձնում բան չի լինիլ:

37.

Մուխամմազ

Արի՛ քո չարդ տանեմ, սէրս սէրիդ կարօտում ա,
Խաչալի կամար տուած թառ ունքերիդ կարօտում ա,
Հոգեհան մարդասպան թուխ աչքերիդ կարօտում ա,
Փայլատու լուսաշաւիղ ալ թուշերիդ կարօտում ա:
Թանգագին և աննման լոյս պատկերիդ կարօտում ա:

Սիրով ընկած ջիւան եմ, սէրից հեռանալ չեմ կարող,
Ես սէրի սովրած եմ, անսէր գիմանալ չեմ կարող,
Սիրոյդ հետ եղբայր եմ ես, սէրդ մոռանալ չեմ կարող,
Առանց քո հրամանի ուրիշ տեղ գնալ չեմ կարող,
Պատճառ որ դաստս եղած փունջ մազերիդ կարօտում ա:

Քո սիրոյդ գիշերներն սիրոյս դուռը բաց է լինում,
Աղաղակում է առ Աստուած և անդադար լաց է լինում,
Առանց քեզ օրս վատ է, միտս մոլորուած է լինում,
Ճանապարհդ սպասելու իմ սէրս նստած է լինում,
Որ դու կաս մօտս նստես ջուխտ ծծերիդ կարօտում ա:

Քո քաղցր սիրոյդ համար մեռածեմ Աստուած վկայ է,
Անճարութեամբ կենդանի թաղուած եմ Աստուած վկայ է,
Ցնցել է խելքս գլխէս, տարուած եմ Աստուած վկայ է,
Մինչև դատաստան քո սիրոյդ կապնած եմ Աստուած վկայ է,
Մէկ հոտ քաշելու համար շամամներիդ կարօտում ա:

Ես մէկ քաղցր ջիւան եմ, աշխարհումս սէր չեմ թողալ,
Այդպիսի քաղցր սէրը ո՛չ երբէք անսէր չեմ թողալ,
Սէր անելով կ՚պաչեմ ջոկովն աչքեր չեմ թողալ,
Կու քսեմ աջու բեղս զանազան պատկեր չեմ թողալ,
Շամշի-Բալայ Յովակը բոխաղներիդ կարօտում ա:

Յովակիմ Շիմշիրխանեանց:

38.

Սիրոյ երգ

Արի՛ իմ սիրելի, բան եմ ասում քեզ,
Օրն օրի վերայ ջան եմ ասում քեզ:

Բոյդ սօսան, սօնբուլ, ունքերդ կամար,
Պռօշներդ ալ վարդ խալերիդ յարմար,
Աչքերդ շաւայ, կրակ է ինձ համար,
Ձայնդ բուլբուլի ո՞վ է քեզ բարեբար:
Արի՛ իմ սիրելի բան եմ ասում քեզ,
Օրն օրի վերայ ջան եմ ասում քեզ:

Երբ որ երգում ես, հոգիս հանում ես,
Սրտիս մէջ սէրդ ուրախ ցանում ես,
Խղճալով դու ինձ կանանչ պահում ես,
Չե՛ս թողնում տխրեմ, միշտ փայփայում ես:
Արի՛ իմ սիրելի բանեմ ասում քեզ,
Օրն օրի վերայ ջան եմ ասում քեզ:

Ափսո՛ս որ մահն շուտ կ՚ջոկի մեզ,
Եւ այն ժամանակ ո՛հ, ո՞վ կ՚ասի քեզ,
„Արի՛ իմ սիրելի բան եմ ասում քեզ,
Օրն օրի վերայ ջան եմ ասում քեզ:“

Յարութիւն Պօպօվեանց:

39.

Ոգի Հայաստանի

(Ջանիկ Արամեան պատկերի վերայ)-

Ահա՛ Հայաստան աշխարհ աւերուած...
Քաղաքներ, գիւղեր քարուքանդ ընկած...

Ահա՛ բազմամարդ Անին, Նախիջեւան,
Արմաւիր, Դուին, Նաեւ Երեւան,-
Սիս, Տիգրանակերտ, Մուշ, կարին և Վան,
Ի վիշտ Հայ-ազգին ողջ կիսակործան:

Ո՞ւր Արշակունեաց տեղն Վաղարշապատ,-
Ո՞ւր մեծ քաղաքներ կարս և Արտաշատ,-
Ամպերի մէջից ծերն Արարատ,
Տխուր նայում է վշտովն անվարատ. :

Ահա՛ արքայից գայիսօն ու Թագ,
Դիւցազանց ամուր սաղաւարտ, Նիզակ,-
Սուրերն ու վահան, Նաեւ դրօշակ
Կոտրած ընկած են արիւնաճաշակ...
Միայն է մնացել մայր էջմիածին,
Նստած որբի պէս ձեռն 'ի ծնօտին:

Յարութիւն Ոստանիկ:

40.

Մուխամմազ

Ա՛խ քու ջամալիդ մատաղ, խելք ու քեամալիդ մատաղ,
կեանք ու ահվալիդ մատաղ, դովլաթ ու մալիդ մատաղ:
Քնած տեղդ բա՛ց չէիր, ես գնումեմ լաց չէիր,
Համարձակ նստած չէիր, խոնարհ մանդալուդ մատաղ:
Ըռանգով ապարէշում ես, պատկերքի պէս նախշուն ես,
Սիրական ես սիրումես, Թիրմա ու շալիդ մատաղ:
Գիւլարաթնով արած քօշիդ, կամ ես տալի քու խօշիդ,
Մեռանեմ մամմառ դօշիդ, ջէյրան մարալիդ մատաղ,
Բուսական է ամանչես, սումբուլի պէս խանանչես,
Շամշի-Բալին մի կանչես, ձէնով զուալիդ մատաղ:

Յովակիմ Շիմշիրեանեանց:

41.

Երգ առ Արքայն Ռուսաց(*)

Աստուած, զԱրքայն պահեա՛,
Յերկրի աստ ուր նմա,
Կեանս բազմամեայ:

Գոռոզաց սանձողին,
Տրկարաց պաշտպանին,
Համայնից մխիթարին,
Ի վայր հոսեա՛:

Զսեան հզօրախառ,
ԶՌուսաստան ուղղախառ,
Դո՛ւ, Տէ՛ր, պահեա՛:

Տո՛ւր նմին կարգ ամուր,
Յուժգնութեան զօլ անդորր,
Իսկ զանարժան բոլոր
Ի բաց վանեա՛:

Մարդկութիւն զենազարդ,
Քաջնորին մինչև ցարդ
Ո՛ Տէ՛ր, պահեա՛:

Զինուորաց վրէժառուաց,
Յարգ պատիւ փրկողաց
Կեանս բազմօրեայ:

Զանձինս խաղաղարար,
Զազինս իրաւարար,
Դու, Տէ՛ր, պահեա՛:

Կեանս նոցա հեղ ուշիմ,
Յար անկեղծ՝ մտերիմ,
Մեծաց հաւատարիմ
Ո՛, Տէ՛ր, յիշեա՛,

Ո՛վ վերին Տեսչութիւն,
Զառատ քո օրհնութիւն
Մեզ առաքեա՛:

Առ բարին ձգտութիւն,
Երջանկաց հեզութիւն,
Վշտաց համբերութիւն,
Աստ պարգեւեա՛:

Լե՛ր յաւէրժ մեզ պաշտպան,
Ուղեկից անխափան,
Զմեզ ուղեկցեա՛:

Գեղեցիկ լուսաւոր,
Կեանս զուարթ երկնաւոր,
Մեր սրտի մերձաւոր,
Սրտի փայլեա՛:

Աւետիք Մամիկոնեանց:

(*) Թէեւ «Սոխակի» I հատորում կայ երկու տուն սորա թարգմանութեան, բայց այստեղ աւելորդ չհամարեցի դնել անբոյշ «Боже, Царя храни!» երգի Թարգմանութիւնը: Ա. Գրիգորեանց:

42.

Հառաչանք գիշերային յընդանեան իւր

Ահա՛ անշշունչ բոլորն էր անուշ քուն իմն մտած,
վերջին լուսթին բռնել է ամեն երեսը դաշտաց,
կենսաբե՛ր դու հով, որ թեթեւ ամպոց առաջն ես առած,
ջե՞ս տանիլ արդեօք բաշխել իմ լերանց ձայնս հառաչանաց:

Երկնից պարտեզը լիք լիք սափորով ծաղիկներ շարած,
Պսակ է բերում, ճակատին դնում ամեն աստեղաց:
իսկ ես անփարատ խոր խաւարի մէջ անհետ թափառած,
Թափումեմ երկիր ո՛հ արտասուացս հետ ձայնս հառաչանաց:

Սեննակս է դառած տուն անմարդաբնակ, անապատ, անշէն,
Զ՚ունի թռչնոց ձայն, ձայն մի ազուական Հայրենի երկրէն,
Եւ ի՞նչպէս սրտիս ծառոց տերեւէն, խոր խոր անտառէն
փոխան բերկրութեան մեղմաշունչ օդոյ հառաչանք չանցնեն:

Ցաւոց իմ ընկեր-խօսնակ գիշերոյ-սոխա՛կ, մի՛ լռի,
Քեզ մօտենում է լոյսն առաւօտու, չէ՛ այնքան հեռի,
Վաղը քո փարդը դուռը կ՚բանայ ու քեզ հիւր կառնի,
իսկ իմ պանդխտիս հառաչանքը կ՚երթայ քո տեղը կ՚անցնի:

Սոխա՛կ, դու նորա կարմիր թփերում մի՛ խաբուի երբեք,
ինչպէս խաբուեցայ ես իմ վատ բախտէն, բախտէն թշուառ հէք
Անգութ հարուածով խորշակը կ՚այրէ քո սիրտը փափուկ,
ինչպէս հառաչանքն հէչ չեն պակսեցնում աչքէս արտասուք:

Ո՛վ գիշեր, գիշեր, խաւարով լցուած իմ սրտի նման,
Ամպոտ աչքերէս քանի՞ անձրեւներ թափես դառնահամ,
Երեկն ինձ այսօր լոյս պէտքէ փայլէր մխիթարութեան,
Ես ի՞նչ շատ հասար բերնիցս առար հառաչանաց ձայն:

Էն լեառը՝ որ կայ ծածկած ամպերով, լոյս արա՛ փոքր ինչ
Այցելու չ՚ունի, ես եմ որ այստեղ ո՛հ, առնումեմ նինջ,

Բախտը ձեռքիցս բռնած աքսորեց էն սարերից,
Բերեց քեզ յանձնեց որ՝ հառաչանացս տանես անթախիծ:

Թողի երկիրս, աշխարհս, Հայրենիս, սար ու ձոր ընկայ,
Ցերեկեան լուսով ճամփայ կորելով գիշերիդ հասայ,
Այժմ բռնել ես, ճամբես կապել ես, էլ տեղ չես թողում,
Բաց նեղացնելուց և հառաչանքներս գրա՞ւ ես դնում:

Գիշե՛ր, ինձ քանի՞, քանի՞ մի քանի՞ յետ ձգես այստեղ,
Տկարը քեզնով էլ առողջութեան յումմէ՞ առնու դեղ,
Ո՛հ թէ եղբօրէս, ա՛խ թէ իմ մօրէս խաբար կ՚բերես՝,
Քեզ հաւատացնեմ՝ հառաչանքը ինձ, սէր ու լոյսը քեզ:

Ճամփորդ վաղահաս, դու օդ տխրաշունչ՝ որ անխուշ ուղի
կտրումես գնում, գնում մերձենում երկրիս Հայրենի,
Սրտիս այս գիրը բա՛ց արա կարդա՛ քեռ, մօրս առաջի,
Եւ այսպէս գնա՛ բոլոր հառաչանքս մաքումդ պահի:

Յովսէփ վարդապետ փինաչեանց:

43.

Երգ

Տանկաց «Բաղարդայ չիչագի» եղանակաւ:

Աղջիկ դու սիրուն, շքեղ անունով,
Սեւորակ աչքով, երկնածիր ունքով,
Մինչեւ ե՞րբ վարվես հետըս կեղծ սիրով:
Այրուի քո սիրտը, այրուեցի հրով,
Խանձուի քո սիրտը, խանձուեցի բոցով:

Ամէն օր «վա՛ղը վա՛ղը» ասելով,
Եւ լոկ խոստմունքներ առաջարկելով,
Մինչեւ ե՞րբ մաշիս կեանքս տանջելով.
Տանջուի քո սիրտը, այրուեցի հրով,
Խանձուի քո սիրտը, խանձուեցի բոցով:

Գիշերները ինձ զրկել ես քնից,
Ցերեկներն էլ միշտ հարկաւոր գործից,
Մինչ ե՞րբ չարչարես այսպէս խաբելով:
Այրուի քո սիրտը, այրուեցի հրով,
Խանձուի քո սիրտը, խանձուեցի բոցով:

Դէ բաւական է, նայիր երկինքին,
Լսի՛ր գէթ անգամ քո խղճմտանքին,
Գթա՛ խնդրում եմ ձայնով աղեկէզ:
Մօրիցդ թագուն արի՛ մեր պարտէզ,
Ման գանք երկուսով նազլու, դու և ես:

Ռէզզաղէ:

44.

Յաղագս աշխարհի

Աշխա՛րհ քո սիրած մարդիկն գլխի շրջում են կարմիր օրում,
Աչքերդ ընկած մարդիկն, ցիր ու ցան են սարում ձորում:

Տովլաթը տուիր էշերին, հագուստը տուիր գէշերին,
Ծունր են դնում փէշերին, էշը էշին պարք է քորում:

Աննամուսը քո որդին է, խօսքդ նորա հետն մին է,
կայքն յիմարի ինչի՞ն է, քեզ համար է պահում հորում:

Գիտեմ դու աշխարհ չես փող ես, ժամանակաւոր խաբող ես,
Եթէ ձեռնարաց տու՞ղ ես, ինձի է՞ր չես պարտաւորում:

Աչքըդ մենակ ես եմ հանել, տեղն կարմիր ֆիլֆիլ ցանել,
կամուձես շուտով սպանել, խօղի պէս գլուխն ես փորում:

Զարկեարն Մայիֆին սիրաւ, այսքան նեղութեան համբերաւ,
Զունենալուս չոր հաց կերաւ, ման եկաւ հասարակ շորում,

Աբրահամ Մարտիրոսեան:

45.

Երգ

Տանկաց «Ա՛յ բալայ ուշաղի» եղանակաւ:

Ա՛յ աղջիկ, է՞ր ես
Ծածկել քո երես,
Բա՛ց դռնէ մի կէս,
Վա՛յ ես կ՛մեռնեմ:

Համբուրեմ, պաչեմ,
Քո փայլուն աստղեր,
Կարմիր թշերիցդ,
Քաղեմ զոյգ վարդեր:

Բա՛ց աղատ տեսնեմ,
Փախչդս առնեմ,
Սիրտդ կարօտ եմ,
Վա՛յ ես կ՛մեռնեմ:

Խօսքս մի՛ կտրիր,
Կամքս կատարի՛ր,
Խեղճ սիրտս շահիր,
Քո հոգւոյն մեռնեմ,

Մի՛ քողիր թշերդ,
Զեն ծակիլ փշերդ,
Թո՛ղ ուտեմ նշերդ,
Վա՛յ ես կ՛մեռնեմ:

Բարակ պռօշներդ,
Թո՛ղ հիմայ ուտեմ,
Էսօր հաց չ՛ունենք,
Ես շատ քաղցած եմ:

Մի օր քեզ տեսայ,
Շորեր հագնելիս,
Ա՛խ, բարակ մէջքիդ,
Քամար կապելիս:

Երբ որ ծարաւեմ,
Խիստ սաստիկ այրուեմ,
Թո՛ղ դօշիդ աղբրից,
Սառը կաթ խմեմ,

Ուշաթափ ելայ,
Թուլացայ ընկայ,
Մանեակ գցելիս,
Երբ ,,կուլոնդ‘‘ տեսայ:

Ես շատ աղքատ եմ,
Քեզնով հարուստ եմ,
Սիրովդ առատ եմ,
Քո խալին մեռնեմ:

Աղջի՛, ե՛կ այժմ էլ,
Դու միրկաթ արա՛,
Այդ քողիդ տակին
Թո՛ղ տեսնեմ ի՞նչ կայ:

Թո՛ղ խեղճ գլուխս
Ծնկներիդ դնեմ,
Եւ անուշ հոտումդ,
Գէթ մի ժամ քնեմ:

Ռէզզաղէ:

46.

Արեգակ ես, թէ լուսնեակ, պայծառ դիմօք եար ինձ համար,
Որ անդադար հէնց փայլում ես գիշեր ցերեկ վառ ինձ համար։

Թէ կամենայ մարդ համարել աստեղք երկնից մին մին դանայ,
Կամ ծովափու աւազներն, ումուտ կայ որ, թէ քթանայ,
Բայց քո անչափ թարիֆլամաղ, թիւն ինչ խնամ կու խմանայ,
Թէ եւ քանի սաղ է թուփ, բիւր տարի էլ կեանք ունենայ,
Ցաշխարհի մէջ ինչ նիւթ ջուր կայ, թէ դիփ էլ թուղթ թանաք դառնայ
Էլի գովքըդ ողջ գրելու, կարծեմ, որ չի հերիքանայ,
Բաս ես խպառ պիտի լռեմ, թէ չանես դու ճար ինձ համար։

Հրեշտակ ես սաղ 'ի մարմնի, յերկնից իջած երկրի վերայ,
Շատ գեղեցիկ քեզ կու փախչի, թէ եարա՛ք դա ինչ պատկեր ա,
Թաղավայել գլխիդ արժան, ոսկեթելի փունջ ծամեր ա,
Էդ կարմըրիկ սիպտակ դէմքիդ խիստ յարմար եւս ունք աչքեր ա,
Անուշահոտ բերնիդ քօղն նուրբ վարդագոյն պռօշներ ա,
Մարգարտաշար ատամունքդ ջուռահարած գոհարներ ա,
Մէկ մէկուց լաւ հատ ու ընտիր, անխըլթ անգին քար ինձ համար։

Ո՛չ մին տեղից չեմ քթանում, մէկ օրինակ յարմարական,
Ջուն խսերից դուրս բաներ են, ով աննման իմ սիրական,
Կաթնարեան գոյն թշերդ սաղ, խիստ շնորքով քինթ պատուական
Նազլու չանէդ նոր բուխաղով, դաշտայ խնկոց վայելչական,
Մարմառ վիզդ օխշաշ կուտայ պարանոցի շուշան ծաղկան,
Մագաղաթեայ գեարդան դօշդ, նոր դրախտ է եղեմական,
Ուր ինքն Աստուած պատրաստել ա, երկու հատիկ նար ինձ համար։

Վաղ եմ ասել մարդու բան չէ, տալ գովասանք քեզ արժանի
Բայց ճար չ'կայ սկըսողն պիտի մին կերպ թամամ անի,
Ճախարակեայ ձեռք ու ոտըդ ոսկէ սիւնի կու նմանի,
Աղաւնաքայլ ծանր երիշդ իր յետնից շատ աչք կու քանի,,
Էդ քամալու բօյ բուսաթն խելք ա գլխէն, որ կու տանի,
Հալբաթ քեզի մին տեսնողն միւսանգամ էլ արզու կանի,
Մահացու ես, դառել՝ես սաղ անմահական եար ինձ համար։

Թէ խաբար ես ինքդ քեզնէն, եկ ձեռքդ ա՛ռ մէկ հայելի,
Ցես ասա՛ ինձ ունեմ մի հախ, գովքըդ էդքան ես անելի,

Էդ անձնական քո շնորհքն, որ մեծ ծիրք է խիստ բարեկի,
Ումնում եարաք կայ էդ ղադար, բացի քեզնում, իմ սիրելի,
Էդ ի կեօրայ պարկեշտ հոգւոյ զարդն ա դահա էլ աւելի,
Քաղցր նիստ կայք ախորժ բարի, անոյշ զրոյցք հանդ գովելի,
Էդպէս խանում կայ յաւիտեան երկնահաստատ սար ինձ համար։

Մահլում բան ա էդպէս դէմքն հարկաւոր է, որ նկարած,
Միայն յառաջ լաւ քաշողի հոգսն պիտի կարծեմ արած,
Երանի թէ պատկերահան Ապեղէսն չէր վաղ մեռած,
Բալքեա գիտէր էդ նկարին ինչ ա պէտք որ նման բերած,
Բայց ի՞նչ օգուտ այժմ հարկէ Եւրոպայէն վարպետ ճարած,
Որ միում կերպ մամնաւոր ինչ էդ պատկերն քո յարմարած,
Թէպէտ քեզի աննըման բան կուլինի էն առ ինձ համար։

Կարծեմ գիփունք ղաբուլ անեն, որ մեկ ընտիր բան տեսնելիս,
Էն արուեստի շինող ուստան, խկոյն մարդի միտքն է գալիս,
Ուրեմն տես եւ իմացիր, ամէն մտիկ քեզ անելիս,
Քանի անգամ օրէնք ես ստեղծողին փառք եմ տալիս,
Կինապախան ծաղկի նման, յետնէդ հէնց միշտ շուռեմ գալիս,
Քեզ պէս կնկան ջանս մատաղ, որ ծնօղ ես երեք բալիս,
Մարդանովն եմ աշկար կասեմ, դու պտղաբեր ծառ ինձ համար։

Խրիստափոր Մարդանեանց։

47.

Փափագ Պարսկայ-Հայի

Ահա՛ գայ գարուն եղանակ սիրուն,
Բաշխէ Հայերին նոր վայելչութիւն,
Բորբոքէ վառուն քերթողաց արիւն,
Ուսման հանդէսին տալ զուարճութիւն։

Կեցցէ՛ և կեցցէ՛ վեհափառն մեր,
Նորա աթոռն հաստատ պահէ Տէր,
Զարգանան, ծլին իւր բուրաստաններ,
Երփներանգ ծաղկանց հիւսէ գեղ փունջեր։

Զարդարէ Հայոց ուսման կրեմներ,
Հետևի ազգին ունենայ քաջեր,
Գիտութեան շաւղում ուղղեն մեծ քայլեր,
Ծաղկեալ ազգաց մէջ ցրեն անուններ:

Եւ յառաջ մղեն փառօք յաղթանակ,
Քաջ Հայկայ արեամբն առնեն մրցանակ,
Ապագայ մարդկանց դառնան օրինակ,
Մնայ Ազգի մէջ բարի յիշատակ:

Եւ ապա կե՛ցցեն Հոգաբարձուներ,
Թո՛ղ յառաջ տանեն նոր կարգ, կանոններ,
Ցոքնելով թափեն իւրեանց քրտինքներ,
Միշտ անմահ մնան նոցա անուններ:

Թո՛ղ Պարսկայ-Հայն էլ աշխատի, ջանայ,
Փոխէ հին ընթացքն՝ ուսումն առնայ,
Թողնէ իւր նախանձ, սիրով ընթանայ,
Ազգասիրական հոգի ունենայ:

Պահեն Հայ անունն 'ի մէջ այլազգաց,
Իւրեանց սուրբ կրօն ուղիղ, անմոռաց:
Արժանի լինին լուսոյ պսակաց,
Կո՛ւնենա՞յ մաս ինչ արդեօք Բժշկեանց:

48.

Աշխա՛րհ, աշխա՛րհ, ո՛վ անողորմ աշխարհ,
Ասա՛ կեանքումդ ո՞ւմն ինչ բաշխար:

Ում ընկերացար վերջն խաբեցիր,
Գցար չար ճամփի, ոտքն կապեցիր,
Անխուշտ գայլի պէս մարմինը լափեցիր,
Խեղճիկ հոգին էլ սատանին բաշխար:

Շատին տուել ես քէ՛ֆ անել, վայել,
Շատին էլ անչափ փող ես ընծայել,

կարծեմ գլխի մէկ է, կայ էլ չ'կայ էլ,
Բայց ումն տուար, ան մուրով նաշխար:

Շատ է վերջանում քո կապած շարթը,
Շատ էլ չի վայելում քո բարձրացրած մարդը
Անհոտ ծաղիկ է քո տուած վարդը,
Ջահլա կուտանի զարուգլից բէթար:

Ոմանց ես անբախտ, ոմանց ոսկէթախտ,
Շատ ես վեր գցում նորանցից շատ վախտ,
կարծեմ քացխտ չունի վախտ, բէվախտ,
Ղաշղայ ձիւցն էլ դու ես վատ, բէթար,

Խեղճիկ Միսկին եմ, ինչքան էլ ճլտես,
Ջեմ գովել քեզնի, վլիցս խեղտես,
Դու էլ ինձ նման անլուայ կեղտ ես,
Քեզ էլ վերջ չունես, լինելու ես խար:

Միսկին:

49.

Երգ 'ի գովեստ ազգային սահմանադրութեան (1871)

Արդ ահա՛ իմ չքնաղ Արուսեակ ծագէ,
Իմ սրտի և հոգւոյ լոյս զուարթ բաշխէ:

Ո՞վ լիցէ քեզ նման Արուսեակ պայծառ,
Քան զքեզ գերարփի իմ կենաց համար:

Է՞ր արդեօք ընդ երկար հեռացար յաչաց,
Մութ մայլ զօր գիշեր շուրջ զինև պատեաց:

Զանձն իմ հալեցին սուգ, կսկիծ և լաց,
Ի թշուառ որբութեան անափոփ թողած:

Ե՛կ իմ սէր, իմ յոյս, իմ դշխոյ, իմ թագ,
Ցագեցո՛ զիմ ծարաւ և զհոգւոյս փափագ:

Ուրախ եմ զամբողջ կեանս առնել զոհ մատաղ,
Քեզ միայն, քո սիրոյդ, հաճոյից անկախ:

Մտե՛րիմք, բարե՛կամք, հա՛մազգիք և դուք,
Ո՛ն եկա՛յք բերկրութեանս զուգակից լերուք:

Պա՛ր առեալ ցնծացէք, իմ նախնի՛ք և հարք,
Բուրեցէք խունկ, կնդրուկ, դուք պատիւ և յարգ:

Ձի ահա՛ իմ չքնաղ Արուսեակ ծագեաց,
Իմ սրտի և հոգւոյ լոյս զուարթ բաշխեաց:

Ո՞վ Լյէ քեզ նման Արուսեակ պայծառ,
Քան զքեզ գերարփի իմ կենաց համար:

Աւետիք Մամիկոնեանց:

50.

Բ.

Ի վերայ Բիւլբիւլի

Բիւլբիւլ, դու էլ ինձպէս 'ի զուր ես տանջվում,
Աշխարհի ախմախն մէկ ես եմ մէկ դու,
Սիրուններից հաստատ սէր ենք պահանջում,
Միշտ կուոց մատաղն մէկ ես եմ մէկ դու:

Իմ եարս ինձանից սիրուն եար ունի,
Քո վարդըդ հանապազ մօտին խար ունի,
Ամէնն իւր ցաւին պատրաստ ճար ունի,
Զուրկ մնացող վաղն՝ մէկ ես եմ մէկ դու:

Ո՞վ կասէ թէ սիրոյ գործն խաղիս է,
Երբ մէկն գնումէ՝ մէկն գալիս է,
Ըստ առակողին թէ Թուրքից էլ փիս է,
Էն անկանչ ղոնաղն՝ մէկ ես եմ մէկ դու:

Դու վարդից ձէ՛ռ քաշիր ես Անթառամից,
Պատմողք կասեն մայեա չի լինիլ հարամից,
Առաւել չենք իլնել փարհատ քարամից,
Տեսնող նորան դաղն՝ մէկ ես եմ մէկ դու:

Ջեարկա՛ր, ինչ դու ասար՝ Մայիֆն լսաւ,
Մանուշակ ցանեցիր՝ ճանճախոտ բուսաւ,
Գնացողն գնաց, հասնողն հասաւ,
Տեղից անշարժ կաղն՝ մէկ ես եմ մէկ դու:

Աբրահամ Մարտիրոսեան:

51.

Ես և իմ պարտքը

Բայց թէ հիմայ լինէր ճար,
Իմ սիրտն ու խելք մեծանար,
Ես աւարտած իմ ուսում,
Լինէի իմ լոյս կեանքում,
Ես ինչ պարտքի մեծ վճար
Իմ հօր չէի ունենալ:

Երբ նա տեսաւ կրթած խելք,
Ուսումն առած բրան չենք,
Քանդում փոխումէ աշխարհ,
Հինն է գնում, գալիս նոր
Երեկուանն չէ այսօր
Վաղըն կ'լինի մի այլ նոր:

Երբ նա գիտաց, ոչ նշան,
Ոչ պատիւ կամ աստիճան,
Եւ ոչ նոյն իսկ խանութիւն,
Ինչի լաւ չեն քան ուսում,
Ես ինչ պարտքի մեծ վճար,
Իմ հօր չեմ միշտ ունենալ:

Երբ նա զգաց ինչք արժած,
Ճառանգութիւն չեն հաստատ,
Ու նա իւր պարտք առաջին,
Նախ համարեց իմ ուսում,
Ես ինչ պարտքի մեծ վճար,
Իմ հօր չեմ միշտ ունենալ:

Երբ նա զօրեղ ախոյեան,
Կանգնեց պաշտպան իմ ուսման,
Եւ նա տարաւ յաղթանակ,
Ինձ տալ ուսում բարեկարգ,
Ես ինչ պարտքի մեծ վճար,
Իմ հօր չեմ միշտ ունենալ:

Երբ նա խնդրեց, միջնորդեց,
Սէր միութիւն յորդորեց,
Եւ նա կազմեց ընկերներ,
Ինձ տալ բարի ուսումներ,
Ես ինչ պարտքի մեծ վճար,
Իմ հօր չեմ միշտ ունենալ:

Երբ նա հարուստ մեծատուն,
Բայց հայր բարի իմաստուն,
Բացաւ ինձ իւր գանձի տուն,
Ինձ տալ արժան մի ուսում,
Ես ի՜նչ պարտքի մեծ վճար
Իմ հօր չեմ միշտ ունենալ:

Երբ նա աղքատ եւ անկար,
Բայց որդեսէր բարի հայր,
Զը խնայեց իւր դենար,
Ինձ արժանի ուսում տալ,
Ես ինչ պարտքի մեծ վճար,
Իմ հօր չեմ միշտ ունենալ:

Բայց թէ տնանկ եւ աղքատ,
Նա չ՛մնաց յուսահատ,
Գնաց գտաւ բարերար,
Ինձ արժանի ուսում տալ,
Ես ի՜նչ պարտքի մեծ վճար,
Իմ հօր չեմ միշտ ունենալ:

Ուրեմն պետք է աշխատեմ,
Սովրել, որքան կարող եմ,
Թէ անպտուղ չ՛թողնեմ,
Իմ հօր իմ մօր լաւութիւն,
Ես չեմ թողնիլ անկատար,
Այդքան պարտքի մեծ վճար:

Սամուէլ Գիւլզատեանց:

52.

„Սամաւարը պատուական է“ երգի եղանակով.

Բօյդ բարձր սալբու չինար,
Աչքդ նախշուն, ունքդ կամար,
Դու ստեղծուել ես ինձի համար,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած,

Բաղչաբանհար ես կանանչ խոտով,
Շուշան ծաղիկ անգին հոտով,
Բուխաղդ լից ոսկի կուտով,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած:

Գոյնդ նըման է մարմարին,
Հագած զուքադ է յարմարին,
Դու ես վարդն այս աշխարհին,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած,

Պոօշդ լի ղանդու սամար,
Գովեմ գքեզ ողջ ընդ յարմար,
Սեւ սեւ խալեր, ոսկէ քամար,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած:

Ծնեալ տունդ Հայաստան է,
Տաղկով լեքն բուրաստան է,
Քեզ տեսնողն միշտ մաստան է,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած:

Ե՛կ ե՛կ մօտս դարդս բացեմ,
Ազլուխ առնեմ մի քիչ լացեմ,
Ձեռքով ոտքով ես կապուած եմ,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած:

Գիշեր ցերեկ նստած լալով,
Արիւն արտասուք թափելով,
Ինձ թողել ես չարչարուելով,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած:

Քեզ տեսնելն ինձ մեծ մահ է,
Հոգիս հանեմ տամ քեզ պահէ,
Ինձնում եղած ինձ ի՞նչ շահ է,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած:

Ես քեզ տեսայ ծաղկանց միջին,
Աղաչեցիմ ես իմ փրկչին,
Որ չ՛կտրէ յոյս իմ վերջին,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած:

Խեղճ Միսկին եմ, որ քեզ տեսայ,
Այն օրուանից հալս փիս ա,
Ե՛կ դու հարս դա՛ռ, ես քեզ փեսայ,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած:

Միսկին:

53.

Բա՛րէ քանի՞ հրաշափառ,
Հիւսեն երկինք հանդէս պայծառ,

Մինչ արեգին ճաճանչավառ,
Ի լոյս շողշող 'ի տես կայտառ:

Երբ բորբոքէ զանսփին կամար,
Եւ 'ի համբոյր յար բարեբար,
Ձեպէ ահա՛ բնութիւն 'ի լար,
Ամայնորդ 'ի մուտս բարօր:

Զօնել պարգեւ յէից կաճառ,
Ո՛ հրաշալեաց շնորհին անճառ,
Փառք բարձրելոյն փառք անդադար,
Վեր ուղղեսցին օրհնաբարբառ:

Դու վեհափառ Հայր պատուական,
Դու լոյս Հայոց, դու սէր Հայկեան,
Դու տէր և պետ անզուգական,
Փայլես արդեամբք մեզ 'ի պարծանս:

Քոյդ սիրալի գործք աննման,
Ցոլորդս հընչեն յոյժ բարձրաձայն,
Ուստի արժան հըրճուանք 'ի խանդ,
Կըրկին են հայք յորդխաղ համայն:

Ցաւուրս երկեան ամանորեան,
Հայցել յեթերց զամբարութեան,
Արգասաբեր յօգուտս Հայկեան,
Եւ շնորհի պսակ բարօրութե՛ան բարօրութե՛ան:

Զի կե՛ցցէ միշտ երջանկափառ կենօք,
Պայծառ յամս յոյր կե՛ցցէ Գէորգ,
Կաթողիկոս իբրեւ զարփին ճաճանչավառ,
Կեցցեն անյաղթ Հայկազն որեար
Անփորձ և զերծ յաոխաց չար:

Կեցցէ՛ կեցցէ՛ Հայութիւն,
Ցար կենդանասցի Հայոց աշխարհ,
Կեցցէ՛ կեցցէ՛ մեծապայծառ
Եկեղեցի սուրբ պերճափառ,
Այս ուխտս Հայոց 'ի սիրտս 'ի վառ,
Այս ուխտս Հայոց 'ի սիրտս 'ի վառ:

Վահրամ վ. Մանկունի:

54.

Ներբող(*)

Բա՛ւէ նջէք, մանկունք Հայոց, յի՞մ կայք տխուր սեւաթոյր,
Ի սուրբ յաջն հովուապետիս ծօն ծօնեցէք զհամբոյր,
Գո՛հ եմք զքէն հոգիդ Աստուած, աղբիւր շնորհաց մշտահոս,
Ողողանես զեկեղեցւոյ զանդ զանդաստան եւ զակօս,
Բուսուցանես տունկ տենչալի, տունկ բանական պերճախօս,
Զընտրեալս որոց հարուցանես, հովիւ հսկող քրտնահոս:

Շնորհ զքէն անմահ Աստուած աղբիւր անհատ մշտազեղ
Եօթն վտակաւ, սրբես մաքրես զոգիս մարդկան բազմամեղ,
Տաճար կազմես Երրորդութեանդ, տաճար մաքրեալ տուն եւ տեղ,
Գաս եւ հանգչիս հարբ եւ որդովդ հոգիդ անմահ եւ անեղ:

Ծնունդ անախտ աւազանաւ, ծնանիս յոգի եւ 'ի ջուր,
Զտես մաքրես, շնորհօք քոյին, որպէս զոսկիս որ 'ի հուր,
Տածես խնամես, բուծես, ձուլես, որպէս զարծաթ որ 'ի բով,
Սնուցանես յԱստուածային 'ի բան 'ի յերգ եւ 'ի գով:

Փող տարսօնեան 'ի յերգ նուագ 'ի փող տարփող հոգեշունչ,
Տայ հոգին սուրբ բարեխօսել 'ի հեծութիւնս անմռունչ,
Ուսուցանէ մանկանց երգել զերգս յաւերժից քաղցրաշունչ,
Լցուցանէ զպէտս մեր կարգէ հովիւ դէտ տեսուչ:

(*) Ի շնորհաբաշխ գալուստ բարձր սրբազան Գաբրիէլ Արք եպիսկոպոսի Այվազեան 'ի սուրբ վանս Հառիճոյ, որ 'ի Շիրակ, 'ի 1867 ամի Յուլիսի 15-ն:

Հնչեա մուսայդ, մուսայդ հսկող, հնչեա՛ կիթառ քաղցր աւաղ,
Ի նարեկայ մենաստանէն տո՛ւր դարձագանս ձայն հառաչ,
Ով հոգի սուրբ, անմահ Աստուած, ընկալ զաղերս եւ զուղերձ,
Օ՛ծ զոմվլւս, բա՛ց զունկ խլից, բան 'ի բերան դիր համրից:

Ամենակալ հոգիդ Աստուած, որ քաղցրութեամբ խնամես,
Քոյին խնամոք զարգացուցեր, երբեք չ'առիր մեզ անտես,
Լցեր շնորհօք զԱստուածարեալս, քաջ հովուապետ հոգետես,
Հրահանգել մանկունս Հայոց 'ի մարգ ուսման 'ի գրկէս:

Խնամք եւ գութ արարչական յազգէս Հայոց անպակաս,
Զգեցուցեր հովուապետիս, էմիփորոն զուտ կերպաս,
Տուր այցելուս հանդիսանալ, հանդէս ուսման մեկենաս,
Մանկունք Հայոց սովաւ դասցին ուսումնական յընտրեալ դաս:

Որ 'ի Սաղիմ առ Տէրունեայն, երբ կոխեցին զարշապար,
Ոստս 'ի ձեռն նուաղէին, պարք Եբրայեան շար 'ի շար,
Հապա մանկունք, ձայն 'ի յաւաչ, բացէք շրթանց ձեր զփակ,
Ձօնս 'ի ծափ, մատունք յաղիս յերգ հոգեւոր ներդաշնակ:

Զարթիր Հառիճ, բաւէ ննջես, դառար տաճար Աստուծոյ,
Տուն տիրամօր սրբոյ Կուսին, մաքուր պայծառ գերարգոյ.
Նոր Գաբրիէլ քեզ աւետէ 'ի խինդ 'ի ցինծ եւ յուրախ,
Ներդաշնակեա՛ զերգս յաւերժից, զոհ փառք պատիւ 'ի յերախ:

Մինչ ցե՞րբ նստիս, մինչ ցե՞րբ Հառիճ, 'ի սուգ, շիւան 'ի յաղօտ
Մինչ ցարդ ծագեաց նոր արեգակ, նոր արշալոյս առաւօտ,
Նազէ փեսայդ թագ 'ի գլուխ, պսակ փայլուն 'ի նարօտ,
Եւ ընդ առաջ, ել զգեցիր քո հարսնութեան պարեգօտ:

Ի զագաթանց յԱրարատայ, էջ արդ առ քեզ այցելու,
Կիսակենդան անկեալ հիքոյդ, առնել դարման, դեղ ազու.
Գորով աղէտ Սամարացուն, նման գթած ողորմած,
Ջանայ բառնալ վերայ խաչին, ածել պանդոկ յերկնայց:

Պանդոկապետ եկեղեցւոյ քաջ դիտապետ պահապան,
Որ ընկալեալ տեառն Յիսուսէ զերկու քսակ դահեկան,
Նովաւ պատել զվէրս քո խարիլ զայտուց քո մկան,
Յնուցանել մարմնով փրկչին……………:

Մասեաց սարէն ճախարելով գայ աւետարեր աղաւնի,
Շիւղ ձիթենեաց զօծումն հոգւոյն առեալ 'ի սուրբ բերանի,
Թփկունք ոսկի թեւք արծաթի, դէմք լուսափայլ գեղանի,
Շնորհք հոգւոյն 'ի նմանէ յորդ եւ առատ գեղանի:

Այսօր ցնծա՛ մայր մեր Հառիճ, կայթէ այսօր նոր սիօն,
փառք զոհութիւն վեր ուղերձեալ յոր Էնն Աստուած քանի՛ ծն,
Ի քո գալուստ, Հայր սրբազան, Աստուածարեալ գերզգօն,
Երգեն ցնծան մանկունք Հայոց հնչեն պշէր եւ զգեղօն:

Լուսարփենի հոլաթեւեալ տանել եւ էջ շար 'ի շար,
Թուչին ծափեն 'ի թեւ թեթեւ երգեն տաւիղ եւ քնար,
Մանկունք Հայոց հի՞մ դուք տխուր 'ի սուգ մնաք սեւաթոյր,
Սրբազնասուրբ հօտապետիս սրբոյ աջոյն տո՛ւք համբոյր:

Ծափ զծափի հարցէ Հառիճ, հարցէ շիրակ Արագած,
Ի քո գալուստ Հայր սրբազան, Աստուածարեալ գերազանց,
Այեր երկինք արեւ լուսին փայլին եւ բոյլք աստեղաց,
Ծագեաց արեւ լուսաճաճանչ մերժեցաւ մէգ ամպամած:

Շաղք սուրբ արեանց, այնք որ հեղան, որ 'ի մարմանդ Շաւարշան,
Ծաղկեցուցին գեղազուարճ, նոր Գաբրիէլ նոր շուշան,
Արդ ով Շիրակ, պարեա՛ 'ի դայթ, քանի նստիս սուգ շիւան,
Եւ ընդ առաջ հովուապետիս զձեռս 'ի ծափ Շիրակուան:

Օ՛ն արդ փութա՛ հայր Գաբրիէլ, փութա՛ ընթա՛ սրբազան,
փութա՛ փրկել զսուրբ սիօն, հարսն անարատ նոր շուշան,
Ցգխտութեան հեռ եւ նախանձ կալեալ տանին 'ի սպանդ,
Գատապարտեալ 'ի դատ, ի մահ, ի հուր, ի սուր եւ ի բանդ:

Մինչդեռ բաց է ողորմութեան դուռ դրանդիք պատուհան,
Անդուլ անձինջ պաղատելով թող թորեսցին բիբք ական,
Երբ վշտացին սիրտն միանձանց կացցեն յաղօթս առ Աստուած
Երբ բերկրեսցին մատունք խաղան 'ի թելս Դաւթեան քնարաց:

Ձոնդ Սարգիս (*) 'ի ձեռս քո առ զեռնից զսուրբ խաչ,
Երեմեայ երաժիշտն նուագեսցէ քաղցրաւաչ,

(*) Ձոն Սարգիս եւ երեմեայ Երաժիշտն են հիմնադիրք սուրբ Լուսաւորչի եկեղեցւոյն Հառիճոյ եօթներորդ դարուն:

Ի հաւուճոյ մենաստանէն հնչեմ ուժգին 'ի շիրմաց,
Ի ձայն քոյին տան արձագանք լերինք, բլուրք Արագած:

Ե՛լ Զաքարէ ([1]) սպասալար 'ի քո նժոյգ քո ճերմակ,
Սուր 'ի յազդեր աղեղն ի յուս ճօճեա ի ճօճ քո նիզակ,
Մուտ յասպարէզ աշտանակեալ հար յաջ ու ձախ հրոսակ,
Թո՛ղ դարուց դար յաւէրժ կեցցէ ի քո Հաւուճ([2]) յիշատակ:

Թէոդորոս վ. Շիրակունի:

55.

Գեղեցիկ գիշեր

Բարձր երկնքի տակ, երկրի երեսին,
Փայլում են անթիւ աստղեր և լուսին,
գեղեցի՛կ գիշեր:

Կանանչ դաշտերը ծածկված են ցօղով,
Սիրտ է կախարդում Սոխակն իւր երգով...
գեղեցի՛կ գիշեր:

Սիրած աղջկայ մօտ գնում է պատանին,
Տուներ է կտրում գողն այդ միջոցին,
գեղե՛ցիկ գիշեր:

Ունևորներն են մի տեղ զուարճանում,
Տընանկներ մերկ ու սոված են քնում,
գեղեցի՛կ գիշեր:

Բայց ես այդ պահուն, իմ անգին Հայեր,
Ձեզնով եմ զբաղված... կրելով ձեր սէր...
գեղեցի՛կ գիշեր:

Յարութիւն Ոստանիկ:

---

(1) Զաքարեայ սպասալարն է շինող սուրբ Աստուածածին եկեղեցւոյն Հաւուճոյ, մետասաներորդ դարուն:

(2) Հաւուճ, այժմ կոչվում է Ջրջառ:

56.

Պանդուխտն առ Սոխակ Հայաստանի

«Անուշ քնակլի» եղանակով:

Բարե՛ւ եկիր, դու մխիթար,
Ո՛վ սոխակիկ սիրուն թռչնակ,
Ո՛հ ի՞նչ վսեմ բաղդի այսօր
Հանդիպեցայ ես միայնակ—
Ո՛վ գերհռչակ:

Բարեա՛ւ եկիր իմ սուրբ երկրից,
Ո՛վ այցելու, ո՛վ կարեկից,
Տալով արդէն թեւից հանգիստ՝
Դէ՛հ, պատմի՛ր՝ շուտ Հայաստանից—
իմ ծնողից:

Մի՛ վախենար, ես այլազգ չեմ,
Մօտեցի՛ր ինձ, ազգուրաց չեմ,
Հայ եմ սրտով, Հայ եմ հոգւով,
Դրօշմուած եմ Հայ անունով—
վե՛հ նշանով:

Պատմի՛ր տեսնեմ մայր Թագուհիս,
Ի՞նչ դրութեան մէջ է ընկել,
Ա՛խ...., քաջ գիտեմ նա է ինձ մօտ,
Տխուր սրտով քեզ ուղարկել—
ինձ սփոփել:

Բայց արդեօք ինձ կ'տա՞ն երկինք,
Որ գոնէ լոկ վերջին անգամ,
Իմ Մասիսի անուշ ծոցում,
Լինեմ թաղուած առ յաւիտեան,
իմ հարց նման:

Ո՛չ..յոյս ես չունեմ.... սիրուն Թուշնիկ,
Ծննդեան տեղւոյս երգիչ քաղցրիկ,
Կացի՛ր, խնդրեմ, գնենք սուրբ ուխտ,
Ապրենք մի տեղ երկու պանդուխտ,
Բանիւ անսուտ:

Աղաչում եմ, ե՛կ կատարիր,
Այս խնդիրս սիրախափագ,
Շինի՛ր բոյնդ իմ տան կտրում,
Միշտ ել ու մուտ արա՛ արձակ,
Ազնիւ հոգեակ:

Ալէքսանդր Ա.Թաքէդեան:

57.

Բոլորաձեւ պայծառ դէմքդ լուսինին նման ես արել,
Թոյլ չես տալիս, որ համբուրեմ օտարին արժան ես արել,
Առանց սրի, կտրիչ Թրի ինձ որդի մահուան ես արել:

Նոր բաց էլած հոտով վարդ ես, արշալուսիցը զուարթ ես,
Ափսոսում եմ, որ կախարդ ես, սիրելուդ դուշման ես արել,
Շքեղ զարդիդ, անփուշ վարդիդ Սոխակիս դուշման ես արել:

Թէ զգում ես տօթ ամառը, բաս ընչո՞ւ ես էդքան սառը,
Բողբոջ կեանքիս կանանչ ծառը, չորացած դերան ես արել,
Փակ վանդակում՝ մուԹը բանդում սիրս գերեզման ես արել:

Լրանումէ քսան տարիդ, միտք չես բերում սիրահարիդ,
Օրէնքով զուգված .քո եարիդ՝ անօրէնք դիւան ես արել,
Սիրտս ես մաշում, չես վաշվաշում հայիֆ բանդիւան ես արել:

Անմեղ բերանս չափեցիր, միամիտ տեսար, խաբեցիր,
Մարմինս միսը Թափեցիր՝ պլուտ լուտ հուրեան ես արել,
Վիզս ծռած, ջունուն դառած դուդաղի նման ես արել:

Աշտարակեցի Խաչիկ:

58.

Գ.

Ով ունի աղջիկ պարոն, նորա գարունն է գարուն

Գարնան եղանակ, ե՛կ մի՛ Թող աչքս ճանապարհին,
Աստուած սիրես արի.
Ցաւն չի Թողել ինձ իմանալ՝ համըն բահարի,
կուլինի .քանի տարի.
Այսօր եարըս ինձ խոստացելայ՝ բանըն կատարի,
Դարձեալ չի դադարի.
Նոր աշխարհ եմ եկել՝ կարօտ եմ ուրախ խաբարի,
Թո՛ղ իմ իխտիարի,
Ո՞վ կայ ինձ նման տանիլ տուտ էշխի զումարի,
Միշտ ըստ սիրահարի.
Երբոր անտառից բուլբուլի ձայնըն տուն է գալիս,
Հոգիս բուն է գալիս.
Իբրեւ ամեռիս քօլ աշխարհին գարուն է գալիս,
Սրտի սէն է գալիս.
Ցանկալի սարըն շատ ինձ նման մէջնուն է գալիս,
Խիստ անքուն է գալիս.
Այս տարւայի ուխտաւորըն անհուն է գալիս,
Ով Թագուն է գալիս.
Նշան սիրոյ ընծաներ ունեն փունջ նունուֆարի,
կամ նարկիզը սարի:
Երկու լեզուանի եարի տէրըն զատ կանի ձեռնէն,
Վատ խաբերը մեռնեն.
Հաստատ եարի տէր բաղդաւորըն կու բռնի կրունեն,
կու գայ բաղի դռնէն.
Թո՛ղ ճգնաւորն տանջուի արանքումը .քարի,
ինքն իրան բէզարի.

Լաւ քննող է պէտք հասկանալոյ այս գովասանքըն,
Ինչ միտք ունի բանքըն.

Սէր վայելչութեան պահանջումէ մարդկային կեանքըն,
Եւ էնդուր է ջանքըն.

Ո՛վ խստակրօն, տո՛ւր ինձի սրտիս կարօտանքըն,
Քեզ լինի քո վանքըն.

Է՞ր բաց կ'թողեմ իմ ձեռիցս նազլ աշխատանքըը,
Որ մօտ է արաքըն.

Եթէ կամենաս անուանիր ինձ ընկեր չարի,
Ինչ ուզես համարի:

Զարկեար, դու զարուննի՞նչ ես անում՝ անսիրական ես,
Հերիք դաւի անես.

Ո՛չ անապատի ես և ո՛չ աշխարհի, ինչի՞ նման ես,
Իբրև կիսաջան ես.

Սէրս ճամբումն ինչ քաշումես չի փոշմանես,
Վատ անուն չի հանես.

Մին բեռան տակն որ մտել ես, միշտ պիտի տանես,
Ա՛խ ու վա՛յ չանես.

Խնդրես Մայիֆից քարեդ գրել ընդուեցը եարի,
Հանգիստ սիրահարի:

Աբրահամ Մարտիրոսեան:

59.

Ասացեալ 'ի վերայ պատուելի միրուքի, որ 'ի ձեռս ոմանց եղեալէ անպատիւ:

Գոհանակ եմ քեզանից՝ ո՛վ փառահեղ կամ սև միրուք,
Քեզանով եմ ես ստացել՝ աշխարհիցն պարգև, միրուք,
Ով քեզի վատ է ասում՝ նա խելքից է թեթև, միրուք,
Ցանկասէր պիղծ մարդիքըն, քեզ չեն սիրում թէև, միրուք,
Երեսիս զարդն դու ես կարգին բուսած անձև, միրուք,

Քեզ ի՞նչ հարկաւոր է ունդ ու խինեն կամ այլ հոտն,
Միրքաւոր թէ անմիրուք՝ կեղտոտ կուլինի կեղտոտն,
Արժան է սուրբ անուանել՝ մաքուր հողում բուսած խոտն,
Մինչի քեզ մէջլիսներում՝ իմ տեղս էր դռան մօտն,
Հիմիկ պատուելեաց դասում՝ ինձ տանում են վերև, միրուք:

Որտեղ քաղցած լօթի կայ՝ երեսն տկլոր եմ տեսել,
Ոչ ջիբին խարջն օրական՝ ո՛չ հացին լաւ շոր եմ տեսել,
Մազըն սպիտակ՝ երեսըն սափրել սուտ նոր եմ տեսել,
Թան լակած սև շան նման՝ աչքերն պղտոր եմ տեսել,
Թառամած բուրաստանին՝ ի՞նչ պիտոյէ անձրև, միրուք:

Ոմանք իրանց պատկերն՝ միացնում են կուռքի հետն,
Այս գործն է խիստ հակառակ՝ մեր հայրենի վարքի հետն:
Ամենից գովելի է վարվելն աշխարհի հետն,
Ի՞նչ վատ է կարմիր թուշեր՝ կպցնելն մուրքի հետն,
Այսինքն պամպակի մէջ՝ պահել վարդի տերև, միրուք:

Եթէ մին պառաւ ձիի՝ քոռակի պէս պոչն խուզես,
Տանես փողոց ծախելու, ջահիլ տավարի գին ուզես,
Առամին մտիկ կանեն, կասեն քեզի դու անպող ես,
Օյինբազ մարդու նման՝ մասխարայ ես կամ տնազ ես,
Շատերին ախմախ կասեմ, անմիտ կասեմ ես քև, միրուք:

Զարկե՛ար, դու կեղծաւոր ես միրուք չունես է՞ր ես խօսում,
Ե՞րբ ես դու այս բաւերն կանանց բերանիցն լսում,
Ճար չո՛ւնես Մայիֆի մօտ՝ վիզդ դանակի ես քսում,
Որով դու այսուհետև՝ ծեր մարդոյ գործ ես սկսում,
Արի՛ բա՛ց թող ունենաս մին լէ՜ն այէ՜ վէ՜լ միրուք:

Աբրահամ Մարտիրոսեան:

60.

Առ գինի

Գինի իմ գինի, փրփուրիդ մատաղ,
Փայլում ես ինչպէս առաւօտեան շաղ,
Քո իւրաքանչիւր կաթիլն ինձ համար,
Խիստ թանկագին է, ինչպէս մի գոհար:

Գործում ես դու միշտ մեծ հրաշալիք,
Դու անբաղդներին կանես երջանիկ,
Դու ակարներին առիւծ ես շինում,
Քեզնով է երկչոտն Աքիլլէս լինում:

Հիւանդանալիս դեղն ի՞նչ եմ անում,
Երբ քո բաժակով եմ առողջանում,
Երանի՛ նորան, որ բնաւ չէ սովոր,
Տեսնել բաժակի յատակը քիչ չոր:

Ինչ օր չեմ տեսնում փայլուն բաժակը
Խաւար կորչում է իմ ախորժակը,
Այն օրն լինում եմ ես սաստիկ տրտում,
Ինչպէս թէ մի դարդ լինէր իմ սրտում:

Եղո՛ւկ այն մարդին բիւր հազար անգամ,
Որ ամենեւին չէ՛ տեսել քո համ,
Ով որ չի առնում քեզ իւր բերանը,
Նա է իւր անձի հաստատ տիրանը:

Թո՛ղ յիմար մարդը մաշէ իւր անձը,
Որ շատացնէ իւր կայքն ու գանձը,
Իմ ջանին հոգսը միշտ պիտի լինին,
Անպակաս անել բաժակից գինին:

Ոչ ոք մարդկանցից չ'կարէ քեզ տանել,
Ոչ ոք չ'կարէ ինձ քեզնից զատել,

Այդ բանը կարէ միմիայն մահը,
Երբ կ'շիջանի իմ կենաց ջահը:

Բայց երբ հոգէառս կանգնի իմ առաջին,
Իսկոյն կ'լցընեմ բաժակս վերջին,
Կասեմ ես նորան ,,Հրեշտա՛կ լուսափառ‹‹
Կա՛ց գինիս խմեմ, յետոյ հոգիս ա՛ռ:

Որ երբ սկսուի վերջին դատաստան,
Տիրոջ համարձակ ես տամ պատասխան,
Թէ ես իմ կեանքում միայն եմ սիրած,
Երկրում գինի, երկնքում Աստուած:

Գաբրիէլ Ծաղիկեանց:

61.

Գինի

Գոռոզացող մեծն Բաքոս,
Նկատելով երկնքից,
Մարդկանց ցաւոց, հոգսերի մէջ,
Զրկուած սիրուն աշխարհից:

«Խմիր գինի, ասեց մարդ,
Երբ բաղդը քեզ նեղում է,
Խմիր գինի, գինի որ քեզ,
Ամեն բանից փրկում է»:

Նրանց վիճակը մեղմացնելու,
Մի Թալիսման հնարեց,
Դա էր գինին, տուեց նորան,
Մարդիկներին եւ ասաց.

«Խմիր գինի ասեց մարդ,
Երբ բաղդը քեզ նեղում է,
Խմիր գինի, գինի որ քեզ
Ամեն բանից փրկում է»,

Ողիմպեական սուրբ լեռների
Արծաթները թողելով,
Եւ Բաքոսի սաճները,
Բարձրաբերձից կրկնելով:

«Խմիր գինի, ասաց մարդ,
Երբ բաղդը քեզ նեղում է,
Խմի՛ր գինի, գինի՛ որ քեզ,
Ամեն բանից փրկում է»

Մեր նախնիքը ընդունեցին,
Բաքոսի այդ հնարը,
Յոյն բանաստեղծն Անակրէս,
Հնչեցնելով քնարը:

«Խմի՛ր գինի, ասաց մարդ,
Եթէ բաղդը քեզ նեղում է,
Խմի՛ր գինի, գինի՛ որ քեզ,
Ամեն բանից փրկում է»

Մենք ևս, եղբարք, ընդունենք,
Նորա զօրաւոր Թալիսմանն,
Եւ ճշտութեամբ միշտ կատարենք,
Բաքոսի սուրբ հրամանն:

Խմենք գինի, խմենք գինի,
Նրա բաղը մեզ նեղումէ,
Խմենք գինի, գինի՛ որ մեզ,
Ամեն բանից փրկումէ:

Գաբրիէլ Ծաղկեանց:

62.

Գիտունի հետ քար քաշելն հեշտ է խիստ,
Տգէտի հետ մեղր ուտելն դժուար է.
Գիտունը կ'ճարէ վերջն իրան հանգիստ,
Բայց տգէտը նորէն էլի յիմար է:

Ո՞վ կ'ասէ բնական իմաստուն ծնայ,
Ուսում չը գիտցողը անկիրթ կըմնայ,
Երբ որ ցեխը տեսնի անշուշտ կըմնայ,
Խոզի վիզը հարիւր մարգարիտ շարէ:

Գիտութիւնը մէկ արև է անխաւար,
Ծովից ոսկով կ'երթայ առանց նաւավար,
Բայց տգէտը չ'ունի ուղիղ գաղափար,
Որովհետև հոգւոյ աչքը խաւար է:

Ջի՛ւան, գտի՛ր դու գիտութեան գումարը,
Յառաջադէմ է լեզուագէտ ճարտարը,
Թէ կ'ուզես որոնէ՛ անբողջ աշխարհը,
Իմաստունի մօտ տգէտը տկար է:

63.

Գիտունը տգէտի բանից չի ցաւի,
Խելագարի գործը հաշիւ չի լինի,
Սիրահարը սիրականից չի ցաւի,
Սիրոյ ասպարէզը կոխ չի լինի:

Գիտութեան ճրագը յարաժամ վառ է,
Տգիտութեան վերջը մահ կըպատճառէ,
Ադամանդը հասկացողին վաճառ է,
Տգէտներու մօտը պատիւ չի լինի:

Մարդուս սրտով սիրական է հարկաւոր,
Բարեկամը սեպհական է հարկաւոր,
Պայպատը սեպհական է հարկաւոր,
Յիմարը կարդալով ազնիւ չի լինի:

Ջիւանը գիտութեան սրտով կարօտ է,
Բայց ի՞նչ օգուտ ժամանակը աղօտ է,
Ձայնը, կերպարանքը, քայլը խեր մօտ է,
Ագռաւը գովելով արծիւ չի լինի:

64.

«Մէկ խեղճ տղայ կեղտոտ քոսոտ,» երգի եղանակով:

Գեղեցիկ մի օր շաբաթ առաւօտ,
Ճանապարհ ընկայ դէպի՛ Ա...ի մօտ,
Դուռը բա՛ց արի սենեակը մտի,
Ա՛խ, ես ի՞նչ տեսի, կի՞ն թէ օրի՞որդ,
Մազերը շարուած,
Սպիտակ կուրծքը բաց,
Գլուխն էր լուանում,
Միամիտ կանգնած:

Երբ որ ինձ տեսաւ ամօթից կարմրեց,
Սիրուն աչքերը ձեռով ծածկեց,
Առաւ նա շալը մէջը փաթաթուեց,
„Ա՛խ...ա՛խ...ա՛խ...ա՛խ...“փախաւ ու անեց:
Ձեռերս թուլացան,
Աչքերս շաղուեցան,
Մնացի մոլորուած,
Տեսնելով նորան:

Դա է վրէժ:

65.

Ունայնութիւն աշխարհի

Գո՞յ արդեօք ուսո՝ քան զքեզ խորամանկ՝ ո՛վ աշխարհ ունայն,
Ու 'ի զմարդկան՝ մատնել զհոգիս՝ անդարձ կորստեան,
Դոգյես անհրաժեշտ՝ են քո զօրութիւնք՝ 'ի վերայ մարդկան,
Որոց և մարմինք՝ են քեզ բնութեամբ, ընկեր, միաբան:

Ընդաբոյս կենաց՝ զուարթ տեսութիւնք, քոց վայելչութեանց,
Տան ծածկել բազմաց՝ զքո դառն պատիր՝ դիւական նախանձ,
Մինչ յայլ թշնամեաց՝ մարդիկ խուսափան, ծողոպրին 'ի բաց
Ինքնին քեզ 'ի զոհ՝ փութան զմայլեալ, սիրովդ չափազանց:

Որչափ քաղցր ախորժ՝ 'ի քիմս մարդկան՝ լինին քո բարիք,
Այնչափ և անյաղթ՝ գերես զնոսա՝ սիրովդ գողորիկ,
Դառնալով ընդդէմ՝ քոց ներգործութեանց՝ պարտին միշտ մարդիկ
Ընդ նմին անձանց՝ զատնել յաղթական, իբրև զոռ մարդիկ:

ՅԱդամայ ցայսօր՝ բազումք 'ի քո գիրկ՝ մտին և ելին,
Բայց սակաւք են, որ քաջութեամբ զքեզ՝ խապառ յաղթեցին,
Զի սէր քնքուշ՝ թովիչ զօշաքաղ՝ զաղիր, ումպէտ, սին,
Ապշութեամբ կալեալ 'ի գուբ կորստեան՝ ած զամենեսին:

Որպէս 'ի սկիզբն՝ նոյն ես դու և այժմ՝ լցեալ և յապայն,
Զիք նուազութիւն՝ հեշտալիր սիրոյդ՝ առ մարդիկ համայն,
Մարդիկ ինքեանք են՝ վատաբաղդ թշուառ՝ կոյր միանգամայն,
Որք ափշեալ փառօքդ, չ'ասեն թէ սոքա են սնոտի, ունայն:

Աւա՜ղ կուրութեանն՝ քանի՞ երկեալ է վիճակ մարդոյս,
Որ քո տակաւին՝ յանցաւոր բարիս՝ կապէ զիւր զյոյս,
Ո՛չ հայէ բնաւ յիւր ընկեր փարթամ, 'ի քէն ո՛չ տայ լոյս,
Որ մերկ և դատարկ՝ ելեալ յաշխարհէ՝ զամենայն կորոյս:

Ո՞վ արդեօք 'ի քո փառս և ճոխութիւնս՝ եկաց մինչ խապառ.
Ո՞վ զքեզ կալաւ՝ որ յապագային՝ ո՛չ մնաց թշուառ,
Զի զոր միանգամ՝ տաս ումեք զքո՝ պարդև մեծափառ,
Զայն կրկին բառնաս՝ տաս նմա զնչին կտաւեայ պատառ:

Այսպէս քոյդ 'ի քեզ կայ միշտ և մնայ՝ ո՛վ աշխարհ մոլի
Կոյր են հետևողքդ՝ զոր պարծին նոքա բարեօքդ լնուլի,
Այսօր փափկանայ՝ քև պճնազարդեալ՝ յարծաթ և յոսկի,
Վաղիւն անշուշտ, ակամայ կամաւ՝ մերկանդամ դնի:

Ուսոի հէ՛գ անձն իմ՝ բա՛ց այսուհետև՝ զաչս քոց մտաց,
Տե՛ս ո՞ւր բնակիս՝ 'ի մէջ որպիսի՞սի՝ մրրկածուփ ալեաց,
Դա՛րձ խոնարհութեամբ պաշտեա՛ միմիայն՝ զքո տէր Աստուած,
Որ զքեզ և զաշխարհ՝ յոչ էից 'ի գոյ՝ բանիւ իւր էած:

Մի՛ բնաւ խաբիր՝ 'ի զարդ աշխարհի՝ յանցաւոր բարիս,
Ծանեա՛ խելութեամբ՝ կատարել ճշտիւ՝ զքո սուրբ պարտիս,
Զոր ի՛նչ միանգամ՝ դու քեզ սեպհական՝ աստուստ համարիս
Զայն յետ քո մահուան՝ ակամայ թողցես՝ այլոց յաշխարհիս:

Պետրոս Տէր Մարկոսեանց:

66.

Ջան գիւլում տեղացի լեզուով

Գիտեմ գիտեմ ախչի ջան, ջան գիւլում ջան ջան,
Արտը փետեմ ախչի ջան, ջան ծաղիկ ջան ջան,
Մէ ախչիկ կայ մէկն էլ կայ, ջան գիւլում ջան ջան,
Էն էլ գիտեմ ախչի ջան, ջան ծաղիկ ջան ջան:

Կ'ասեմ արի ախչի ջան, Թաղէն էն թաղ ախչի ջան,
Քաղենք զարի, ախչի ջան, Էթանք մեր բաղ ախչի ջան,
Զարին քաղեմ զաթայ թխեմ, Բաղերն էլ որ եդ դառնանք,
Ճամփեմ եարիս ախչի ջան, Ուտենք օթաղ ախչի ջան:

Պտում պտում, ախչի ջան,
Կաթը կթեմ, ախչի ջան,
Գիշերը որ գաս ինձ մօտ,
Քէ խատեմ, ախչի ջան:

Գէ՛ տո՛ւր դէ՛ տուր ախչի ջան
Ես քու խեղճ ղուլ ախչի ջան,
Էրված սրտիս փափագը,
Շուտ արա՛ տո՛ւր, ախչի ջան,

Հայկ Արմայիրը, ախչի ջան,
Սար Մասիսը ախչի ջան,
Մեզ վկայ ու օգնական,
Սուրբ Սարգիսը, ախչի ջան:

Խշխի բոլոր, ախչի ջան,
Քարափու զօլ ախչի ջան,
Թէ դու ինձի չը առնես,
Ընկնես խոլոր, ախչի ջան:

Ես քեզ ղուրբան ախչի ջան,
Լաա՛ իմ բան, ախչի ջան,
Ցերեկը քեզ ումբրս տամ,
Գիշերը ջան, ախչի ջան:

Մի՛ ցաւացուր, ախչի ջան,
Ինձ մի ջուր տո՛ւր ախչի ջան,
Թէ դու ինձի չես սիրում,
Ինձի մահ տո՛ւր, ախչի ջան:

Սարգիս Փիլոյեանց:

67.

Գարնանաբեր
Քաղցրիկ գիշեր,
Շնչում
Սփռում
Է կեանք եւ սէր:

Երկնքումը հետզհետէ,
Վառվումեն շատ աստղեր փայլուն,
Ահա լուսինն շողշողումէ,
Բայց էր չկայ այն կոյս սիրուն...:

Գարնանաբեր
Քաղցրիկ գիշեր,
Շնչում
Սփռում
Է կեանք եւ սէր:

Ահա հեռուից լսումեմ ձայն.....
Ինձ կախարդեց...լռիր բնութիւն....
Երգումէ սէր Հայ աղջիկն այն,
Ա՜խ, ծանօթ է ինձ այն հընչիւն...:

Գարնանաբեր
Քաղցրիկ գիշեր,
Շնչում
Սփռում
Է կեանք եւ սէր:

Պարտիզի մէջ նա միայնակ,
Երգումէ, բայց արտասուքով....
Խեղճ է եւ որբ այն աղաւնեակ,
Բայց շատ հարուստ զ՚գացմունքով...:

Գարնանաբեր
Քաղցրիկ գիշեր,
Շնչում
Սփռում
Է կեանք եւ սէր:

Օրիորդը լուսնից այս բան
Աղաչումէր ջերմ լալագին,—
«Խնդրեմ լուսին դու տես նրան...
Պատմիր վիճակն իմ դառնագին...:»

Գարնանաբեր
Քաղցրիկ գիշեր,
Շնչում
Սփռում
Է կեանք եւ սէր:

Չէ՜, նա հեռու, պանդխտացած
Չէ լսում ձայն սիրահարին.....
Նա բարձրամիտ, բաղդախնդիր,
Սիրումէ այլ սէր օտարին:

Գարնանաբեր
Քաղցրիկ գիշեր,
Շնչում
Սփռում
Է կեանք եւ սէր:

Դու իմ անփորձ խե՛ղճ Հայկուհի,
Հանիր սրտիցդ քո ախտ ցանցառ....
Գիտցիր կ՚լինիս զոհ Անխղճի,
Նա չըգիտէ իսկ սէր արդար....:

Յարութիւն Ռստանիկ:

68.

«Կտուր կտուրի» եղանակով:

Գարուն գալուց խոշս կուգայ ծաղկունքտոյնին,
Շուշան, մեխակ, վարդ բացարած անուշ հոտոյն,
Խելքս կ՚երթայ սոխակների ծայնտուելոյն,
Գանգատ կանեն ողջ մէկ ամիս վարդի ձեռյոյն:

Ես էլ կ՚ասեմ եարս գամէ կանանչկոտոյն,
Վարդեր քաղած, փունջեր կապած վարդի թիփոյն,
Ասամ ինձ տո՛ւր ես էլ առնեմ անուշ հոտոյն,
Ասաց չչեմ տալ, վե՛ր, հեռացի՛ր դու իմ մօտոյնս:

Սիրտս գնաց երբ այս լաայ եարիս բերնոյն,
Վերկենալու էլ հալ չկաւ նստած տեղոյն.
Մնաց արեցի ինձ սպանեմ սրտիս նեղոյն,
Որ պրծնեմ էս աշխարհի նեղ օրերոյն:

Գիշեր ցերեկ էլ քուն չունեմ, եա՛ր քո սէրոյն,
Սիրտսկ երես, սեւ սեւ խալեր հալ աչքերոյն,
Կամարակապ ների քաշած սեւ ունքերոյն,
Սուր է խփել, արիւն կ՚երթայ սրտիս մէջոյն:

Խեղճի՛կ Միսկին, ի՞նչ ես լացում կեանքիդ ձեռիցն
Լաւն էն է, հրեշտակ ուզէ վերին Տէրիցն,
Հոգիդ առնէ, որ պրծնիս էս դարդերիցն,
Էլ չի գրես գանգատ սիրոյ եարի ձեռիցն:

Միսկին:

69.

Դու

ԱՌ ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ ԳԷՈՐԳ Դ. ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: (*)

Դու որ ապաւէն Հայկեան սերընդոց,
Հեզ մխիթարիչ այրեաց և որբոց,
Եւ մերս հաւատոյ վահան ոսկեվառ,
Ցար արփիացե՛ր զերթ արև պայծառ:

Եթէ յանդգնիմ ներբողիչս տկար
Ցարդարել ժամ մի զիմ անյայտ քնար,
Եւ վստահանամ զայս Թառամ ծաղիկ
Գերաշուք Վեհիդ ընծիւղել հեզիկ,
Զիս քաջալերեա՛, քաղցրութեամբ ընկա՛լ,
Եւ յիս արծարծեա՛ շնորհդ լուսափայլ:

Դու դէտ յԱստուծոյ մեզ պարգևեցար,
Արթուն՝ զուարթուն ՚ի դաւ բազմեցար,
Վեհից նախորդաց արժանեաց արժան,
Կարգեցար Հայոց Հոգևոր իշխան:

Արդ ո՛չ շողշողուն կարգ, փառք և պատիւ
Այլ դրուատելի բարիք քո անթիւ,
Գրոշմեալք ՚ի սիրտ Արամեան ազգիս
Զմայլեն զոգի կարճաս ներբողիս:

Օր քան զօր անխոնջ Քո ճիգն և վաստակ,
Բարօրեն անդուլ տրտմելոց վիճակ,
Ամենայն մասամբ բարեաց ճոխագայթ,
Ի քէն Հայրենեացս փայլփայլէ անդայտ:

Երանեալ Ներսէսք, Մեսրոպ և Սահակ,
Զքեզ նշմարեն ինքեանց նմանակ,
Զայս տեսեալ Մասիս զարտօսր յաչաց
Սրբէ և ժպտի յուսով առ Աստուած:

Գուշակեալ արդէն զաւետեաց օրեր,
Ուր Դու հիմնադիր լինիս Ջանասէր,

(*) Գէորգ Դ. Հայոց ազգի կաթողիկոսը ծնաւ Յուլիսի 15-ին 1815 Թ. Կոստանդինապոլսում: Ստանալով կրթութիւն այնտեղի Հայոց հոգեւոր դպրոցում, նա 1830 Թ. վարդապետ ձեռնադրվեցաւ Կ. Պոլսոյ Կարապետ պատրիարքից. յետ որոյ էր քարտուղար նորա մօտ յընթացս չորս տարուայ: Սեպտեմբերի 17-ին 1854 Թ. Վեհափառ կաթողիկոսը նշանակված է վանահայր Կ. Պոլսոյ սուրբ Ստեփաննոս եկեղեցւոյ: Այս ժամանակ նա հռչակուեցաւ իւր քարոզներով: Կ. Պոլսոյ Հայերը խումբ խումբ հաւաքվում էին լսելու նորա ճարտար քարոզները: 1848 Թ. Սրբ. Գէորգը միաձայն ընտրուեցաւ Բրուսայի վիճակաւոր եպիսկոպոս եւ կառավարելով այդ Թեմը յընթացս տաս տարուայ, ունեցաւ այնպիսի յարգանք համայն Հայոց ազգի, որ 1858 Թ. բարձրացաւ Կ. Պոլսոյ Պատրիարքական աթոռը, որ եւ վարում էր մինչ 1861 Թ., երբ յօգնած աշխատանքներից եւ հոգսերից կամեցաւ փոքր ինչ հանգստութիւն վայելել:

Սուլթան Աբդուլ-Ազիզը, գնահատելով Սրբ. Գէորգայ ծառայութիւնքը, պարգեւեց Նորան Մէջիդի շքանշանների երկրորդ աստիճանը եւ նշանակեց Նորան կենսական Թոշակ տարեկան երկու հազար պիաստր: 1866 Թ, ընդհանուր համաձայնութեամբ համայն Հայոց, բնակելոց յԱսեայ եւ Եւրոպա, Սրբ. Գէորգը նորից ընտրուեցաւ վարելու պատրիարքական պաշտօնը, (միանգամայն եւ կաթողիկոսութեան բարձր կոչումը), եւ այժմ ոչ թէ Կ. Պօլսում, այլ Էջմիածնում, որ եւ հաստատուեցաւ Բարձրագոյն հրամանաւ Նոյեմբ. 22-ն 1866 Թ.

Ընդունելով այս նոր պաշտօնը Վեհ. Գէորգը ցոյց տուեց իւր մտաց բոլոր եռանդը, որ ուղղած էր գլխաւորապէս Հայոց Հոգեւորականների բարօրութեան եւ լուսաւորութեանը: Նորին Օծութեան աշխատանօք հաստատուեցաւ

Երջանիկ՝ այո՛, որ դիտեն զայս օր,
Ովսաննայ կարդան Քեզ, Հա՛յր փառաւոր:

Զօրացի՛ր ապա, ո՛վ օծեալ ԳԷՈՐԳ,
Թո՛ղ Քեզ պահապան լիցի սուրբ Գէորգ,
Լե՛ր ազգիս Հայոց պաշտպան բարեխօս,
Ցար արփիացի՛ր զերթ արև պայծառ:

Ալեանք Մամիկոնեան:

70.

«Հիւսէյինի» եղանակով.

Դաշնակ երգոց ձայն խնդութեան,
Մեզ աւետէ յուսապատար,
Ո՛վ Հայաստան հրճուեա՛ սիրով,
Բա՛ց առագաստ քոյդ փեսային:
Հա՛ նայելով զինձ փեսայն,
Ի պերճ 'ի փառս գայ առ դշխոյդ: (2)

Ծափ ընդ ծափի շարունակեն,
Ի լուր հանուրց տան արձագանք,
Լերինք բլուրք ցնծան բերկրեն,
Դաշտք ծաղկաւէտք խայտան պարեն:
Հա՛ նայելով զինձ փեսայն,
Ի պերճ 'ի փառս գայ առ դշխոյդ: (2)

Ծառք ուռճազարդք տերևալից,
Պարտէզք պտղովք զարմանազան,

Հոգևոր ճեմարանն և նորոգուեցաւ հնացեալ Սուրբ Էջմիածնայ վանքը, պահպանելով իւր հին ճարտարապետութիւնը: 1874 Թ. Վեհ. Գէորգ Դ-ին պարգևեցաւ Սբ. Աղեքսանդրայ Նևսկու ադամանդակեան Շքանշանը:
«Մեղու Հայաստանի» № 55. 1875 Թ.

Ծիծաղադէմ արեգն 'ի դէմ,
Պայծառափայլ արդ շողշողին:
Հա՛ նայելով զինձ փեսայն,
Ի պերճ 'ի փառս գայ առ դշխոյդ: (2)

Մեսրովբ քահանայ Փափազեան:

71.

Ով բանաստեղծ է խօսքն անկեղծ է

Դու խնդրում ես, որ քեզ գովեմ, բայց ես ուզում եմ նզովեմ,
Միթէ՞ այնքան յիմար կովեմ, որ սուտ ասեմ հոգիս պղծեմ,

Եթէ գովեմ արժանին, Թամքի պէս է պոզ հայվանին,
Ողորմի տալով սատանին, ընդ արդարս ո՞նց հոլովեմ:

Ո՛չ ուղարկէկից ես ցաձկի, ո՛չ խնկից ես Հայոց զառկի,
Ո՛չ գալթայ ես նաւակառկի, արդեօք չէ՞ս ասում ես ո՞վ եմ:

Անուան գովասանք ես ուզում, սատանի բամբակ ես զրզում,
Գովասանքն քեզ չի սազում, եթէ ոտներդ էլ բուխովեմ,

Զարկեարն եմ ճշմարտաբնակ, վասն այն ոմանց չեմ ընդունակ
Մայխիֆից վե՛ր առ օրինակ, եթէ ո՛չ քեզնից խռովեմ:

Աբրահամ Մարտիրոսեան:

72.

Երգ հոգևոր

Դրախտից արտաքսան ընկամ այս աշխարհ,
Ընկամ չարչարանքի դարդ ու սարի հետ,
Կարդ ընկամ հայվանի, խեղճ եղամ խոնարհ,
Միտքս էլ հաստատամ յաւուկ չարի հետ:

Ես ինքս իմ կամքով ընկամ քարէ քար,
Զրկամ հոգիս, թողամ փիրփիրի բէթար,

Ինձ տուամ սատանին մշակ ու նոքար,
Պայծառ լոյսն ես փոխամ խաւարի հետ:

Հեղեղն աշխարհն արաւ մաքուր,
Տէրն տեսաւ մարդիկ տաւար են տխուր,
Ասաւ շատ են քաշում չարչարանքով հարիւր,
Խոնարհվեն հաշտուեմ էս յիմարների հետ:

Իվա՛ն, Տէրը քեզ ազատեց բանտիցն,
Ե՛կ հեռացի՛ր չար սատանի ֆանդիցն,
Փառք տո՛ւր ստեղծողին՝ պրծար դարդիցն,
Զա՛հտ արա խառնուես դու աշխարհի հետ:

73.

Մուխամմազ Նուխւոյ բարբառով

Տափը կոխեմ խոյեցունց աջար անում չաղ արեցին,
Էս բոլոր Շաքուա մէջին Ջուհուտ Զաքեարին դեօղ արեցին,
Խողը Թագուն գողացան աջար աշկար տաղ արեցին,
Թուրքի, Հայի, Ռուսի միջում .... թո'ղ արեցին,
Բասարման կտրեցին վերան սողան աղ արեցին,
Տափը կոխեմ խոյեցունց աջար անում չաղ արեցին:

Հինգ հոգի մին չվալով գնացին Բարսեղի տունն,
Ասեց փէտ չի վերաունէք վըրաններդ կուգայ շունն,
Զաքեարան ճամփա դրաւ, էլ խսկի չի տարաւ քունն,
Տեղներն մթին էր պռուով քիթան խոզի բունն,
Մորթեցին, շալակեցին տեղն առնոտ թո'ղ արեցին:
Տափը կոխեմ խոյեցունց և այլն:

Խոզապանն գիշերով վերկացաւ տունն տեսաւ,
Վազ տուեց պօլիցխանան շուտով կուվարտալին ասաւ,
Էս ըխտալթների միջում թէվան բէգը վերայ հասաւ,

Մին երկուսին ծեփեց, փչրեց, նա էլ իրան բանն տեսաւ,
Գալուստ, թեղոռ, Զաքեարին պօլիցումըն դալ արեցին.
Տափը կոխեմ խոյեցունց և այլն:

Տափը մննես, Զաքեա՛րա, խոզը հի՞նչ ա մարդ դեօղանայ,
Թէվան բէգը Ջգրուեց ասեց էն խոզը սրղանա՛,
Զաքեարան միտք արեց, ճարս խաշխկի տղան ա,
Նայ էլ խօ՛ շատ լըտր ա, միս տուէք ուտի չաղանայ,
Խոզի գլինն երեք մանէթ էր, հինգ թուման վե՛ր դրեցին,
Տափը կոխեմ խոյեցունց և այլն:

Կարելի ա էս հաղը ընկնի ուրիշ շհարներն,
Ով որ ասիլ զադայ ա, չի յիշի իմ հէրն ու մէրն,
Մկրտիչ, խի՞ ես վախում, միայն Աստուած ա քո տէրը,
Աշխարհս անցաւոր ա քէփնա մնալու քո խէրը:
Խոյեցէք խոզ գողացան խոզապանին խան արեցին,
Տափը կոխեմ խոյեցունց, աջա՛ր անում չաղ արեցին:

74.

Պատանի երգիչ

Դէպի կռուի պատերազմի,
Պատրաստվելով պատանին,
Դէն ձըգեց իւր խաղաղ կեանքի,
Օրեր քաղցր ու թանգակին...
Ձեռների մէջ քընար և սուր,
Առաջ գընաց քաջի պէս,
Նա ուրախ էր և ո՛չ տխուր,
Նա երգում էր երգ այսպէս:

Ո՛վ երգերի դու արձագանք,
Իմ Հայրենիք սրբազան,-
Դու իմ ազգի թագ ու պարծանք
Դու պաշտելի յաւիտեան.

Ահա՛ թող այս իմ սուր սուսեր,
Վըձուէ հարկեր թշնամեաց,
Երգի՛ր քնար, թո՛ղ զոհ, նուէր,
Լինին իմ կե՛անք հայրենեաց:

Ահեղ կռւի մէջ զոհ դարձաւ
Քեզ երգիչը փառ սիրով...
Եւ յաւիտեան թաւամեցաւ,
Ծաղկած առոյգ հասակով...:
Նա դէն ձգեց իւր սուր սուսեր
Ալիքների մէջ այն տեղ...
Երբ հնչեցուց քնարի լարեր:
Այսպէս երգով փառահեղ-

Ո՛վ իմ լարեր մեղմահնչիւն,
Ձեր հետ քանի՜ երգեցի,–
Ազատութիւն, ազգ, հայրենիք,
Ես 'ի սրտէ պաշտեցի....
Այժմ այլ ես չունիմ հնար
Իմ երգ երգել այն տեղում,–
Ուր շղթայքով ստրկութիւն,
Միայն իւր ձայնն է հնչում...:

Յարութիւն Ոստանիկ:

75

Վարդիկ

«Ո՞ր ես արագ գնում» երգի եղանակով:

Դեռ չբացուած կեանքիդ օրերը քաղցրիկ,
Ողջունեցի քեզ վաղ սիրա՛կան վարդիկ,–
Ինչպէս Սոխակ սիրահար վարդը կարօտած,
Ըշտապում է դէպի նա, դեռ նա չբացուած..
Որ գիշեր ու ցերեկ հսկում է անքուն,
Նորա թուփի մօտ միայն շինելով իւր բոյն...
Մինչ ցօղը տարափ գարնան ժամանակ,
Նորա թերթիկները բացում կարմրորակ,–
Սոխակը ծառից ծառ թռչում է անհարթ,
Եւ սիրով վարդին երգում է զուարթ...:

—Ես ևս նոյնպէս, վարդի՛կ, քո համար,
Առաւել քան Սոխակ,–քան նա սիրավառ...
Անցնում եմ օրերս յոյսերով միայն,
Եւ շատ նուիրում երգեր քո անուան...:

„Ա՛խ...“-կանչեց վարդիկը իւր հառաչելով,
Ահա՛ մաշվեցա՛ւ սիրտս քո սիրով...
Անցուցի քեզնով իմ կեանքս գարնան,
Ըզգացի 'ի սրտէ քո սէր վառվռուն...

Բայց իմ անո՛ւշ Սիրաբան, մի՛ այլ իմ համար,–
Մի՛ երգիր այդ սիրոյս երգերն անհամար...
Քո սիրած վարդիկը շատ չէ՛ մնալու,
Շուտով խորշակը թռիլցն է գրկելու,–
Քո զուարթ վարդիկը մինչև վաղն է բաց,
Աւա՛ղ...վաղը դու նորան կ'տեսնես թառամած...:„–

Լուսացաւ առաւօտ, ա՛խ...վարդիկն էր ցամքած...
Եւ անբաղդ Սոխակը շատ տխրեց, ողբաց...:

Յարութիւն Ոստանիկ:

76.

Խորհուրդներ Դառնաշխատին

Դու անբիծ կեանքի սուրբ նպատակով
Եւ բարի յոյսեր սրտիդ մէջ պահած,
Գընա՛ անտրտունջ այն ճանապարհով,
Որ դեռ ծանօթ չե՛ս և 'ունիս կասկած...
Թո՛ղ ամենայն տեղ քո հետքից թռչին,
Ամբարիշտների կերպ կերպ նըզովքներ,–
Թո՛ղ քեզ ծաղրելով նեղեն, փշացնեն,
Քո վաստակների չըկամ մարդիկներ,–
Թո՛ղ քո բարի գործ արհամարհանքով,
Ոտնատակ առնեն թշնամիք յիմար,–
Եւ չար, ապերախտ իւրեանց արարքով,
Թո՛ղ վիհ, խորխորատ փորեն քո համար...
Դու մի՛ զարհուրիր...քաջ և համարձակ
Անցի՛ր դէպի քո բարի ճանապարհ,–
Այնտեղ քո հանդէպ է յաջողութիւն...
Չի՛ մեռնիլ երբէք բարեգործութիւն...:

Յովհաննէս Քուչուբէգեան:

77.

Թերերից կանանչեց, հարբողն չի ամանչեց

Ես խմած եմ, դու հարբած ես՝ արի ջան ասենք ջան լսենք
ես էլ կածեմ դու էլ կածես, շահնազ ասէն կրսկրենք։

Փիլիսոփեն ցեխոտ կիլի, չունենալ երբէք հայելի,
փողն մերն է խմենք էլի, թաք ոչովի չի բամբասենք։

Բաւական է մեր ուսումն՝ ջոկումենք եփածն ու հումն,
Դուս բեր էն խաշած դդումն՝ փոքր մարիֆաթից խօսենք։

Ի՞նչ մարդ է Ցակոբ իշխանն՝ միշտ նստում է իրա տանն,
փողի շահ առնելն է բանն, այդ բաներից մենք պասենք։

Ո՞վ էր Ղուկաս վանանդեցին, խաբեցին տունը քանդեցին,
վերջն էլի պոչն կրնդեցին՝ մենք նորանից լաւ Ղուկաս ենք։

Մայիֆըն չի տամ մեր հացըն՝ թող լաց լնի իրա լացըն,
խմենք Զարկեարի կենացըն՝ որ նորա հետ միաթաս ենք։

Աբրահամ Մարտիրոսեան։

78.

Ըստ եղանակի «ման մաստի չարաբամ» Շեյխնի։

Ես սիրույդ հարբածն եմ, խելագար է՞ր կասեն ինձի,
Պատկերիդ տարուածն եմ, գիւահար է՞ր կասեն ինձի,
Եթէ դու լինիս այլոց եարի պէս՝ վարքումդ հաստատ,
Սիրահարից մէջ կամքն անկատար է՞ր կասեն ինձի։

Այս քո խփած վէրքը, իմ վրէս եթէ չի տեսնեն,
Ընհաս կարօտում, տանջուող չարաչար է՞ր կասեն ինձի,
Սէրդ եթէ որ ես մոռանամ քո մոռանալդ պէս,
Բարեաց ղաւաձան՝ չարեաց բարերար է՞ր կասեն ինձի։

Այրեմ մարմինս ձայնս չի հանեմ, անմռունչ զառին պէս,
Բարքըն անհանգիստ, լեզուն անդադար է՞ր կասեն ինձի.
Կարծեօք մայիֆի, որ քեզանով միշտ լուսաւոր եմ ես,
Այլքն անգիտութեամբ խաւարից խաւար է՞ր կասեն ինձի,
Ջերակեարն մատաղ լինելոյ քեզ չէ սրտի կասկած,
Առանձին ցաւ է էշխից բեյխաբար է՞ր կասեն ինձի։

Աբրահամ Մարտիրոսեան։

79.

Ծուլութիւն

Երանի՛ էր վարժապետին
Գլուխը ցաւեր սաստկապէս,
Աշակերտացս բաց թողար,
Որ խաղայինք պարզապէս։

Որ տուն նստած ամեն օր,
Հանգիստ ազրուստ վայելած,
Ուրախ օրեր տեսնէի,
Վարժատանից ազատուած։

Դեռ գլուխը չըլաւացած,
Նա ստամար աչքացաւ,
Մեր չարութիւնն չտեսնէր,
Եւ չ'պատժէր անիրաւ։

Ալս ընկնէի փորացաւ,
Այրուբէնից պրծնէի,
Ես անիրաւ այբխէչան,
Ուզում է հէնց ջանս հանի։

Վարժապետս խիկի մնտեղ
Երբէք բնաւ չի ցաւեց,
Նա էն միւս մարդերից չէ՛
Շատ գիտուն է բժշկից։

Նանի՛, գնա՛ վարժատուն,
կամ իմ տեղակ դու դաս ա՛ռ,
կամ ասա՛ որդիս հիւանդ,
կեանքն է հասեր 'ի կատար։

Իմ իրաւունքս իմ ձեռս է,
Պէտքէր իմ գլուխս ցաւար,
Թէ չէ էդ էլ չէր լինի,
Աչքս ցաւար քոռանար։

Ինձ ասումեն որ կարդաս,
իմաստուն մարդ կ'դառնաս,
Տօ՛ թո՛ղ կորչի, սուտ են ասած
կե՛ր ու խմի՛, ուրա՛խ կա՛ց։

Սարգիս Փիլոյեանց։

80.

Սիրտ սիրահարեալ

«Ցերկու ձեռին» երգի եղանակով.

Երկճիւղ լեզու նրբախօս,
Իմ պատուաստեալ վեհ գրչիս,
Աղէ՛ փութա՛ ե՛լ ՚ի գլօս,
Ի յայտ ածել գիղձ սրտիս:

Ի քեզ գոչէ սէր սրտիս,
Ջնազելոյն իմ չքնաղ,
Ջեաղութ կոչմամբ անձկալիս,
Առ որ անձկամ անյապաղ:

Գրի՛չ, գրի՛չ պատուաստեալ
Քոյդ կեղկեղէ սուր ձայնով,
Մերկեա՛ զիմ սիրտ վարանեալ
Զասպնջական լի սիրով:

Համե՛ղախօսդ իմ գրիչ,
Նե՛րեա՛ աղաչեմ չ՚անտեսել,
Լե՛ր իմ ըղձիս հանդն երգիչ,
Որ չէցէ ինձ մեռանել:

Սարգիս Փիլոյեանց:

81.

Ջան գիւլում

Ես քո սիրովն ամեն օր, ջան գիւլում ջան ջան,
Դեգերվում եմ միշտ մոլոր, ջան ծաղիկ ջան ջան,
Ցաւի մէջ եմ ամեն ժամ, ջան գիւլում ջան ջան,
Ճանապարհաւս բոլոր, ջան ծաղիկ ջան ջան:

Աղաչում եմ ինձ նայի՛ր,
Դառն արտասունքս սրբի՛ր,
Ամեն ձայնիս պատասխանիր,
Դիպա խեղճիս վերադարձիր:

Քեզ եմ կանչում, հոգի ջան
Մխիթարիչ սրտմութեան,
Մի՛ խնայիր բանալու,
Կարմիր դէմքդ աննման:

Չէ՞ որ մաշուեց իմ կեանքս
Չի կատարուեց իմ կամքս,
Յոյսս բնաւ վերջացաւ,
Ունայն անցաւ խորհուրդս:

Մի՛ ծածկիր քո երեսդ,
Չէ՞ ես մեռայ քո սիրով,
Մի խօսք ասա՛ ա՛խ դուն էլ,
Թէ ես քեզ հետ եմ սիրով:

Ն. Փ.

82.

Խրատ շատ քնող և ծոյլ մարդկանց

Ես ուզում եմ շատ չ՚քնես
Որ անուանդ ծոյլ չ՚լնի
Ես ուզում եմ շուտ վերկենաս,
Որ կազմուածքդ թոյլ չ՚լնի:

Շատ քնողը առհասարակ,
Ամենից յետ է մնում,
Եւ ծուլութիւն միշտ սիրողը
Խիստ վատ կեանքի մէջ է լինում:

Թէ ուզում ես առողջ լինես
Եւ ընկերիցդ յետ չ՚մնաս,
Պէտք է պայծառ լոյս ծագելիս,
Քնատեղից շուտ վերկենաս:

Թէ ուզում ես բարիք տեսնես
Եւ երջանիկ կեանք ունենաս,
Պէտք է երբէք ծոյլ չ՚լինես,
Այլ անդադար միշտ աշխատես:

Այս խօսքերս եթէ լսես,
Խղճմտանքիդ մօտ կ՚լինես,
Եւ Աստուծոյ օրհնութիւնը,
Յորդւոց յորդի կ՚վայելես:

Ես էլ միշտ կ՚աշխատեմ,
Այս ասածներս կատարեմ,
Որ եմ եթիմ, խեղճ սգազգեաց,
Ցաւօտ, դարդոտ ջեր կերէյեանց:

Խաչի. Դայի:

83.

Կոյր աշուղի երգը, (Թէջնիս)

Եկէ՛ք իմ սիրելի՛ Հայրենի Հայեր,
Քիչ մտածենք մեր խիստ ցաւերի վերայ,
Շուտ մի ճար գտնելու միացնենք սրտեր,
Մտիկ տալով մեզնից լաւերի վերայ:

Ուսմամբ է ճանաչւում մարդն իսկական մարդ,
Իսկ անուսն է անբան կամ թէ անհոտ վարդ,
Անկեղու են՝ փող ու շորն է ունայն զարդ,
Ինչպէս ակունք շարես կաւերի վերայ:

Ուսումը շինում է մարդոյս գիտնական,
Բանիմաց, իմաստուն, խելօք բանական,
Կրօնի, լեզուի, ազգի Հայրենեաց պաշտպան,
Միշտ ցաւող ազգային աւերի վերայ:

Էս կարգիցն էին մեր նախնի հարքը,
Որ լուսով փայլեցրին Հայոց աշխարհքը,
Կրօն, գահ ու լեզու, ազգութեան փառքը,
Արեամբ պահպանեցին խաւարի վերայ:

Էս կարգին հասնելու ահա՛ մեզ նոր դար,
Զի այժմեան մեր նաւուց փարոսն է արդար,
Անձնանուէր, գործունեա՛յ, իմաստուն ճարտար,
Լաւ կ'վարուէն վաղուան նաւերի վերայ:

Սրանից փառւելով մեր հոգևորներ,
Կ'գտան նախնեաց պէս, Հայեր, դպրոցնե՛ր,
Թատրո՛ն, արհեստանո՛ց և տպարաննե՛ր,
Քուն չեն տալ ծէսերի, ձևերի վերայ:

Արդ, եղբարք, պարտոքէն ժողովվենք մի տուն,
Հիմնենք մի գանձանակ անուամբ «ազգութիւն»,

Մեր ամէնքիս հոգու ընձա՛յք Աստծուն
Էն տեղ գցենք նուէր նուէրի վերայ:

Թո՛ղ դառնան մեր որդիք մարդիք կենդանի,
Կրօնագէտ Քրիստոնեայք Աստծուն ընտանի,
Ծնողաց օգտաւէտ, ազգին պիտանի,
Թռչելով գիտութեանց թևերի վերայ:

Ես մի կոյր աշուղ եմ ձեզ քաղաքակից,
Ցաւումեմ ձեր ցաւով գերթ անդամակից,
Վստահ եմ ամեն Հայ, ազնիւ ազգակից
Վատ չի նայել իմ սուրբ հրաւէրի վերայ:

Կոյր-Աշըգ Աստրախանցի:

84.

Կիլիկիա

Ես կուգամ Կիլիկիայէն
Թըմբուկս կողէս կախուած,
Տարսոն լերանց քովէրէն
Մինչև այստեղ եմ քշուած:
Կըպարեմ, կըպարեմ,
Թըմբուկս կըձայնեմ:

Ես կուգամ Կիլիկիայէն
Իմ փառքս ցուցնելու,
Եւ Տարսոնեան լեռներէն,
Ձեզ աւետիս բերելու:
Կըպարեմ կըպարեմ,
Ես գինի կըխմեմ:

Ես կուգամ Կիլիկիայէն
Աղեղս ուսիս կախուած,
Զէյթունցի քաջ նետացիք,
Ես շատուց եմ հռչակուած:
Կըպարեմ, կըպարեմ,
Աղեղս կըլարեմ:

Ես կուգամ Կիլիկիայէն
Ռուբինեան հին երկրէն,
Ուր սեաւ ամպեր թխագոյն
Հան խիտ առ խիտ դիզուեր են,
Կըպարեմ կըպարեմ,
Հայրենիքս ես կ'երգեմ:

Ես կուգամ Կիլիկիայէն
Սիրուհիս ետիս թողած,
Որոյ սիրուն չեմ զոհեր,
Եւ ո՛չ մի քար Հայրենեաց:
Կըպարեմ կըպարեմ,
Ամէն Հայ ես կըսիրեմ:

Ա. Հայկունի:

85.

Ով ոսկեմոլ՝ նա Հայ չէ

Ես Հայ եմ, Հայ կորիւն,
Ոսկի, արծաթ չեմ պաշտեր,
Իմ սիրուհիս Հայ կոյս է,
Ով ոսկեմոլ՝ նա Հայ չէ:
Անցի՛ր մըսեր ինձ անունդ,
Սիրոյ արժան չէ՛ քո բոյնդ:

Պարծի՛ս, գոռա՛ս, որոտա՛ս,
Հայրենեաց փառք կըկարդաս,
Բայց երբ ոսկին քեզ տաէ,
Ամէն բան դու կըմոռնաս:
Անցի՛ր մըսեր ինձ անունդ,
Սիրոյ արժան չէ՛ քո բոյնդ:

Դու միշտ կըսես „կըսիրեմ
Հայրենիքս, ես Հայ եմ,“
Բայց ոսկին երբ կըձայնէ,
Դէմքիդ գոյնը կըփոխէ:
Անցի՛ր մըսեր ինձ անունդ,
Սիրոյ արժան չէ՛ քո բոյնդ:

Ազգասէ Հայն դու կ՚անարգես,
Ի՞նչու պարծիս Հայ անուամբ,
Առանց ոսկոյ նա մարդ չէ՞,
Հայաստան զաւակ չէ՞:
Անցի՛ր մըսեր ինձ անունդ,
Սիրոյ արժան չէ՛ քո բոյնդ:

Ո՛հ մըսեր ինձ ես „Հայեմ“
Հայ ճանչնալ քեզ կարող չեմ,
Ոսկին է քո Հայրենիք,
Արծաթն է քո Աստուածիկ:
Անցի՛ր մըսեր ինձ անունդ,
Սիրոյ արժան չէ՛ քո բոյնդ:

Ա. Հայկունի:

86.

Երբ նաւը ծովը ընկղմի, Թանը լաւ է միշտ սովորին,
Խղճուկ նաւավարն ի՞նչ անէ, Քանց բաժակը թագաւորին,
Կոյրը միշտ վազում է տղմի, Շքեց վախեցող գլխուորին
Նորան լոյս ղամբարն ի՞նչ անէ: Հրացան ապարն ի՞նչ անէ:

Խլին թէ լաւ ասես թէ վատ, Նեղ տեղից չի գնայ լայնը,
Իրան կ՚կարծէ համեմատ, Բան չ՚հասկացող ունայնը,
Սեւին սապոն խեւին խրատ, Երբ մի մարդ հըլսէ ձայնը,
Ծուլին գաղափարն ի՞նչ անէ: Խեղճ քնարահարն ի՞նչ անէ:

Նայում է ջիւանը այտին,
Շքեղակերպ նաշխուն խայտին,
Անպիտան ստատ փայտին,
Հիւանի սուր տապարն ի՞նչ անէ:

87.

Հայ օրիորդի աղօթքը

Երեսիս զարկեց լոյսն արեգական,
Երբ կանգնած էի պատկերքի տակին.
Ձեռներս առ Աստուած, լոյս, նորա ձգած,
Աղօթում էի մեր Հայոց կեանքին:

Աստուած իմ Աստուած, Արարիչ իմ Աստուած,
Մի՞թէ միշտ սիրտս մնալու է կտրած,
Հային տեսնելով սուգի մէջ կորած,
Իւրեանց հինօրեայ վեհ փառքից զրկված:

Խնայիր ինձ պէս Հայ օրիորդին,
Նորի՛ր հպարտութիւնը մեր Հայոց Ազգին,
Նայի՛, ո՛վ իմ Տէ՛ր, աչքիս կաթիլքին,
Մութը պանդխտից փրկի՛ր Հայերին:

Աղաչում եմ, Տէ՛ր դէպի քեզ լալով,
Պաղատում եմ քեզ, Հայ՛ր երկնաւոր,
Մի՛ թողնիր լինել մեզ միշտ ողաւոր,
Մի՛ թողնիր մեր սիրտը լինի վերաւոր:

Ո՞ր մէկն ասեմ, ո՞ր մէկն թողեմ,
Ո՞ր մէկի համար մի առ մի պատմեմ,
Ո՞ր մէկի համար արտասուք թափեմ,
Որոնցից սրտումս մնացել են ցաւեր:

Ինչ տեղ կ'տեսնես մի քանի Հայեր
Ոսկւոյ, արծաթի ու մեծ փառքի տէր,
Նորանցից կ'լսես հպարտութիւններ,
Ու միմեանց վերայ խօսում զանգատներ:

Ինչ տեղ կ'ստանաս Հայոց լրագիրներ,
Ուրախութեամբ կ'առնես կարդալու լուրեր,
Կըբանաս, կու լաս, կ'ստանաս ցաւեր,
Թէ ի՞նչպէս են կռւում Հայ հեղինակներ:

Ցաւերով կծով միտքս է լցվում,
Տանջվում եմ, սրտիցս արիւն է կաթում.
Ե՛րբ քեզ եմ կանչում, ո՛վ իմ Հայաստան,
Ա՛խ իմ Հայա՛ստան, Հայաստան:

Դա է վրէժ:

88.

Երգ Ղաֆլայ կամ Շաքի

Ե՛կ տես ստեղծողի կարգըն, սահմանըն,
Աշխարհս տուել ա զոլման խանանին,
Տեսաւ որ չի պահաւ իւր հրամանն,
Ասաւ հաւատարուեն անբան հայվանին:

Մինին ողորմել ա, տուել ա նասիբ,
Մինին հուփ ա տուել, թողել ա քասիբ,
Ե՛կ միտք արա՛ տե՛ս թէ, ո՞րն ա նասիբ
Խելք չի հասնիլ էն անգուման զիվանին:

Մինին փառք պատւով երկինք ա տարել
Մինին չորս կողմիցն կրակ ա վառել,
Մինին դարդ ու ֆիքրի մէջումն ա խարել,
Ունի իշխանութիւն ամենայն բանին:

Շատ տարի ա, եղբայր, էս աշխարհ գալդ,
Ե՛կ երկինք ուղարկի՛ր դովլաթ ու մալդ,
Էն ահեղ տանեն լաւ կլլի հալդ,
Բէչքի օգնէ էս բանդիլան խվանին:

89.

Երգ Թէջնիս

Եարա՛բ էս խօսքերս ձեզ էլ տուր կըգայ,
Տեսէք թէ իմ մահի գալն ի՞նչ կ'լինի,
Միտքս կ'շաղաղուի, խելքս շուռ կ'գայ,
Տէրն ա խաբար թէ իմ հալն ի՞նչ կ'լինի:

Տեսամ հրեշտակին կերպն էր տեսար,
Հզօր զահմով եկաւ ձեռքին հուրի սուր:
Ահից կերպս փոխամ՝ փախան մեր ու քուր,
Չորս կողմիցն թագուն լալն ի՞նչ կ'լինի:

Տէրն սաւ իրս չափով չափեցէ՛ք,
Քօլ շնորհս վերևից թափեցէ՛ք
Դուրս տարեցէ՛ք ձեռն ու ոտն կապեցէ՛ք,
Այն տեղ ահով զողդողալն ի՞նչ կ'լինի,

Խվա՛ն, էս դարդերին դու դտի՛ր չարայ
Քանի որ կենդան ես փրկութիւն տրա՛,
Կ'ասեն թէ սուրբ կոյսն ծարին խաբար ա,
Նրան յայտնեմ էս աՀվալը ի՞նչ կ'լնի:

90.

Վարդանի վերջին խօսքերը իւր զօրքին

Ես մեռնում եմ, ազնիւ Հայեր,
Այս իմ անթիւ խոցերից,
Եւ թողնում եմ ձեզ այս խօսքեր,
Իմ ցաւագգաց շրթունքից:

Էլ չէք լսել դուք յաւիտեան
Խրոխտ ձայնը Վարդանի,
Էլ չէք երբէք դտնել Նորան,
Ձեզի վերայ հովանի:

Դեռ եւս երկու երեք րոպէ,
Ունիմ միջոց ապրելու,
Իմ ցանկութեան վերջին կէտն է
Ձեզ իմ կտակն յայտնելու:

Ա՛յ, տեսնումէք դուք ինձ ընկած,
Արնաշաղախ այս դաշտում,
Կինս որդիքըս, մոռացած,
Բայց փառաց մէջ եմ մեռնում:

Ո՞ւր է ձայնը, ոհ չեմ լսում
Իմ անուշիկ դստրիկին,
Նորան գրկած չեմ փաղաքշում
Իմ սրտացաւ որդեկին:

Մահճիս մօտին ոհ կանգնած չես,
Իմ անուշիկ Շուշանիկ,
Հօրդ մահը դու ողբում չես,
Իմ աչքի լոյս դու դստրիկ:

Ա՛խ ուր դստրիկ, ուր դու Շուշան,
Սրտիս միակ մխիթար,
Ե՛կ դու հասիր 'ի Շաւարշան,
Կապել վէրքերս անհամար:

Սպասիր քեզ ոհ համբուրեմ
Վարդանման քո այտեր.
Համբուրեմ եւ սրտիս դնեմ
Այդ փառփռուն քո աչքեր:

Սակայն.....վայ ինձ....սխալուած եմ,
Էս աշխարհիս ցնորքներով,
Սոքա բոլորն աւելորդ են,
Ինձ այս կէտս անխռով:

Իմ խնդիրը եւ իմ կտակ
Ա յսէ միայն, սիրելիք,
Աշխատեցէք սիրով անյագ
Ազատել ձեր հայրենիք:

Ձեր հայրենիք, ձեր սուրբ երկիր
Պարսկի ձեռին չ'թողնէք,
Վերջին կաթիլներ արեան ձեր,
Նորա սիրոյն չ'խնայէք:

Ձեր երդումին հաստատ կացէք,
Որ իրար հետ ուխտեցինք,
Ձեր սուրբ կրօն սրտի պահեցէք,
Որի սիրոյն կռուեցինք:

Դուք մի կարծէք թէ ես մահից
Սարսափումեմ կամ դողում,
Եւ մի կարծէք թէ ես բաղդից
Դժգոհումեմ դանդատում:

Չէ, իմ եղբարք, ես ուրախ եմ,
Եւ գոհեմ միշտ իմ բաղդից,
Որ մի միայն 'ի սէր ազգիս,
Զրկվումեմ ես իմ կեանքից:

Ի՞նչ էք կարծում, միթէ ցաւ է
Ազգի համար կեանք զոհել,
Ամեն Հայի միթէ պէտք չէ,
Իւր Հայրենիքն ազատել:

Բաւ է, Հայեր, Խուժաստանցին
Տանջեց մեզի մինչ ցայսօր,
Բաւ է որքան Պարսկաստանցին
Զարչարեց մեզ անսովոր:

Էլ ճար չ'կայ մեզ համբերել,
Այս անհամբեր վշտերին,
Մնաց միայն մեզ քաջ լինել,
Ջարդել, փշրել թշնամին:

Սորանով միշտ կարող էք դուք
Ազատ լինել յաւիտեան,
Եւ սորանով կարող էք դուք
Ազատել սուրբ Հայաստան:

Այսուհետեւ թող գայ առնել
Մահուան հրեշտակն իմ հոգին,
Էլ յաւիտեան հոգս չեմ անել
Հէք Վարդանս բնաւին:

Որովհետեւ ազատուեցայ
Ես իմ պարտքից մարդկութեան,
Ազգիս, կրօնքիս հանդիսացայ
Քաջ ախոյեան եւ պաշտպան:

Մնաք բարեաւ ուրեմն, Հայեր,
Զ'մոռանաք Վարդանին,
Վերջին բարեւս տուէք, ով քաջեր,
Իմ սիրելի Հայերին:

Միքայէլ Ս. Միրզոյեանց:

91.

Առ Նասրալին-Շահն 'ի վերադարձին իւրոյ 'ի Բաբելոնէ:

Երկի՛ն դուարթուն, երկի՛ր բաղմախինդ,
Համայն ազանց սիրտք ասա տրտմին 'ի խինդ.
Արեանց մեր յեռանդն այսօր դարձ 'ի դարձ,
Ազդէ զցնծութիւն վեհիդ վերադարձ.

Որ դառնաս ողջամբ 'ի գուժ սիրաբուղխ,
Որ հեղուս 'ի մեզ զերանութեան ուղխ.
Կեցցե՛ս ապա յար,
Յաստեղացդ 'ի պար,
Կեցցե՛ս անսասան,
Արքայդ բարերար:

Ողջո՛յն մեր խոնարհ յանկեղծ 'ի շրթանց,
Ողջո՛յն քեզ յամենեդ սրտից Հայկազանց.
Զոր զընեմք առ ոտս Տեառնդ առաւթուր,
Յերախտիս քոյին բորբոքեալ 'ի հուր,
Որ բարձեր 'ի մէնջ զրկանս վաղեմի,
Որ ցուցեր մինչ ցարդ մեզ սէր Հայրենի.
Կեցցէ՛ քոյդ Արեգ,
Պայծառ և անմէգ,
Կեցցէ՛ և Աւիծդ
Յաղթող միշտ 'ի վէգ:

Զի՞նչ ընդ առաջ արդ բերցուք քեզ 'ի ձօն,
Որ չլցէ շնորհեալ մեզ քոյդ գայխոն,
Օրհնութիւն և եթ լեզուք մեր բղխին,
Թէլք երախտագէտք 'ի ծոց բաբախին,
Որ բերես մեզ նոր 'ի նորոյ բարիք,
Որ պարգևես մեզ նոր կեանս երջանիկ.
Կեցցե՛ս յամն յամաց,
Ի գահոյդ՝ պերճ,
Կեցցե՛ս և փառաց,
Զլցէ քոց ըղձերդ:

Առանձար:

92.

Շէր քաղցրանուագ

'Ի գոյն «Բաւբաւ Թիթանի» խաղին

Ե՛կ ցանկալի ազնիւ թութակ,
Հնչեա՛ հնչեա՛ քաղցր եղանակ,
Ե՛կ բաղձալի անգին տատրակ,
Ա՛յ իմ թութակ անգին տատրակ,
Ազնիւ սոխակ դուք ցնծացէ՛ք,
Դուք խնդացէ՛ք դուք հնչեցէ՛ք:
Անուշահոտ վարդ պատուական,
Կարմիր կանանչ յոյժ զանազան,
Տեսողք զքեզ զուարթանան: Ա՛յ իմ թութակ և այլն:

Ե՛կ դու ծիծառն գարնան գուշակ,
Սեղմով հնչեա՛ քաղցր անուշակ,
Քաղցր է ձայնդ մեզ աւորժակ: Ա՛յ իմ թութակ և այլն:

Ազնիւ ծաղիկդ մանուշակ,
Աւետաբեր մեզ բովանդակ,
Ի տես գեղոյդ հրաւիրակ: Ա՛յ իմ թութակ և այլն:

Ե՛կ դու սոխակ միշտ սիրական,
Ի տես վարդին միշտ վառ 'ի վառ
Նա դոյն զգոյն զիմօք պայծառ: Ա՛յ իմ թութակ և այլն:

Կաքաւք առեալ ձագս շրջին,
Ի մէջ ծաղկանց քաղցր հնչեն,
Համայն լսողքն երանեն: Ա՛յ իմ թութակ և այլն:

Լերինք ցնծան քաջերեօք,
Հովիտք խնդան միշտ պարելով:
Մենք ցնծասցուք զայս ասելով: Ա՛յ իմ թութակ և այլն:

Թէոդորոս վարդապետ Շիրակունի:

93.

Բարեգործին

Երանի՛ նորան ով որ այս աշխարհում՝
Միշտ իւր կեանքի մէջ բարի է գործում,
Նա իմաստուն է և երջանիկ,
Նա մեծ և յաւերժ կեանք է վաստակում:

Այս աշխարհիս մէջ ամենն է ունայն,
Անոյշ կերուխում, շքեղ կացարան,—
Եւ թէ պճնազարդ փառք վայելչութիւն՝
Մարդուս մահից յետ այլ չեն դիմացկան:

Կ'անցնեն տարիներ...կըգան նոր օրեր...
Կըգան մեզնից յետ նոր ազգ, նոր մարդեր...
Ո՛չ ոք նորանցից չի յիշի երբէ՛ք
Այս աշխարհական վաղանցուկ բաներ...:

Բայց ի՞նչ կըյիշեն մեր սիրունդները,—
Միայն մարդուս չար, բարի գործքերը...
Քանի՛ աշխարհումս կայ ճշմարտութիւն,
Կըյիշատակվին բարին ու չարը...:

Զարին դատապարտ անէծք կըկարդան...
Իսկ բարեպաշտին օրհնանք յաւիտեան,—
Բարեգործ մարդու գործը մեծացրած,
Կասեն, կըգովեն ողջ միաբերան...:

Ուրեմն, հա՛յ եղբայր, սիրիր մարդկութիւն,
Այլոց և ազգիդ արա՛ լաւութիւն,
Չի՛ մեռնի երբէք քո գործ, քո անուն,
Պատճառ անմահ է բարեգործութիւն...:

Յովհաննէս Թօչուբէգեանց:

94.

«Ա՛խ ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ» երգի եղանակով.

Երանի՛ թէ քարանամ,
Այս ցաւերէս հեռանամ,
Էլ մի ուրիշ ճար չունեմ,
Որ դարդերս մոռանամ:

Ծանօթներս հեռացան,
Ինձի խաբար մոռացան,
Գժբաղդութեանս նայելով,
Անունս էլ ուրացան:

Ինչս ջահիլ օրս սև,
Բախտս կորաւ եղև խև,
Գժբաղդ կեանքիս օրերը,
Ինձ տևումեն յարատև:

Ո՞նց չլինիմ խևի պէս,
Կամ բանդարկեալ դևի պէս,
Որ չեմ կարող ես վարուիլ,
Այս աշխարհի ձևի պէս:

Իմ վշտալի մանգալը
Է թշնամեաց խնդալը.
Ուրախութեան իմ պտուղ,
Միայն մնաց ինձ լալը:

Որ ինձ առեց աշխարհը,
Ես էլ կ'առեմ այս դարդը,
Մինչև մնեմ գերեզման,
Հագնեմ տապանաքարը:

Թէ ուզենամ ճար անել,
Անշուշտ պիտիմ մեռանել,
Ուրեմն ես անճար եմ,
Էլ չեմ կարող սէր անել:

Ծանօթներս յայնժամ թո՛ղ,
Բերեն վրաս ածեն հող,
Անվիշտ սրտիւ ինձ հանգիստ,
Հնչեն անուշ երգեն փող:

Առողջ հաստատ յոյս և սէր,
Պատուէր եմ մեզ միայն Տէր,
Զուարճութեան օրերս,
Անցան՝ մնաց ինձ ստուէր:

Էլ չունենան կասկածանք,
Ողորմելոյս հալածանք,
Ղարիբ տղան եմ՝, այս ուխտ՝
Ուխտեցի ես 'ի պարծանք:

Յարութիւն Վարդևանց:

95.

Եթէ որ դարդս պատմեմ համայն աշխահին, սիրա՛կան,
Չեմ կարող վերջացնել մի ամբողջ տարի, սիրական,
Աստ', ի՞նչ էր պատճառը լսեցիր չարին, սիրական,
Մեղապարտ համարեցիր ինձպէս արդարին, սիրական:

Այն օրը խի՞ մոռացար, որ կամքովդ սէրս առնումէր,
Թէ մէկ ժամ չէիր տեսնում, սիրաբորբոք մեռնումիր,
Թէ վրէս վատ են խօսում, շուտ հաւատցդ դառնումիր,
Իմ մասին շատերի հետ. անումիր արին, սիրա՛կան։

Ցաւումեմ, արտասւում եմ ուրախ օրս ո՞ւր անցկացաւ,
Ափսո՛ս իմ աշխատանաց, հաստատ յոյսս զուր անցկացաւ,
Երեւի իմ վրայօք վատաբարոյ հուր անցկացաւ,
Աշխատի՛ր շուտով օգնես, ինձպէս տկարին, սիրական։

Ցաւիս անբաղդ ցուցակը ամենի մօտ չե՛մ բացանում,
Ուրիշի մօտ ծածկելով, միայն քեզ եմ խմաց անում,
Գիշեր, ցերեկ միշտ լալով, աչքերս զուր եմ թաց անում,
Վարդարանս խլեցին ի՞նչ գուլում արին, սիրական։

Գնդունի Բեանհանումն եմ ամեն վախտ քո լաւն եմ ուզում,
Ամեն տեղ, ամեն երկրում քո բարի համբաւն եմ ուզում,
Միասին չունենք նուէրդ ծովագնաց նաւ եմ ուզում,
Այսուհետեւ չ՛լսես անմիտ յիմարին, սիրական,

Բագրատ Գնդունի Խ. Աշտարակեցի։

96.

Մաղթանք առ ամենասուրբ Երրորդութիւնն(*)

Ա.

Երկինք անմահ, տո՛ւր վեհ կայսեր երկար կեանս երջանիկ,
Աղեքսանդր Թագաւորին և ժառանգին անդրանիկ.
Երրորդութիւն անմահ Աստուած, պահեա՛ զԱրքայն Ռուսաց,
Ցամայր ամս ՚ի քո խնամ յար յամրացեալ մէջ փառաց։

(*) Վասն կենաց մեծի կայսեր Ռուսաց Աղեքսանդր երկրորդի, եւ վասն վեհափառ կաթուղիկոսի ամենայն Հայոց Տեառն Տեառն Գէորգայ Դ-ի եւ վասն կենաց Բագուայ Մարդասիրական ընկերութեան յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին Հայաստանեայց, երգեալ ՚ի 22-ն Մայիսի 1875 ամի, ՚ի լրման

Հա՛յր անպատճառ, Տէր անսահման, Աստուած հանուրց բարեգութ
Պահեա՛ զգահ մեծի կայսեր կալ անայլթաք և անքոյթ.
Որդիդ Աստուած լոյս ՚ի լուսոյ, լուսոյ ծնունդ լուսածին,
Հօր ծոցածին, Մօր միածին, Աստուած և մարդ կուսածին։

Բան ծոցածին Աստուած փառաց ծնունդ անախտ և անճառ,
Զժառանգն ծիրանածին պահեա՛ անյաղթ գերափառ.
Հոգի՛դ Աստուած ամենակալ, ամենազօր Տէր փառաց,
Ցամենայնի յաղթող պահեա՛ կայսրութիւն Ռուսաց։

Ո՛վ սուրբ հոգի, անմահ Աստուած, Տէր խնամող անսահման,
Հայցեմք ՚ի քէն պահեա՛ կայսեր զտէրութեան ողջ սահման
Կայսերազինք միշտ ամրացո՛ ՚ի քո սպաս քո յերկիւղ,
Ի յասպարէզ զոռ թշնամւոյն, պահեա՛ ազատ աներկիւղ։

Բ,

Հա՛յր անսկիզբ, Աստուած անմահ անեղբ անուր անպատճառ,
Պահեա՛ խնդրեմք Հայրապետս զՏէր Գէորգ վեհափառ.
Որդի՛դ Աստուած, ծնունդ անճառ առ ՚ի հօրէ քան զարե,
Պահեա՛ գահս Արարատեան յամայր ամս յարատե։

Տէր իմ Յիսուս Քրիստոս Աստուած, Յիսուս իմ յոյս մարդասէր
Պահեա՛ Հայոց Հայրապետս ուսումնատենչ ազգասէր.
Տէ՛ր իմ Յիսուս յաւուր տօնից հրաշալի համբարձման,
Ութն շրջան լցեալ այսօր վեհապետիս սուրբ օծման։

Ուստի ՚ի գուճ անկեալ մաղթեմք, Տէ՛ր իմ Յիսուս բարերար
Ցոյս ապաւէն ազգիս Հայոց փրկիչ Աստուած բաւարար.
Հոգիդ Աստուած անեղածին բղխումն հօր անսպառ,
Միածնաէջ կաթուղիկէն պահեա՛ յաւերժ միշտ պայծառ։

Ուստի խնկեմք առ քեզ Աստուած գլուխ մեր հայցուած մեր
զուղերձ,

ութներրորդ շրջան օծման վեհափառ կաթուղիկոսին եւ մետասաներրորդ շրջան յոբելեանի Մարդասիրական ընկերութեան, այսու իսկ առթիւ ողեալ։

Ջէջմիածինն պահեա՛ հաստատ խաչ 'ի գլուխ ամպամերձ.
Առ քեզ խնկեմք խունկս աղօթից, քեզ բանաւոր պատարագ,
Ո՛վ սուրբ հոգի անմահ Աստուած, առատաբուղխ սուրբ փառք:

Հե՛ղ քո շնորհ հրածորան, որպէս 'ի սուրբ վերնատան,
Համազգային ընջմիածնայ նորակառոյց Ճեմարան.
Տո՛ւր զարգանալ 'ի քո շնորհ զորդիս նորոյ սիօնի,
Արտափայլել ուսմամբ 'ի լոյս, որպէս պայծառ կերոնի:

Երեք անձինք, մի բնութիւն, մի Տէրութիւն համագոյ,
Պահեա՛ զազգ մեր 'ի քո խնամ յաւերժանալ կամս քո.
Տո՛ւր Հայկազանց միշտ զարգանալ առ ասպարէզ գիտութեան
Տգիտութեան քանցել զարմատ, տնկել զբոյս գիտութեան:

Բա՛րձ, Տէր, խնդրեմք յազգէս Հայոց զնախանձն ընդաբոյս,
Բարոյական զմոլեխինդ խլեա՛ 'ի բաց կալ անբոյս:

Գ,

Հա՛յր անսկիզբն և անփոփոխ ամենակալ Տէր Աստուած,
Ի գութ մաղթեմք քոյդ առաջի առ քեզ խնկեմք զհայցուած:
Հա՛յր բարեգութ տո՛ւր սէր Բազում Ընկերութեան Մարդասէր
Սէր ազգային, անխզելի սէր յաւերժից, ազգասէր:

Հա՛յր ողորմած, Աստուած անմահ, Ընկերութեան լե՛ր պաշտպան
Առ 'ի վերայ անդամոցն աջ քո լիցի պահապան.
Որդի՛դ Աստուած, Տէր անսահման, Տէր մարդասէր բարեգութ,
Պահեա՛ Բազում զԸնկերութիւն 'ի քո խնամ յար անգութ:

Ի սէր քո սուրբ խաչելութեան 'ի սէր անպարտ սուրբ մահուան
Պահեա՛ զազգիս զկրութիւն վասն անմահ քո անուան.
Բան ծոցածին ծնունդ անճառ լոյս 'ի լուսոյ անմատոյց,
Մաղթեմք պահել զԸնկերութիւն զկապ սիրոյ զհանգոյց:

Խնդրեմք 'ի քէն որդիդ Աստուած, պահել զազգս անվնաս,
Ընկերութիւն Բազում պահեա՛ հանգիտանալ մեկենաս,

Զմանկունս նոր սիօնի զօրացո՛, Տէ՛ր, 'ի քո սէր,
Սիրել զազգս զկրօնս, սիրել զուսումն անվեհեր:

Յաւուր տօնի սուրբ համբարձման, մաղթամք առ տէր ձեռն
ամբարձ,
Տօնեմք Բազում Ընկերութեան զմետասան տարեդարձ,
Ի Ջիթենեաց գագաթ լերին, օրհնեցան դասք մետասան,
Ի նոյն սարաս օրհնին Բազում շրջան ամաց մետասան:

Բղխումն հօր, հոգիդ Աստուած աղբիւր անմահ անսպառ,
Պահեա՛ հայցեմք Ամենակալ դասս Ընկերաց սիրավառ.
Ո՛վ հոգի սուրբ, անմահ Աստուած հրածորան սուրբ փառք,
Յարգի զանգամս Ընկերութեան, պահեա՛ յաւէտ անփառանք:

Երեք անձինք, մի բնութիւն, մի տէրութիւն անփոփոխ,
Պահեա՛ Բազում զԸնկերութիւն 'ի մի հոգի ցփոխան.
Օրհնեա՛ Աստուած, անմահ Աստուած, զԸնկերաց դասս միաբան,
Ի լրանալ սոյն այս աւուր շրջան ամաց մետասան:

Յանուն սրբոյն Գրիգորի, Լուսաւորչին մեր հօրս,
Ընկերութիւնդ առիթ ուսման լիցի սերկեան սերնդոց,
Երկարեսցէն շղթայք կենաց, Ջեր պատուելի անդամոց,
Յարադուարձ միշտ պարզեսցի դրօշ սիրոյ խորհրդոց:

Ի Ջիթենեաց կառկառեալ արարչական սուրբ աջն,
Ի վերայ Ջեր կառկառեսցի յար կենսատու սուրբ խաչն,
Լուսարփենից, դասուց գնդից, գայցեն վերինք 'ի սատար,
Որպէս երբեմն Առաքելոց հանդիսացան մխիթար:

Ընկերութեան իղձք բարձրասցին մին յՈղիմպեան 'ի կամար
Գայցեն վերինք Ջեզ յօգնութիւն երամ երամ շար 'ի շար,
Շիրակունոյն անհարթ գրիչ Ջեզ ներբողել չ'զօրէ,
Ջեզ արխտուր վարձահատոյց լիցի երկին որ զօրէ:

Թէոդորոս վարդապետ Շիրակունի:

97

Զ.

Այսօր 'ի փող վաղն 'ի հող

Զարթի՛ր թմրեալ իմաստութիւն՝ է՞ր ես մտել տակն փողի,
Միթէ՞ այսքան քեզ ատելով չի լցուաւ փափաղն փողի:

Փողապաշտ մարդկանց չեմ ասում, եթէ լսեն կ'խուլանան,
Նորանք ա՛յլոց խրատումեն չ'առատանան չի թուլանան,
Ոմանք պատկերներ են պահում, որ աղօթքից չի ծուլանան,
Ոմանք 'ի տեղի պատկերի պաշտումեն մուրհակն փողի:

Մարդ կայ փողն արքայութեան յատկապէս նմանացնումէ,
Իրա փողով չի կշտանում շահով փող էլ բանացնումէ,
Առ հասարակ քօլ աշխարհին փողն է հեծել մանացնումէ,
Մինըն չ'կայ, որ բարձրանայ վեր իլնի շալակն փողի:

Եթէ մին էշ փողոց տանես մանացնես նորան մենակ,
Զուլն աբրուշումից լինի, փալանն մահուդից բարակ,
Իսկոյն նորան կուանուաննեն պատուելի պարոն աւանակ,
Եթէ տեսնեն շալակն է լքցրած տոպրակն փողի:

Բարձրացնումեն փառաց 'ի փառս, ով որ փողապաշտ հարուստ է
Ինչ վախտ սուտ է շարունակում՝ դիփ էլ ասումեն դրուստ է,
Շատ կան անփող փիլիսոփայք ամէնն մին տեղ կորուստ է,
Այս փառքն ո՞ւմանից ստացաւ անիրաւ քսակն փողի:

Աղքատին 'ի տեղի օգնելոյ ծաղր են անում պարացնումեն,
Սուտն ճշմարիտ են շինում՝ ճշմարիտն զըրացնումեն,
Արդար դատաւորաց աչքն՝ փող են տալիս կուրացնումեն,
Չկայ մին այնպէս առարկայ՝ որ կուրացնի ակն փողի:

Ու մին մարդից ես չեմ լսել՝ փողաւորի բանրասուելըն,
Նորանց խայտառակ արարքն՝ մարդկանց մէջ յայտնի ասուելըն,
Ցայտնի մահապարտ կ'դառնաս՝ եթէ ասես մնասուելըն,
Հէնց կ'խմանաս սրտին կպաւ, հոգէառ դնտակն փողի:

Ոմանք կասեն իրան չունի՝ էնդուր է փողին խխտ ատում,
Քողն ինքն մեղաւոր չէ՝ մարդկանց ձեռւյն եմ գանգատում,
Լաւ բարեկամք փողի համար՝ մէկ մէկու գլուխն են հատում,
Ինչպէս ադուէս երկու ոտով՝ ընկել ենք թալակն փողի:

Աշխարհ բառն ես վեր առի՝ խելքս սև քարին քսեցի,
Աշխարհն ածական ըստ անուան գոյական փողն տեսեցի,
Աստուած ձեզի հաւատացնի՝ սա էլ նորումն լսեցի,
Մէկ մարդոյ աչքըն ցաւումէր՝ ճար ասան բանրակն փողի:

Սաղ գիշերն ֆիքր են անում՝ արդեօ՛ք վաղն ո՞ւմին խաբեն,
Թէ հասկանան փող կայ միջին՝ երկնքից աստղեր կուլթափեն,
Մէկ ծախսում, որ մնաս տեսան, երես անկեալ կու մռափեն,
Ուզումեն փողով գարդարեն աջն և ահեակն փողի:

Չեմ ասում էն հարուստին՝ որ կայքին կեօրայ վայելումէ,
Հարուստ կայ փող մսխելն՝ նորա համար մեծ օլումէ,
Արժանաւոր հարուստներըն՝ իրանց գործքերից մահլումէ,
Ամեն հոգևոր բաներում՝ ունի յիշատակըն փողի:

Փողն ում որ պատահումէ՝ չէ հարցնում ո՞ւմ տղեն ես,
Գլուխդ դարտակ էլ լինի շատ խելօ'քների աղեն ես,
Օրէցօր ինձ կաւելացնես՝ եթէ իմ ասած կողէն ես,
Էհգիբարի վերարկու ա'ռ՝ ծածկի՛ր ձիդ դղակն փողի:

Զարկե՛ր քեզի ո՞վ է յանձնել՝ որ դու ես վճռում այս դաւն,
Մայիֆըն որ փողաւէր չէ՝ ո՞ր ծովումն է նորա նաւն,
Այժմեան մարդկքն խելօք են՝ կու հասկանան փորկդ ցաւն,
Դանակն ձեռքիդ ման ես գամ՝ չես գտնում դմակն փողի:

Աբրահամ Մարտիրոսեան

98.

Նուէր հանգուցեալ Զարկեարին, որ է Աբրահամ Մարտիրոսեան, Շամախեցի

Զարկեա՛ր վե՛րկաց ի՞նչ ես քնել
Սև հողումն պարկելով,
Բոլոր աշխարհքը քեզ գովում է,
Գրածներդ կարդալով:

Զ՚գիտէին ինչ մարդ էիր,
Քեզի նոր են ճանաչում,
Ափսոսում են քո եաքիցըն,
Եւ միշտ „Զարկեա՛ր" են կանչում:

Դու աշխարհում մարդ չես եղած,
Այլ ճշմարիտ մարգարէ,
Ո՛վ գրածներդ կարդում է,
Հէնց մնում է հիացած:

Քո խօսքերդ դիփ խրատ են
Այս աշխարհի մարդկերանց,
Եա՛ դու երկինք ես վեր էլած,
Եա՛ խօսքերդ վեր բերած:

Հին տետրակդ նորոգողն
Գրիգորեանց Աւագն է,
Դիփ տալիս է տպագրութեան,
Ասելով թէ „ափսո՛ս է":

Կտոր մտոր էս, էն անձնից,
Նա խնդրելով է առնում,
Բոլոր ջնջուածն ջոկում է,
Զահիլ օրն է նա մաշում:

Վե՛րկաց, Զարկեա՛ր վերկա՛ց նայէ,
Տես գրուածքդ ի՞նչ տեղ է,
„Սոխակումն է Հայաստանի,"
Խմբագրութեամբ Աւագի:

Լաւ բան կ՚լինէր խեղճ Միսկին էլ,
Անդ վե՛ր ելեր գար քովդ,
Էն բաժակէն տայիր խմել,
Այն ինքնափոր (*) թասովդ:

Միսկին:

99.

Զինւորի երգ

(Թարգմանութիւն):

Զինւորիս երգերը, եղբա՛րք լսեցէ՛ք
Աշխարհիս բաները լաւ ճանաչեցէ՛ք,
Մէկն ունի մեծ տներ, միւսն գիւղ ունի,
Միայն խեղճ զինւորը ո՛չինչ բան չունի:

Ծորերը թանկագին, փորը միշտ քաղցած,
Տո՛ւր ձիուն միշտ գարի, ինքդ կե՛ր չոր հաց,
Թէ քաջ պատերազմես կ՚տան մեծ պարգև,
Թէ ոտքդ կորցնես, կ՚առնեն մնաս բարև:

Ո՞ւր գնամ ես մենակ աշխարհքիս վրան,
Ահա՛ քեզ լաւ վաստակ քսան մէկ տարուան:

Գ: Դոդոխեանց:

(*) Տես «Սոխակ Հայաստանի» I հատոր №225 երգի մէջ:

100.

Անկիրթ մարդը

Ջուր ես էդքան մաածում, մաածելով բան չըլինիլ,
Թէ կուզ հողէդ ընծայես ամարդին հիման չի լինիլ,
Որին մարդ ես համարում հետը խօսալ ես սկսում,
Շողոքորթ սուտ խօսքերով իրանից քեզ վեր է դասում,
Ի՞նչ գիտես ուրիշ տեղում միտդ բերնին չի բամբասում,
Ինչ կարծիք, սոված գայլը մսին պահապան չի լինիլ:

Նորա հետ ուխտ ես դնում բարեկամութեան սէր անել,
Կարիքդ չես խնայում ուզումես անուան տէր անել,
Աշխատումես անբանին բարեկիրթ որդւոց հէր անել,
Ափսո՛ս որ չես հասկանում հայվանն ինսան չի լինիլ:

Թէ կուզես վեր վեր թռնես չոր փշերը ծառ չի դառնալ,
Թէ գործին ոսկեայ լինի խամ դերձանից զառ չի դառնալ,
Ջաքուչեդ ափսոս արի սև քարը մառմառ չի դառնալ,
Գիշատող մարդագայլին գառը հարևան չի լինիլ:

Անկիրթը չ'ունի պատկեր, չի հասկանալ մարդը ի՞նչ է,
Թէ վարդի անունը տաս, կ'հարցնէ վարդը ի՞նչ է,
Թէ ասես լաւ շոր հագիր, չի իմանալ զարդը ի՞նչ է,
Հագցնես դիպայ շորեր, անասունը խան չի՛ լինիլ:

Կասեն թէ օձի խոտն որից օձը հաղ չի անել,
Տաճիկը որտեղ տեսնի էլ էնտեղ նամազ չի անել,
Նորա վատ զարշ հոտերը սոխակը փարվազ չի անել,
Թէ կուզի պատուասա անես երբէք ռէհան չի լինիլ:

Էդքան որ զանգատում ես, ի՞նչ գործ ունիս յիմարի հետ
Չէ՛ որ նա խելքի բուն էր, հիմայ ինչո՞ւ էլաւ ադէտ,
Նթէ որ սրով խփեն գիտեմ արիւն չի գալ սրտէդ,
Հերիք է վե՛րկաց, կորի՛ր Քեամալոն Երևան չի լինիլ:

Աշտարակեցի Խաչիկ:

101.

Ե.

Ցուսահատ սէրտ

«Ցերկու ծնուին» երգի եղանակով:

Էլ ի՞նչ յոյս,
Խղճալւոյս:

Ցուսոյս պտուղ չորացաւ,
Բաղդիս շըջան ցրուեցաւ,
Վաղուց եղած սրտիս ցաւ,
Դառն էր՝ կրկին դառնացաւ:
Էլ ի՞նչ յոյս,
Խղճալւոյս:

Սրտիս ցաւը երանի,
Դեղոց լինէր արժանի,
Գոնէ՛ փութով ողջանար,
Լինէր կենացս պիտանի:
Էլ ի՞նչ յոյս,
Խղճալւոյս:

Շատ ժամանակ սպասեցի,
Թէ ազատուեմ ցաւերից,
Բայց ա՛յս երբէք չ'տեսի,
Ազատ ժամ փառնգլից:
Էլ ի՞նչ յոյս,
Խղճալւոյս:

Երբ ժամանակն անցկացաւ,
Ցուսոյս օրերն էլ անցաւ,
Էլ ե՞րբ պիտի սրտիս ցաւ,
Առողջ տեսնեմ և անցաւ:
Էլ ի՞նչ յոյս,
Խղճալւոյս:

Ջունիմ ինձ մարդ գթասիրտ,
Թերևս լըցի մխիթար,
Ցաւերս եղեն խիտ առ խիտ,
Մաշեն անդուլ անդադար:
Էլ ի՞նչ յոյս,
Խղճալւոյս:

Բայց անյոյսիս միակ յոյս,
Մնայ միայն Տէր Ցիսուս,
Որ նայելով խղճալւոյս,
Դուրս կ'բերէ 'ի գերյս:
Ուրիշ յոյս,
Խղճալւոյս:

Սարգիս Փիլոյեանց:

102.

Երգ Շաքի

Էս դամի դովլանի զողվու սաֆայի,
Հետն խարն եկած վայլին ի՞նչ անեմ,
Քաղցր վայելչութիւն էդ բէյ բաֆայի,
Թշնամիքս թէ բառնային, վայլին ի՞նչ անեմ։

Ղարիբ թուչունի պէս նստել եմ ծառին,
Մին մին պակասում ա կեանքիս տարին,
Մայիլ ըլած պէլվամ էդ ըռուզկեարին,
Քօլ զողվու սաֆայի մահին ի՞նչ անեմ։

Իվա՛ն շուխ պխուլխիլ ես աշխարհն է դաֆաս,
Էս դամի դովլանին քցելեմ հավաս,
Գաբրիէլ հրեշտակն կ'բռնի եախաս,
Վախով դողդողալով ահին ի՞նչ անեմ։

103.

Երգ ղըֆլամա

Էյ ադալար մեա՛ն բիր եօլա դիւշմիշամ,
Մանկլկի եախընդըր ուղաղի եդդի,
Բո՛ւ չարխի ֆալագդայ օլմիշ հարամի,
Քեօ՛մազի իքի դըր դուղաղի եդդի։

Բու եդդի դուզաղն նա՞դըր չարասի,
Նէ մեհլամըդը շէֆա էդար եարասի,
Նէ քեալամըդը բանեաջ էդար դարասի,
Քեալամի իքի՛ դըր վարաղի եդդի։

Վ արաղլանըդ քիմլարիդի բաղանան,
Բաղաղանի բիր իքի դըր բիր զանան,

Բիր խարար վէր եօլու արքեան դուղանան,
Ղալամի օնիքի թարըղի եդդի,

Թարըղն հաղլիղատ հանսի խանադըր,
Նէ՛ կէմիդըր խամի թաքմիլ անադըր,
Բիր ուզում սուզուլդի նէջա դանադըր,
Բահասի օթուզդըր եասաղի եդդի։

Եասաղինայ Իվան արզու չաքոխլար,
Դունեայի թարգ էդուպ ղանլար թեօ՛քոխլար,
Քիմլար նէճաթ բուլդի քիմլար իթոխլար,
Մաքեանի իքիդըր չօրաղի եդդի։

104.

Մուխամմազ

Էշխիցդ ջունուն եմ դեռել դիշեր ցերեկ հաղ եմ ասում,
Ո՛չ թէ էրեկի, էսօր, կարլի է վաղ եմ ասում,
Ծոցենդ չեմ ճանանչում, անմահ քոլին թաղ եմ ասում,
Երեսիդ երկու պաշն ինձ վերայ դռնաղ եմ ասում,
Անուտել, անխմել իմ քեֆն էլ չաղ եմ ասում։

Դարդս դեռալ ա իմ ջանումս փուշի նման,
Էնդուր էլ որ չեմ ճարում քո լալազար թուշի նման,
Խօսեղդ բլբուլի պէս կերպդ թովուզ դուշի նման,
Արի իմ սիրտս մի՛ շինիր քարի դիրած շուշի նման,
Զահտ արա՛ կոտրածն էլ կողկի՛ր, շինիր սաղեմ ասում։

Եա՛ ես մին քամի բիդի ծամդ փարիշան'ի արել,
Եա՛ ես տէրդ պիտի չորս դոլիդ նշան'ի արել,
Եա՛ ես մին սայեադ պիտի թուռումս թարլան'ի արել
Եա՛ ես մին լեադկի պիտի տեղդ դաղստան'ի արել,
Եա՛ ես մին դառն պիտի ջանս քեզ ղուրբան'ի արել,
Էլի ուխդ տակին ընդունելի մասաղ եմ ասում։

Թէ որ դարդիմանդ ես, արի ինձ անճար մի՛ թողալ,
խօսքս դուշմանի միջում, վարդից ընկած խար մի՛ թողալ,
կռնաս փռնէ՛ քաշէ՛ մօտդ. տա՛ր մի՛ թողալ,
Թէ որ փխրմ տա՛ր գլխովս քշտերքիդ էլ քար մի՛ թողալ,
Թէ որ լալըմ խօսքդ ի՞նչա, տա՛ր ծծեն բուխաղ եմ ասում:

Ես ումիդ'ի, թէ իմ խնդիրքս անցկուկենայ քարումն,
ի՞նչ գիտեմ, թէ ղուփուլեանդ կ՚լինի բեյմուրվաթ եարումն,
Ո՛չ դու ես սահմանում, ո՛չ ծախումըն բազարումն,
Հազար ութ հարիւր տասն և չորս թւումն,
Միսկին Ալահվէրդին քեզի դուտաղ եմ ասում:

105.

Ը.

Երգ վասն դրութեան Հայաստանի

Ընդէ՞ր լաս Մասի՛ս, ընդէ՞ր լաս Անի՛
ընդէ՞ր մորմոքէք սիրտ Հայաստանի,
ընդ հակառակն՝ դուք պիտէք հրճուիլ,
Որ նա իւր ցաւը՝ այրաբար տանի։

Միթէ՞ ձեր գործոց հիմը խոտացաւ,
կամ հաշիւ մեղաց ձերոց բազմացաւ,
Որ այսքան անթիւ աշխարհաց միջին,
Միայն ձեր հայրենիքն անբաղդացաւ:

Լալով ո՛չինչ բան չի յառաջանալ,
Լացը խուլ մարդոյ ականջ չի բանալ,
Մինչ մարդ ժրութեամբ յառաջ չ՚ընթանայ,
Նորա լացն ու կոծը չի վերջանալ:

Ցաւով շատ չոր ծառք՝ կրկին ծաղկեցան,
Սիրով շատ ամուլք՝ պտղաւորեցան,
Հաւատով բազում թմրեալ բնութիւնք
Զարթեալ 'ի քնոյ՝ յոտին կանգնեցան:

Դուք ըստ Սէյաթի՝ ձեր սրտի յոյսը,
Արարէք փրկչի խաչն ու սուրբ կոյսը,
Զի առանց նոցա միջնորդութեանն,
Ո՛չոք խաւարից չի գալ առ լոյսը:

Պետրոս Մաղաթեանց:

106.

Թ.

Մարդկութիւնն մարդից ուզիր,
Անուշ հոտն վարդից ուզիր։

Թէպէտ ամէն ստեղծուած անունն մարդ հողեղէն է,
Հողն զանազան տեսակ է՝ մէկ տեսակն ոսկեղէն է:

Անարժան մարդն իշխանութեան եթէ հասնի պատահմունք է,
Պատճառ բնութեամբ տկար է՝ զարմանք չէ ադնիւ ցեղէն է:

Մարդումն մարդկութիւն պիտի, որ մարդիկ նորան մարդ ասեն
Սանդալն թէ հոտ չունենայ, մին հասարակ փայտեղէն է:

Ոմանք մարդ են աշխահումն և ոմանք մարդակերպարան,
Միթէ՞ մարդկութեան շնորհքը միւրուքէն է կամ բեղէն է:

Ճշմարիտ է որ երբեմն՝ շունիցն գառն է ծնանում,
Լուսաւորիչն Գրիգոր ամարդ Անակի սերմն է:

Դառն պտուղ էլ կու ճարվի՝ քաղցրապտուղ բաղումն,
Դիվին քաղցր չէն անուանիլ, ասելով ֆլան բաղէն է:

Ոմանք ամօթներ շատ ունին, աշխարհն անյայտ է անում,
Եթէ ես ասեմ աշխարհից, բայց դուք ասեցէք փողէն է:

Զարկեա՛ր, Մայիֆին տեսնո՞ւմ ես, որ կարօտ է աչաց լուսոյ,
Վարուք, բարուք, բարի անուամբ՝ շատ տեսանողաց աղէն է:

Աբրահամ Մարտիրոսեան:

107.

Շամախւոյ քաղաքի 1859 Թ. երկրաշարժը

Թէ խրատ էր եւ թէ պատիժ, Աստուած վերջն անէ բարի,
Որ չըտեսնենք միւսանգամ էդպէս վատ օր, էդպէս տարի:

Դեռ չըսկսած բերան բանալ՝ պատել է ինձ տարակուսանք,
Թէ հնց պատմեմ էն անցք բանին, ինչ որ մենք բաց աչօք տեսանք,
Ծուռը ճամբի պոչն բռնած ախըր վերջը էդ տեղ հասանք,
Ազատութեան հնարն էն է, որ միմիայն յԱստուած յուսանք,
Թէ ոչ՝ յայտնի մեծ երկիւղ կայ դըրանից էլ խիստ բէթարի:

Եթէ առանց Աստծոյ կամաց եւ ոչ ծառի տերեւ շարժի
Ի՞նչ հարկաւոր այլ եւ այլ բան դնել պատճառ երկրաշարժի,
Նա որ չունի ուղիղ հաւատ որչափ ուսման մէջ որ վարժի,
Ինքն իրա բոլոր ուսմամբ հաւատացէք մին դանկ չարժի,
Որքան խօսի ես հէնց կ՚ասեմ մեղքն է սաքաք էդպէս չարի:

Քանի՜ հազար տարի է որ էս աշխարհս կայ ստեղծուած,
Եւ էդ միջոց շատ փորձանքներ էլած է ու շատ բան եղծուած,
Բայց միայն միշտ յառաջադոյն կերպ կերպ նշան յայտնի տեսուած
Յետոյ ապա Աստուածային բարկութիւնը վերայ հասուած,
Անդարձներուն սուր ու աղեղ սաղմոս երգուն կու քնարի:

Ի՞նչ փոյթ է մեզ հին հին անցքեր Սոդոմ Գոմոր ջըրհեղեղը,
Երբ առաջի աչաց ունիմք մեղաց պատիժ Ակուռ գեղը,
Ուր աւել չորս հարիւր տան մէջ էնպէս հատեց ողջի ցեղը,
Որ լածով չէ երեւում էն մեծ շինի եւ ոչ տեղը,
Տեսէք, եղբարք շատ բազմութիւն ծածկեց փոքրիկ պատառ սարի:

Որքան երկար խօսեմ վերջն պիտի գամ մեր բանի վերայ,
Թէպէտ գիտեմ առ հասարակ լսողներու սիրտն է եարայ,
Բայց որ անցքս շատ՞ցաւալի պատմութեանց հետ հաւասար ա,
Թէ ես լռեմ այլք կու գրեն՝ ղանց անելի չ՚կայ չարայ,
Վախեմ աւել պակաս խօսեն, բանն էլ ընկնի ձեռք օտարի:

Մայիս ամսոյ երեսունին յետ կէս աւուր օրն շաբաթ,
Վեց սըհաթից չաթվար պակաս գետնաշարժ էր մին ջոկ բաբաթ,
Որ քանի մէկ սեկունթի մէջ սաղ քաղաքն արեց բարբաթ,
Ցանկարծ փլուած շինուածների թոզն հասնումէր երկինք հալբաթ
Ձեմ մեղանչիլ, եթէ ասեմ չմնաց քար 'ի վերայ քարի:

Արք եւ կանայք առ հասարակ դիփ ուշաբարձ կանգնած քուչում
Ոտաբոբիկ եւ գլխաբաց բարձել էին գոռում, գոչում,
Մեծ եւ փոքր ամենքն իր հալի կեօրայ ահի մէջում,
Սպասումէր թէ եարաբ ինչ պիտի լինի էդուր վերջում,
Կասկածելով մի գուցէ թէ յետին օրն է էս աշխարհի:

Սաղ գիշերն մինչ լուսաբաց առանց կտուր եւ առանց տուն,
Ո՚չ մի գլուխ չըտեսեց բարձ, եւ ոչ թէ մէկ մարդի աչք քուն,
Միւս օրը առաւօտեան սըհաթ ութին ջոկ դըղըրդիւն,
Ո՚չինչ պակաս յառաջվանից որ մնացածն էլ քանդեց պիւթիւն,
Դէ նոր հարա՛յ, նոր սուք շուան, թէ երբ շարժն կու դադարի:

Չարուստ, աղքատ յօժար կամայ եւ ակամայ էդ վնասին,
Թէ տուն քանդվեց թէ բան կոթեց բայց վա՛յ է մեզ վա՛յ էն մասին
Որ իմացանք թէ մին տանից քանի հոգիք 'ի միասին,
Չայրն կամ մայր երեխըրքով իսկոյն յանկարծ կուպակասին.
Է՚հ դու աչք բեր տեսնել նորանց քարի տակին մին ղաթարի:

Էլ ի՞նչ ասեմ այսուհետեւ թող լսողն ինքն իմանայ,
Թէ էդ տեսակ անճար ցաւին ինչպէս պիտի մարդ դիմանայ,
Ով ոք ինչ կորցրել է ձեռք բերելուն անկուման ա,
Քցումէ ներս ցաւն ու հոգսը իբր աշխարհ է դօստ դուշման ա,
Չէ գիտում խեղճ մեռածին լայ, թէ կենդանեաց մըխիթարի:

Երբ էդ սրտի խալխն դրսում եղածն կան անտիրական,
Պայծառափայլ կնեաղն մեր ողջին կանգնեց տէր օգնական,
Հըրամայեց ժողովրդոց ալաճըխներ տալ բաւական,

Իսկ տները պահպանելոյ գիշերապահ գինուորք մանդան,
Որ չլինի թէ աւազակներ մնացածն էլ տան աւարի:

Բայց որ վնասուն հասարակաց եւ շինուածոց կու պատկանի,
Նտուր հողսն կարծեմ ինքն վաղ արած է եւ միշտ կանի,
Դէ էդ մասին ինձ աւելի խօսելի բան չի անկանի,
Նղքան կասեմ, որ մեր գլխին Աստուած Դորան պակաս չանի,
Որ ինչ բարի խորհուրդ ունի Կայսեր շնորհօք ողջ կատարի:

Ուրեմն փառք եւ գոհութիւն պիտի Աստծոյ տամք անդադար,
Որ էդ տեսակ տրտմութեան մէջ չէ թողել մեզ անմխիթար,
Ում որ սիրէ կու խրատէ, դատաստանն է նորա արդար,
Մենք մեղաւոր եւ սեւերես, քան զՑուղայ չար ու վատթար,
Ինչ որ եղեւ կամքն օրհնեալ, չէր պատիժ այլ խրատ բարի:

Եկէք ապա այսուհետեւ չըհամարեմք խաւարն լոյս,
Ինչ որ մինչ օրս արելեմք մեք էն ամենը դնեմք մին կոյս,
Պինդ պահելով մեր մտքումն երեսունը Մայիս ամսոյս,
Պինտ եւս պահեմք սրտներիս մէջ առ տէր Աստուած սէր, հաւատ յոյս
Էդ քան խորհուրդ տալ իր եղբարց Մարդանովն հարկ համարի:

Խաչատուր Մարդանեանց:

108.

Առ Գրիգոր Թումասեան Ալվաղեանցն

Քեզ 'ի քոյոց նուիրան,
Տամ զայս սակաւ փծուն բան:

Թէ որ համնեմ աղօթքովդ իշխանական աստիճանի,
Դարձեալ զուրբան՝ յօժար սրտով անձս կանեմ քեզ նուզելի.
Եթէ ըլնեմ կենցաղումս՝ դուռն ամեն դատաստանի,
Էլի դատս՝ ես կյանձնեմ քեզ պէս անկեղծ բարեկամի:

Թէ կարենամ լինել հովիւ՝ զուլմից նեղացած խնամի,
Դարձեալ կուզեմ, որ դու լինես ամեն տեղում ինձ հովանի.

Թէ որ լցուի՝ իմ բերանս գոհարներով մարգարիտի,
Էլի կարօտ ես կ'քաշեմ՝ քեզ պէս ազնիւ կարմիր վարդի:

Թէ որ լինեմ մենակ բոլոր, մանուկ մանկանց ես դատողն,
Դարձեալ կ'լինեմ ուսումնասէր՝ մարդոյ ոտքի տակի հողըն,
Թէ ինձ տեսն և բամբասեն՝ ինձ հետ պահեն սաստիկ ոխըն,
Էլի կասեմ մեղաւոր եմ՝ ուղիղ կասէ՝ այն խօսողըն:

Թէ ճանաչեմ՝ այն ցանկալի՝ քաղցր տողի՝ ես գրողըն,
Անշուշտ կ'լինեմ՝ ես այսուհետ՝ նորան սրտանց ծառայողըն,
Ո՛չ Սողոմոն ո՛չ Աղեքսանդր, սաղ աշխարհիս այն տիրողըն,
Կանեմ նորան՝ ես հաւասար՝ վկայ խօսքիս ստեղծողըն:

Թէ որ տեսն ընձի նման, մէկ ջան չ'կայ՝ այն սիրաբար,
Մէկ կարծիք է, որ լաւերըն՝ միշտ կ'կարծեն վատի համար,
Վատ օրս էն կ'լինի, որ իմ անգին սիրոյ համար,
Ես մէկ րոպէ՝ արդու քաշեմ՝ և հեկեկամ կարօտաբար:

Ջարն ու բարին չեմ ճանաչում՝ ամեն բանից եմ բէյխաբար,
Էնքան գիտեմ, որ քեզ համար՝ եմ անդադար աղօթարար,
Որքան որ դու՝ ինձ հետ լինես այժմ և միշտ սիրով եղբայր,
Քո Սահակը լինելու է քեզ միշտ սիրող բերկրապատար:

Սահակ Տէր Աբրահամեանց:

109.

ՆՈՒԻՐԱԿԱՆ ՆԵՐԲՈՂ.

Առ երիցս երանեալ Ներսէս Ե. Ծայրագոյն և Վեհափառ Կաթուղիկոսն Ամենայն Հայոց յաւուր հանդիսի օծութեան նորա 19-ն Յունիսի 1846 ամի:

Թնդայ երկինք ահեղ 'ի ձայն, ճայթեաց համայն Ամպրոպեան,
Ցոլացան լոյսք գոյն ազեղան, ձիրք շող 'ի շող շողշողան,

Եկն 'ի հանդէս այր սրբազան, նստաւ յաթոռ լուսակերտ,
Հանդիսակիցք փառաբարթեալ՝ անդ շար 'ի շար բազմեցան,
Հարցէ՛ք ո՞վ է, հարցէ՛ք ո՞վ է վեհանձն հոգին դիւցազան,
Որ Հայոց Տէր, Հայոց իշխան, Հայոց Ներսէս Սրբազան:

Փողք հնչեցին գաբրիէլեան, զուարթունք 'ի դուրս թափեցան
Ընդ որ վճիռ սաւառնացեալ՝ թեւս բաբախեն զան 'ի զան,
Գեռ ո՛չ գիտեն առ ի՞նչ բազմի վեհ փառաւոր ծերունին,
Եւ թէ առ ի՞նչ հրճուին, խնդան, յայն վեհապանծ տեսարան:

Փառացն Աստուած ահեղատես, վերուստ 'ի վայր որոտաց,
«Դա՛ է ասէ իմ սիրելին սիրտ իմ զմա հաւատաց,
Առէ՛ք զթագ զայս խաչանիշ, առէ՛ք զայս քող լուսափայլ,
Դի՛ք 'ի գլուխն, ասացէ՛ք թէ Աստուած զքեզ պսակեաց:»

Խնդաց երկինք, խնդաց երկիր, յայս ձայն փառաց Աստուածեան
Սրինգք ձայնեն գեր աստիճան, տաւիղք երգեն տասնաղեան,
Ինքն 'ի յաթոռ լուսանկար թագն փայլէր 'ի գլուխ,
Դէմս 'ի խոնարհ կալեալ ասէր, թէ „այս փառաց չեմ արժան“:

Ո՛վ թէ քանի՛ երգք դայլայլիկ, դերս եթերաց կապուտակ,
Խնդաւանօք պարեն, ցնծան թէ Հայկն և թէ Արմենակ,
Եւ 'ի խորանս հրաշակառոյց եօթն աստեղեան շրջանաց,
Քանի ձեմեն լուսածիծաղ աստեղք, լուսին արեգակ:

Զիա՞րդ Մասիս գագաթ քո բարձր երկնից կատար ամպաչու
Ո՛չ խոնարհի դիւցազնէիս ոտիցն համբոյր մահացու;
Զի՞արդ դարձեալ դու, Հայաստան, յայս և օրակ կաս տխուր,
Մինչ քո պարծանք շարս աստեղաց, նազէ 'ի ձեռս երկնաչու:

Ափսո՛ս և քեզ լուսաւորչեան մասանց Հայոց մենաստան,
Յայս վեհ հանդէս ո՞ւր է սրտիդ հրճուանք փառացն անսահման,
Աչք լուսարփոյդ յայս միջօրէ զի՞արդ նիրհեն դեռ 'ի քուն,
Մինչ նոր արև, նոր առաւօտ ծագէ 'ի քո Հայաստան:

Ընդէ՞ր լռեն ճարտար լեզուքդ 'ի խնդութիւնս Հայրենեաց,

Ձիւնախուղխուղն այդ բարձրածայր Արարատեան գագաթանց,
Վեհիդ 'ի փառս քանի՛ աշխոյժ տեսէ՛ք քանի՛ քաղցրագոյն,
Օտար մատունք քաջ մուզայից 'ի թելս խաղան քնարաց:

Դու ո՛վ Աստուած, որ 'ի քոյոց սուրբ հրամանաց ուժգնութեան,
Ձօձան մայրեք Լիբանանու, աշխարհական սիւնք դողան,
Տե՛ս թէ զի՞արդ բազմատարած մանկունք Հայոց արտասուօք,
Ի գուձս անկեալ „պահեա“ կոչեն զայս մեր ծնօղ սրբազան:

Վեհափառ տէր, կալ զիմ ձեռաց, տամ զայս դրուագ ահա՛ քեզ
Զոր մանեցի յաղքատ մտաց սուրբ Օծութեանդ 'ի հանդէս,
Թէ և իմ Տէր Վեհից իշխան Գլուխ–պսակ–բարձրանուն,
Բայց զի ծնայ յայդ Արարատ յորդւոցդ Հայկայ մինն եմ ես:
Հարցէ՛ք ո՞վ է, հարցէ՛ք ո՞վ է վեհանձն հոգի դիւցազան
Որ Հայոց Տէր, Հայոց իշխան, Հայոց Ներսէս Սրբազան:

Աղէքսանդր վարդապետ Արարատեան, Հայ կաթոլիկ:

110.

Մի ռաբունապետի յիշատակին

Թո՛ղ կորչի՛ն, գնա՛ն նոքա մեր մէջից,
Որոնք աշխարհում անպէտ քարի պէս,
Բեռ դարձան միայն,-չ'եղեն մասնակից,
Ազգաշէն գործին տալ նըպաստ պէս պէս:
Թո՛ղ կորչի՛ն, գնա՛ն անմիտ, փառասէր,
Լոկ արծաթամոլ այդ անկեանք մարդիկ-
Որ դոքա միայն ինչպէս ծառ անբեր,
Զունեցան ո՛չ ինչ պըտուղ գեղեցիկ:
Թո՛ղ կորչին գնա՛ն, մի օր դոցա տեղ,
Կըռաճեն մեր մէջ գործունեայ անձներ,-
Ազնիւ, հոյակապ կեանքի ցանկացող,
Եւ պաշտող միայն ազգի օգուտներ:

Յովհաննէս Քոչուբէյեանց:

111.

Թուխան եղաւ իւր ձուտերով, Կարմիր, դեղին ալ ու կապուտ
Տեսաւ ծաղիկ ալ պուտերով, Թունդ ծիրանի ծաղիկ պուտպուտ
Առաւօտեան զեփիւռին դէմ, Թողովեցին լայն դաշտումը,
Ցնծումէ անուշ հոտերով։ Մէկ մէկ փնջիկ արին ձուտ ձուտ։

Գուրգուրալով չալ ձուտերին, Ծաղկեայ փունջն բերաներին
Ուժը տալով իւր թեւերին, Թա'փ տուեցին թեւերներին,
Տարաւ հասոյց ծաղկեայ դաշտը, Ամեն մէկը իւր փնջեկը,
Զմայլեցոյց ծաղկեայ սէրին։ Վե'ր ցաքելով անիկ բերին։

Աշտարակեցի Խաչիկ։

112.

Ի.

Խրատ հասկացողի համար

Ինչ բանիցն աչ չի քաշես, վերջն նա մին բան կուլինի,
Ազքատն գգատ կենալով, օրէ ցօր խափան կուլինի,
Թէ չ'ասեմ լերբ է աշխարհն, բա՛ս արարքն ո՞նց թագցնեմ,
Ցիմարն ոսկի արծաթով առաջի իշխանն կու լինի։

Կռապաշտին չ'աստուած ունի, փողապաշտին ոչինչ չունի,
Փողապաշտի որդիքեցն դառն մուրացկան կու լինի,
Եթէ հայրն է որդւոյն ծնօղ, սա ամենեցուն յայտնի է,
Ուսն ծիրան պտուղ չի տալ, շուն որդին շան կուլինի։

Երեք բան կայ աշխարհումն լսելն ու տեսնել փորձելն,
Ով փորձած մարդկանց հաւատի, գործն գովական կու լինի,
Թէպէտ պատճառներ են բերում, ես ո՛չ մէկին չեմ հաւատիլ,
Եթէ ոք խաւնուրդ չունենայ, որդին հօրը նման կու լինի։

Քահանի որդին Թուրքանայ, ի՞նչ մեղաւոր է տէրտէրն,
Տէրտէրակինն սուրբ կենայ, որդին սրբազան կու լինի,
Ամէն մարդոյ արարմունքն է, առակոց բաղդ են անուանել,
Բարի գործոց պտուղներից, փառաց աստիճան կու լինի։

Ոսկին, երծաթն չի հալես, զանազան շենքսեր չի' լինի,
Ով որ իրան որդւոյն չի ծեծի, որդին անպիտան կու լինի,
Ով որ մարդկանց գործին մտիկ տայ, նա կարող է մարդ ճանաչիլ,
Ով որ մարդկանց կերպին մտիկ տայ, նա պատկերահան կու լինի։

Ես շատ եմ սիրում Մայիֆին, պատճառ նա խիստ ազգասէր է,
Եթէ դիւի էլ միմեանց սիրեն, էլի Հայաստան կու լինի,
Զարկե'ար, եթէ փող աշխատես, քեզ պարոն Աբրահամ կասեն
Հայ ազգի մէջ բանաստեղծի վերջն անփոխան կու լինի։

Աբրահամ Մարտիրոսեան։

113.

«Թէ իմ ալեւոր» երգի եղանակով։

Ի՛ չքնաղ դիպար ադնիւ երեսաց,
Ջոհեմ չարաչար անդուլ անդադար,
Վեհիդ վեհ աչեր, որք շողին 'ի շող,
Տան ինձ խորովել միշտ 'ի բոց յանմար։

Ոսկերանգ փայլուն դիսակք ոլորուն,
Որ 'ի քոյդ դլուխ մեղմիկ ծածանի,
Սիրտ հիգւոյս յայնժամ մտատանջ համբուն,
Անդուլ անխնայ այրի խորովի։

Այրի խորովի յաւէտ մորմոքի,
Զի են ցաւք հիգւոյս անբուժ անհամար,
Բա՛ց գիմ'րդ այդպէս սիրտ քո քարանայ,
Զ'լինիլ վիրացս բժիշկ բարերար։

Բժիշկ բարերար լե՛ր ինձ փրկարար,
Քանզի չունիմ ժամ, թէ ժամ 'ի ժամ,
Ձի ժամք ժամողս կարի համբերողք,
Սպառեցան քեւ մնացին անյոյս:

Թո՛ղ չ՚մնան անյոյս ա՛խ բա՛ց դառադատ,
Ա՛խ բա՛ց դառադատ քոյդ վէհ երեսաց,
Ցոյց ինձ աղաչեմ դաչաց շողշողուն,
Ջայն կերպ հայեցուած համբուն գերապանծ:

Սարգիս Փիլոյեանց:

114.

Ի քաջախումբ յայս փառահեղ ասպարէզ,
Արեւին չէ ահեղ շունդ մահամերձ,
Ո՛չ Հեփեստեան շանթ կայծականց ամպահերձ,
Սէր ընդ սիրոյ ընդ գերկս դայ 'ի հանդէս:
  Մատէք, ընկերք, մատէք յայս սէր սիրտ 'ի վառ,
  Խնդից մերոց յարմարեսցուք զբարբառ (2):

Սէր հաւատոյ, սէր հայրենեաց, սէր անմահ,
Սէր առ բարին, սէր արծարծուն առ իրեարս,
Այս հրզօր սէր 'ի հայր յորդիս եւ 'ի տեարս,
Վա՛շ անաղօտ շողէ այսրէն յեւր 'ի ջահ:
  Մատէք, ընկերք, մատէք յայս սէր սիրտ 'ի վառ,
  Խնդից մերոց յարմարեսցուք զբարբառ (2):

115.

Քաջ կոյս

Իմ դաւառի Հայ կուսին,   Անքուն իմ սէրն սրտիս,
Ձերմը բարևս ո՛հ տարէք,   Մի՛ մոռանաք իրեն ըսէք,

Ըսէք իրեն ես Հայ եմ,   Ըսէք իրեն իմ կուրծքս,
Ձինքը սրտանց կըսիրեմ,   Ճակտիս նման բաց է միշտ,
Ամէն ոչ-Հայ փասաններ,   Վեստ Սարգիսներ, Մերուժան,
Կատաղաբար ես կատեմ: Կընեմ կոլկած իմ կոխան:

Իմ աղեղս Հայկեան է,
Ո՞վ նորա դէմ կը դնէ,
Ինձ արհաւիրք չեն ազդեր,
Իմ պարիսպս է երկնից Տէր:

Ս. Հայկունի:

116.

Խիղճդ 'ի ձեռաց մի՛ թողուր

Ի յինչ վիճակ, 'ի յինչ պաշտօն, խիղճդ 'ի ձեռաց մի թողուր,
Թէ ես իշխան, պերճ դեր զգօն, խիղճդ 'ի ձեռաց մի՛ թողուր,
Թէ մեծատուն ես բարձրայօն, խիղճդ 'ի ձեռաց մի՛ թողուր,
Ցաւելցէ քեզ կնն օն եւ օն, խիղճդ 'ի ձեռաց մի՛ թողուր:

Զթշնամիդ թէ հալածես, խղճմտանօք 'ի գործ դիր,
Մեղմահանդարտ անյիշաչար, պատուհասօք 'ի գործ դիր,
Զարիւնարբուդ մինչեւ անգամ, սրտի մտօք 'ի գործ դիր,
Թէ սպանես, սպանեա՛ օն՛ խիղճդ 'ի ձեռաց մի՛ թողուր:

Թէ ես չքնաղ նոճեահասակ՝ առոյգ ազնիւ պատանի,
Թէ չ՛լսես ձայն գովեստից, սրտդ խստիւ տատանի,
Ցոյդ խպառ 'ի քո միակ, նպատակէդ հատանի,
Դարձեալ համբեր, մաղթեմ, պարոն, խիղճդ 'ի ձեռաց մի՛ թողուր:

Սարգիս Փիլոյեանց:

117.

Հրաւէր սիրոյ

Ի սուրբ խանդից սէր ցանկացեալ,
Զարթի՛ր նազելիդ իմ զարթի՛ր,

Անուշահոտ վարդ իմ ծաղկեալ,
Զարթի՛ր նազելիդ իմ զարթի՛ր։

Յաւէտ գարուն ծաղկապսակ,
Ժամէ սիրոյդ փայլուն տեսակ,
Գեղգեղեմ արդ որպէս սոխակ։ Զարթի՛ր այլն։

Ուրախութիւն սրտիս բերկրանք,
Վշտանգնելոյս լե՛ր սփոփանք,
Զի քեզ ընտրեցի ինձ նոր կեանք։ Զարթի՛ր և այլն։

Վիճակ եղեր դու ինձ ընտիր,
Երջանկութեանս կենդանագիր,
Վասն այն և գամ քեզ 'ի խնդիր։ Զարթի՛ր և այլն։

Հիւսեա՛ ծաղկանց 'ի նորաբոյս,
Դիմաց շքեղ փայլիլ ինձ լոյս,
Քաղցր ակնարկեա՛ հոգւոյ իմ յոյս։ Զարթի՛ր և այլն։

Անցին ձմեռ կենացս բուք,
Դեռ նոր ծաղկին գարնան ինձ շուք,
Ե՛կ սէր իմ 'ի ջահ ձեմեսցուք։ Զարթի՛ր և այլն։

Նարդոս ծաղկեալ ե՛կ յիմ պարտէզ,
Սիրոյ ծաղիկս նուիրել քեզ,
Գուցէ լինեմ կարօտակէզ։ Զարթի՛ր և այլն։

Նոր խանդակաթ սէր զարգացեալ,
Հաճեա՛ց ձօնել յիս տարփացեալ,
Զի գամ տօթով քո խարուկեալ։ Զարթի՛ր և այլն։

Ի ձեր շնորհաց քոց քաղցրահամ,
Յոր ամոքել սրտիս ըղձամ,
Մ'այրիչ զվարդն իմ անթառամ։ Զարթի՛ր և այլն։

Սրսկեա՛ հոգւոյս ցող հոգեկան,
Ցամքոց յօնիցդ ծիածան։
Ուխտ հաշտութեան իմ է նշան։ Զարթի՛ր և այլն։

Է՞ր վհատիս սիրտ իմ նուաղ,
Փայլել արօտ զերթ շամանդաղ,
Բա՛ւէ, հոգեակ, յոյս իմ չքնաղ,
Զարթի՛ր նազելիդ իմ զարթի՛ր։

Յովհաննէս Աստուածատուրեանց։

118.

Հայ աղջկայ Արտասուքը

Ըստ եղանակին

„Что ты, мама, безпрестанно,
О сестрицѣ все твердишь?
Въ лучшемъ мірѣ наша Лиза,
Ты сама намъ говоришь„.

—Ի՞նչու կանգնած, դու Հայ աղջիկ,
Թոյլ ողբերով կիսաշունչ,
Գանգատումես հառաչանքով,
Հայրենիքին ողբալով։

—Իմ Հայրենի աղջկանց համար
Են իմ ողբը, սուգ ու լաց,
Որոնք չունին դէթ ատրին,
Ուսումնարան մի բացված։

Սրտիս հատոր իմ քերց համար
Է այս կսկիծ իմ սրտի,
Որոնք փակված տան մնալով,
Զուրկին ուսում մայրենի։

—Մի՛ վհատիր, դու Հայ աղջիկ,
Եւ մի՛ տխրիր կուրօրէն,
Պատճառ Հայոց գարունն եկաւ,
Ու վարդէ փունջ մեզ բերաւ։

Վարդէ փնջից մենք կազմեցինք
«ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԴԱՍԷՐ»,
Որ օգնում է միշտ վառ սրտով
Հայ աղջկերանց կրթելով։

Բօն-Ամի։

119.

Զի բարի, կամ զի վայելուչ, զի բնակին եղբարք 'ի միասին։
(Սաղմոս)

Ի՞նչ կայ առաւել երկրի երեսին,
Եւ ի՞նչ վայելուչ, բարի պատուական,—
Քան այն որ եղբարք կ'ապրեն միասին,
Հոյակապ կեանքովն եղբայր սիրական։—

Քան այն որ միմեանց ձեռք ձեռքի տալով,
Իւրեանց միութեան օգուտ կըմնեւեն...
Եւ քան որ միմեանց օժանդակելով՝
Իւրեանց գործ և կեանք պատւով կըվարեն...։

Ինչպէս մի ազնիւ իւղ անուշահոտ,
Որ անուշութեամբ մարդ կըզմայլեցնէ,—
Կամ ինչպէս մի ցօղ գարնան առաւօտ,
Որ ծաղկանց վերայ թարմօրէն կ'իջնէ—։

Այնպէս է նոցա մէջ միշտ կ'առատանայ՝
Ազգային ամէն առաքինութիւն,—
Այնպէս և Աստուած և միշտ անխափնայ,
Կ'շնորհէ նոցա իւր խնամք, օրհնութիւն—։

Ուրեմն ի՞նչ կայ քան առաւել,
Օրինակելի աշխարհում սուրբ բան,
Երբ որ համարւին եղբարք միասեղ,
Սերտ սիրով կապված կ'ապրեն միաբան։

Յովհաննէս Քուչուբէգեան։

120.

Նուէր ծնողասէր զաւակներին

Ի՞նչ է քաղցր այս աշխարհում,
Դու ամենից քաղցր ես, իմ մայր,
Քո սէրն իմ մէջ վառ եմ պահում,
Դու թանգագին ես ինձ համար։

Երախտագէտ անկեղծ սրտով՝
Քեզ յիշում եմ ամենայն ժամ...
Քեզ պաշտելու հեռուից սոտվ
Ուրախութեամբ առ քեզ կըգամ։

Հրամայի՛ր քո ծառան եմ,
Քո երախտիք շատ են անթիւ,-
Ի՞նչպէս դոցա փոխարինեմ,
Քեզ արժան է անզոյգ պատիւ։

Երանի՜ թէ ամեն Հայ—մայր,
Լինէր քո պէս ըզգօն, գըթած,-
Երանի՜ թէ քո պէս յարմար,
Հայն ունենար շատ մայր կըրթած...։

Յարութիւն Ոստանիկ։

121.

Կարօտ մայր

Ինձանից հեռացար,
Սիրտս մաշելով,
Ինձ մենակ թողիր,
Անչափ վշտերով։

Ուշ.քս կորցրած,
Ես քեզ եմ պտրում,
Անունդ յիշելիս,
Սիրտս է էրվում։

Քեզ մէկ օր չտեսած,
կարծում եմ ինձ մեռած,
Բայց այժմ հեռացար,
Ո՛հ, դու ո՞ւր թռար:

Սիրտս ցաւով լիքը,
Ես քեզ եմ կանչում,
Դու ինձ չես լսում,
Ես մահ եմ խնդրում:

Իսկ մահը հեռացած,
Ինձ չէ ընդունում,
Աչքս կարօտած,
Քեզ եմ սպասում:

Արի՛, իմ որդեակ,
Հրեշտակ աննման,
Դու միայն սրտիս
Մխիթար սեպհական:

Տիկին Կատարինէ Արղութեանց:

122.

Լ.

Առ Լիզայ

Լի՛զայ կեանքս մաշեցիր,
Անուշ քնից զրկեցիր,
Անյոյս սէրդ հրոյ պէս
Սիրտս այրեց, արեց կէս:

Զունեմ ո՛չ մի ուրախ ժամ,
Միշտ անդադար քեզ կ'ողբամ,
Արտասուքս արեան հետ,
Միշտ հոսում է ինչպէս գետ:

Քանի որ իմ աչերը,
Տեսնումեն քո պատկերը,
Անբաղդ սիրտս ինձանում,
Հազար կտոր է լինում:

Քանի՛, քանի՛, իմ լուսնեակ,
Դու ծածկուելս ամպոց տակ,
Քանի՛ քանի՛ չարաչար,
Սիրտս տանջուի քեզ համար:

Արի՛ արի՛ փրկի՛ր ինձ,
Իմ այս դառն վիճակից,
Բաւ է վառուիմ ես անճար,
Ինչպէս մի ծառ շանթահար:

Անգո՛ւթ, ձեռիդ ուզում ես,
Մի խաղալիկ ինձ անես,
Իմ տանջանքներն, երեւի,
Զուարճացնումեն քեզի:

Գ... Տ...:

123.

Կորուստ

«Արիք որ երթամք» երգի եղանակով:

Լուսնեայ աղա՛,
Լուսացաւ աղա՛,
Վարդն իմ չերեւի,
Սոխակն իմ շատ լայ:

Մանուշակ նարգոս,
Ցայմիկ և շուշան,
Արդ նոր բողբոջին,
Զբոյսս 'ի գարնան:

Նորափթիթ ծաղիկն,
Տեսիլ նուրբ ծաղկանց,
Զսեաւ երեսս յերկրի,
Ներկեն բիւր յերանգ:

Հեզ զեփիւռք հնչեն,
Զմիմեամբ փաթաթին,
Ծիծառ սարերեալ,
Զերթ դրախտ դեր հրճուին:

Տերեւք խիտ առ խիտ,
Ծառոց և թփոց,
Առնեն զհովանի,
Վառեն սիրոյն բոց:

Ահա՛ անձրեւէ՛,
Ահա՛ մերթ պարզէ՛
Սոխակն իմ սգայ,
Այլ ո՛չ համբերէ:

Զայնիւ կոչէ, վա՛րդ,
Ա՛խ, ո՞ւր ես դու արդ,
Արի, փարատեա՛
Ի սրտէս զդարտ:

Վա՛րդ, վա՛րդ սիրասուն,
Դու զուարդ անուն,
Ե՞րբ իցէ արդեօ՛ք,
Որ դայցես մեր տուն:

Կաքաւունք աղա՛,
Կաքաւեն, ճախրեն,
Տատրակներ աղա՛,
Հոյեն ու ճչեն:

Ցայսպիսի օրեր,
Ե՞ր ծածկես զքո թեր,
Ե՞ր վասն հեռանաս,
Զիս ածես յերեր:

Արի՛, վարդ բարի,
Արի՛ դու 'ի տես,
Սոխակիդ աղա՛,
Կեանքն եղև կէս:

Սամուէլ Գիւլզատեանց:

124.

Մուխամմազ

Լոյս ես լուսատու, լոյսդ անարժան էլաւ ինձի,
Վարդ ես հոտաւէտ՝ փնջելն բօյղան էլաւ ինձի,
Վա՜յ իմ քաշածին՝ որ բաժին այսքան էլաւ ինձի,
Խնդալի սէրդ պատիժ զանազան էլաւ ինձի,
Ո՛չ դու խղճացիր, ո՛չ այլ օգնական էլաւ ինձի:

Մուրվաթ չկայ քեզանում՝ բակեամ, ո՛վ զալուման Աստուած
Որ դու ես վառել այս կրակին՝ ջուր մի փոքր ա՛ծ,
Իմ սրտի միջին հազար տեսակ մուռմուռ և կասկած,
Դու էշխի զինով՝ գիշեր ցերեկ՝ սարսաղ ու հարբած,
Ի տեղի մուրազի ջոյն ջօթեան էլաւ ինձի:

Ով տեսնումէ իմ մոլորվելս, ցաւս է հարցնում,
Սիրտս յօժար եմ դարտակելոյ, լեզուս չի դարձընում,
Խղճմտանքիցդ հարցրու, թէ ինձ է՞ր ես կորցնում,
Զարմանք է սիրահարի բանն, չի մեռնում պրծընում,
Կենդանիս դժողք, սա՛ ի՞նչ դադաստան էլաւ ինձի:

Ինձի տեսնողն սարսափում է՝ կարծում է մեռեալ,
Լա՛ւ է հոգիս առնես, էլի կրկին կարենաս տալ,
Ա՛խ դու չ՚լինէիր աշխարհումս՝ իմ բաժին իղբալ,
Ալրոց տուել ես վայելչութիւն դովլաթ ու կամ մալ,
Մին եար տուիր ինձ, նա էլ դաւաճան էլաւ ինձի:

Մրրիկ քամոյ պէս ժամտաբեր է ամեն խաբարըդ,
Արագ նետի պէս, վէրք է բացում՝ տուած նուբարըդ,
Քեզ լաւ չեն ասում, տանջվում է այս քան սիրահարըդ,
Ե՛կ նամուս արա՛ դարձի՛ր, առաջվան ճանապարհըդ,
Երբ ջան ասեցի՝ ցաւն պատասխան էլաւ ինձի:

Դու ջարկեարի պէս, չես ձարելու նալի դիմացող
Կամքդ կատարող, չի կշտանող, համն մնացող,
Թո՛ղ Մայիֆի մօտ անմահ անուն՝ նա է նմացող.
Երբէք չի լինիլ սիրուններից դժոխք գնացող,
Այն լաւ տեսիլն նորումն այեան էլաւ ինձի:

Աբրահամ Մարտիրոսեանց:

125.

Իմ կտակը

Լաւ լսիր դու իմ կտակը,
Իմ ցանկալի հայ եղբայր,
Քեզ ցոյց կ՚տայ ժամանակը,
Որ ունայն է այս աշխարհ:

Իմ կտակը քեզ եմ թողնում,
Որ միշտ լինի քեզ խրատ,
Քանի որ կաս այս աշխարհում,
Մտիդ մնայ անփարատ:

Թէ ուզումես դու լաւ լինես,
Պատիւ ճարել աշխարհում,
Շուտ սովորիր դու բամբասել,
Բարի մարդին իւր վարքում:

Թէ ուզումես հաճոյանալ
Այս կամ այն ինչ պարոնին,
Պիտ՚ սովորես յափշտակել,
Գերել զերփել աղքատին:

Թէ ուզումես հարուստ լինել,
Գանձ ժողովել աշխարհում,
Միշտ աշխատիր դու հոր փորել,
Եղբօրդ ձգել նորանում:

Մի խօսքով որքան նենգութիւն
Պատրաստ ունիս քո սրտում,
Բոլորն արա, քեզ փառք անուն,
Կընծայեն այս աշխարհում:

Այս դարը այժմեան դարը չէ,
Լաւին լաւ տալ, վատին վատ,
Սուտն ամեն տեղ պատուով է,
Ճշմարիտն զուր ապերատ:

Այժմս փողն է խաղում դեր մեծ,
Փողն է մարդկանց սիրտ գրաւում,
Չար մարդին իւր մեղաց պատիժ,
Իսկոյն եւ եթ է փրկում:

Սորանից յետոյ դու լաւ պահիր,
Իմ քեզ համար արած կտակ,
Եւ յաւիտեան դու յիշիր,
Իմ կենաց դառն յիշատակ:

Միքայէլ Միրզոյեանց:

126.

Նորբայազեդու բարեկենդանի կուռ բռնուկ պարը

Լաւ չի խաղում մեր Թամարէն,
Ծոցն ա դրել՝ եւղով գաւթէն:

Ուշ ու միտքն գինու թասն է,
Հարբած մարդուն հասուէ հասն է:

Մենք խաղումենք, նա կաղում է,
Տափակ լեզուով մեզ դաղում է:

Երեք թունդլին բան չի շինում,
Հէչ զօրութիւն չկայ գինում:

Սիրտն ուզումայ՝ մի թաս էլ տո՛ւր,
Առանց խօսքի շուտով կուլ տո՛ւր:

Դէ՛ զռչաղներ, լաւ խաղացէք,
Թամարի գաւթէն գողացէք:

Մեր Թամարին մի՛ք նկատիլ,
Գինին թունդ է մի՛ք գանգատիլ:

Ոտ ու ձեռքը փաթաթուել է,
Խելքի տունը շփոթուել է:

Թէ խելօք է թո՛ղ հասկանայ,
Էնքան խօսքը բաւականայ:

Թէ հերիք չէ՛ էլ եմ ասում,
Ինքն էստեղ է չեմ բամբասում:

Ցերեկ ջերեկուն լաւ անցրինք,
Էս ջերեկուն անցկացրինք:

Մեր Թամարին կշուեցինք,
Շատ թեթև էր շուտ լռեցինք:

Երեք չարէք անջաղ եկաւ,
Շատ քէֆով էր տուն վաղ եկաւ:

Դէ՛ քնի բալամ. անուշ քնի,
Էլ դու ըլես չխմես գինի:

Մեր քէֆի պէս, քէֆ չի լինել,
Էլ էսպէս արև չի լինել:

Առաքել ջան, քո սէրն է,
Գարօն գիտես քո գրեն է:

Հաստատ կացիր քո պայմանին,
Միտքդ շուռ տո՛ւր հաւապանին:

Ջուկ չի առնես մենք ձուկ ունինք,
Քեզ նման մեզ դառնուկ ունինք:

Դու սաղ ըլես, մենք սաղ ըլենք,
Առած հաւիդ պէս չաղ ըլենք:

Քանի կարաս լաւ գինի ա՛ռ,
Խուրմայ պնդուկ մէկ սինի ա՛ռ:

Էգուց էլոր կ՚գայ պասը,
Էլ չենք առնիլ գինու թասը:

Աշտարակեցի Խաչիկ:

127.

Ի.

Սիրտ սրտում

Խաւար քօղը երեսիդ, մինչ ե՞րբ ծածկես դառը սիրտ,
Արմատախիլ արեցիր՝ կեանքիդ դալար ծառը սիրտ,
Բերանումդ չորցուցիր՝ սոխակի պէս բառը սիրտ,
Մինչև անդամ մռայցար սուրբ Մեսրոպեայ տառը սիրտ:

Աչուներիդ աղբիւրը՝ հոսանաց ջուր է դառել,
Ի բնէ այրուած սիրտդ՝ համարեայ հուր է դառել,
Ալլոց քաղցր խօսքերը՝ քեզ համար սուր է դառել,
Կանաչագեղ դաշտերը՝ աչքիդ տխուր է դառել,
Այդ բոլորին տիրացար՝ հեզահոգի դառը սիրտ:

Չես գիտում թէ ինչ անես՝ թաց աչքով լաս անդադար,
Թէ անբաղդ քո վիճակիդ՝ վերայ վայ տաս անդադար,
Այդ դառը վիճակի մէջ՝ մշտապէս մնաս անդադար,
Թէ շուտով ազատութիւն՝ պէտքէ զգաս անդադար,
Ի՞նչ մնաց որ չունեցար, մերթ ջերմ և մերթ սառը սիրտ:

Ի բնէ քեզ պէս անբաղդ՝ չի կայ աշխարհի վերայ,
Մոլորուած բոլորովին՝ անյատակ սարի վերայ,
Մարմինդ անզարդ գեանի՝ գլուխդ քարի վերայ,
Այդ բոլոր չարչարանքդ՝ եղաւ մէկ եարի վերայ,
Անցկացաւ սրտաշարժուն՝ քո դարուն ամառը սիրտ:

Կենդանի բայց կեսամեռ, կեանքիդ շրջանը հատաւ,
Ապրելու էլ յոյս չունիս՝ խղճալույդ ջանը հատաւ,
Լեզուդ բերնիդ չորացաւ՝ խօսելուդ բանը հատաւ,
Ինչ արի չի բժշկուեց՝ ցաւիդ դարմանը հատաւ,
Ի զուր տեղը դեգերվումես՝ չար ու բարեաւ խառը սիրտ:

Աշտարակեցի խաչիկ:

128.

«Ցերկու ծեռին երկու մոմ» երգի եղանակաւ.

Խնամք արա՛ մօտդ գայ, վարդի կարօտ սոխակս,
Քնքոյշ սիրոյդ բարև տայ, ոսկեփետուր թռչնակս:

Ա՛խ քաշելով սիրտիկս՝ կտոր կտոր բաժանուեց,
Հարամ դառաւ խորտիկս՝ մինն ոսկորիցս անջատուեց:

Ջաղար մաղար աչքերդ՝ խղճիս անսուր սպանեց,
Էդ լուսի պէս պատկերդ՝ աչքերիս լոյսը հանեց:

Ինձ այրեցիր կրակով՝ էդ հողեղէն մարմնովդ,
Մանես գալիս ճրագով, վրէս չես ձգում հովդ:

Կարմրաթուշիկ սիրուհիս, դօշդ սպիտակ մառմարայ
Հենց քո խաթեր տիրուհիս, դժուեցի ջունունն դառայ:

Աշտարակեցի խաչիկ:

129.

«Մեր կեանքի նման» երգի եղանակով:

Խմեցէ՛ք, եղբարք, քաղցրահամ գինի,
Ամեն խառ բանը թո՛ղ Աստուած շինի,
Թո՛ղ շինի, շինի, շինի, մեր կամքով լինի:

Այսօրուայ նման մեր ամեն օրը,
Անցենք կացել ասեմ ես որը,
Ա՛խ՝ որը, որը, որը, չեմ գիտում որը:

Զունքի մեր կենաց անիւի լարը,
Չի տևիլ երկար կ՚փոխուի դարը,
փուչ դարը, դարը, դարը տեսնենք մեր ճարը:

Իմ առաջինս լի գինով գաւ է,
Եկէ՛ք դարտակենք կոնծելն լաւ է,
Շատ լաւ է, լաւ է, լաւ է մեր փորը նաւ է:

Կենդանի մարդը պէտքէ քէֆ անի,
Որ իւր թշնամու վատ հոգին հանի,
Թո՛ղ հանի, հանի, հանի, տայ չարին տանի:

Աշտարակեցի խաչիկ:

130.

«Սամավարը տարան յօտէն» երգի եղանակով:

Խանութումս լաւ գինի կայ,
Թէ ինձ սիրումես գարտակայ,
Հագնուելես ալ ալպախայ,
Կարմրաթուշի՛կ սիրուն աղջիկ:

Աչուններդ վառ կրակ է,
Ծոցիդ ջուխտակ վառ ծրագ է,
Բոխաղդ մեղր ու կարագ է,
Կարմրաթուշի՛կ սիրուն աղջիկ:

Ջանիդ տակի խալն եմ սիրում,
Իմ սրտովս ալն եմ սիրում,
Քեզ նման գեօզալն եմ սիրում,
Կարմրաթուշի՛կ սիրուն աղջիկ:

Ինքդ փափուկ բօյդ բարակ,
Իմ աղաւնիս իմ տատարակ,
Արի՛ տանեմ քեզ Աշտարակ,
Կարմրաթուշի՛կ սիրուն աղջիկ:

Կանաչների վրէն ման տամ,
Թռռմբքների սրէն ման տամ,
Քեզ համար ես պետքէ ջան տամ:
Կարմրաթուշի՛կ սիրուն աղջիկ:

Աշտարակեցի խաչիկ:

131.

«Թէ սիրումես Թամաշայ» երգի եղանակով:

—Կլոր չանէդ դէս արա՛, Ճակատիդ չարեմ փարայ,
Փափուկ սրտիս պագ անեմ, Գէմբիդ հող ու սաք անեմ:

—Թէ և չանես կլոր է,
Բայց համբյրդ խիստ չոր է,
Ճակատիս պէտքէ չէ փարայ,
Ոչ էլ սաք ու հող արայ:

—Աչնիւ խոհեմ աղաւնի,
Քաղցրալեզու թռչնակ ես,
Ով քեզ տեսնի կըհաւնի,
Ոսկեփետուր տատրակ ես:

—Ինձ նման քեզ տէր ունես,
Ուրախ սիրտդ բաց արա՛,
Թէ որ հեռս սէր ունես,
Ջոր պռոշս թաց արա՛:

—Ո՛չ տատրակ եմ ո՛չ աղխակ,
Ո՛չ աղաւնի ո՛չ թռչնակ,
Այլ մի խղճուկ օրիորդ,
Ծնուած տեղս Աշտարակ:

—Զգլուէլի իմ տէրն ես,
Որ սիրտս քեզ բաց անեմ,
Կամ թէ իմ անուշ սէրն ես,
Որ պռոշդ թաց անեմ:

—Խունջիկ մունջիկ անելու,
Գիտեմ սիրտդ կարօտ է,
Աշտարակ ես գնալու,
Նայի՛ր, ճամբէն քարոտ է:

—Զալ փարէքս ո՞վ կուտի,
Որ գայ իմ դրպանումս,
Քանց թէ մնայ ժանգոտի,
Լաւ է ուտի խանումս:

—Քարոտ ճամբէն կ՚մաքրենք,
Սուրբ սիրով մենք կ՚կապվենք,
Կերթանք սուրբ եկեղեցին,
Ուր կ՚օրհնէ մեզ միածին:

—Սէրը փարով չեն առնում,
Ո՛վ դու ճահիլ պատանի,
Պահի՛ր փողդ գրպանում,
Մինչև գողը գայ տանի:

—Ուրիշ է սիրոյ բանը,
Խեղճ տղային կոցրեց,
Լսելով պատասխանը,
Գլխատառքը թարս դրեց:

—Իսկ ես գլխատառք չունեմ,
Քեզ հակառակ բառք չունեմ,
Ահա՛ քեզ տամ իմ անձը,
Ա՛ռ շուտով անց ջրանցը:

Աշտարակեցի խաչիկ

132.

Ցերեկ անվերջ գլս կարծէի կենդանին,
Այսօր անյոյս աւրինների սանակով,

կար ժամանակ, որ ես էի անուանի,
Այժմ խպառ յագդ ընտանեաց բարձ 'ի թող,

Այն գաւառն, որի նեստող գնդակը,
Ահ սպառնայր բոլոր երկիր որոտայր,
Այժմ տրուկ մէջկէն կապած վանդակը,
Սիրտն է խոցւում սուր սուսերօք սրածայր:

Մէկ լոկ անուն ինձ համար ես յիշատակ
Հազիւ հազ թէ կարողացայ պահպանել,
Բայց վէհ փառքս խորթ ծնողաց ոտնատակ,
Անցաւ գնաց էլ յոյս չունեմ գտանել,

Յաւերժական փայլուն փառքից մերկացած,
Մնում է ինձ պարկել անզարթ հողի տակ,
Զունիմ զաւակ, որ իրար հետ միացած,
Գէթ չի թողուն ինձ մնալ սև քողի տակ:

Ինձ խոր անդունդ ծովի յատակ մնելս,
Եղև պատճառ անմխաբան մէկ բառը,
Շատ դժուար է կրկին ճամբայ գտնելս,
Քէտք է ողբամ պէտք է միշտ լամ շատ դառը:

Աշտարակեցի Խաչիկ:

133.

Էր ժամանակ, որ սուսերս շողշողուն,
Քաջամարտեաց ահ սպառնայր դողդողուն,
Քաջակորով զաւակներիս գնդակից,
Ո՞վ չէր յերկիր ձիաթաւալ գլորուն:

Քաջակորով զաւակներս մահացան,
Եւ հետագայք հետ զհետէ թուլացան,
Ինձ թողեցին մէկ լոկ անուն յիշատակ,
Իւրեանք եղեն հայաստանէս ցիր և ցան:

Ո՞ւր չես տեսնել մայրակորոյս զաւակիս,
Միշտ ողբալով ընկաբեկեալ նաւակիս,
Վիզը ծռած խորթ ծնողաց առաջին,
Քթիցը մուխ է արձակում տնակիս:

Հինգ հարիւրը լռանում է խեղճ թշուառ
Վիճակի մէջ այրվում եմ սրտավառ,
Շքեղ փառքից, անհուն զարդից մերկացած
Հազիւ հազ թէ պահպանել եմ մէկ բարբառ:

Աշտարակեցի Խաչիկ:

134.

«Գիշեր ցերեկ կ'հառաչեմ» երգի եղանակով:

Խելքիս տուն աւերեցիր՝ աղջի՛կ դեղջիկ գովանի,
Լերդս և թոքս դու խաշեցիր՝ պայծառ տեսքով գեղանի,
Ունքերդ ճակատիդ՝ փայլը սիրտս բորբոքեց,
Կտոր կտոր բոլոր սիրտս բոլորվիմբ խարշատեց:

Աղէկեղ քո խօսքերդ՝ սլաքի պէս թափանցեց,
Ամուր կուրծքս, անյաղթ կեանքս՝ զուր 'ի զուրոյ կործանեց,
Սրլաքիդ լարերի՝ երկթևանի ծայրերը,
Հոգիս մաշեց բան չի թողուց՝ մարմնոյս ուժը խորտակեց:

Զեմ գիտում անողորմ ես, թէ միայն ինձ ես խոցում,
Գիշեր ցերեկ հոգւոյս մօքով՝ վառվում եմ սիրոյդ բոցում,
Վառ բոցիդ ալաֆը՝ բաւական է ինձ այրի,
Աղաչում եմ սիրոյդ տոչար՝ ինձ մի՛ թողուլ հնոցում:

Ինձ նման շատերի՝ անբուժելի խոցերը,
Առաւ տարաւ, գեռ տանումէ՝ քեզ նմանի սերտ սէրը,
Խոցերիս մումուռը էլ չեմ զգում, սիրուհի,
Գերւոյս փրկող միայն քեզի՝ ընդունում եմ իմ տէրը:

Կանչում եմ քեզ սիրելի՝ ճանաչես քո ...չիկը:
Առանց տրտունջ սիրույդ կամքով՝ տաս նորան քո պաչիկը,
Տոչորուած սրտիկը, թո՛ղ գրանով հովանայ,
Զունքի կամի որ թագանայ՝ գլխիդ պատած լաչիկը:

Աշտարակեցի Խաչիկ:

135.

Երգ ղուբելիդ

Խնդրում եմ Ստեղծողէդ ե՛կ մեզ արդար մի՛ դատիր, Տէր,
Ողորմութիւն մեզ ներողէդ, մենք ենք յիմար, մի՛ դատիր, Տէր:

Ստեղծար մարդն բանական, ցանկանում են օրինօք գնալ,
Նախանձարկու չար սատանան տայ ծուռ խաբար մի՛ դատիր, Տէր:

Տէ՛ր, ե՛կ մեզի մի՛ թող անդէտ, բարի գործ գլն արա՛ վարպետ
Չար անօրէն աղքերի հետ մեզ բարեբար մի՛ դատիր, Տէ՛ր:

Էդ ողորմելի խմանդ մեղքի մէջին բան գիւանդ,
Վերջն գալու ա դիւանդ, Ճշմարտաբար մի՛ դատիր, Տէ՛ր:

136.

Բանդարկեալ Հայ երիտասարդ

«Հայրենիք սրբազանի» եղանակով.

Խեղճ կեանքիս օրերը, եղբարք, մի տեսէք,
Թէ ինչպէս են անցնում այս մութ բանդում հէք:

Դուք բոլոր անձներդ հագնուած փառահեղ,
Շրջում էք հանապազ ազատ ամեն տեղ:

Ծծում էք զով օդը անուշ հայրենեաց,
Խնդում էք միշտ ցնծում հետ ձեր ընկերաց:

Ծաղկաւէտ դաշտերում զբօսնումէք միշտ,
Վայելումէք սուրբ սէր անհոգ ու անվիշտ:

Ջերն է ախորժ երգը քաղցրախօս թռչնոց,
Ջերն է հայ աղջկանց քնքուշ հոտով ծոց:

Բայց տարաբաղդըս այս խոնաւ սենեակում,
Թոյլ մարմնով անդադար այրվում եմ մաշւում:

Հագած մի սև մաշտակ, դղակ անյարմար,
Ընթանում է կեանքս խիստ անմխիթար:

Ինձ համար որոշուած չէ՛ք ամառ, գարուն,
Անցնում են իմ օրեր ա՛խ տխուր տրտում:

Թռչնոց երգերի տեղ պաշտօն է վարում
Շղթայիս ձայնիկը, սրտիկս հալում:

Զորս սև պատերիս մէջ ապրում եմ անքուն,
ինչպէս մի գեղեցիկ թռչնիկ վանդակում:

Ունիմ պահապաններ, աչքիս ատելի,
Որոնց տեսնելիս ողբում եմ աղի..........:

Ձեմ ուտում ոչինչ որ՝ մահը ինձ փրկէ,
Բայց նա էլ կարծես թէ՝ հեռու խռով է:

Բախտիս անիւները միշտ յետ են վազում,
Եւ յառաջ դէթ դիմել բնաւ չ'են ուզում:

Ինձ չէ՛ մխիթարում ո՛չինչ բան այստեղ.
Ի զուր է ապրելըս, ցաւիս չ'կայ տեղ:

Ալէքսանդր Ս.Թարէզեանց (Սաղեանցի):

137.

«Ասումես զիմացիր» երգի եղանակով.

Խղճա՛, ո՛վ իմ սէր ինձ խղճալոյս եղո՛ւկ սոխակիս,
Ողբ և աղաղակիս:

Սիրտդ կարօտին տոչորուած՝ տալիս եմ հոգիս,
Ա՛ռ թէ հրեշտակես:
Սէրդ վայելելոյ մնացի ես միայն անբախտ,
Ա՛ռ ո՞վ դիմեմ գանգատ:
Չիկայ նմանը խնամածու Մենտոր հեղինակիս,
Ո՛հ, ինձ թելեմաքիս:
Կենաց օրերս սիրտդ հրոյն խաշեցիր, անգութ,
Ա՛խ մաշեցիր անգութ:
Թէև մտերմութիւն չի մնացել ժամանակիս,
Խնայիր հակառակիս:
Սէրդ կինամոն, կնդրուկ ազնիւ սիրտ է բուրվառ,
Ծխում է մշտավառ:
Սէ՛ր, քաղցր աչօք խնդրեմ հայեա՛ց դու պատարագիս,
Ո՛հ զենման տատրակիս:
Մինչ երբ չի նայես սիրահարիդ, անգութ սիրական,
Արժանի ես մահուան:
Չէ՛ չէ՛, սի՛րելի, հոգիս իմ տաց ես հոգւոյդ փոխան,
Դու կա՛ց յաւիտեան:
Առանց քեզ չեմ ուզիլ մի աւուր կեանքը աշխարհիս,
Ո՛չ բիւր աւուր բարիս:
Եւ ոչ քո առանց իմ մնալն և ո՛չ իմ առանց քեզ,
Շատ լաւ է յայտնապէս:
Թարց սիրականի կեանքն է խաւար սիրահարի,
Արդար և իրաւի:
Կարծեօք չի լինի աստւթեանս հակառակ,
Ամենայն ժամանակ:
Թէ ո՛չ դու, սէր իմ, սիրով վստահ ընդդէմ ներհակիս
Զգո՛ւշ, չի՛ վտանգիս:

Ես ում կամեցայ բարի առանց չարը փոխանակ,
Վատթարը փոխանակ:
Լաւ ես դրել ինձ անբաղդութեան նետին նշաւակ,
Ո՛վ անգութ ժամանակ:
Աւէ մի՛ հեղուր մի՛ Մովսէսի արիւն անմեղիս,
Ո՛վ դու իմ Եւխարիս:
Աստղի՛կ բա՛ւ է հանգի՛ր առ մահ թելամաքիս,
Ի սէր կալիպսէիս:

Մովսէս Գրիգորեանց (Երևանցի):

138.

Խորհրդակից իմ ազնիւ, դու միակ մախմուր, սիրուհի,
Երանի, որ խորհուրդս պահպանես ամուր սի՛րուհի,
Թէ պահես ուղիղ սրտով, չես փոշմանիլ դուր, սիրուհի,
Խորհուրդս մէկ համբոյր է առանց տրտունջ տո՛ւր, սիրուհի:

Անխնայ չարչարելով զուարթ կեանքս է՞ր ես մաշում,
Չէ որ դու խղճի տէր ես՝ կանաչ ծառս է՞ր ես մաշում,
Քո սիրոյ վառ կրակով պաղ սրտիկս է՞ր ես խաշում,
Խեղճվելուս լաւ գործիք են մազերդ գանգուր, սիրո՛ւհի:

Չիցէ թէ շատ մեռանիմ քաղցր խօսալդ չի լսեմ,
Վարդակարօտ սոխակիդ լեզուով կարդալդ չի լսեմ,
Երբ իցէ մօտդ գալու հրաման տալդ չի լսեմ,
Լաւ կ՚լինի քանի շատ է դնես վզիս թուր, սիրուհի:

Ինձ նման սիրահարի ճար ու մունքիւնը ո՞նց կ՚լինի,
Անդադար սէր կանչելով՝ չի տանում քունը ո՞նց կ՚լինի,
Ինքն իրան չի ճանաչում, քանդուելայ տունը, ո՞նց կ՚լինի,
Զգել ես ոսկորիս մէջ անհանգչելի հուր, սիրուհի:

Կանչում եմ, տո՛ւր պատասխան մեր դրական շարժը ո՞ւր է
Քո փափուկ ձեռքով հիւսած կարմրափթիթ վարդը ո՞ւր է,
Ափսո՛ս որ չես հարցանում քո սիրահար մարդը ո՞ւր է,
Թողել ես տարտարոսում սրտաբեկ տխուր սիրո՛ւհի:

Աշտարակեցի Խաչիկ:

139.

Խաչաձև քաշ ես արել պարանոցիդ ոսկեայ մանեակ,
Շքեղուն մարմարյան գեղեցկութեամբ ես անքանակ,
Չե՛մ ուզում նոր պատուիրան՝ դու ինձ համար ես հանգանակ
Ի՞նչ կ՚լինի տաս համբուրեմ այդ գովական թուխ աչքերդ:

Պռօշդ քաղցրաւենի՝ իսկ համբոյրդ շատ անուշ ա,
Դէմքդ կարմիր վարդենի՝ ճիշտն իմացայ որ անփուշ ա,
Ծոցումդ ջուխտ նռնենի մէկն նօղուլ մէկն նուշ ա,
Բայց շատին մահու մտնեց այդ բնական թուխ աչքերդ:

Ոսկեթել շէկ մազերդ թիկնամիջիդ փայլ է տալիս,
Նայողի աչքն է ծակում չուն փառփառուն զարդ է խալիս,
Սիրահարիդ սրտիկը թրթռում է մօտդ գալիս,
Ասա՛, ո՞ւմ չէ գրաւում այդ դուրեկան թուխ աչքերդ:

Բոյդ սալբի չինարի, միջքդ կակուղ մոմից բարակ,
Ես քեզ համար մուշտարի՝ դու բազարի սուսուա կարագ
Ե՛կ մի՛ անիր սարսարի ինչպէս բնաւեր տատարակ,
Նայի՛ր ինձ ինչտեղ ձգեց այդ սիրական թուխ աչքերդ:

Քանի որ քեզ չի տեսել՝ ման՚ի գալիս մարդի նման,
Ջանս առողջ, սիրտս ուրախ, պատկերս էր վարդի նման,
գործերով չի գաղարում միշտ գործունեայ սարդի նման,
Շատ բանից ինձ զուրկ թողեց քո գերընական թուխ աչքերդ:

Աշտարակեցի Խաչիկ:

140.

Խանում ջան, մի վախտ էիր դու մախմարի լաւ ինձ համար,
Բովանդակ աշխարհումը միայն դուէիր լաւ ինձ համար,
Թէ մէկ օր չտեսնէի կլինէր մեծ ցաւ ինձ համար,
Ատլանդեան Ովկիանումն էիր շոգենաւ ինձ համար:

Արդարև մէկ ժամանակ քաղցր լեզուով ինձ կիշեցիր,
Բայց վերջը մէկ փուչ բանով իմ բոլոր կեանքս մաշեցիր,
Հալցրիր ոսկորներս, անկրակ սիրտս խաշեցիր,
Չեմ գիտում ինչո՞ւ այսպէս եղար անիրաւ ինձ համար:

Ի՞նչ մնաց, որ չ՚արեցիր ամենից վատը ինձ արիր,
Լաւութեանս փոխանակ գլխաւոր եաղը ինձ արիր,
Շատերին արձակելով բայց անանջատը ինձ արիր,
Ասացէք, պատճառն ի՞նչ է, որ էսպէս եղաւ ինձ համար:

Զափից դուրս տաք սէրդ ասե՞մ, թէ հիմիկուայ հովանալը,
Ակամայ հագիւ տարայ էլ չեմ կարում դիմանալը,
Փառք պատիւ եմ համարում ինձ համար մահանալը,
Թէ դու, թէ սաղ աշխարհ, եղաք անխաֆ ինձ համար:

Կրակուած ա՛խ եմ քաշում մեր անցած սէրի մասին,
Այն օր մենք խօսումէինք սիրով շաղախուած միասին,
Հիմայ ինձ ջան չես թողել հասցրել ես մօտ օրհասին,
Պատրաստել ես երեսխ մէկ բանաչափ հող ինձ համար:

Բաղդասար գնդունի Աշտարակեցի:

Կ.

141.

«Ցերկու ճեռին երկու մոմ» երգի եղանակով:

Կոյս մի չքնաղ գանգրահեր,
Տարաւ յաչացս նինջ ու քուն,
Եւ Թակարդեց ինձ 'ի սէր,
Կաթն ընդ արեան այտից գոյն:

Անուէ՛ր, անձա՛ր ամուրի,
Ունայն է կեանքդ որքան կեաս,
Քեզ մի՛ մատներ համբուրի,
Սիրուց Թերատ ու պակաս:

Երեք հինգ լի ամաց էր,
Այն հրաշադեղն աննման,
Ցաւերժահարսն նա ոմն էր,
Կամ Քերովբէ հոգեհան:

Կուսանք հարսունք միաբան,
Զիս ընկալան մի յնդեմ,
Ուր պերճ զարդ ու հարմնական
Կայր իմ կեանք ժպտադէմ:

Նա հարմնացաւ ո՛ւմ համար
Ում բացուեցաւ մի դրախտ,
Գրկախառնուած սիրաբար,
Փեսայ ընդհ արսին է այդ բաղդ:

Ինձ շնորհաւոր չասացին
Ոմանք անդ առ նախանձու,
Զի չքեղ դէմքն այն կուսին,
Սրտից ցաւ էր մահացու:

Ցնծա՛ սիրող սիրուն կին,
Անախտ կենօք քո սրտում,
Օժիտ արծաԹն ու ոսկին,
Խաւար կեանք է սիրտ տրտում:

Յովհաննէս Տէր Սարգսեանց (Գիւրեցի):

142.

Երգ 'ի սոխակէ առ վարդն

Կանխեմ ձայնել 'ի խոր քնոյդ, զարԹի՛ր նազելի իմ զարԹիր,
Ահա՛ եհաս լուսոյն նշոյլ, զարԹի՛ր նազելի իմ զարԹի՛ր:

Արքայուհի ծաղկանց սեուի, է՞ր բացակայ մնաս հեուի,
Արա՛ ձայն քո ինձ լսելի, զարԹի՛ր նազելի իմ զարԹի՛ր:
Բամբ սոխակաց ցանկան տեսոյդ, գեղեցկադէմ քո երեսոյդ,
Մի՛ արկաներ դու մեզ ձանձրոյԹ, զարԹի՛ր նազելի իմ զարԹի՛ր:
Արդեօ՞ք զգա՞ս զցաւ անպայման, գիտեմ ո՛չ գոյ սմա դարման,
Տե՛ս Թէ զիարդ խղճալի կամ, զարԹի՛ր նազելի իմ զարԹիր:
Պատկեր տեսոյդ է աննման, 'ի մէջ ծաղկանց շատ զանազան,
Մինչ տեսանեն ո՛չ հեռանան, զարԹի՛ր նազելի իմ զարԹի՛ր:
Եղո՛ւկ անձին իմոյ կարգամ, որք անտէրունչ և անբաղդ կամ,
Տեսոյդ զհոտ առնուլ մնամ, զարԹի՛ր նազելի իմ զարԹի՛ր:
Տապ և խիստ տօԹ վերայ հասին, կարմիր ԹերԹերդ այրել կամին
Ահա՛ փուԹայ լոյս արևին, զարԹի՛ր նազելի իմ զարԹի՛ր:

Կարապետ վարդապետ Մատինեանց:

143.

Երգ սիրոյ

Կորուսի զվարդատեսակն (2)
Այժմ նեղ համարի վասն իմ այս աշխարհ, աւա՛ղ աւա՛ղ:
Արդեօ՛ք անդէն օդակայի այն տարփածուն,
Տօչորեալ զիս ընդ հանրօք սիրոյն առ նկուն:
Թախծոյց ինձ զդէմքս պայծառ (2),
Առ ընկալ զիս 'ի գիրկ քո վառ 'ի վառ, ո՛հ, ո՛հ:
Ասա՛ սէր իմ զիա՞րդ կաս դու միշտ դալար:
Մէն միաւոր առանց զպտուղ բախարար:
Պերճացեալ է գեղ տեսոյդ,
Զանազանեալ փայլէ պատկեր նազելւոյդ:
Եռանդեան կիրք յայնժամ բորբոքի,
Տեսողս զքեզ առնէ ինքնին միշտ գերի:

Կարապետ վարդապետ Մատինեանց:

144.

Երգ սիրոյ գիմառնաբար 'ի սոխակէ առ վարդն

Կերկերեալ միշտ ողբամ զցայգն իսկ ողջոյն (2)
Կամիմ համբոյրդ սիրոյ տալ քոյին աջոյն,
Ա՛խ սէր իմ, սէր իմ, սէր իմ, դու սիրահար իմ:

Արա՛ զիս արժանի նազելի տեսոյդ (2),
Սովեալ կամք իմ լցցին զէթ միշտ ցյագուրդ: Ա՛խ սէր, իմ եւ այլն:

Բետին տեսլեան սիրոյդ մատո՛ անխնայ (2)
Անբուժ վիրացս դարման լիցի յարակայ: Ա՛խ սէր իմ եւ այլն:

Ասա՛ սէր իմ, զի՞ դու յինէն 'ի բաց կաս, (2)
Ի մէջ փշոց իբր զպանդուխտ միշտ մնաս: Ա՛խ սէր իմ եւ այլն:

Պատանդ առիս 'ի քո սիրոյդ նպատակ, (2)
Գէթ ըմբեցից անմահութեան քո բաժակ: Ա՛խ սէր իմ եւ այլն:

Եղեց զերի առ ոտս քո թագուհւոյդ, (2)
Գոնէ մնալ հանդէպ դիմաց նազելւոյդ: Ա՛խ սէր իմ եւ այլն:

Տա՛ր զիս ընդ քեզ ուր կամքն քո յառաջէ, (2)
Գուցէ մնալ ինձ աստ սիրտ իմ աղաչէ: Ա՛խ սէր իմ եւ այլն:

Կարապետ վարժապետ Մատինեանց:

145.

Երգ առ վարդն

Կոկոն քաղցրիկ ո՛վ նազելիդ 'ի ծաղկանց, ո՛հ սէր իմ ծաղկանց
Բացուի՛ր սէր իմ մի' արկաներ զիս 'ի լաց, ո՛հ զիս 'ի լաց:

Արագ գայ ինձ ժամ փախստեան 'ի քէն բաց,
Մնայ աչք իմ արիւն աչհեղ միշտ 'ի լաց:

Բենական ձայն կարծեցի ես ո՛վ սոխակ,
Ցանկարծակի զիս քնաթափ ձայն քո արկ:

Ասա' սէր իմ զի՞նչ են կամք քո մի' լռիր,
Ե՛կ համբուրեա' զշրթունս իմ զոր սիրէր:

Պատկեր գեղոյդ միշտ այրէ զիս 'ի բազմաց,
Խնդրեմ արա' քո տեսութեանդ զիս արժան:

Երդուի՛ր քո անձն չմոռանալ զիս երբէք,
Յետ այս ժամոյս ո՛չ տեսանես զիս երբէք:

Տապ և խորշակ յետ ինչ ժամոյս զիս նեղեն,
Մի' հեռանար աչք իմ զքեզ միշտ խնդրեն:

Կարապետ վարժապետ Մատինեանց:

146.

Կշտացի՛ր ո՛վ հողեղէն, քանի մի նայիս՞ աշխարհին,
Մեղաւորաց գլուխն եմ ինձ չ'կայ թայ էս աշխարհին,
Կտրվեց ամեն զիմաց չունեցայ փայ էս աշխարհին,
Իրան իմացող մարդն չի' անի սայ էս աշխարհին,
Մեռնողն պրծնումէ սաղը տայ վա՛յ էս աշխարհին:

Դա՛րձ արի չար ճամբիցը՝ ճանաչի՛ր քո ստեղծողն,
Ընտեղ կերթանք դատաստան, որ հնչէ Գաբրիէլեան փողն,
Արդարն կ'ուրախանայ, վայ մեղաւորաց լողն,
Երկինք գետինք կու սարսափի բոլոր աշխարհ կ'առնի դողն,
Պայծառ արեգակ հոգիդ մի' անիր զայ էս աշխարհին:

Մտածի՛ր, որ չես մնալ ազատ մահուան լարիցը դու,
Մինչդ խառնիր բարու հետ՝ ձեռք վեկալ էդ չարիցը դու,
Ամենքս էլ հողեղէն ենք՝ ստեղծուած չես քարիցը դու,
Երկի՛ւղ արա, հո՛ղեղէն, Ստեղծող Արարչիցը դու,
Նշանդ է քրիստոնեայ անուամբ հայ ես էս աշխարհին:

Այսօր կաս վաղն կերթաս մէկ բուռը հող ես անցաւոր,
Խնդրում ես փառք և պատիւ՝ սիրում ես մնդալ փառաւոր,

Չես մտածում գալու է մեղացդ արդար դատաւոր,
Զարին չար՝ բարուն բարի վճիռ է տալու ահաւոր,
Մեղքդ լա՛ց, ապաշխարի՝ փաղն չ՛կաս էս աշխարհին:

Ինչ որ ունիս քոնը չէ՝ դու քեզ ու քեզ լա՛ւ մտածիր,
Թէ բերել ես կտանես՝ ասումեմ քեզ զգաստացի՛ր,
Զարից միանգամ հեռի՝ քեզ անուն բարի ստացիր,
Վախճանդ, որ թէ մահ է, Մո՛վսէս մեղքից ազա՛տ կացիր,
Էն կենաց հոգուն արա՛ քանի որ կաս էս աշխարհին:

Մովսէս Գրիգորեանց (Երևանցի):

147.

Հ.

Ի վերայ ստախօս մարդոյ

Հալած արճիճ պիտի ածել բերանն,
Ինչ մարդ սովորութիւն ունի ասել սուտ,
կու զարդարի ինչպէս Տաճկաց ղուրանն,
Հոգւոյ կամ թէ մարմնոյ սուտից ի՞նչ օգուտ:

Իւր մատաղ խոստանայ չի մորթիլ մին հաւ,
Միշտ լաւին վատ կասի կամ թէ վատին լաւ:
Եթէ զատկին ասի «Քրիստոս յարեաւ»,
Ինքն իրան ասածն կ՚կարծի անսուտ:

Ընկերին չի ասիլ որ օրն է պասըն,
Ինչ առնես նորանից հեռն է վնասըն,
Ոմանք կասեն ստախօսից մեծ մասըն,
Գոյնըն դեղըն կուլնի աչքերն կապուտ:

Սուտ ասողն չի լինիլ մին հօրից ծընած,
Ուրեմն ծնօղքն սուտով են շինած,
Առաւօտ վերկացաւ երեւ չի լուացած,
Գարնանային ցօղըն կու շինի կարկուտ:

Սուտ երազ կու տեսնի այլոց անուանի,
Իսկ թէ նա ճաշին իրան տուն տանի,
Մինչեւ երեկոյ քանի սուտ հանի,
Համարումէ նա օրէկան եկամուտ:

Խոստմանքին ինչ որ հարցնի տէրտէրըն,
կու քաշի մեղքերի մէջից անխերն,
Օրինակ Մայիֆի մեծ սանահերն,
Սուտ կասի հացաւ երդում կուտի շուտ:

Սուտ ասողին յայտնախօսն է սպանում,
Այն բոպէին պատասխանն է տանում,
Ջեա՛րկար, դու էլ թութի դուշ ես խօսանում,
Որն որ չունես մին չալ ագռաւի ձուտ:

Աբրահամ Մարտիրոսեան:

148.

Հոգի ջան հեղահօղի ինչպէս մէկ զառն ես ինձ համար,
Ամառվայ շուաքարան չինարու ծառ ես ինձ համար,
Ինձ կցորդ ամեն կողմից չէ՛ որ դու խառն ես ինձ համար,
Թէ լինես փառման կրակ աղբիւրից սառն ես ինձ համար:

Սի՛րելի Աստուած սիրես միշտ քաղցր խօսայ ինձ համար,
Հագուստ խամ չիթ լինի աթլազից խօսայ ինձ համար,
Բերանդ ոսկուց շինած ջուրխմի թաս ա ինձ համար,
Հնդստանուց նոր բերած զարբաբ ու զառն ես ինձ համար:

Գեղեցիկ փայլուն դէմքդ լուսատու Աշտարակ գիւղըն,
Աչքերդ խիստ նման է Լուսաւորչու վառ կանթեղըն,

Երեսդ շափաղի պէս փայլում է կարմիր ու դեղին
Ի՞նչ կլինի արդար սրտով մէկ մուրազ առնես ինձ համար:

Մի՛րուհի շատ համով ես ամենայն տեղ աղի նման,
Բոլորին ընդունելի Աստուծու մատաղի նման,
Մեռած տեղս տեսնում եմ քեզ երազում սաղի նման,
Թէ աչքերս մի քաշես չեմ ասիլ դառն ես ինձ համար:

Հայելուն մօտիկ տալով մետաքսեայ մազերդ հիւսումես,
Անուշ լեզվով քաղցր նազով բիւլբիւլի նման խօսումես,
Ի բնէ միտքդ սուր է՝ բարի խրատուց լսումես,
Անապատ սուրբ վանքերի սեղանի ճառն ես ինձ համար:

Քեզ վերայ զարմանում է բովանդակ բոլոր աշխարհքը,
Հագնումես ալ ու կարմիր վերդ ես ձգել ոսկեայ շարքը,
Գնդունի քեանհանեանը միշտ գովում է քո արարքը,
Նորատունկ բողբոջ կեանքիս դարուն, ամառն ես ինձ համար

Բագրատ գնդունի Խ. Աշտարակեցի.

149.

Հազար անգամ յամենայն ժամ Թող վա՜յ ինի էն հօրը մօրը,
Որ ծերացած կը տեսնեն մէկ իրանց որդու մահուան օրը:

Էդ կրակի մէջ եմ խորված ազատութեան ինձ ճար չ'կայ,
Սիրտ ու հոգիս վերաւորված մին հովութեան ինձ ճար չ'կայ.
Վերջին յոյսս է կտրված համբերութեան ինձ ճար չ'կայ,
Ճրագն իմ տան խաւարված կենդանութեան ինձ ճար չ'կայ,
Ունայնութիւն ունայնութեանց ընդունայն ինչ է բոլորը:

Ո՛վ պատուելի բարեկամք իմ խնդրեմ եթէ աստուած սիրէք,
Տրտում հոգւով գրած բանիս բանի բոպէ ականջ դրէք,
Թէ անզգոյշ խօսած եմ ինչ աղաչեմ մեղ ինձ մի բերէք,
Ցաւս զօրեղ ինքս անզօր իմ ծերութեան պիտի ներէք,
Հընները դեռ չ'առողջացած չարչարումէ այժմ ինձ նորը:

Գիտեմ կերպ կերպ ծախորդութիւնք կան յաշխարում մարդոյ վերայ
Բայց բոլորին շատ կամ փոքր գտանվումէ միշտ մին չարայ,

Իսկ իմ ցաւին ցոյց տուէք ինձ էն ի՞նչ է որ կարծէք ճար ա,
Եթէ ասէք համբերութիւն որպէս թէ իմ սիրտն քար ա,
Լա՜ւ է փորէք ինձ գերեզման կիսակենդան դնէք հորը:

Գրոց միջին իրաւ շատ կան համբերութեան մեզ օրինակ,
Որ տուած էր մեր նախահարց Հոգով սրբով էն ժամանակ.
Բայց այժմ ո՞ւր Յոբ Ահարօն Դաւիթն կամ այլ մարդ նմանակ,
Որ կարանայ որդու մահին կիրքը զսպել էն եղանակ,
Եթէ չ'տայ համբերութիւն ինքն Աստուած մեծազօրը:

Թէ ինձ նման միակ որդի թողած մարդիկ կան անհամար,
Էդ ինձ ինչ մին մխիթարանք կամ ասելի բան է յարմար,
Ջեմ իմանում որքան պիտի մարդս ինի անխիղճ յիմար,
Որ համարի այլոց ցաւը հովութիւն իւր ցաւի համար,
Ցիմ մասին էդ մտածելն էլ անգթութիւն է շատ խորը:

Ի ծննդենէ ամեն զաւակ իւր ծնողաց է սիրելի,
Այլ ոչ ամեն հօր զգացմունք մարդումս նոյն համարելի,
Կան շատ հէրեր կան շատ որդիք բոլորեցուն չէ՜ կարելի
Մին բնութիւն միաչափ սէր անխտրաբար վերագրելի,
Մերը վա՜յ մեզ, թէ սար լաէ կաղաղակէ մօտիկ ծոր ը:

Անվայել է հօրն գովել իր զաւակը կենդան վախտին,
Իսկ յետ մահուն ինչ մեղ է թէ, 'ի մասին էն տարաբաղտին,
Հայրն խօսի քանի մի բան յաւելուածք է լցուած սրտին,
Ես համարձակ կարեմ ասել հազարաց մէկ էր իմ որդին,
Եթէ ինի հասակակցած ներողութեան ինձ շնորհը:

Ճանաչողն նորա անցքը ըստ պատահման անկեղծ կասէ,
Ամենայն մարդ ըստ որում մարդ ցաւակցաբար կարծեմ լսէ,
Յուսամ ոչ որ չ'մեղանչէ սիրելւոյս էն շարք չ'դասէ,
Որոց գործքն ինքն ըստ ինքեան նորանց անխօս կըքամբասէ,
Վա՜յ արժանեաց, որ մէկ գին է հաստն ու բարակ, նուրբ խոշորը:

Տեսակ տեսակ տուրք ու շնորհք մէկ քան զմէկ յոյժ գովական
Ո՛վ չէ տեսած ով չէ լսած յԱղէքսանդրում իմ բաւական
Համեստ բարք վարք պարկեշտ ընթացք ուսումն եւ միրք բնական
Եւ այլ ընտիր շատ բան որպէս ամեն ծանօթ մարդ բանական,
Կը վկայէ խղճի մտօք մեծ եւ փոքր, բարձր ու ստորը:

Մին պատանում էր քան շնորհք կասեն դուշակ է կարճ կենաց,
Սուտ թէ ուղորթ իմ մէկ որդին քսան եւ չորս տարօք գնաց,
Թէ իմանաք որքան խորհուրդ մեր սրտի մէջ խափան մնաց,
Դուք եւս կասէք թէ էր տեսակ անտանելի մեծ փործանաց,
Ինչպէս տանի նորա անքաղդ ծերունի հայր Քրիստափորը:

Խաչատուր Մարդանեանց:

150.

Մենք և մեր ուսումը

«Բաժակներ առնունք» երգի եղանակով:

Հայ պատանիք, աշխատենք,
Բարի պտուղ մենք բերենք,
Մենք Աստուծոյ օրհնած ենք,
Արքայութեան ժառանգ ենք:

Աստուած պահի զօրանանք,
Ծաղկենք, ապրենք մեծանանք,
Ճարտար գիտուն մարդ դառնանք,
Շէնքով շնորհքով ծերանանք:

Լսենք Աստուծոյ սուրբ խօսքեր,
Սէրն է նորա մեծ պատուէր,
Հաւատը մենակ չէ փրկել,
Թէ չենք պտղի լաւ ծառեր:

Վարենք ցանենք մեր խոպան,
Խելքի մաքի այգեստան,
Նորա բերքն է շատ բարի,
Քան բիւր գոհար և ոսկի:

Քան ինքն Աստուած խորագէտ,
Չկայ ո՛չ մի լաւ վարպետ,
Չկայ ո՛չ և վարժատուն,
Լաւ քան աշխարհ-բնութիւն:

Ճանաչենք մենք աշխարհներ,
Քննենք բնութեան գաղտնիքներ,
Զափենք մենք սար ու դաշտեր,
Սովորենք խորին հաշիւներ,

Խօսել սովրենք լեզուներ,
Հայացնենք լաւ գրքեր,
Ցիշենք մեռած հին մարդեր,
Պաշենք նոցա խրատներ:

Նկարենք բնութեան հրաշքներ,
Սփռենք մեր նուրբ ճաշակներ,
Իմանանք լաւ արհեստներ,
Լաւ լաւ գիւտի հնարներ:

Վարժենք, կրթենք մեր մատեր,
Լաւ գործ դնել մեր ձիրքեր,
Սփռեն մեր դրիչն, ու սեղ
Վարդ, մարգարիտ ամեն տեղ:

Բանացնենք յօղուտ մեր,
Մեր խելքն ու ոտ և ձեռքեր,
Թափենք քրտանց կաթիլներ,
Հնձենք առատ լաւ հունձեր:

Զ'ծախենք բնաւ օտարի,
Մեր ազգ, կրօն Հայրենի,
Եւ մեր լեզու Մայրենի,
Միշտ համարենք առաջի:

Գիտութիւնը չէ՛ հերիք,
Թէ չ'դառնանք լաւ մարդիկ,
Կաղ կրդնանք մի ոտով,
Հնար չէ թռչել մի թեւո՛վ:

Թէ չ'ունենանք զգայուն,
Ախրտ և հոգի տաք արիւն,
Թէ չ'լինենք անձնասէր,
Մեզ համար չեն այդ փառքեր:

Եթէ դառնանք քաջ հայրեր,
Ու շատանան լաւ մայրեր,
Որդւոց որդի օրէ օր,
Հայը կ'դառնայ զօրաւոր:

Բայց թէ մերժենք այդ ուսում
Թէ մնանք միշտ խաւարում,
Չկայ ո՛չ մի փրկութիւն,
Էլի նոյն կոյրը նոյն փոսում:

Սամուէլ Գիւլզատեանց (Նոր-Ջուղայեցի):

151.

Հուրն սիրոյ իմոյս ազգի, միշտ 'ի խարոյկ սրտիս վառի,
Ջուրք արտասուաց ոչ շիջանի, օգնեա Յիսուս փրկիչ բարի, (2)
Զարթիր, զարթիր, մատիր 'ի տես մեծդ Պարթեւ սուրբդ Ներսէս,
Լոյս գիտութեան ոչ ծագէ մեզ, օգնեա Յիսուս փրկիչ բարի: (2)

Սուրբ Մեսրոպ Հոգւոյն փրկիչ, ազգիս երկրորդ Լուսաւորիչ,
Ո՛չ բողբոջին ծառք իմաստից օգնեա.... (2)
Որ սուրբ Յակոբ զգօն հովիւ, հասին առ մեզ աղէտք անթիւ.
Քեւ հայցեմք մեզ նպաստ լրիւ, օգնեա...: (2)

Անելութեան փուշք դժընդակ, սերմըն սիրոյ հեղձին երագ,
Իսկ ով լիցի մեզ օժանդակ, օգնեա..., (2)
Զմեզ պատեաց անլոյս գիշեր, տըգիտութեան մէկ մահաբեր,
Դու ես արեւ մեր անստուէր, օգնեա...: (2)

Աղբիւր շնորհաց ջուր կենսածիր, արդ ծարաւեալ անկաք յերկիր
Անկեղծ սիրոյ եմք 'ի խնդիր, օգնեա Յիսուս փրկիչ բարի: (2)

152.

Հրաշունչ վիշապաց բորբոքեալ մեծ գազան,
Խամրել գդրալոտ Քրիստոսեան, (2)
Ջանխոտար հաւատոյ աշխարհիս Հայաստան,
Ցայտէր հուր լափող պարսկաղէն: (2)

Արդ ո՛վ կայցէ կիզման ընդդէմ,
Արի՛ 'ի զէն մեծ Գրիգորէ,
Ա՛ռ դու զասպար քո 'ի հօրէ:

Արի՛ 'ի մարտ լե՛ր մեզ խրախոյս,
Լքելոց պարիսպ մեծայոյս,
Զարթո՛ զնոր Մակաբէ,
Զվարդան 'ի քոյդ զաւակէ:

153.

Վարդը առանց փշոց չլինէր

Հազար ու մէկ փշերու,
Սիրտս եղած էր ենթակայ,
Կուրծքէս հոսած արիւնին,
Երկինք ալ էր անզգայ:

«Ո՜հ, կոչեցի հեծեծելով,
Բարեկամ մը չունիմ ես,
Որ մէկ քաղցր ժպիտով,
Ազատէ զիս ցաւերէս:»

Տեսայ վարդն որ զանգնած,
Դունչը ձգած իւր կուրծքին,
Անմխիթար կ'արտասուէ,
Ողբալով զիս վշտացին:

«Ո՜հ ըսի վա՛րդ զրկէ՛ զիս,
Ամոքէ սիրտս քո կուրծքով,
Կուրծքիս վէրքեր թրջուին,
Քո թանգագին արտասուքով:»

Այս լսելով նեղուեցայ,
Նորա գիրկը անկակած,
Ափսո՜ս նա ևս ալ փշով,
Խոցեց վէրքերս զայրացած:

Ազէ՛, Երկինք ողորմած,
Դու ես միայն բարեկամ,
Թշուառացդ մահացուած,
Մխիթարիչ յարաժամ:

Ա. Հայկունի:

154.

'Ի վերահաստատութիւն Ազգային սահմանադրութեան:

Հայուն աչքէն ալ չ'հոսէ դառն արցունք,
Հերի՛ք լացաւ հերի՛ք հեծեց իւր բաղդին,
Հայն իւր փշերը մոռցած, տայ ընկերին
Սիրոյ համբոյր, սիրոյ ժպիտ և ծաղկունք:
Նոյեան աղաւնին,
Ձիթենեաց ճիւղեր,
Սփռելով գետին,
Հաշտութիւն բերէր:

Ահա՛ և այսօր ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ,
Իբրև աղաւնին բերաւ հաշտութիւն,
Ոսկի թելերն թո՛ղ հնչէ՛ հայ քնար,
Որոց ննջեն ընդ հովանեաւ սուրբ չիրմաց,
Համբոյր սիրոյ դրօշմեն յերեսս երերաց,
Խաղաղութեան ձայնիւ թնդայ թո՛ղ աշխարհ:
Զայն տո՛ւք դիւցազանց,
Որ յԱրտազ ննջեն....,
Աստեղք Հայկազանց,
Նորալոյս փայլեն:

Ազէ՛ սիրտ սրտի խառնէ միութիւն,
Զի յաւերժասցի ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ:

155.

Առ Հայաստան

Հայաստան երկիր դրախտավայր,
Դու մարդկային ցեղիս օրրան,

Դու և բնիկ իմ հայրենիք,
Հայաստան, Հայաստան, Հայաստան։

Ի վեհ անունդ սիրտ իմ ո՛հ յույժ,
Ոգևորի 'ի նոր խրախոյս,
Եւ անձկայրեաց 'ի քեզ յուսամ.
Ի քեզ, 'ի քեզ յոյս իմ միայն,
Հայաստան, Հայաստան, Հայաստան։

Հայաստան անուն փարելի,
Ի քեզ հանգիստ Նոյեան տապան,
Եգիտ և քև ապրեցաւ Նոյ,
Հայաստան, Հայաստան, Հայաստան։

Գետք քաջառաջք աղենաբուղխ,
Ջհողդ բարի առնեն յուռթի,
Քև ապրիմ ես, քև միշտ ցնծամ,
Քև, քև պանծամ, փառք իմ միայն,
Հայաստան, Հայաստան, Հայաստան։

Հայաստան ծնող դիւցազանց,
Եւ հրաշալեաց հանդիսարան,
Քո զեփիւռին քաղցր է շնչիւն,
Հայաստան, Հայաստան, Հայաստան։

Հայկ, Արմենակ, Արամ, Տիգրան,
Տրդատ, Սմբատ, Վարդան, Վահան,
Զոր շնչեցին և զօրացան,
Զքեզ յիշեմ, զքեզ սիրեմ,
Զքեզ, զքեզ, սէր իմ միայն,
Հայաստան, Հայաստան, Հայաստան։

Յ. Միրզայ Վանանդեցի։

156.

Երգ ուսանողաց

Ըստ եղանակին «Հայրենիք սրբազան»։

Հայկայ ենք մենք սերունդ, հարազատ եղբարք,
Պէտք է պահենք ամբիծ միշտ մեր վարք ու բարք,
Սիրենք մեր հին ազգը, մեր լեզուն և կրօն,
Հաստատ լինենք կամքով և մաքուր զգօն,
Ինչպէս որ նախնիք մեզ թողին օրինակ,
Պահելով ազգութիւն մինչ մեր ժամանակ։
Այս լինի, եղբարք,
Մեր միտք գաղափարք,
Մեր փառք մեր խրախճան,
Մինչ կենաց վախճան։

Պէտք չեն մեզ պատերազմ, զօրք, զէնք թնդանօթք
Թո՛ղ ամօթ չ'անեն մեզ օտարք և ծանօթք,
Ջանանք անկրթութեան, մութը հալածենք,
Արհեստք ու գիտութիւնք սովրենք, տարածենք,
Լինենք լուսաւորեալ ազգաց համեմատ,
Որ մեր երանութեան է իսկ հիմն արմատ։
Որով և հայ էլ,
Ինչպէս է վայել,
Լինի պատուելի,
Ուսմամբ գովելի։

Մեր նախնիք, մեր սրբեր, մեր նահատակներ,
Թողին մեզ պարծանաց շատ յիշատակներ,
Դէ՛, մենք էլ աշխատենք և թափենք քրտինք,
Պահենք մեր հին, չըլինենք յետինք,

Չ'ուշանա՛նք, գնա՛նք յառաջ, Հայեր միաբան,
Մեր Աստուածն մեզ միշտ օգնող, պահապան:
Նորան տանք պատիւ,
Տանք գիշեր և տիւ,
Նա մեր ապաւէն,
Յաւիտեանս ամէն:

Մովսէս Ջօնրաբեանց:

157.

Հանգիստ իմ անոյշ անցար գընացիր,
Միայն վէրք անբոյժ սրտումս թողեցիր,
Սոխակ գեղեցիկ կանանչ պարտէզում,
Երգելով քաղցրիկ ինձ չէ գրաւում: (2)

Քեզանով միայն երջանիկ էի,
Տիկին ինքնիշխան ինձ կարծումէի,
Ցերեկը մենակ փակուած սենեակում,
Ողբումեմ անյագ ո՛չ ոք չէ՛ լսում:

Գիշեր է գալիս մահիձ եմ մնում,
Տրտմումէ հոգիս քուն չէ՛ տանում,
Մազեր թուխ երկայն, աչեր գրաւիչ,
Ինչ հասակ, ինչ ձայն, ինչ հոգի կորիչ:

Ո՛հ սիրտս այրուած, ողջ քեզ է կանչում
Ողջ քո անմոռաց անունդ է յիշում,
Անգութ ինձ խաբեց, ուրիշին սիրեց,
Ա՛խ նա ինձ դեռ վաղ, պատրաստեց տագաղ:

* * *

158.

Հնչեսցեն լարք գեղգեղ 'ի սուլ,
Քնարաց Հայոց սոփերաց,
Եւ 'ի Մասեաց ձայնք օն անդուլ
Երգովք ախորժ մաղթանաց:
Դըըուատեսցին 'ի քաղցր 'ի նուագս,
Ազգանուէր գործք սխրալիք,
Հրոչակ հարցեն երկրի ցծագս,
փառաւոր անուն քաղցրիկ:

Երկարեսցին աւուրք կենաց,
Տեառն գէորգեայ մեր պետի,
Եւ հիւսեսցին թագ պարծանաց,
Մեծ արդիւն Հայրապետի: (2)

Օն Հայաստան խնդա 'ի դէմս, խնդա 'ի դէմս,
Կա'ց օրհնաբան 'ի հանդէս, 'ի հանդէս,
Զգեցիր հանդերձ ծիրանիս,
Եւ տո'ւր յուղերձ զաւետիս: (2)

Հոգէհատոր իմ որդիք,
Գտի աՀա' պաշտպան հըզօր,
Եւ պաշտելի հայրենիք
Պանծասցի 'ի Տէր ԳԷՈՐԳ: (2)

Վահրամ վ. Մանկունի:

159.

Հայաստան

Հայաստան, Հայաստան, անուշ Հայրենիք,
Աչառ արձակ սահման, մանկութեանս սեղիք,

Քաղցրացով զուարճ օդ, անուշ հող ու ջուր,
Ցօղով մարգագետինք կանանչ ու մախմուր:

Այգեստան, այգեստան, անուշ բուրաստան,
Ծառօք պտղովք դու ես միակ Հայաստան,
Անուշահամ ձկնով ծովեր ու լճեր,
Որով սնունդ առնուն անձինք ազգասէր:

Սարգիս Փիլոյեանց:

160.

Սոխակ սիրահար

«Ցամսավերջն Ապրելի» երգի եղանակով:

Հառաչէ, գեղգեղէ, սիրահար Սոխակ,
Մայիսեան 'ի գալուստ սիրագով խօնակ:

Այրի միշտ խորովի վարդենւոյ 'ի Թուփ,
Չիք աւաղ զովանալ, կիզի յար նա հուրբ:

Սիրակէզ կարմրաթերթ վարդենւոյն բացման,
Սուլէ միշտ, մաշի օր, վիրաց չիք դարման:

Սարգիս Փիլոյեանց:

161.

Քաջերն Հայոց

Հայոց քաջեր, Հայ դիւցազունք,
Հանգիստ Ձեր սուրբ ոսկերոտաց,
Թող նուագեն Հայոց լարեր,
Երգեն անուն Ձեր անմոռաց:

Գերեզմանաց չորս բոլորով,
Հայրենասէր դիւցազներդ,
Վարդն ու շուշան կըշողշողան,
Հայ սրտերուն տալով 'ի Թինդ:

Բոսորագեղ սուրբ արիւնով,
Ողողված են նոքա անդէն,
Իւրեանց չքնաղ գոյն ու պատկեր,
Ընդունելով Ձեր ստուերէն:

Նոցա քաղցրիկ երգի ձայնէն,
Արձագանքով 'ի դաշտս Հայոց,
Ջեփիւռին հետ հնչէ մեղմիկ,
Թէ „Ձեզ հանգիստ, քաջերդ Հայոց:“

Հայրենիքի անուշ սիրուն,
Տուէք կեանքերդ 'ի պատարագ,
Անմահ էք դուք, Հայոց քաջեր,
Սուրբ է գործոց Ձեր յիշատակ:

Ձեր մեծապատւ գերեզմաններ,
Հայերիս միշտ նուիրական,
Անդ ամփոփի Ձեր սուրբ աճիւն,
Անդ ուր երկիր վեհ Հայաստան:

Հայաստանի դետակներուն,
Անուշ խոխոջ կարկաչասահ,
Հայ սրտերուն կ'տարփողէ,
Միշտ Ձեր անուն, քաջերդ անմահ:

Ո՛հ Հայաստան, մեր Հայաստան,
Գեռ լայ, ողբայ 'ի Ձեր անուն,
Նորա թէ դաշտ, ծաղիկ թէ բոյս,
Ներկած են Ձեր կարմիր արիւն:

Միշտ կ'ծաղկին 'ի Հայաստան,
Ծառ ու ծաղիկ ծաղկափթիթ,
Մինչ վարդենւոյն վարդն 'ի ծղի,
Փթըթազարդ 'ի նոր փթիթ:

Հայոց Անին, Հայոց Մասիս,
Տղմուտ գետակն ու Շաւարշան,
Գեռ քաջերդ յաղթանակով,
Ողջոյն կուտան 'ի Հայաստան:

Մինչ գեղազոյն թռչնակներս,
Կ'ճռուողեն գեղգեղելով,
Երամ այնտեղ 'ի թուփ տերեւ,
Գայլայլիկներ նուագելով:

Հայոց քաջեր, Հայ դիւցազունք,
Հանգիստ յաւէտ, հանգիստ 'ի Ձեզ,
Թող քնարներ երգեն Հայոց,
Հայ թոռներուն այս վեհ հանդէս:

Յովհաննէս Մուշեղեանց:

162.

Երգ պանդուխտ Հայ պատանւոյ

Հայաստան, քաղցրիկ իմ Հայաստան,
Հայկազեան տոհմի բնիկ օրրան,
Լո՛ր քո թշուառ զաւակդ սուգը,
Տե՛ս նորա թափած դառն արտասուքը:

Այրվումէ սիրտս քեզի նայելով,
Քո հին աւուրց փառքերդ յիշելով,

փառքե՛ր, որոնք փոշու պէս ցնդեցան,
Քո թշուառ զաւակներից խլառ չքացան:

Յիշում եմ և ա՛խ սիրտս է այրվում,
Ցորդառատ արտասուօք աչքերս թացվում,
Տարաբաղդ եմ ես սիրտս լի վշտերով,
Ողբում եմ միշտ քեզ լալով սգալով:

Քաղցր է ինձ քո հողն անարատ,
Եւ քո մայրական սէրն գթառատ,
Քո անուշ ծոցում ա՛խ ո՞րքան բաղդաւոր
Անցուցել ես օրեր փառաւոր:

Այժմ հեռու քեզնից ուրիշ երկրում,
Օտարի հողում եմ ես թափառում,
Արտասուք աչքիս սիրտս բոցերով,
Այրվում եմ այրվում վիրաւոր խոցերով:

Վիրաւոր եմ ես վէրքերս անբուժ,
Լալում եմ լալում և ա՛խ ցաւերս յոյժ,
Ջ՛թողին ինձանում կենդանի պատկեր,
Պատկեր մարդկութեան և առողջ աչեր:

Ո՛չ մի տեղում չ՛ունեմ ես դադար,
Շրջում եմ շրջում միշտ և անդադար,
Անոք անօգնական ուրիշ երկրում,
Ուրիշի հացը ինձ թոյն է թվում:

Ա՛խ Հայաստան, անուշ Հայրենիք,
Մեծ է ինձ քո ցոյց տուած բարիք,
Քո գրկում մեծացել քեզնով սնուել,
Քեզնով եմ կենդանութիւն, կեանք առել:

Էլի քեզ եմ դառնում, անգին Հայաստան,
Իմ Հայրենաւանդ ծաղկեալ բուրաստան,

Ընդունի՛ր կրկին տարաբաղդ որդիդ,
Սեղմէ նորան մայրական սուրբ կրծքիդ:

Թադէոս Ջախարեանց:

163.

Ազգային երգ

Հայրենիք մեր շքեղ փառաց յիշատակէ այս նոր, (2)
Եկէ՛ք եղբարք Հայ գլուցաղանց ներբող ձօնեմք այսօր,
Այո, այո՛, ներբող ձօնեմք այսօր: (2)

Աւարայր դաշտ, ուր նահատակք անկան Հայկայ որդիք, (2)
Պահ մի սրտին նոր աշխուժին վերանան օ՛ն մեր միտք,
Այո՛, այո՛, վերանան օ՛ն մեր միտք (2):

Հօն կ՛տեսնեմք Աստուածային և ազգային սուրբ սէր, (2)
Ու միութիւն, որով եղեն հծկու և վեհ Հայեր,
Այո՛, այո, հծկու և վեհ Հայեր: (2)

Երգեմք եղբարք քաղցր ՚ի նուագս օրհնեմք քաջաց այն խումբ, (2)
Որք Պարսից դէմ պաշտպանեցին Ազգն ու հաւատն մեր սուրբ,
Այո, այո՛, ազգն ու հաւատն մեր սուրբ: (2)

Օրհնեալ են միշտ Վարդան, Խորէն, Արտակ, Տաճատ, Համայակ, (2)
Ներսէհ, Վահան, Արսէն, Գարեգին, ու սուրբ Վարդանանք,
Այո՛, այո՛, բոլոր սուրբ Վարդանանք:

* *

164.

Մաղթանք

Հօգիդ Աստուած, աղբիւր շնորհաց,
Ազաբաշխ և միշտ գթած,

ԶՄայրս մեր պայծառացո',
ԶՄանկունս Սորին քև զօրացո',
ԶԲարերարս մեր կեցո'
Եւ 'ի շնորհս քո փայլեցո',
Ի փառս սուրբ Երրորդութեան,
Այժմ յապայն և յաւիտեան:

165.

Զ.

Բաժակ հասարակաց

Ձեռքս առի մի բաժակ, ուրախ դիմօք նայեցի,
Եւ իմ դիմաց գծագիր նորա մէջ նկատեցի:

Կտեսնէի այլ տեսակ և այլ իմն ցուցանէր,
Իմ ամենայն անցքերն նորա մէջն երևէր:

Մտածեցի օրհասս իմ մօտ է, որ այդ ինձ հրաւէր,
Բայց կ'խնդրեմ այս բաժակ առ այժմ անցո', ո'վ իմ Տէր:

Յօժար եմ ես թէպէտ և՝ բայց առ'ւր քիչ էլ ժամանակ,
Զի ուխտած եմ կանգնելոյ զարկևարութեան դրօշակ:

Նոր բորբոքէ իմ արիւն, նոր դառնայ սիրտս վառուն
Ուսմանց բուրաստանի մէջ կանգնել ծաղիկ զարդարուն:

Նորա մրցողք, գօտեպինդ պարթենոնում պսակուած,
Երբ կ'տեսնեմ ,,կեցցեն շատ" գոչէ սիրտ իմ զմայլած:

Նոցա ամրապինդ լանջքն ազգի վահան եղեր են,
Շատ թիւնաւոր նետերէ միշտ նորանք մեզ կրփրկեն:

Վաղուց հետէ կ'սպասեմ զարան մտած խունջ ու մունջ
Աթենասայ պարտիզէն յանկարծ խլել մի լաւ փունջ:

Զի երբ երթամ Հայաստան, չունեմ այլ ինչ որ տանեմ
Մեր ազգակից եղբարցը զայն 'ի սրտէ ընծայեմ:

Նորանց այս քաջ յայտնի է, տեղեակ են մեր դրութեան,
Որ անյաջող եմք 'ի Պարսս, չո'ւնիմք վարդէն ուրիշ բան:

Կարող եմք զայն մշակել՝ գոյն տալ հէգ մեր վարդերին,
Թէ թշուառ մեր կեցութիւնք մեղմեն սիրտը ժանդ բաղդին:

Ո'հ, թէ բերին դառն բաժակ օրհասական, չ'առնէ զանց,
Պէտք է ըմպէ գլխակոր և արբի Մ. Բժշկեանց:

Ծ.

166.

Քնար սիրոյ

Ծօծանակն անսիրտ,
Ծօծայ անդադար,
Տխուր է սրտիկս,
Գիշերն խաւար:

Թաղուած եմ, ո'հ ես,
Դաժան աւեաց մէջ,
Ո'վ կրնայ թուել
Կսկիծքիս ել և էջ:

Առանձին եմ..... ա'հ,
Չունիմ բարեկամ,
Սեաւ ճակատագիր,
Ո'հ, ինչ անխնամ:

Բայց ո'վ գիս ըմաւ,
Մխիթարանք տայ,
Որոյ ժըպխոով,
Վշտերս թեթևնայ:

Նուազեալ սրտիս,
Աղբիւրն է բացուէր,
Արտասուաց կաթիլք,
Գետակ են դարձեր:

Քնքո'ւշ աղաւնեակ,
Քո սիրուն աչեր,
Ա'հ, թէ տեսնէի,
Սա իմ արցունքներ:

Յիմար էի ես,
Յիմար պատանի,
Արտասուաց հազար,
Կոհակ֊վանէի:

„Ջելա՛ս‟ կոչեցի,
Սրտիս իմ ճրագ,
Հրեշտակ սիրուն,
Ո՛հ, փափուկ տատրակ:

Ո՛հ թէ քեզ մէկ մը,
Մէկ մը, ա՛հ, միայն.
Սեղմէյի կուրծքիս,
Ո՛հ, իմս աննման:

Քո սիրուն աչեր,
Որ սիրտս գերեցին,
Եւ իմ էութիւն,
Ընդ քեզ Տէր ըրին:

Քեզ Ջելա՛, քեզ, քեզ,
Որ չես երկրային,
Եթերական դու,
Ես կոյս մը անգին:

Հոգւոյս պաշտելի
Է քո կերպարան,
Դու ես, դու Ջէ՛լա,
Դու իմ լոյս միայն:

Ա. Հայկունի:

Մ,

167.

Ձայն Հայկազանց առ Հայաստան:

Ա.

Մա՛յր Հայաստան, զի՞ ողբաս,
Սո՛ւրբ Հայաստան, է՞ր սգաս,
Չերկի՞ք է լալ, լե՛ր զուարթ,
Մի՛ խորովէր զմեր լեարդ:

Մի՛ լար, Մա՛յրիկ հարազատ,
Բաղդ քո հաւեալ չէ յաւարտ,
Յուսա՛ յԱստուած, մի՛ տրտմիր,
Ընդ քեզ է Տէր, զօրացի՛ր.

Որ ետ, էառ, նա և տայ,
Քեզ բարօրէ զապագայ:

Դու հող ընտիր բարեբախտ,
Դու բերկրալից հին դրախտ,
Աստուածածին բուրաստան,
Դու ես, Մա՛յրիկ, դու միայն:

Սերունդք ազգաց աշխարհի,
Ի քոյդ ծոցոյ կրկնակի,
Որպէս սուրբ գիրք վկայեն,
Տարածեցան համօրէն:

Հայոց լեզուն էր Նոյեան,
Նոյ բարբառէր յԱդամեան,
Յոր նախահայրն 'ի դրախտի
Խօսէր ընդ իւր Արարչի:

Զանգլին ոսկերս Ադամայ
Մօր Եւային ընդ նմա,
Եւ Նոյին մերձ սերնդոց,
Ամփոփ պահես 'ի քոյդ ծոց:

Թէ ըստ քմաց 'ի դադարկ
Զայս այլայլեն ազգք օտարք,
Անիրաւին անկասկած,
Եւ մեղանչեն առ Աստուած:

Նոյի Թոռան Թոռն Հայկ,
Ընկճեալ զշինողս զաշտարակ,
Կանգնեաց ազատ գլուր որոշ,
Ի քոյդ Մասիս զդրօշ:

Ո՞ր պետութիւն, ո՞ր աշխարհ,
Յայժամ էր քեզ հաւասար,
Վեհ հսկայք քո վերամբարձ,

Պնդէին 'ի յարգ 'ի պարծ,
Բազում նոցա ամրակուռ,
Սփռէին միշտ զարսուռ:

Այսպէս 'ի փառս անդստին,
Զանուն քո սուրբ համբարձին,—
Մեծ նախարար հզօր Հայկ,
Արամ, Արայ, Արմենակ,
Կարդոս, Տիգրանք, Վաղարշակ,
Զարմայր, Արշակ, Արտաշէս,
Պարոյր, Խոսրով, Տրդատէս,
Աշոտ, Սմբատ, քաջ-Վահան,
Եւ Մամիկոնեան սուրբ Վարդան:

Թէ զքաջարիդ մեք ճշտիւ,
Արկցո՛ւք զոգջոյն արդ 'ի Թիւ,
Ո՛չ ուշ բաւէ և ո՛չ ոյժ,
Զի անհամար են յոյժ յոյժ:

Վիպող պիտի և քնար,
Շնորհազարդ, ոսկելար,
Վայելչապէս նուագել,
Զաշխոյժ քաջիկսն ներբողել:

Հա՛պա, Մա՛յրիկ, զի՞ ողբաս,
Հի՞մ տառապիս, է՞ր սգաս,
Հերի՛ք է լալ, լե՛ր զուարթ,
Մի՛ խորավէր զմեր լեարդ:

Բ.

Ամս երեսուն Տէր Յիսուս,
Յանդ քարոզեաց սէր և յոյս,
Ո՛չ անսացին մոլեգինք
Սաղէմ և ազք Ա՛ազինք·

Բայց զաւախունքդ աննախանձ,
Ի փրկութեան 'ի Թախանձ,
Յաճախեցին մինչ զմեր,
Սուրբ կենսատուն զօդ շնչէր:

Այսպէս ահա՛ սուրբն հաւատ,
Զվսեմ լոյս անարատ,
Ծագեաց զքև զառաջին,
Հրամանաւ մեր փրկչին:

Արծարծեցաւ այս մեծ լոյս,
Եւ մեզ կրկին փառաց յոյս,
Աջով սրբոյն Հիմնողի
Էջմիածնայ Տաճարի:

Զխա՛րդ յետոյ անխափան,
Քո ժողովուրդ կայ պաշտպան,
Զարեան եհեղ գէտս և ծով,
Զիւր սուրբ կրօնս պահելով:

Զխա՛րդ Վարդան վեհածին,
Ռոստամ, Վռամ, Գարեգին,
Արսէն, Խորէն և Արտակ,
Եղեն անմահ նահատակ:

Զխա՛րդ վաթսուն հազար արք
Ի սուր 'ի տէգ զինավառք,
Յաշտ արարին զկեանս իւրեանց
Վասն հաւատոյ գերապանծ:

Քեզ քաջ յայտնի այս ամեն,
Սմին 'երկինք վկա՛յ են,
Յո՛յց, թէ գիտես, մեզ արագ,
Սուրբ սուրբ զննմնոյս նմանակ:

Թո՛ղ 'ի նորոյ զարթիցի
Համբուսեան սուր ոգի,

Զանմահութեան կից զանմահ,
Հնչել գովեստ ձահ 'ի ձահ:

Հա՛պա, Մա՛յրիկ, զի՞ ողբաս,
Հի՞մ տառապիս, է՞ր ապաս,
Հերի՛ք է լալ, լի՛ր զուարթ,
Մի՛ խորովեր զմեր լեարդ:

Մի՛ լար, Մա՛յրիկ հարազատ,
Բախտ քո հասեալ չէ յաւարտ,
Յուսա՛ յԱստուած, մի՛ տրտմիր,
Ընդ քեզ է Տէր, զօրացի՛ր,
Որ ետ, էառ, Նա և տայ,
Քեզ բարօրէ զապագայ:

Ընկա՛լ, Մա՛յրիկ զիմ հազագ,
Նայեա՛ց առ քոյդ քիչ երգակ,
Զի թէ ներեն ժամ և հող,
Հագներգեցից ընդարձակ:

Աւետիք Մամիկոնեանց:

168.

Մուխամմազ 'ի վերայ ծածեալ խորհրդոյ

Մին ուրախ բիւլբիւլ ունիմ՝ կարդումէ շախ շախ ամեն օր,
Դուրս է գամ վարդի միջից, նա շաղաթաթախ ամեն օր,
Ես նորա ձայնի սիրով՝ զուարթ եմ ուրախ ամեն օր,
Ջովղ ունեմ բաղի միջին անահ ու անվախ մեն օր,
Ինձ նման սիրահարի բանն չի գալ ձախ ամեն օր:

Բիւլբիւլիս աչքերը շուխ, ունքերը սև անեղ տեսակ,
Մազերն մէջքիցը զուս, ամեն ոսկին ինձ հիւսակ,
Սաղէ գամ կապուտ մովըն, մէջքը նաշխի բարձրահասակ,

Այդպէս անփութ թագուհին ո՞նց չունենայ զլխոյ պսակ,
Ջեմ ուզում որ նա քաշի աշխարհումն «ա՛խ» ամեն օր:

Բիւլբիւլիս մանգալ ունի, որ բոլոր աշխարհին աժի,
Համբերութեամբ խօսալն՝ թագաւորաց փառքին աժի,
Հողեղէն ծնունդ գոլով՝ հրեշտակաց շարքին աժի,
Ջուլէյխէն ասեմ սորա հարիւրից մէկ վարքին աժի,
Ուխտաւորքըն տեսութիւն չեն գալիս նահախ ամեն օր:

Բիւլբիւլս այս բահարին՝ ինձի ումիտվար է արել,
Թէ գլխեմ աղերսալս՝ նորան փոքր քար է արել,
Հերիք է բաղումանն՝ ինչքան ահուզար է արել,
Ջափարից բաղի մէջն՝ ոտոխ ճանապարհ է արել,
Տեսնում եմ վարդէն ծոցից բացելայ մին թախ ամեն օր:

Ջարկեա՛ր, ի՞նչ ձեռնասուէ վարդի մօտին շատ մնալը,
Թէ պատահաւ նասիբ է՝ ջահդ արա՛ փունջիլ գնալը,
Մայիֆն խիստ ատումէ սէրութեան դուռըն բանալը,
Հերիքայ ինչ քաշում ես՝ մինչ փափագդ ստանալը,
Եթէ միշտ մօտն մնաս, քեզ կասի «թանթախ» ամեն օր:

Աբրահամ Մարտիրոսեան:

169.

Մնաս բարեւ կ'հեռանամ,
Հոգւոյս հատոր քեզանից,
Հեռու երկիր ես կ'գնամ,
Թողնելով քեզ տրտմալից:

Մնաս բարեւ միշտ կ'յիշես
Ինձ, իմ միակ մխիթար,
Սրդեօ՛ք մէյմը ալ կ'տեսնե՞մ քեզ,
Կ'վայելե՞մ սէրդ արդար:

Մնաս բարեւ ես գնումեմ,
Բայց անազան կ'դառնամ,
Ուրեմն արի, որ համբուրեմ,
Քո վարդ այտից միանգամ:

Մնաս բարեւ մի՛ արտասուիր
Տօ՛ւր մատանիդ ուղեկից,
Մի՛ լար հրեշտակդ լուսալիր,
Սիրտս չէ հեռու քեզանից:

Մնաս բարեւ ո՛հ իմ հրեշտակ Մնաս բարեւ ու խաղաղիկ,
կա՛ց դու հանդարտ անկասկած Ահա՛ հասաւ այն ժամը,
Զքաղցրալուր քո ձիշտակ, Որ համբուրեմ աչերդ քաղցրիկ,
Սրտումս կայ միշտ պահած: Տամ սրտակեզ ողջոյնը:

Սասցի՛ր դու իմ բարեը,
Ցաւսութիւն անարգել,
Ո՛հ արտասուաց կաթիլները,
Ալ չեն թողնում բան խօսել.......:

Սմբատ Սիսակեան:

170.

Թուխ մազեր

Միշտ քաշումեմ կարօտ մի անմեղ գտան ես ինձ համար,
կրակվելիս որ քեզ տեսնեմ աղբիւրից սառն ես ինձ համար,
Ջահիլ կեանքս սպանել ես, չեմ ասել գտան ես ինձ համար,
Սիրտս անկրակ փաւլումէ, երբ տեսնումեմ թուխ մազերդ:

Լսի՛ր տե՛ս թէ ի՞նչ եմ ասում մօտիկ տալդ ինձ սպանեց,
Հարիւր տարուայ կեանքս կորաւ, համարեա՛ թէ հոգիս հանեց,
Նետի նման սիրտս ծակեց բոլոր մարմինս կրակեց,
կրակին ջուր է հարկաւոր, էդ կ՚լինի թուխ մազերդ:

Բայդ շիշակ չինարի է՝ թշերդ մախմրի խաւ է,
Եթէ ես քեզանից զուրկ մնամ, ինձի համար շատ մեծ ցաւ է,
Սիրտը շուշայ է կ՚կոտրվի՝ քու տէրը ինչքան անիրաւ է,
Որ չի թողնում արժանանամ ա՛խ իմ սիրած թուխ մազերին:

Ուրիշ բաներ քեզ չեմ ասում՝ սրտումս թողացիր....
Ինչքան ուրախ մնն եմ գալի, երեսս չի գալի ծիծաղ,
Ամեն մի օր, ամեն մի ժամ, ամեն րոպէ քաշում եմ ա՛խ,
Միտս ընկնելուս շատ եմ տխրում՝ էդ շախշախուն թուխ մազերից:

Խնդրումեմ աղաչումեմ իմ ցաւերս լաւ հասկանաս,
Սորոր տալով իմ մօտս գաս, քաղցր աչքով ինձ մտիկ տաս,
Ուրիշները ինձ համար չեն, քանի էս աշխարհում դու կաս,
Ասում եմ լաւ օր չ՚տեսնես, թէ ինձ զրկես թուխ մազերից:

Ա՛խ անիրաւ մարդիկները իմ սիրտս եարալու արին,
Որ ուզածս էլ ձեռք չէ գալիս, սրտմաւմեմ բոլոր տարին,
Էդ ինձ համար չար երազ էր, թո՛ղ Աստուած կատարէ բարին,
Որ քո ազնիւ ձեռքը ընկնի, էս իմ ազնիւ թուխ մազերս:

Չէ՛, հարուստ մարդիկ շատ եմ տեսել, բայց իմ կամքովս
ընտրել եմ քեզ,
Երանի քեզ արժանանամ և քո մօտդ միշտ նստեմ ես,
Գլխատակիդ բարձ կ՚դնեմ, նանիկ կասեմ դու կրքնես,
Թէ որ ճակատդ ալ քրտնի, կ՚սրբեմ իմ թուխ մազերով:

Բայց անիրաւ ոսոխները յոյս քեզանից վերցրին,
Սէրդ սրտումս թողեցին՝ տալով աչքերս կուրացրին,
Նոր բաց էլած կարմիր վարդս ազուաներին տէրացրին,
Ալ չեմ ուզում ես ողջ մնալ, իմ խեղճ Թշուառ Անուշաւան:

Դօն Անուշաւան Սիսակեան:

171.

Մանկութեան օրեր

Մանկութեան օրեր, երազի նման,
Անցաք, գնացիք, այլ չէք դառնալու,
Ո՛հ դուք երջանիկ, ո՛հ անհոգ օրեր,
Ընդունակ միայն ուրախացնելու:

Ձեզանից յետոյ եկաւ զխուլթիւն,
Իւր ծանր հայեացքով աշխարհի վերայ,

Ամէն բան ընկաւ մոռացութեան տակ,
Րոպէ չ՚մնաց ազատ կամ ունայն:

Գիտակցութիւնը յաջորդեց սորան,
Ազգի վիճակը ծանրացաւ սրտիս……
Ապոլոն տուեց ինձ իւր քնարը,
Որպէս փարատիչ տրտում ցաւերիս:

Աւա՛ղ, այդ քնարը իմ ձեռքում հնչեց,
Նոյնպէս լալագին, նոյնպէս վշտահար,
Ինչպէս իմ սիրտն էր, իմ զգացմունքը,
Ուրախացուցիչ չի գտայ մի լար:

Մանկութեան օրեր, ինչո՞ւ այդպէս շուտ,
Թռաք գնացիք անդարձ յաւիտեան,
Եւ այն ժամանակ անհոգ ու ազատ,
Կարծումէի ինձ աշխարհի իշխան:

Լո՛ւռ կաց դու քնար, այլ մի՛ հնչեր ինձ,
Ապոլոն, յետ առ դարձեալ դու նորան,
Տո՛ւր մի այլ մարդու, որ ընդունակ է,
Զոհ բերել կեանքը սիրած աղջկան:

Ես պիտի դուրս գամ դէպ՚ի հրապարակ
Առանց քնարի, անզարդ խօսքերով,
Ես պիտի գոչեմ, պիտի բողոքեմ,
Խաւարի ընդդէմ պատերազմելով:

Թո՛ղ պատգամախօսը հնացած Դէլփի,
Իւր եռոտանու վերայ փրփրի,
Թո՛ղ միջին դարու գաղափարներով,
Ամբոխը խաբել ձգնի աշխատի:

Թո՛ղ նա թարգմանէ զուարթութիւնը,
Թո՛ղ մխիթարուի ծովի ափերում,
Մենք ազատութեան ենք միայն թարգման
Միայն այս խօսքըս ունիմք բերանում:

Միքայէլ Նալբանդեանց, (Կոմս Էմմանուէլ):

172.

Մարշ Հայկական

Յառա՜ջ, յառա՜ջ,—Ո՛վ հայկազունք,
Յառա՜ջ, յառա՜ջ,—Ո՛վ քաջազունք:

Օ՛ն, դիմենք շուտ—՚ի հայրենիս,
Եւ զունդազունդ—ընենք գերիս:

Հայկեան ոյժն—Աւած վահան,
Եւ կրօնքն—Նաւ պաշտպան:

Կարապետ Գ. Գակէնեան:

173.

Մի՛ լինիր ո՛վ բնութիւն կեանքիս դաւաճան, մի՛ լինիր,
Մի՛ լինիր ինքնահաւան մարդուն սիրական, մի՛ լինիր,
Աշխատէ առաքինի նիւթեր ժողովէ անպարտ,
Սնոտի անօգտաւէտ բանի օթեան մի՛ լինիր:

Կրօնդ՝ հայութիւնդ միշտ պահպանէ կեանքիդ նման,
Խաբեբայ սուտ կղերի խօսքով Պապական մի՛ լինիր
Միայն քո պատիւը աւելնալու համար՝ աղէտ,
Փառամոլ, ազգուրացող վաճառ՝ Մէհրուժան մի՛ լինիր:

Քո տունը կամ դրացու սենեակները անպահապան
Թողնելով՝ օտարների տանը տարապան մի՛ լինիր,
Բնական ու երջանիկ կեանքդ անուսում թողնելով,
Դաւթի ասութեանը նման ու անբան մի՛ լինիր:

Ամենայն մարդու իր գաղափարով վարուիր հետը,
Ճշմարիտ ընկերութեան կեանքիցը բաժան մի՛ լինիր,
Արտաքին դէմքիդ նման ներքին խորհուրդդ սուրբ արա՛
Գարշելի ոսկորներով լցուն գերեզման մի՛ լինիր:

Ծուլութիւնը քեզանից հեռի պահել աշխատի՛ր միշտ,
Ազգատի անտանելի վիճակին արժան մի՛ լինիր,
Ջիւանի անհիմ ու անհաստատ սէրից հեռու կաց,
Վառուելով (Ալախի՞) Արթուրի նման մի՛ լինիր։

174.

Դիմառնաբար 'ի վարդէ առ սոխակն

«Շուզարշի քի դաղլար» երգի եղանակով։

Մնացեալ կաս սէր իմ 'ի բացեայ յինէն, սէր իմ ո՜հ,
Հառաչանք միշտ և լաց զի՞ առանց զինէն, (2)
Ցորդառատ արտասուքդ սլաք սուր սրտիս, սէր իմ ո՜հ,
Թափանց յոյժ խոր սրտիս տեսողք վկայեն։ (2)

Աղաչեմ 'ի բա՛ց հան զքոյդ տրտմագգեաց,
Արի՛ մերձաւոր իմ հանդէպ երեսաց,
Աջակցեալ ձեռն 'ի ձեռն գրկախառն համբոյր,
Այնպէս հարուստ 'ի ժամս 'ի վայել մանկանց։

Տինա տեսցես ճաշակ սիրոյդ քաղցրութեան,
Թէ և փոյթ անցանէ ժամանակ վայրկեան,
Ջերասանակ նորա պինդ կալցուք 'ի մեզ,
Կարծի նա միշտ լինել յաւիտենական։

Ի բա՛ց հան դու 'ի քէն տրտմագգեաց հանդերձ,
Ընդոստեալ յոստոց յոստս, փութա՛ առիս մերձ,
Գեղգեղեալ նուագեա՛ զքնարդ տաւաղի,
Շարական և զայլ տաղ երգս ընթերցեալ։

Նախ երգեա՛ պաղատեմ սիրատարփ խօսնակ,
Քանի կայ 'ի ձեռս քո յարմար ժամանակ,
Մինչ չև է ժամանեալ իշխանն արևու,
Տօչորող բնութեանս մահարար խորշակ։

Եկեալ շատ թշնամեաց խափան մեր երգոց,
Զ'տան թոյլ հարկանել քնարին հնչոց,
Թերի թողուն բաղխել զլար ձայնատու,
Հեղուն 'ի մեզ զայրոյթ զվարանս բոց։

Ասեմ քեզ ստուգիւ թերթ իմ թառամի,
Մնաս խեղճ և մոլար միշտ և յերերի,
Հառաչես և ողբաս զիշերն անհանգիստ,
Փոյթ զգաս յանձին թէ յի՞նչ կաս վիճակի։

Նոր խորհուրդ, նոր հանճար, նոր հնար ուսմանն,
Նոր տեսակ ճանապարհ, գտցես փախստեան,
Ի խիթ 'ի թաւ անտառս և 'ի փոս փապար,
Դիմեալ անփութապէս կալցես ապաստան։

Ցաւ և նեղութիւն գտցես անպայման,
Անհանգիստ աշխատանք հարցեն քեզ քրտամ,
Զքեւ այլ թռչունք եկեալ 'ի կատակ,
Ծափահար հրճուանօք վերայ քո խնդան։

Կարապետ վարժապետ Մատինեանց։

175.

Երգ սիրոյ 'ի սոխակէ առ վարդն

Մխակ թագուհի ծաղկանց նազելի, (2)
Ի մէջ պարտիզի զքեզ անդ տեսի,
Սիրտ իմ հարաւ քեզ, աւա՛ղ, աւա՛ղ, աւա՛ղ,
Մի՛ առներ անտես, սէր իմ, սէր իմ, սէր իմ,
Ե՛կ մերձիր առիս, հրճուեսցի հոգիս ո՜հ։

Ասա՛ դու ինձ վարդ, ո՞ւր գտանիս արդ, (2)
Խստութիւնք փշոց զքեւ կան թակարթ,
Սիրտ իմ հարաւ քեզ, աւա՛ղ, աւա՛ղ, աւա՛ղ։

Տեսանես դու գլս վերօք խղճալիս, (2)
Ցանկութիւն տեսոյդ այրեն գլս գերիս,
Սիրտ իմ հարաւ քեզ, աւա՛ղ, աւա՛ղ, աւա՛ղ:

Ի ձայն դայլայլիկ միշտ երգեմ հեզիկ, (2)
Բանից կոկոնից մնամ յար լռիկ,
Սիրտ իմ հարաւ քեզ, աւա՛ղ, աւա՛ղ, աւա՛ղ:

Նախանձ քոց փառաց չ'տան ինձ 'ի բաց,
Երփներանգ թերթերդ պատճառեն ինձ լաց,
Սիրտ իմ հարաւ քեզ աւա՛ղ, աւա՛ղ, աւա՛ղ:

Եղանակեմ քաղցր համ լիցի քեզ յար,
Ի շրթանց իմոց բղխեն քեզ արդար,
Սիրտ իմ հարաւ քեզ աւա՛ղ, աւա՛ղ, աւա՛ղ:

Անարատ դու հարս զի՞ 'ի բացեայ կաս, (2)
Ե՛կ մտի՛ր առ իս, սէրդ իմ անպակաս,
Սիրտ իմ հարաւ քեզ, աւա՛ղ, աւա՛ղ, աւա՛ղ:

Ցնորք են իսկ սէրք, միշտ առնեն հրդեհք,
Ի վայրկեան ժամուն անցանեն հապճէպք,
Սիրտ իմ հարաւ քեզ, աւա՛ղ, աւա՛ղ, աւա՛ղ:

Կարապետ վարժապետ Մատինեանց:

176.

«Սակայի շիքաստի» եղանակով:

Մինչև ե՞րբ նազելի չարչարուեմ, Որ ժամանակ որ տեսնուեմ,
Ես այս օտար աշխարհում, Քեզ փողոցում շուռ գալիս,
Գժուածի պէս շուռ եմ գալիս, Վերանում է հոգիս տեղից,
Ջունի կեանքիս դադարում. Էլ դադարում չէ՛ տալիս.
Ո՛հ էրվումեմ, ո՛հ մեռնումեմ: Ո՛հ էրվումեմ, ո՛հ մեռնումեմ:

Վառվումէ միշտ սրտիս մէջին,
Սիրոյդ վառուած ճրագներ,
Էլ չի թողում որ դադարեմ,
Էրումէ միշտ կրակներ:
Ո՛հ, էրվումեմ և այլն:

Խար գլուլի պէս սև մազերդ,
Երեսիդ թափել ես,
Սիրոյդ ուժով դու անթառամ,
Թառամուածին կալել ես:
Ո՛հ, էրվումեմ և այլն:

Սրտիս մէջին խփած նետիդ,
Ջայնը չունի, սիրական,
Ծածուկ կ'երթայ ալ արիւններ,
Խոցերից բաւական:
Ո՛հ, էրվումեմ և այլն:

Ասա՛ տեսնեմ սա ի՞նչ բան է,
Որ իմ գլխիս բերումես,
Էշխիդ սիրով գիշեր ցերեկ,
Ինձ անկրակ էրումես:
Ո՛հ, էրվումեմ և այլն:

Էս ի՞նչ ցաւ է ինձ տուելես,
Որ չեմ կարում տանելի,
Էրումէ ինձ վառ կրակով,
Ցաւերդ անտանելի:
Ո՛հ, էրվումեմ և այլն:

Ձե՛ս թողնում, որ մէկ բոպէ,
Նստած տեղս դադարեմ,
Էլ չեմ գիտում ես ի՞նչ անեմ,
Որ քո կամքդ կատարեմ,
Ո՛հ, էրվումեմ և այլն:

Սև սաթի պէս աչքերդ ունքերդ,
Լուսնիակի կամար է,
Թերթևունքդ նետեր քաշած,
Էս ևթիմի համար է:
Ո՛հ, էրվումեմ և այլն:

Իմ մեղն ի՞նչէ ասա՛ տեսնեմ,
Որ ինձ այսքան էրումես,
Էլ բան չ'կայ աշխարհումն,
Որ իմ գլխիս բերումես:
Ո՛հ, էրվումեմ և այլն:

Կամքդ ի՞նչ է, ասա՛ տեսնեմ
Դու Միսկինին Խաչիկին,
Երկուսներն էլ միշտ կանգնած են,
Քո հրամանին, քո՛ կամքին:
Ո՛հ, էրվումեմ, ո՛հ մեռնումեմ:

Միսկին:

177.

Առ սիրուհիս Խ.

Տաճկաց «Բէլա շիմշադ բարմաղ օլմաղի» եղանակով:

Մի՛ տանջիր ինձ դու չարաչար,
Ա՛յ անողորմ իմ սիրահար,
Կեանքիկս մաշտաղահաս,
Հերիք է դէ մաշես խղճառ:

Ա՛յ դու անխիղճ, ա՛յ սիրահար,
Խղճա՛ ինձի ցաւակցաբար,
Սրտիս վշտին լե՛ր մխիթար:

Հասակով մի շիմշադ ծառ ես,
Ծոցումդ ունիս ջուխտ շամամայ,
Կերպարանքով արեգակ ես,
Մի՛ այրի՛ր ինձ խիստ անխնայ:

Ա՛յ անողորմ, ա՛յ սիրահար,
Խղճա՛ ինձի ցաւակցաբար,
Սրտիս վշտին լե՛ր մխիթար:

Այդ սիրայի հուր աչքերդ,
Սրտիս խորքերն են շփոթում,
Երկնակամար թուխ ունքերդ,
Ջան-հոգիս են դուրս բերում:

Ա՛յ աննման, ա՛յ սիրահար,
Խղճա՛ ինձի ցաւակցաբար,
Ցաւիս արա՛ խնդրեմ մէկ ճար:

Անուշահոտ կարմիր վարդը
Թագնվումէ քո թշերից,
Նորա այն նուրբ թերթիկները,
Վախումէ քո պռօշներից:

Ա՛յ ես մեռնեմ, ա՛յ սիրահար,
Ալլոց սիրոյն մի՛ ցանկանար,
Սէրըդ իմ հետ պահի՛ր միշտ վառ:

Ամաչումէ շուշանիկը,
Քո ձիւն դօշիդ մօտիկ տալիս,
Թէ քայլումես, ոտներիդ տակ,
Փունջ մանուշակ է դուրս գալիս:

Ապտուած սիրես, ա՛յ սիրահար,
Ալլոց սիրոյն մի՛ ցանկանար,
Խեղճ Բէզզադիս մի՛ մոռանար:

Բէզզադէ:

178.

Երգ

Տաճկաց «լամու լամուի» եղանակաւ:

Մի անգամ ես քեզ տեսնելիս՝
Իմ բաշխալու եար եմ ասել.
Կարմիր թշերդ համբուրելիս՝
Իմ խնթխար եմ ասել:

Ջուխտ կուներս քեզ մեկնելիս,
Ջեռս ծոցդ տա՛ր եմ ասել.
Այդ երեսիդ ալ շաֆաղը՝
Ցաւիս օգտակար եմ ասել:

Լուսապաճոյճ մի էակ ես,
Դու երկնային հրեշտակես.
Հոգւոյս համար հիւղ - մեալեաք ես,
Քեզ իմ մխիթար եմ ասել:

Տէրն ինձ համար քեզ շատ պահէ,

Խաչաղ օրեր քեզ պարգևէ.
Նա քո մատաղ կեանքդ օրհնէ.
Քեզ սէր բոցավառ եմ ասել:

Ինչպէս Սոխակը կցնծայ,
Իւր վարդի մօտ գտնվելիս.—
Նոյնպէս էլ ես քեզ տեսնելիս,—
Քեզ իմ սիրահար եմ ասել:

Ձնաշխարհիկ կերպարանքդ,
Հրապուրիչ քնքուշ դէմքդ,
Մարգարտահիւս մազերիկդ,
Խեղճ Բէգզադին ճար եմ ասել:

Բէգզադէ:

Յ.

179.

Երգ

«Վարդավորուսի» եղանակով:

Յաւուր նոր տարւոյս՝ ժա՛մ է մեզ ահա՛,
Երգել քաղցրաձայն՝ որդի՛ք Թորգոմայ:

Սերտ սիրով սրբով՝ սիրեմք մեք միմեանց,
Ի բաց ընկենուլ՝ ՚ի մէնջ զնախանձ:

Կացցուք միաբան՝ մեք ամենեքեան,
Ի սէր Ազգութեան միշտ և յաւիտեան:

Եղբա՛րք սիրելիք՝ ջան ՚ի գործ դիցուք,
Անտէրունչ որբոց, անձնազոհ լիցուք:

Տեսանէ Աստուած՝ մեզ խոնարհ և հեզ,
Սփռէ շնորհաց, զպարգևս իւր ՚ի մեզ:

Մեր վեհազն Տեառն և խնամածու,
Ի Հայ մանկտոյս, լիջիք ձեռնտու:

Մաղթեսցուք յԱստուած՝ մեք միաբերան,
Պահէ ընդ Թևօք՝ զՁեզ քրտնաջան:

Մկրտիչ Վարդան-Աղայեանց:

180.

Երգ Յարութեան

Յարեաւ Քրիստոս այսօր աւետիս որդիք սիօնի,
Ընդ իւր յարոյց մեր զնախահայրն գանկեալն ՚ի դրախտէն,
Նա և այլոց զհոգիս սուրբ արանց զգերեալսն ՚ի բանդէն,
Եառ աւար և գերեաց հզօրն ՚ի պատերազմի:

Ցնծասցո՛ւք, ցնծասցո՛ւք, ո՛վ ազատեալք արեամբ գառին,
Քանզի եբաց մեզ ճանապարհ իւրով խաչին,
Եւ շնորհեաց զայն զոր կորոյս հայր մեր նախկին,
Եւ զուարթունք երկնից ընդ մեզ երգակցեալ գոչեն,
«Օրհնեալ է սուրբ յարութիւնդ, գովեալ է սուրբ յարութիւնդ:»

Ն.

181.

Ըստ եղանակին «կէժ դօլանդինան» Նարաթի:

Նազըդ քաշելոյ հալ չունիմ թէպէտ,
Բայց առանց քեզ էլ չեմ կարող մնալ,
Խոստանամ հոգիս՝ տալ չունիմ թէպէտ,
Հոգին այլոց է ինձ կասենի մի՛ տալ:

Մըռնեմ քո մօտդ բռնեմ ձեռքերդ,
Թաղնեմ մինչեւ մահ ումիտս հատած,
Երբ ցանկայ հոգիս առնի իւր Տէրըն,
Թո՛ղ գայ ինձ ճարի մէջքդ խոռոած:

Վարքըդ նազով է ինձ համար միայն,
Ինչպէս դահլիճ է վարդը բիւլբիւլին,
Իմ յոյսն դու ես աշխարհն է ունայն,
Այդպէս չէն անիլ դռնապահ դուլին:

Քանի ձեռքերիդ ձեռ ձըգող չի կայր,
Նախ ես իմացայ որ խիստ համեղ է,
Ես չի յայտնէի ո՞վ մօտդ կու գայր,
Այլոց ապառիչ ինձ մահադեղ է:

Ի՞նչ էիր առաջ, այժմ ի՞նչ էլար,
Դու չես քեզ արել պատւոյ արժանի,
Ես քեզ գովելով միշտ և անդադար,
Հասար 'ի փառաց այս աստիճանի:

Ձեռքդ բռնելուս ինձի տան Թըրով,
Ցատուկ հաւատիր ցաւ չի հասկանամ,
Մաս մաս կտրես ինքդ ինձ սըրով,
Կարծիք չունենաս բերանս բանամ:

Այսօր Մայիֆը ձայնդ լսելով,
Խիստ ցանկանում էր ինձ նման լինել,
Խեղճ Ջարկեարը միշտ հետդ խօսելով,
Չի կարաց քեզի սիրական լինել:

Աբրահամ Մարտիրոսեան:

182.

Վան աշխարհի

Հերիք ա ոխ պահար այս քան ժամանակ,

Անարուռ, անհայեա, անամօթ աշխարհ,
Մի՞թէ այլազգիք քեզ մեղր են ուտացրել,
Մեր ազգն տուեալ աղու դահրումար:

Քեզի տեսնեմ սրտիդ ժանտախտ հանես,
Էլի չար սերմ ունես՝ մեր մէջին ցանե՞ս,
Արդեօք մին բան մնաց, որ դու մեզ չանե՞ս,
Նոյըն քեզ նորոգաւ մեր ջանի համա՞ր:

Նեղութի՞ւն էր տալիս քեզ՝ քաղաքն Անի,
Քանդար, մէջքն կոտրար սուրբ Հայաստանի,
Աստուած իրան ձեռօք քո աչքդ հանի,
Զրկուիս դու լուսիդ նախս միշտ խաւար:

Մի՞թէ Երասխումը ինքդ լողացար,
Գիւակերպ կուռքերից է՞ր չի նեղացար,
Նամուսն մեր ազգի միջից գողացար,
Ծնար չար, սնար չար, տանջվիս չարաչար:

Նորում մի քանի ազգասէր իշխան,
Դէպի սէր հայրենեաց աշխատակից կան,
Ճզրումես տեսնելուց նորանց միաբան,
Մխոք ունես այս գործն էլ Թողես անկատար:

Որքան սուրբեր ունիմք մենք քո փորի մէջ,
Խորը քանդի՛ր ինքդ կու ընկնիս հորի մէջ,
Մին օր ձեռըս ընկնես մին խոր ձորի մէջ,
Այնքան ծեծ տամ քեզի լինես դիւահար:

Մայիֆի աչքերից լոյսն քաղեցիր,
Դաղուխ ինքդ ինչպէս նորան դաղեցիր,
Աղբդ ճար ասեցին, դու խոր Թաղեցիր,
Սատանայն քո հետն անի միշտ մադար:

Ջարկեարն ներէ որ քեզ չի ճանաչի,
Անունդ էր՞ պիտի բոզ պատաւ կանչի,

Ի՞նչ ես տուել, որ քեզանից առնէի,
Շամախի քաղաքից քշելես օտար:

Աբրահամ Մարտիրոսեան:

183.

Արձագանք Զարկեարի(*)

Նոր կ'ծագէ մեզ արև իմ բաղդին տայ բարև,
Իմ աւերակ բուրաստան արձակէ նոր նոր տերև:

Շատ ժամանակ է ես էլ մտածումէի խորին,
Լոյս ընծայել ամեն տեղ գովասանել Զարկեարին:

Զիմացայ ինձմէ առաջ դուրս էր եկած Հանդիսում,
Բանաստեղծ Զարկեար անուն Բագուայ քաղաքի միջում:

Այս տեղից. ես կ'ձայնեմ, արհեստակիցս իմ կեցցէ՛
Ազգի բուրաստանի մէջ ամեն ծաղիկ թո՛ղ ծլէ:

Բուրաստանէն կըբուրեն անուշահոտ վարդերն,
Որից հեռի է մնացել ողորմելի Զարկեարն:

Բայց կը խնդրեմ մեր ազգի վսեմ բանաստեղծներից,
Ընտիր ոճով գրածներ չի պահանջեն Զարկեարից:

Ուղեն նոքա ինձանից ոսկեկուռ զարդեր միայն,
Որ շողացնեմ լուսոյ մէջ գոհարակերտքս համայն:

Կեցցի՛ր, կեցցի՛ր, բարեկամ, մինչ հասանեմ ես քեզի,
Շատ ըշտապով գընումես, չես նայում երբէք ինձի:

(*) Այս գրուածը ստացած եմ Թեհրանից 1875 Թ. 12-ն փետրվարի, պ. Մկրտիչ Ց. Բժշկեանից, որը կարդալով «Սոխակ Հայաստանի» I հատորն, գրել է եւ առաքել ինձ 'ի տպագրութիւն հանդուցեալ Աբրահամ Մարտիրոսեան, Զարկեար կոչեալ երգչի պատճառով, կարծելով նորան կենդանի: Ա. Գ.

Ես էլ քեզ պէս Զարկեար եմ, եթէ Տէր ինձ էլ յաջողէ,
Ես գրածներ շատ ունեմ տպարանի կարօտ է:*)

Քո բաղդն յաջողեր է, ուզածիդ պէս եղեր է,
Աւագ Գրիգորեանցը քեզի շուտով օգներ է:

Թէ գտնէի օգնական և ներէր ինձ ժամանակ,
Ես էլ յառաջ կանգնած Զարկեարութեան յաղթանակ:

Շատ գործեր ես էլ ունեմ, թէ որ մին մին յիշէի,
փորս ու քուրէ չաքուջիդ աւելի համբաւ տայի:

Միշտ յիշումես Մայիփին կարծեմ որ շատ ես սիրում,
Բայց տեկնանց ուսման համար մի բան երբէք չես յիշում:

Ես էլ ունիմ յիշելու մի զմրուխտ անգին գոհար,
Որ աւելորդ է կարծեմ և մեր նիւթին անյարմար:

Լա՛ւ է դորանց մոռանամք, Ազգի բարին մտածեմք,
Հայրենեաց օգտի համար ըստ կարելոյն աշխատեմք:

Նորա գործոց հանգամանք Ազգի համար են թողած,
Զըլթողնեմք որ հողի տակ անպէտք մնան ժանգոտած:

Դու չես պանդուխտ ինձի պէս Պարսից մի անկիւնումն,
Հայրենիքէն զրկուած օտարների հողումն:

Անյաջող գործոց բերմունք կըխեղդեն իմ մտածմունք,
Շըփոթում են երբեմն դառնում են ինձ արգելմունք:

Հակառակիչ գործերն ամեն այստեղ են եկեր,
Մեր հեգ Հայերի համար հնարեն նորութիւններ:

Այս հակառակորդաց մէջ բանաստեղծն ի՞նչ անի,
Գործն իրան կ'նեղէ մտածում է ապրուստի:

(*) Ես ուրախութեամբ կընդունեմ դոցա եւ կ'հրատարակեմ, եթէ յարմար կլինին իմ պրօգրամմային Ա. Գ:

Նոր նոր շուայլ ծախքերն չեն թողուր հանգիստ մտքեր:
Զուարթութեամբ ամենայ, արձակէ հաստատ ոտներ:

Մերժեցի ես շատերն այդ արգելքից, որ կարեմ,
Ի լոյս տալ իմ գործերն յաջող բաղդն երբ ճարեմ:

Զո՛ւրկ, է այս՛ զրկուած Պարսկայ-Հայըն այդ մասին,
Երկրիս անկարգ դրութիւն եղել է մեզի բաժին:

Կտտանջում եմք հանապազ և եմք 'ի մէջ փորձութեանց,
Այս ցաւերէն արդեօք ե՞րբ զերծանի Մ. Բժշկեանց:

184.

«Նորաբոյս խայրիք» երգի եղանակով.

Նորատունկ ծաղկունք բուրաստանիս, եկէ՛ք պարենք շարուած
Զի պայծառ օրեր Հայաստանի արդ պարգևել է Աստուած,
Մեր նախնիքն էին քաջ բանաստեղծք, կ'երգէին երգեր քաջաց
Ներդաշնակ ձայնով կըհնչէին, սրտաշարժ երգոց թմբկաց:

Մեր գողթնական սարերը, ձայնակցէին հրճուելով,
Ապա խնձոյք կազմէին բաժակներ խմելով,
Բուրաստանումը այգիներումը կցնծային պար բռնելով,
Ապա և մեք միաբան, այս հանդէսումս զուարճանանք:

Խայտալով պար բռնենք,
Թև 'ի թև ցայտելով,
Քաղցրաձայն նուագենք,
Գողթնական երգերով,
Որդիք ենք մեր նախնեաց,
Հայկազուն անունով,
Միանանք իրար հետ,
Եւ վարուենք սուրբ սիրով,
Խիստ կարի վայելուչ:

Մ. Բ. Փափազեանց:

185.

Առ Հայրենակիցս իմ

Նոր կ'ծագէ արշալոյս Հայոց բաղդին տալոյ լոյս,
Զունին երբէք այլ ինչ բան ուսումն է նորանց մեծ յոյս,
Խեղճ Պարսկայ-Հայն էլ արդեօ՛ք ունի՞ նորանից բաժին,
Թէ անմիաբանութիւն փոյթ կուլ կ'տայ նորա հոգին:

Ահա՛ եկաւ սուրհանդակ բերեց մեզ ուրախ լուրեր,
Հայրենասէր մեր եղբարք էին մինչ այդ ծանուցեր,
Որ վեհափառ Հայրապետն իւր որդւոցն խնայեց,
Անդրէաս Սրբազանն նորանց համար պետ ընտրեց:

Եկած է նա արիութեամբ տարածել Դաւրէժ իւր սէր,
Նորա ազդու քարոզը կ'մեղմէ շատ քար սրտեր,
Ցարոյց Աստուած նոր Սահակ իւր վեհանձն նորահաս,
Սա կ'լինի բարերար վարժարանաց Մեկենաս:

Կորի՛ր ապա հեռացի՛ր, ո՛վ անմիաբանութիւն,
Բաւական չէ՞ր Հայերին՝ արիր այսքան չարութիւն,
Կուզեն ուսման հետևեն նորանց մէջն էլ կ'մտնես,
Մարդիկ զուր կ'զոհեն դու ի՞նչի կընախանձես:

Ցրեցիր դու զհայաստան, ամեն գերի գնացին,
Թագաւոր ու ժողովուրդ թագը ու գահը միասին,
Քո արածն թէ գրեմ այնքան թուղթ ուստի՞ բերեմ,
Եթէ ճարեմ այդքան թուղթ, գրիչ թանաք չի ճարեմ,

Բաւական է անողո՛րմ, սրանք դու գրեցի,
Իմ գրածն կարդալոյ ո՞ւմ մօտ ճարեմ սիրտ դահձի,
Շատերն դուրս վանեցին, եկար Դաւրէժ մնացիր,
Բայց մեր հոլուի վսեմ խօսքն դեղ կանէ ցանուցիր:

Կացի՛ր մինչ քեզի ասեմ, ահա՛ սէրն գալիս է,
Ե՛րբ կ՚հասնի մեր մէջը քեզի շուտ դուրս կըձգէ,
Վեհափառի շնորհիւ, Թո՛ղ փարթարանքն ծաղկեն,
Մեր հետ Հայերի մէջէն, փայտերով քեզ դուրս վանեն։

Ո՛վ Հայրենակից եղբարք, մատաղ մանկանց խղճացէ՛ք,
Նոցա անգին օրերն, 'ի զո՛ւր տեղ մի՛ կորուսէք,
Հասաւ ձեզ ոսկէ դարեր, Թէ որ հինն անէք զանց,
Դավըէժեցուց միութիւնն կ'սիրէ Մ. Բժշկեանց։

186.

Երգ

Ցանկաց «Հէյա բէյա էյամեայի» եղանակաւ։

Նա՛գլու, էգպէս մի՛ անիր, (2)
Հոգիս տեղից մի՛ շարժիր.
Ե՛կ դու ինձի մի՛ առիր, (2)
Հաստատ սիրով սերտ սիրի՛ր։
Սերտ սիրի՛ր, սերտ սիրի՛ր, սերտ սիրի՛ր,
Միշտ սիրի՛ր, միշտ սիրի՛ր, միշտ սիրի՛ր,

Քողի տակից մի՛ նայիր, (2)
Փայլուն դէմքդ մի՛ ծածկիր.
Կարմիր Թշերդ ղիփ բացի՛ր, (2)
Սիրով ինձի մօտացի՛ր։
Մօտացի՛ր, մօտացիր՛, մօտացի՛ր,
Բալա մի՛ վախիր։ (3)

Արի՛ վզովս ընկի՛ր, (2)
Աչքերդ երեսիս քսիր.
Կարօտ պռօշիս խնայիր, (2)
Քաղցր համբոյր ընծայիր։
Ընծայի՛ր, ընծայի՛ր, ընծայի՛ր,
Բալա, նուիրի՛ր։ (3)

Նուրբ շրթունքներդ շարժի՛ր, (2)
Բլբուլի լեզուովդ խօսիր՛.
Ծոցիդ կոճակը բացի՛ր,
Ձեռներդ ձեռքիս շնորհի՛ր։
Շնորհի՛ր, շնորհի՛ր, շնորհի՛ր,
Բալա, պարգևի՛ր։ (3)

187.

Նամակ

Նա՛մակ, բարեւ տա՛ր պարոն Աւագին,
Ասի՛ր չի ուշացնէ «Երկրորդ Սոխակին,»
Եթէ նա չի լսէ, խնդրի՛ր կրկին,
Աղաչո՛ւմ են, խնդրո՛ւմ են, ուզո՛ւմ են։

Ասի՛ր նոր են զարթնել Հայ երգիչներն,
Մտել է սրտներն «Սոխակի» սէրն,
Պատրաստած ձեռներում սրած նետերն,
Սպասո՛ւմ են, փութո՛ւմ են, ուզո՛ւմ են։

Շատ տարի է անցել Սոխակ չի զարթնել,
Եւ կոկոն չի բացել այն խնձնիկ վարդն էլ,
Նորից են վե՛րկացել, քնից զարթնել,
Միշտ ձայնո՛ւմ են, շտապո՛ւմ են, ուզո՛ւմ են։

Խնձնիկ Մխակն եմ, սպասում եմ շատ տարի,
Նոր եմ զարթնել, հոտն առել բահարի,
Սոխակի պէս միշտ ձայն կուտամ, վա՛րդ, արի՛
Վարդի կարօտ «Սոխակ» նարոտ ուզո՛ւմ են։

Տ.

188.

Գեղեցկութեան անհաստատ լինելն

Շատ մի՛ հպարտացիր, Անթառամ խանում,
Ինչո՞ւ ես պատկերքիդ վերէն զարմանում,

Շատերն են քեզի պէս եղել մէյդանում,
Հիմիկ սան քիւնջումն բամբակ են մանում:

Երբ կենաց մէջ քառասուն տարիդ լրացաւ,
Գեղեցկութեան ծովից առուդ չորացաւ,
Ցանկութեան տեղ դուցէ տեսնես փորացաւ,
Իբրև անդամալոյծ՝ կ'ապրես եօրղանում:

Միտդ կընկնի իմ քեզ սիրով պաշելըն,
Քո նազով վարուելն, իմ աղաչելըն,
Գլուխդ կ'բռնի անէծ օջիլըն,
Կերակուրդ կ'տան մին ջուկ ամանում:

Հագիդ մաշուած կապեն, չադրա հալաւն,
Չի թողիլ դինջանաս առամնացաւն,
Սատանից դէշ կու լինի կանանց պառաւն,
Դժոխքի դռնապահ ապրող գիւլխանում:

Արև տեղերումն դու վեր շնթռնած,
Տակիդ հասիրի կտոր մին քարի կըռնած,
Մանր երախայքըն չորս կողմդ բռնած,
Կասեն, պառաւ, մի՞թէ ցլին ես հանում:

Ջարկեարի խօսքերըն մաքումըդ պահի՛ր,
Այժմեան մարգարէ է նա, ո՛չ թէ շայիր,
Մի՛ լսիր Մայիֆին, շատ սրտեր շահի՛ր,
Առաւել աշխարհից ոչինչ չես տանում:

Աբրահամ Մարտիրոսեան:

189.

'Ի վերայ Անի քաղաքի

Ծերացուցք մայրաքաղաք Անի եմ,
Գործվացուլթ ծնող Հայաստանի եմ,

Չ'ասէք թէ այս վիճակին արժանի եմ,
Անբախտացած ես ըստ հրամանի եմ,
Ցետ ու առաջ որդւոցս պխտանի եմ,
Ինձ օգնեցէ՛ք առանց օգնականի եմ,
Ընկերաց մէջ նման մուրացկանի եմ,
Բազմազաւակ հայրս աննշանի եմ:

Գուցէ թէ այսպէս կամեցաւ իմ Տէրն,
Զարկեաց քամին անյայտ արաւ մեր սէրն,
Ո՞նց դիմանար սուրծողի համբերն,
Սուրբ Թաշակից դաշինք դրող տէրտէրն,
Իւքն ուրացաւ Քրիստոսի պատուէրն,
Ջրւէս գնաց լոյս հաւատի սուներն,
Ո՛հ կորուսի իւքնակալ կայսրներն,
Անբանից տուն, անանոց ընտանի եմ:

Գոլորեալ եմ աշխարհի ապտակըցըն,
Չեմ պրծնում ազգի մեղաց տակիցըն,
Հարցրէք ահվալս լումնակիցըն,
Թէ ինչ քաշամ անիծեալ Վասակիցըն,
Հայրասպան անհաւատ Արշակիցըն,
Գանգատ ունիմ քանի չար մշակիցըն,
Ինչ կու ծնէր չարութեան վիճակիցըն,
Ազգի ձեռամբ նման մարդասպանի եմ:

Այսքան տարի ես այս ցաւն տանումեմ,
Շղթայն վզիս տանջանաց զնտանում եմ,
Ցոյա մեծ է, նեղութեան դիմանում եմ,
Որդւոցս ծուլութեանն զարմանում եմ,
Ամեն զարուն ծաղկունքներս հանում եմ,
Այլազգիքն փնջերուս փոշմանում եմ,
Ամա՛ն Հայեր, առիծի բերանում եմ,
Հասէ՛ք գտեխս միայն անիշխանի եմ:

Ե՞ր չի հասնում ձայնս լալոյ Հայերին,
Արդէն ժա՛մ է. ողջոյն տալոյ Հայերին,
Ահա՛ յայտնի օր սգալոյ Հայերին.
Ճամփէն ահ է մօտս գալոյ Հայերին,
Նոր ուխտ ունեմ բաց խնդալոյ Հայերին,
Ազատ բառն հասկանալոյ Հայերին,
Արձակման դուռն բանալոյ Հայերին,
Որ աւերակ կոխան Յունաստանի եմ:

Ձեռ մի՛ քաշէք, ձեր անդին կորուստից,
Մահն է բարի աննամուս ապրուստից,
Ազատ աղքատն՝ ծառայ հարուստից,
Եղբօր թշնամին լաւ է այլ դօստից,
Բաղդաւոր է զօրեղն նուաստից,
Դուրս եկէ՛ք ծուլութեան աւագաստից,
Լաւ է իմաստունն անիմաստից,
Եւ ձեզ նշան մեծ ազնուականի եմ:

Ազգասիրութիւնն մին այնպէս ծառ է.
Որ նորա պտղը համը միշտ անապառ է,
Ինչ ազգի մէջ սիրոյ ճրագն վառ է,
Նա անուամբ 'ի մէջ աշխարհի պայծառ է,
Անսէր ազգն ամեն բանիւ թշուառ է,
Եթէ քննէք Անի բառն ի՞նչ բառ է,
Կաւն սուրբ է, քարն մաքուր մառմառ է,
Հարուստ այգիս՝ կարօտ այգեպանի եմ:

Ո՛վ Հայ կանայք, որ ժամանակ ողբ առէք
Խեղճ Անիիս ողբագլուխ ըսկսէք,
Գո՛նէ՛ դուք իմ աղերսանացս լսէք,
Հայ մարդկանց դատի ծածկելն բամբասէք,
Ի՞նչ փառաց հասցրուց ազգն ինձ տեսէք,
Աստուած աղաչէք, օրհասին սպասէք,

Արժանանաք իմ հողին երես քսէք,
Ես տապան քաջ սրբոց գերեզմանի եմ:

Հայե՛ր, գիտէ՞ք հիմիկ ո՞րքան տարի է,
Եղո՛ւկ, Անին աչքը ճանապարհի է,
Եթէ զարթնէք ողորմութեան շարի է,
Այս նոր սերմն պտղատու է, բարի է,
Ծաղկանց հոտից խիստ նման բահարի է,
Ով յոյս ունի նորա գործն արի է,
Զարկեարի Մայիսն ումիտվարի է,
Որ չեմ մեռած, Անի եմ, կենդանի եմ:

Աբրահամ Մարտիրոսեան:

190.

Շուշանաղեղ դու օրիորդ, պսակ վարդից կոյս Մարիամ, (2)
Ի բարձրութեան 'ի խորութեան, անջինջ նշան կանգնեալ արժան. (2)
Քեզ աւետիս 'ի նուրբ եթերս, Գաբրիէլեան փողն գոչէ, (2)
Վճիտ ճաճանչ հօրն յուսոյ 'ի քէն ծագէ որդի եւ բան:

Թռչունք երկնից քաղցր երգովք 'ի թուփս կանանչ դադարին,
Ճռվռղելով ծագուց երամք առ մայրն իւրանց դադարին, (2)
Ի շնչմանէ հեզիկ հողմոց ուղէշք տնկոց ծիծաղին, (2)
Երփնազեղեան փայլուն փետուրք ծաղմամբ լուսոյ շողշողին,

191.

Հաշտարխան

Շնորհաւոր լինի նորամուտ տարիդ,
Ո՛վ դու Հաշտարխան, սիրուն Հայրենիք,
Աստուած քեզ շնորհէ մի նոր շարժառիթ...
Որ դու նորոգուիս իբրեւ մի փիւնիկ:

Արդէն անց կացաւ քանի նոր կաղանդ,

Բայց դու չես թափում քո նինջ գիշերի,
Եւ քո բնատուր գեղեցիկ տաղանդ,
Դեռ չես կացուցել շահաւէտ բերրի:

Այո՛ դու ունիս շնորհի ձրագ,
Բայց միայն ծածկած գրուանի տակում,
Չես հանում նորան դէպ 'ի հրապարակ,
Որ նա փայլփայլի լոյս աշտանակում:

Վե՛ր կաց քո տեղից, կանգնի՛ր քո ոտին,
Մերժի՛ր քեզանից ծուլութեան ախտեր,
Ցոյց տո՛ւր թէ և յուշ դու այլոց մօտին,
Քո քանքար քո շնորհ…ազգին օգտաբեր:

Թո՛ղ իմացուի թէ և դու, Հաշտարխան,
Կենդանի ունիս հայութեան հոգին,
Թէ կարող ես տալ յարմար պատասխան,
Մեր ժամանակի բոլոր պիտոյքին:

Տնկի՛ր քո մէջին սուրբ սէր կենսաւէտ,
Սա տիրող դրոշմ է՝ պահի՛ր դու անխախտ,
Սորանում պէտք է որոնես յաւէտ,
Քո խաղաղութիւն, փառք պատիւ և բաղդ:

Սէրն է մի փայլուն անպղտոր վտակ,
Մի՛ թող պղտորուի կիրքերի ցեխով,
Սա է՛ տէրունի օրհնաբեր կտակ,
Որ չէնէ պահում քեզ տուն ու տեղով:

Ես քո փոքր զաւակ, դու իմ մայր վսեմ,
Դու իմ խանձարուրք, դու իմ օրօրոց,
Եթէ քո բարիդ և լաւդ չ'ուզեմ,
Ապա՛ չ'եմ որդիդ, այլ դժնեայ մի օձ:

Ո՛հ, ե՞րբ կ'լինի, որ բաց աչքերով,
Տեսնեմ քեզ ծաղկած իբրև բուրաստան,

Որ արժանանամ ուրախ քնարով,
Երգել քո գարուն, քո բարեկենդան:

Իմ հոգուս մաղթանք, այս է հանապազ,
Քեզ խնամք տանէ ստեղծող Աստուած,
Որ դու նորոգուիս, ծաղկիս ու պանծաս,
Գերձ քաղաքների շարքումը դասուած:

Ա. Գ. Նազարեանց:

192.

Երգ առ սրտակից բարեկամ իմ

Շնորհաւոր մեծ զատիկ,
Ե'կ ունենք կարմիր ձուիկ,
„Քրիստոս յարեաւ" ձայնելով,
Տացուք միմեանց ողջունիկ:

Անխուռ կերտեսցուք պսակ,
Այլոց լիցուք օրինակ,
Լան 'ի լաւաց ջոկելով,
Նման տացուք զայն պսակ:

Զողջունիկ տացուք միմեանց,
Լիասցուք 'ի բերկրութեանց,
Օղի, գինի ըմպելով,
Զօդեսցուք 'ի սէր անանց:

Զայն պսակ տացուք նմա,
Որ միշտ բարւոք ընթանայ,
Զիւր պարտիս գիտելով,
Ցոնէ բարիս անխնայ:

Ցանանց զօդեսցուք 'ի սէր,
Զերջանիկ տեսցուք զօրեր,
Զյարուցեալն օրհնելով,
Խօսեսցուք անուշ բաներ:

Անխնայ առնէ բարիս,
Տէր Թադէոս մեր աստիս,
Ուշիմ, գիտուն լինելով,
Սէր հիմնէ 'ի քեզ և յիս:

Բաներ խօսեսցուք անուշ,
Բերցուք զարժանն 'ի յուշ,
Ի մոլեաց հեռանալով,
Կերտեսցուք պսակ անփուշ:

Ի քեզ և յիս հիմնէ սէր,
Նմանապէս և յԱզգ մեր,
Զորոյ անուն գովելով,
Հարկ կատարեմք բարեբեր:

Աւետիք Մամիկոնեանց:

193

Ընդունիր անուշ գառ, իմ սիրոյս բարբառ

Ըստ եղանակին «Մայր Արաքսի ափերով»·

Շատ դժուար է, հոգե՛ակ ջան,
Երբ մի րոպէ, մի վայրկեան,
Բաժանվում եմ քեզանից,
Յալեկոծուած Ովկիան:

Ուր և առուակ կարկաչուն,
Մեղմ խոխոջայր 'ի շնչուն,
Կանանչազարդ ափերով,
Սողայր յառաջ ոլորուն:

Իբրև մի նաւ առանց ղեկ,
Ալեաց միջին սրտաբեկ,
Ո՞ւր եմ մղվում, չ'գիտեմ,
Ի լո՞յս արդեօք` թէ 'ի մէգ:

Ո՜հ յիմ սիրոյ նոր պարտէզ,
Զի՞արդ չքնաղ ցոլայ սէզ,
Վարդն իմ կարմիր փթթի,
Երգիչ Սոխակ ես եմ ես:

Նաւահանգի՛ստ, ո՞ւր ես ո՞ւր
Զե՛ս դու յԵրասխ յղիս 'ի Կուր,
Ախուրենին տա՛ր ինձ մօտ,
Այնտեղ ծնմէ սիրոյս հուր:

Ո՜հ երբ մի ժամ, մի վայրկեան
Սիրոյս չքնաղ բուրաստան,
Թողում բաժան կարօտով`
Մաշվում է իմ բոլոր կեան:

Ոլոր մոլոր ո՜հ քանի,
Թէ 'ի Շիրակ թէ յԱնի,
Սիրոյս համար կարօտով,
Յիշեմ իմ սէր դեղանի:

Ո՜հ դժուար է Սոխակիս,
Ի՛մ աննման սիրուհիս,
Երբ հեռանալ կ'ստիպեմ,
Զերթ Տելեմաք 'ի յալիս:

Սոխակն յայգի վարդասէր,
Կարմի՛ր իմ վարդ, վա՛րդ ասէր,
Արշալոյսի երբ շողով,
Ի վարդենին ձօնէր սէր:

Չեմ գիտում ես մութն ու լոյս,
Քունն ու հանգիստ կ'տան խոյս,
Առանց քեզ իմ անուշ վարդ,
Ո՞ւր է քո յոյս, ո՞ւր քո լոյս:

Ուր ծաղիկներ ցօղ 'ի ցօղ,
Սիրուն գունով տային շող,
Ուր և չքնաղ առաւօտ,
Իւր պատկերին սփռէր փող:

Ա՛խ քո աչքեր, սև աչքեր,
Կամար ունքերով աչքեր,
Լուսնոյ նման կ'վառին,
Իմ աղաւնե՛ակ, ի՛մ դու սէր

Զիս կ'մաշեն անդադար,
Քո անուշ սէր մշտավառ,
Ա՛խ մի ժամը, սև ժամը,
Ինձ թուում է մի ողջ դար:

Անուշ գրկիդ յօրորան,
Ուր լեզուիս սէրդ է ծորան,
Սրտատրոփ դիմում եմ,
Համբուրելու քո բերան:

Մուշեղ Մուշեղեանց:

194.

Մաղթանք առ Հոգին սուրբ

Շնորհաց աղբիւր, անսպառ սուրբ Հոգի,
Շնչեա՛ առ մեզ արդ մաքուր մտաց մեր մրուր,
Էջ և 'ի մեր խակ լեզուս, պարգեա՛ 'ի բարբառ,
Որպէս երբեմն 'ի Սիօն 'ի խումբ ընտրեալ սուրբ դասու.
Սիրտ մեր օթարան,
Պատրաստեա՛ արժան,
Սրբեա՛ զմեր համբուն,
Քեզ 'ի բնակութիւն,
Ընդ Հօր. Էակցի,
Որդւոյն փառակցի,
Փառս վեր ընծայեմք,
Զքեզ միշտ օրհնեմք:

Ո

195.

Ըստ եղանակի «Մարալ ու Ջէյրան» Մուխամմեդին Թուրքնջի

Ո՛վ իմ սիրականս, մատաղ քեզի ջանս,
Մորթում ես թէ պահում, վճռի՛ր հրամանս:

Փուրչին մազերդ ամպի կտոր, երբ անումես խաղ,
Շատ սրտի է տամ դաղ.
Մարրիս ճակատըդ փայլումես միշտ լուսնեակից վաղ,
Ցատկանումես խաղաղ.
Աղեղնաւորն ունքերիցըդ թահր է պահում թաղ,
Նմանումես անջաղ.
Զալալթ աչքերըդ պականալոյս ո՞ւմ նայի աւա՛ղ,
Կտրատումես սաղ սաղ.
Հնդստանայ գօրքից խալերըդ առելայ բայդաղ,
Ունի յաղթական հաղ.
Քինթըդ անդամանդ ջովզի նման անգին է տանս,
Ո՛վ անմահականս։
Հրեշտակք նըկարան լոյս երեսըդ կարմիր ու ջերմակ,
Ինչպէս վարդ ու բամբակ.
Ո՞նց սազացրել են պռօշներըդ երկու խմանակ,
Մէկ զմէկուց խստակ.
Մխրվարի ասեմ ատամներիդ եթէ համարձակ,
Կու ընկնեմ մեղաց տակ.
Լեզուիդ նուագն երբ լսումես վայրենի սոխակ,
Խիստ առնումես փախեադ.
Այն նուրբ բուխաղըդ ո՞վ քննաւ կենաց աշտարակ.
Ինչ լոյս է բովանդակ.
Վիզըդ մազերիդ հետ խաղալուս թափումես կայծակ,
Մութն աշխարհի փայլակ.
Եաղութ նունուֆար եղունկներդ իմ պահապանս,
Հաշտութեան նշանըս.
Կրծերդ առագաստապահն Նոյեան տապանի,
Մասիսին նա կու հանի.
Ունքիդ շաւիղն ով համբուրի յոյժ ցաւագարից,
Մուննաթ չունի ճարից.
Դու կենդանի չ'աստուածըդ չե՛ս այլ կռոց համարից,
Ո՛չ ես այլ յիմարից.

Արի՛ մին ողորմած նայիր ինձ ուրախ դիդարից,
Պրծնեմ ահուզարից.
Որտեղ դու լինիս, այն տեղ է իմ աղօթարանս,
Ո՛վ դին ու իմանս։
Այլոց երեւալուս եթէ քեզ ճանաչեն ինձ պէս,
Կ'ասեն հողեղէն չես.
Վա՛յ ինձ, սա մին ապրուստ է՝ եա՞րաբ, որ ապրում եմ ե՞ս,
Քաշած օրերս տե՛ս.
Իմ ցաւի համար դե՛ղ չի գրած, միամիտ իլնես,
Ինքդ պիտի փրկես.
Կամ Հերովդեայ աղջկայ պէս գլուխս կտրես,
Ինձ կոչես Յովհաննէս.
Ի՞նչ կու լինի մէկ էլ խեղճ Մայիֆի աչքերն սրբես,
Հրաշքդ մեզի յայտնես.
Զարկեա՛ր, մին էլ քեզ մայր չի ծնիլ, որ աշխարհ ընկնես,
Քո բաժինդ ապրես.
Անդարձ սէրն յանձնաւ քո ձեռն իմ այս դիւանս,
Քարի մէջ է բանս։

Աբրահամ Մարտիրոսեանց։

196.

Խօսակցութիւն պառաւի հետ

Ես ասամ.

Ոտիդ իւղուրիցն Աստուած ազատի,
Այդպէս ո՞ւր ես գնում, ջան խաթուն պառաւ,
Լամ Թառամեալին մարդի ես տալի,
Օֆսունդ քցեյիր, բանն ո՞նց դառաւ։

Պառաւն ասաւ.

Կանանց չարախօսիցն Աստուած ազատի,
Ես լաւ էի բռնացրել, Շուշանն ծռաւ,

Ելի ես էն տղի մօտիցն եմ գալիս,
Ինքան զովեցի, որ հոտիցն ուռաւ:

Ես ասամ.

Պա'ռաւ, ես տեսել եմ, աղ ջիկն գէշ է,
Ասում են թէ ջուրն էլ մին փոքր բօշ է,
Մեծ մօրս եաշն ունի, բնութեամբ էշ է,
Մեղք չէ՞ բա'ս էն տղան, որ նորան առա՞ւ:

Պառաւն ասաւ.

Որդի, դու չես տեսել իմ զանիշանը,
Երեսին քսեցի ալըլիկ քըրիշանը,
Ցղեն տեսնալ բանին բերաւ նշանը,
Մածնակեր կատու ի պէս աչքերն չռաւ:

Ես ասամ.

Պա'ռաւ, քո խմանըդ ի՞նչ պէս խման ա,
Ջահիլներ խաբելն անաստուած բան ա,
Թէ գիշերն տարաւ վաղն կխմանայ,
Գուցէ ողորմելին զուսայից մեռաւ:

Պառաւն ասաւ.

Ափսո'ս չ'կայիր անցեալ գիշերն,
Մէկ ես, մէկ կնքահայրն, մէկ էլ տէրտէրն,
Մին աղջիկ հարս արինք, քաշած հում սէրն,
Դուրս անել չէր կարող, ճար չունէր լռաւ:

Ես ասամ.

Պառա'ւ, գլխիդ կպնի քո քաշած ջաֆէն,
Լկելով ման ես գամ քաղցր չայ ու ղաֆէն,
Սև լինի քո տուած կարմիր ալաֆէն,
Ում որ միջնորդ էլար՝ աստամն սառաւ:

Պառաւն ասաւ.

Մէկ տղայ ճարեցի ժամ տարի հարբած,
Նորան մին հարս տուի փոքր ցնորված,

Վաղն տղան տեսաւ, մնաց զարմացած,
Թալակ ընկած շան պէս չորս օր մռմռաւ:

Ես ասամ.

Պա'ռաւ, մեղքդ լինի Զարկեարի վըզին,
Թէ քեզ չի նստացնի սատանի պօզին,
Դու ջան կու տաս ինչպէս մեր գեղին թազին,
Մայիֆին պատմեցի ըռանգն թըռաւ:

Աբրահամ Մարտիրոսեան:

197.

Մայր և մանկիկ

Որորանում ննջումէր,
գեղածիծաղ մի մանկիկ,
Եւ ժպիտը փայլումէր,
Նորա դէմքում գեղեցիկ:

Մայրն բռնած քաջալինդ,
Օրօրոցը իւր մանկան,
Օրօրելով հանդարտիկ,
Օրօր ասէր մեղմ այս բան:

—Ո'վ իմ սիրուն յոյս միակ,
Ննջէ'ր անուշ իմ որդեակ,
Ննջէ'ր, ննջէ'ր դու քաղցրիկ,
Աստուած լինի քո պահակ:

Կ'գան օրեր, կ'գայ ժամ,
Որ այդ քնից զարթնացած,
Կ'երթաս և դու փարժարան,
Նըման ուրիշ տղերանց,

Կ'սովորես դու այն տեղ,
Պատմութիւնը քո սուրբ հարց,
Ի նկատի կ'ունենաս,
Քաջութիւնը քո նախնեաց:

Կ'տեսնես դու թէ ինչպէս,
Քո նախնիքը, քո հայրեր,
Հայրենեացդ զոհեցին,
Իրանց քաղցր սուրբ կեանքեր:

Եւ կ'իմանաս թէ ինչո՞ւ
Հայոց ազգը շատ խեղճ է,
Եւ կամ ինչո՞ւ փառքերը
Հայաստանի կորած է:

Այնուհետև կ'սկսես,
Քո հոգեկան աչերը
Բանալ և դու որդեակս,
Դէպ' քո մայր Հայաստանը:

Այս վառուած եռանդնոտ, Բայց դեռ ննջի՛ր, դու որդեակ,
Հայաստանի սուրբ սիրով, Ո՛վ իմ սիրուն յոյս միակ,
Մատաղ կեանքդ քաջապէս, Ննջէ՛ր, ննջէ՛ր աստ քաղցրիկ,
Զոհել նորան կ՚սկսես: Աստուած լինի քո պահակ:

Մկրտիչ Աթաբէգեանց:

198

Կռունկ

Ո՞ւր ես թռչում, կռունկ, ո՞ւր ես փախչում,
Ինձնից դու անտես գնում հեռանում,
Ե՛կ դու քիչ ինձ մօտ անբաղդիս լսի՛ր,
Յետոյ ուր կամիս թռի՛ր, հեռացիր:

Ա՛խ արի՛ դու կռունկ, իմ հոգւոյս սատար,
Այս վերջին անգամ, վերջին իմ խաբար,
Հայաստան երկրում դաշտում Շիրակայ,
Տա՛ր քաղցրիկ ծնողիս, որ միշտ 'ի սուգ կայ:

Տա՛ր և իմ բարև, կռունկ իմ սիրուն,
Իմ քաղցր եղբարց, անուշ քոյրերուն,
Յայտնի՛ր դու նոցա բարև իմ վերջին,
Որ այսէ պարգև կենաց իմ յետին:

Գնաս դու տեսնես անուշ նազլուիս,
Հոգւոյս փոխարէն բարևս սիրուհիս,
Յայտնի՛ր դու նորան վերջին իմ խնդիր,
Թէ քո սիրահար թողած այս երկիր,
Քո կարօտովը փառվում է մաշւում,
Անհաց և անջուր օրերն անցկացնում,
Քեզ է մնում քեզ, նա միշտ անդադար,
Նա մնում է այն տեղ անտէր անհոգատար:

Ասա՛ էլ վերջն է նորա բարև,

Էլ չ՚կայ նորան կեանք, ինչպէս երևի,
Միայն դու սպասիր ցվերջին անգամ,
Տեսնել երկնքում յահեղ դատաստան:

Շուտ մի գերեզման կ՚լինի ինձ համար,
Պատրաստ ինձ տանել օթևան խաւար,
Եւ անդ կ՚ննջէ անբաղդ իմ մարմին,
Միայն ինձ յիշատակ մնայ իմ անուն:

Էլ մի՛ սպասիր կռունկ, իմ հոգւոյն սատար,
Շուտ արա՛ թռի՛ր, դէպ Հայաստան աշխարհ,
Իմ վերջին բարև դաշտում Շիրակայ,
Տա՛ր քաղցրիկ ծնողիս, որ միշտ 'ի սուգ կայ:

Միքայէլ Միրզոյեանց:

199.

Ա՛ռ Հայաստան

Ո՛հ իմ Հայաստան, անուշիկ երկիր,
Ո՛հ իմ պատուական ծաղկաւէտ երկիր,
Ինչո՞ւ է պատել թմրութեան քօղը,
Արդեօ՛ք չե՞ս յիշում անունդ կնքողը:

Ո՞ւր է հռչակեալ քո մեծ անունը,
Որ ահ էր ձգում թշնամեաց վերայ,
Որոնք կշռելով քո զօրութիւնը,
Սարսափը, դողը տիրում էր նոցա:

Ո՞ւր են քո նախկին քաջ արքաները,
Հայկը, Տիգրանը և նմանները,
Որոնք երբեմն իւրեանց ժամանակ,
Ցրրում ջնջումէին իրանց բանակ:

Ո՞ւր են սուրբ Վարդան, Խոռխոռունիքը,
Որոնք անխնայ Արտազ դաշտումը,
Ցիմար ու տմարդ Պարսիկների դէմ,
Զոհեցին իւրեանց անմեղ արիւնը:

Արդեօ՛ք էլ ուրիշ ո՞ր մեկի՞ն ասեմ,
Ո՞ր քաջ որդւոց ես անուն յիշեմ,
Եւ թէ յիշելով նոցա անունները,
Կարո՞ղ եմ մի՛ քիչ քեզ մխիթարել:

Նոքա ամենը անցան և գնացին,
Թողին մեր սրտում և պատմութեան մէջ
Միայն մի տխուր անմահ յիշատակ,
Որ և յիշումենք ամեն ժամանակ:

Բա՛ւ է ուրեմն, ազնիւ Հայաստան,
Մի՛ լար, մի՛ սգար, մայրիկ Թորգոմեան,
Էլ մի՛ նորոգիր քո հին վէրքերը,
Լսի՛ր կ'խնդրեմ այս հետևեալ բանս:

Այժմ էլ կա՞ն այժմ էլ այնպիսի Հայեր,
Որպիսիք կային քեզ և հին դարումը,
Թէ և չունենք այժմ այն զրահ զէնքը,
Որով կարումէինք թշնամեաց հետքը:

Բայց կան այժմ մի բան. Ուսում, Կրթութիւն,
Եւ ամեն գործում Սէր ու Միութիւն,
Որով գուցէ մենք մաքառենք, կռուենք,
Եւ ազատութիւնը շուտով հեռայնենք:

Գէորգ Ղազարեանց:

200.

Երգ ուրախութեան

Ո՛վ Աստուած անմահ, դու մեր Հօր հսկեա՛
Ոսկեթել նարօտ զառաքեննաց.
Ցորչափ 'ի յերկինս ճաճանչք շողշողին՝
Անմուտ փայլեսցէ արփին մեր Հօր.
Ո՛հ փայլեսցէ արփին մեր Հօր:

Հապա՛ հապա՛, ո՛վ որդիք Հայկայ,
Ի ձայն ցնծութեան աւուր կայք,
Դուք աւուր կայք, դուք աւուր կայք դուք,
Երգեցէ՛ք սիրոյն 'ի լար դողդոջուն,
ԳԷՈՐԳ Հայր մեր յաւերժ կեցցէ:

201.

Երգ գոհացողական զկնի դատաւութեան

Որպէս զմեզ և դու Տէր մեր,
Մանուկ մատաղ յերկրի եղեր:

Ի պաշտպանողսն մերոյին,
Առատաղեղս դուրք քո հեղցին:

Անխոնջ սիրով սիրոք պատարուն,
Տացեն կատար սրբոյ գործոյն:

Քոյոց ձրից երկնատեղաց,
Արժանի են նոքա, Աստուած:

202.

Հարսընտիր երիտասարդին:

Ո՞ր սրտով կ'յուսաս,
Թէ նա սիրում է
Քեզ պէս աղքատին,
Երբ արհամարհում է
Դժգոյն հայեացքով
Քեզ նըման շատին:

Աչքերը հըպարտ,
Բերանը անդուռ,
Դէմքն ահարկու,
Ա՛յ մարդ մի՛ հըպվիր.
Վըտանգ կըկրես
Նորա ձեռքից դու:

Քեզ պէս քանիսին
Զոհեց գլխովին
Սիրոյ սուսերով....
Է՞ր ես փախչում
Կենազրաւ լինել,
Նորա ձեռքերով:

Փախի՛ր սիրե՛լի,
Անողորմ է դա,
Դա քեզ կըխաբէ,
Դա ինքնին կըրակ
Անմար մշտավառ
Սիրտըդ կըվառէ:

Գը՛նա՛ սիրի՛ր դու
Այն սիրոյ ծարաւ
Շըքեղ սիրունին,
Որին անտխեղծ,
Սիրոյ հաւատիք
Շատերն ակնունին:

Թէպէտ և աղքատ,
Բայց սիրտն է հարուստ
Այն օրիորդին,
Նա քեզ կըգտանայ
Ամուսին անզոյգ,
Ըստ Ճակատագրին:

Օժիտ կուենաս
Վեհ համեստութիւն,
Եւ ըգգօն Ճակատ,
Հաւատա՛ դու ինձ,
Նորանով բընաւ
Չե՛ս լինիլ աղքատ:

Թէ կո՛ւզես լինել
Գլխովին գերի,
Լո՛ւր ինձ աւա՛սիկ,-
Որոնէ, գըտի՛ր,
Ուստի որ կամիս,
Մի հարուստ աղջիկ...:

Յարութիւն Ոստանիկ:

203.

Նորածին մանուկը Տիգրան

«Քեշիշ-Օղլու» ձայնով.

Որդի՛ ջան, անունդ Տիգրան եմ դընում,
Որ Տիգրան Հայ Թագաւորըն իմանաս,
Ջուն քաջ Հայկայ սիրունդիցն ես ծընանում,
Պէտք է նորա Թոռն ու ծոռըն իմանաս:

Դու մին հուչակաւոր ազգի զաւակ ես,
Հայկ, Արամ ու Տիգրան և շատ սորանց պէս
Իշխանք ես ունեցել մին ժամանակ քեզ,
Պէտք է սովրես էդ բոլորն իմանաս:

Քեզի ունեցելես հողե՛ր, աշխարհներ,
Ժիր Թագաւորք, զօրք և քաջ զօրավարներ,
Թագ, գայիսոն, դրոշակ, զէնք ու ասպարներ,
Զ'լինի քեզ օտարից ստորըն իմանաս:

Քեզի ունեցել ես և ուրիշ պարծանք,
Բազմաթիւ դըպրոցներ և շա՛տ Ճերմա՛րանք,
Մեծ իմաստ ուսուցի՛չք, հըմուտ գիտնականք,
Որոնց շատը հոգևո՛րն իմանաս:

Բայց ունես արդ միայն կրօն և լեզու,
Հին դարուց մընացած միակ փառքըդ քու,
Որոնց պիտի սովրե՛ս, լա՛ւ իմանաս դու,
Յարգես՝ ողջից պատուաւորն իմանաս:

Վերջապէս իմացի՛ր, որդեակ իմ անգին,
Քեզ Տիգրան դոչելով, պատվում եմ Ազգին,
Եւ դու միշտ յարգելով քու Հա՛յ համազգին,
Պապերիդ քու ծընող հօրըն իմանաս:

Մինչ ես կե՛ա խօսելս թո՛ղ լինի քեզ բաւ,
Մինչ խելքով, հասակով կըզարգանաս լաւ,
Այնուհետ ինչ է պէտք՝ քեզ կ՚ասեմ կարգաւ,
Մինչ ինքդ քեզ բախտաւո՛րըն իմանաս։

Էս անգամ խօսելս քեզ հետ ռամկաբար
Ընդուր էր, չունքի դու մանուկ ես անկար,
Բայց երբ կըզարգանաս հայ պատուիդ համար,
Պարտ ես լեզուիդ գլխաւորըն իմանաս։

Ես քո հայրիկդ եմ կոյր աշըղ դառած,
Կուրութեան պատճառով շատ վիշտ եմ կըրած,
Փըրկութեան մեծ յոյսըս արդ քեզ եմ արած,
Կոյրն ասելով, մըտաւո՛րըն իմանաս։

Կոյր-Աշըղ։

204.

Երգ սիրոյ

Ո՛չ մի տեղ դեռ չեմ տեսել քեզ նման հանճար,
Լեզուանի ճարտար.
Վառել ես սրտիս մէջը, աղնիւ սիրահար,
Կրակ մշտավառ։
Մարդաշահ քո խօսքերով շատ մարդիկներին
Արել ես գերի.
Արիւնը զուտ ցամաքած դառամեալ ծերի,
Բերել ես սէրի։
Առանց սուր սպանել ես հինգ հարիւրների,
Աստուած ների.
Ինչպէս արդար Ջիւանին մի՛ կարծիլ օտար,
Ջունեմ ուրիշ ճար։

Երբեմն խօսք ես տալիս, բայց չես կատարում,
Է՞ր ես չարչարում.
Էշխիդ սուր սուսերովն է՞ր ես սպանում,
Թողնում զնդանում։
Այրում ես վառ կրակում, չես գալիս հանում,
Անողորմ խանում.
Ջուր տեղը չարչարում ես, չես տալիս դադար,
Թողել ես անճար։
Ձեմ գիտում ում գանգատեմ, ում մօտը գնամ,
Ցաւերս բանամ.
Ուզում ես կրակովդ միշտ այրուած մնամ,
Սև փոշի դառնամ։
Երանի՛ տուած ցաւիդ կշիռն իմանամ,
Ապա դիմանամ.
Ղափասիս դուռն ես գոցել, չ՚կայ մէկ հնար,
Ազատութեան ճար։
Սաստիկ է հրամանըդ, մէկ փոքր համբե՛ր,
Նե՛ր ընկերասէր.
Երկայրի քո սուսերիդ սուր սուր բևեռներ,
Սիրտս արեց տարբեր։
Աստուածաշէն պարիսպս արեցիր աւեր,
Էլ չի մնաց սէր.
Ափսո՛ս, որ դատաստանս չ՚արեցիր արդար,
Բցիր քարէքար։

Աշտարակեցի Խաչիկ։

205.

Ո՛վ սիրտ իմաստութեան, եռանդ ունեցի՛ր,
Այս խրատով քեզնի վնաս չեմ տալ,
Աշխատէ շնորհք ու տաղանդ ունեցիր,
Մոլութիւնը մէկ գործի մասը չեմ տալ։

Ինչ մարդ չ'ունի նոր սիրտ և նոր գաղափար
Նա է մնում յամառուած տխմար,
Ինչ հովիւ հոգ չ'ունի իւր հօտի համար,
Ես նորան մէկ սուտ Աթէնաս չեմ ասի:

Կատարեալ վարք, հանդարտ անուն ունեցող,
Ուղիղ կրօն, Ազգի արիւն ունեցող,
Բաղդ ու շնորհք գեղեցկութիւն ունեցող
Մարդուն՝ Թագաւորից պակաս չեմ ասի:

Ջիւան, գլխացածիդ չափ խօսէ ստոյգը,
Պարզաբանէ սրտիդ եղած ծածուկը,
Ինչ ուսուցիչ լաւ չ'կրթէ մանուկը,
Տուած դասին ճշմարիտ դաս չեմ ասի:

206.

Մաղթանք առ Տէր

Ո՛վ Տէ՛ր Աստուած, լո՛ւր մեր բարբառ,
Ուղղեալ սրտէ միշտ վըշտահար,
Փութա՛, գըթա՛ Հայոց թշուառ,
Մի՛ օտարաց լիցին աւար:

Նայեա՛ց տըխուր աւերակաց,
Մեր հարց անշուք լըքեալ շիրմաց,
Ա՛խ Հայաստան, մայր որդազրկեաց,
Ի բիւր հառաչս կոծէ 'ի լաց:

Ուր Հայորեար տըններն պանդուխտ,
Ո՛հ, ընդ տարվայրս բազմակարօտ,
Զուներն պաշտպան մերձ 'ի կորուստ,
Ի վտանգս կրեն հարուածք անգութ:

Տո՛ւր շունչ քոյդ Հայ որդւոց համայն,
Ի հի՛ք դարձցին վաշ ոսոխք չար,

Եւ 'ի կրօն սուրբ Հայք Հայաստան կեցցեն յաւերժ!
Կացցեն պայծառ, կացցեն պայծառ:

Գ.աբրամ վ. Մանկունի:

207.

Դաշամայ

Ո՛վ մարդ քեզի կ'ասեն վատ ճանաչելէն,
Ցարաժամ բաղդը աստիճան չի բերել,
Աքաղաղը կ'դադարի կանչելէն,
Միշտ քեզ համար լուսոյ նշան չի բերել:

Մանկութեան աշխատանքը ջուրի նման է,
Եթէ առաջն առար, քեզ բաւական է,
Պահպանի՛ր գործդ քանի որ յաջողակ է,
Ամէն անգամ գետը գերան չի բերել:

Լա՛ւ հասկացի՛ր Ջիւան, դու քո հաշիւը
Առանց գործի ցածր է մարդու պատիւը,
Միշտ յաջող չի դառնալ բաղդիդ անիւը,
Ամէն տարի արտը օրան չի բերել:

208.

Երգ

«Ով դու բարեկամ» եղանակաւ:

Ո՛վ իմ հայրենիք, երկիր պատուական,
Թողումեմ քեզի այլոց սեպհական,
Սիրտս վշտերով, հազար մի ցաւով,
Հեռանումեմ ես լալով սգալով:

Հեռանումեմ ես բաժանվում քեզնից,
Քո անուշ հողից, մայրական ծոցից,

Դէպ՝ օտար երկիր գաղթումեմ տխուր,
Սրտումս ցցուած քոյ սիրոյ սուրբ սուր։

Ընդունի՛ր խնդրեմ, իմ վերջին բարև,
Հալալ արա՛ կաթդ, օրհնի՛ր և իմ արև,
Գիտեմ հիւսխի, ամպոտ երկնքում,
Ջեմ տեսնիլ դէմքդ իմ բոլոր կեանքում։

Սոխակ աղեկէզ վարդին սիրահար,
Պի՛տ՝ մնամ կարօտ միշտ և անդադար,
Քեզանից հեռու, գիտեմ միայնակ,
Պի՛տ՝ անցնին օրերս, զերթ պանդուխտ թռչնակ։

Ո՛հ մնաք բարեաւ, սիրունիկ դաշտեր,
Հով հով անտառներ, պարզ վճիտ ջրեր,
Եւ դուք ծաղկազարդ փոքրիկ բլուրներ,
Մատաղ հասակիս միակ ընկերներ։

Շատ եմ անցուցել ես ուրախ օրեր,
Չ՚եմ թողել սրտումս անփարատ դարդեր,
Ձեր քաղցր ծոցում, մայրական գրկում։
Ա՛խ ո՞րպէս բաղդաւոր էի ինձ զգում։

Ձեր սուրբ յիշատակ, անմահ երախտիք,
Մայրական գորով, հայրական բարիք,
Անմոռաց կ՚մնայ պանդխտիս սրտում,
Մինչ գերեզմանի սառ հողի տակում։

Թադէոս Զախարեանց։

209.

Ուղերձ յաւուր օրհնութեան բացման ճեմարանի սրբոյ Էջմիածնի։

Ո՛հ, զի՛ չքնաղ ըղձացմանց ՚ի վառ՝
Յուղին այսօր հոգեպարար,

Հրապոյրք ՚ի միտս, ՚ի սիրտս կայտառ,
Եւ յորդեն խղճք ՚ի Հայորեար։

Ո՞չ այս հանդէս վեհ և շքեղ—
Մինչ աստ պաշտին յօրհներգս գեղգեղ,
Նաւակատիք Տանս փառահեղ—
Գուշակ է քաջ յուսոյ ի զեղ։

Ո՞չ այս հանդէս քաղցր աւետեաց,
Հրնչէ ըղձայն Հայաստանեայց,
Հարսին լուսոյ տայ հրճուագգեաց,
Ի ձայն հրաւէր՝ ի վայրս դալրեաց։

Յորում ահա ՚ի թեւս ուխտից,
Համդխակցեալ կարօտալից,
Նա և ՈԳԻ Սուրբ Հայազնից,
Վերապանան մաղթանք սրտից։

Փա՛ռք միշտ ձեռին Նուիրական,
Որ զայս կանգնեաց ըղձեմարան,
Եւ խանդակաթ յիղձս եռանդեան,
Բանայ ըղձրունսն՝ գործել ի ջան։

Ո՛հ, զի՛ փեմ՝ լայն ասպարէզ
Հարթեաց սոփա յուսմունս պէսպէս,
Որ հովուեսցէ յայս սուրբ կրկէս
Ամենակալ աջըն՝ անմերձ։

Սա է երկիր, սուրբ, բանաւոր,
Ոչ աւետեաց եւ մեղրածոր,
Եւ ոչ կաթին առակաւոր,
Այլ փրկութեան մեր հոգևոր։

Սա սրփեսցէ զեռանդս սուրբ Հարց,
Մեծն Գրիգորի եւ Թարգմանչաց
Սահակ Մեսրոպ, և՛ հետևողաց,
Ի սիրտս համայն այսց ժառանգաց։

Պահեա՛ Աստուած, զայս Նոր Տաճար,
Ցօղուտ 'ի փառս Հայութեան յար.
Պայծառացո՛, Տէ՛ր բարերար,
Ցարդինս առոք և պերճափառ:

Եւ ընդ սմին միշտ պանծասցի,
Ի փառաւոր յիշատակի,
ԱՆՈՒՆ Սորին վեհ Հիմնադրի՝
ՏԷՐ ՏԷՐ ԳԷՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏԻ:

Վահրամ Վ. Մանկունի:

210.

Երգ

«Մեզնից շատ առաջ» երգի եղանակով.

Ո՛վ առաւօտեան դու զեփիւռ քաղցրիկ,
Ի՞նչ անուշութեամբ կ'փչես հովիկ,
Փունջ ծաղկանց անուշ հոտով գեղեցիկ,
Կ'զմայլեցնես հոգիս ու սրտիկ:

Զեփի՛ւռ երբ այդպէս անուշ հնչելով
Անցանես դու իմ սիրուհւոյս մօտով,
Համբուրի՛ր նորա աչեր քո հովով,
Խաղա՛ ոսկեթել փունջ փունջ մազերով:

Գիտեմ այժմ նա նազելի քնած,
Փոքրիկ գլուխը բարձերին դրած,
Ծալխ բերանին որպէս վարդ բացված,
Բաղցր երազով է նա զմայլուած:

Բուրէ՛ դու նորան խնդրեմ քո հոտիկ,
Զովացո՛ւր, մաքրի՛ր դէմքը սիրունիկ,

Փախցո՛ւր աչերից նինջը անուշիկ,
Հովացո՛ւր վառված թշերը կարմրիկ:

Նորա աչերից քրտինքը սրբէ,
Մի՛ թող Մորփէոս աչերը ճնշէ,
Վե՛ր կացուր տեղից խնդիրս պատմէ,
Գծբաղդ վիճակը մի առ մի յայտնէ:

Պատմի՛ր դու նորան թշուառ իմ վիճակ,
Խնդրէ յղել ինձ երկտող մի նամակ,
Բաց է նորա մօտ իմ սրտիկս փակ,
Ա՛խ թո՛ղ չորցնէ արտասուքս տաք:

Դէ՛ սուրի՛ր զեփիւռ տերևաց միջով,
Անցի՛ր ինձ նման թշուառաց սրտով,
Բայց մի՛ մոռանալ յայտնելու շուտով,
Իմ այս խնդիրը հովիդ միջոցով:

Զախար:

211.

Ողջոյն գարնան

«Գարունն է եկել» երգի եղանակով.

Ողջո՛յն քեզ ողջո՛յն, քաղցրաշունչ գարուն,
Քո գալուստդ բարի մեր քաղաք սիրուն,
Այդ ինչ քաղցրաձայն կ'բերես դու մեզ
Թռչունք գեղեցիկք, ծաղիկներ պէս պէս:

Ինչպէս գեղեցիկ քո դաշտեր, մարգեր,
Չոտաւէտ ծաղկանց բուրմունք են բոներ,
Երգեցիկք թռչունք, դայլայլիկ սոխակք,
Վարդի հետ կ'առնուն սիրական հանակք:

Քեզ հետ, ո՛վ գարուն, նոր կեանք ես բերել,
Ջորացած դաշտեր ծաղկազարդ արել,
Բնութիւն համայն քեզանով վառված,
Բոլորին ուրախ կեանք ես ընծայած:

Դաշտերի վերայ, ձորերի միջում,
Քաղցրաձայն գետակը է խոխոջում,
Ամենայն ուրեք սէր և խնդութիւն,
Անպակաս թողուց քո անմահ անուն:

Օրհնեալ ես դու, օրհնեալ քո Արարիչ,
Այդքան բարութեան միակ պարգևիչ,
Ձեր սուրբ յիշատակ մինչի յաւիտեան,
Ամենի սրտում միշտ վառ կ՚մնան:

Մարտիրոս Թումանեանց:

212.

Հառաչանք Հայրենասիրի

«Вальсъ Мабель» երգի եղանակով.

—Ո՛վ պանդուխտ պատանի,
Իմ քնքո՛ւշ աղանի,
Ի՞նչու գալկացած
Դէմքով ես նստած:
Ասա՛ ինձ Հայ-ազգի,
Թափառո՛ւն պատանի,
Քո սրտի մրմունջ,
Եւ ցաւ և տրտունջ:
—Ա՛խ ո՞ւր են Հայրենի,
Քաջազունք իմ արի,-
Արամ և Վարդան
Երուանդեան Տիգրան:

—Աւա՛ղ այն քաջերը,
Թողնելով այս կեանքը,
Մեռա՛ծ են մեռա՛ծ,
Երկինք բարձրացած:
Թէև նոքա չկան,
Որ օգնեն Ազգ Հայկեան,
Բայց կայ մի պաշտպան,
Հայերիս համայն:
Նա է ՕԳՈՍՏԱՓԱՌ
Ռուս կայսրն ինքնակալ
Որ մեզ սիրելով,
Պահէ անվրդով:

Դէ՛ ուրեմն մի՛ տխրիր,
Այլ պարի՛ր և երգի՛ր.
«Կեցցէ՛ մեր Արքայն,
Այժմ և յապայն:»

Կոմսիկ:

213.

Առ խնդութիւն

Ո՛վ խնդութիւն հե՞մ յինէն արդ
Աքօղեցեր դէմս քո զուարթ,
Եւ փարելի ցնորս քնքոյշ,
Կոչեալ տարար այսպէս վաղ յոյժ:

Վա՞ն էր, ասա՛, ո՛ Երկնակեաց,
Թևեար իբրու նետ սրնթաց,
Եւ փորձանացս յաղջամղջի,
Փայլես զերթ աստղ յինէն հեռի:

Ընդէ՞ր, ընդէ՞ր քոյին շքով
Զիս պատրեցեր 'ի քաղցր 'ի թով,
Թողեալ ինձ այժմ զաւուրց փայլուն,
Գէթ զդատարկ յիշողութիւն:

Անցուկն՝ որ քև էր բարօրիկ,
Խունի յաճախ յիմ սիրտ տխրիկ,
Բայց գեղ վսեմ անցած աւուրց,
Ո՛չ արծարծէ յիս յոյս և ցունծ:

Ջեռնու երբեմն ոգիս աշխոյժ,
Ածեալ 'ի միտ զօրերն անուշ,
Շրջէ սրտիս նինջ վեր 'ի վայր,
Ո՛չ ձնշելով վիշտս անկոպար:

Սապէս լուսին փայլի զգեստով,
Ցոյր 'ի հոսանս խաղայ մեղմով,

Եւ զշողին ճաճանչափայլ,
Սփռէ զնօքօք ծաւալ ծաւալ:

Գետն հեղու բոց վառ 'ի վառ,
Արփիական գեղապայծառ,
Եւ կոհակօք ցուրտ փրփրոտ,
Հոսէ ծովուն 'ի ծոց աղօտ:

Աւետիք Մամիկոնեանց:

214.

Երգ 'ի տօնի Վարդավառի(*)

Ողջո՛յն քեզ ազնիւ Հայոց Վարդավառ,
Քեզ զի՞նչ զոհ բերեմ, այծ, ոչխար թէ զառ.
Ընդէ՞ր Հայրապետք մեր Արշակունիք
Թողին քեզ ընծայ շատ ներբող և ճառ.
Բանք նոցա չէին նման մարդկայնոց
Այլ միանգամայն հրեշտակաց բարբառ,
Անցին այն քո տօնք յորս Հայաստան
Զգենոյր հագուստ կանանչ որպէս ծառ.
Զօրք մեր Արքայից զանազան զարդիւք
Տօնէին զտօն քո սուրբ և պայծառ.
Անթիւ օրիորդք յԱրքայական տանէ
Պաշտէին զքեզ դիմօք հրաշափառ.
Այժմեան որդիք չեն հարազատ այլ խորթ
Չունին ո՛չ զեռանդ, ո՛չ սէր, ո՛չ պատկառ,
Նոքա փոխանակ նախնական տօնից,
Սէյեա՛դ, շրջին միշտ փքեալ գէտ տակառ:

Պետրոս Մադաթեանց:

(*) Լսելով, որ հանգուցեալ Պետրոս Մադաթեանցը (Սէյեադ մականուանեալ ազգային երգիչը) իրան մահից յետ բաւական ձեռագիր ոտանաւորներ է թողած, այս առթիւ կ'խնդրէի բարե-

215.

Պանդուխտ Հայ երիտասարդ առ իւր նամակ

«Ով դու բարեկամի» եղանակաւ:

Ո՛վ դու մխիթար պանդուխտ սրտերու-
Ըզգացմունքով լի նամակիկ ազդու:
Կապտուրի՛ր թեւերդ, սլացի՛ր շուտով,
Հասի՛ր իմ հօր մօտ օդը ճախրելով:
Բարեւի՛ր նորան, համբուրի՛ր ձեռքը,
Պատմի՛ր մի առ իմ տառապանքը:-
Ասա՛ քո թշուառ որդին միշտ այն տեղ,
Ողբումէ ցաւին չէ՛ գտնում մի տեղ:
Այն օտար երկրում նա մարմնով տկար,
Անհաստատ քայլով շրջումէ մոլար:
Զուրկ իւր եղբօրից, իւր մօր, քեռ շիրմից:
Հալւումէ, մաշւում դառն վշտերից:
Հեռու իւր հօրից, իւր տան ու տեղից,
Զրկվումէ խայտառ իւր մատաղ կեանքից:
Սիրուն ծաղկի պէս իւր փոխած տեղում,
Բանիլ և աճիլ բնաւ չէ՛ ուզում:
Նա նմանվումէ թառամած, թօշնած
Մի մանուշակի կորակոր կանգնած:
Թոյլ բազուկները խաչած իւր կրծքին,
Ապրումէ նա միշտ սրտում տխրագին:
Կարօտումէ ձեր Հայրական սիրոյն,
Ինչպէս սոխակը-իւր վարդ սիրուհւոյն:

պաշտօնի Տիկին Ո. Մադաթեանցին, որ բարեհաճէր նոցանից ուղարկելու ինձ 'ի տպագրութիւն, որով աւելի վառ կ'պահէր հանգուցելոյ յիշատակը Հայ գրականութեան մէջ: Ա. Գրիգորեանց:

Ասա՛ համարձակ, ասա՛, նամակիկ,
Իմ հօրը, որ նա կոծէ իւր գլխէն:
—Նստէ աչքերից թափէ արցունքներ,
Առատ, դառնաշիթ աղի կաթիլներ:

Ողբայ հանապազ, ողբայ անդադար,
Դժբախտ տարաբաղդ իւր որդւոյ համար:
—Մաղթէ մեր փրկչին—մեր Տէր Աստուծոյն,
Որ արժանանանք իրարու տեսոյն:

Ալէքսանդր Աթաբէգեանց, (Սաղեանցի):

216.

Երգ սիրոյ

Որ 'ի սիրելոյս ինձ բարև չկայ,
Այսօր ինձ մութն է, ինձ արև չկայ:

Դառնացաւ այսօր ինձ ջուրս, հացս,
Չեմ գիտում բնաւ իմ նիստ ու կացս,
Վայս հազար է, բիւրաւոր լացս,
Կոկոնս թափվեց, թարշամեց բացս,
Չորացաւ վարդս մի տերև չկայ:

Ո՞ւր է այսօր, ո՞ւր իմ արեգակս,
Պայծառ աստղերս և լուսնիակս,
Երփներանգ ազնիւ քաղցր սոխակս,
Աշխատանքս ել 'ի տերև, չկայ:

Ծնայ 'ի մօրէ յախտակիր աշխարհ,
Զարգացայ ցաւօք ինձ ուսայ աշխար,
Որքան զօր պատեաց զինև շուրջ խաւար,
Լի եմ տրտմութեամբ չէք ոք մխիթար
Ուրախութիւն ինձ արդարև չ'կայ:

Սէ՛ր, արի՛ հոգիս ա՛ռ քո ձեռօքդ,
Վե՛ր առ պատանս, կա՛ր քո ձեռօքդ,
Իմ դիս գերեզման տա՛ր քո ձեռօքդ,
Քաշէ՛ր երեսիս քար քո ձեռօքդ,
Որ սէրդ ընդէս յարատև չկայ:

Սիրոյ քո առիս լիցի այս նշան,
Ի յարգ պատանիս քանդակեալ գրան,
Արկածք իմ անձին տաւիւք իմ անուան,
Որդի Մկրտչի Մովսէս Գրիգորեան,
Քան զայս աստւթեանս ստորև չ'կայ:

Մովսէս Գրիգորեանց.

217.

Գինի

Ով որ քեզ գործ է ածում, դու նորան ես մէր, գինի ջան,
Ըստ որում սկզբից ցոյց ես տուել սէր, գինի՛ ջան,
Կուվարար մարդոյ հետը լինումես աղեր, գինի՛ ջան
Չես թողնում քարը տեղին՝ քանդումես տներ, գինի՛ ջան:

Մէկ բաժակ երբ կոնծումէ քիչ մը ժպտալ է սկսում,
Երկրորդին—հոգի առնում լաւ բան է ինքն իրան ասում,
Երրորդին—էլ տէրը չի, ընկերիցը բարձր ա խօսում,
Բերումես խեղճի գլխին ինչ տեսակ բաներ, գինի՛ ջան:

Շատերին դառը աղքատ՝ շատին փողի տէր ես շինում,
Շատին թմրութիւն ես տալիս՝ շատին կուվոյ մէր ես շինում,
Տկարին ցո՛յց ես տալիս մի նոր նշաններ, գինի՛ ջան:

Չորրորդին—հինգերրորդին կ'տեսնես որ հաղ ա կանչում,
Գլուխը պատին տալով կովի նման է բառանչում,
Ամօթը յետ է գնում ընկերիցը չի ամանչում,
Տաս հանդիստ բաց ես անում լռւած բերաններ, գինի՛ ջան:

Հաց չունի գինեմոլն, տանն երեխայքն են լալի,
Ջեռն ընկած մէկ կոպէկը շուտով գինետանն է տալի,
Գինետան չորս կողմովը գիշեր ցերեկ մանն է գալի,
Չի թողում հանգստանայ միշտ կանչումէ, վե՛ր, գինի՛ ջան։

Ցանկացայ գործ գրեցի, որ ես էլ փորձը իմանամ,
Տեսայ որ թէ քեզ սիրեմ՝ գործիս պէտք է յետ մնամ,
Ուխտելով մէկ բաժակի լաւ համարեցի դիմանամ,
Քան զթէ ինչքան կոնծեմ՝ էլի ասեմ, բե՛ր, գինի՛ ջան։

Խ. Սասունեանց Աշտարակեցի.

218.

Նուէր Լ.....ին

Ո՛վ որ քո սիրով
Լինի գրաւած,
Նա հոգով մարմնով
Է միշտ մոլորված։

Գիշեր ու ցերեկ
Մտքիս առարկան,
Ո՛հ, դու ես միակ,
Ա՛խ, իմ սիրա՛կան։

Վաղ ժամանակից
Ցանկանում էի,
Որ քո սուրբ ձեռքից
Նուէր ընդունէի։

Պարտեզում նստած,
Քեզնից ստացի
Քո ձեռով կապած
Փունջ կարմիր վարդի։

Երբ աչքս նորա
Վերայ կ՚ձգեմ,
Քո քնքոյշ դէմքը
Միտս կբերեմ։

Ա՛խ կը մոլորուեմ,
Երբ որ կ՚յիշեմ,
Թէ քո ձեռով է
Նուիրված ինձ այն։

Թէեւ շատ մարդիկ
Մեզ կ՚նախանձեն—,
Մեր սէրը քանդել
Նորանք կաշխատեն,

Բայց այնպէսներին
Ես միշտ կ՚անարգեմ,
Ու նորանց աստծի
Վրայ կը ծիծաղեմ։

Անդրէաս Սեւրիւգին (*)

(*) Այս պարոնը Ռուս է եւ լաւ գիտէ Հայոց, Գաղղիացւոց եւ Տաճկաց Պարսկաց լեզուները. բայց դժբաղդաբար չգիտէ իր մայրենի (РОДНОЙ) լեզուն։

Ղ.

219.

Իղձ պանդխտի

Պարսկաստանէն արձակուեմ հառաչանք,
Ցուսալով որ ձայնս տայ ինձ արձագանք,
Բաժան բաժան ցրուած եմք գունդիս վերայ,
Մեր վիճակը քանի երթայ գէ՛շանայ։

Շատ տեղերում մեր հայերն յաջող են,
Խաղաղ օր եւ երջանիկ կեանք վայելեն,
Վատառի եւ այլ պիտոյք դիւրաւ գտանեն,
Արդեօ՛ք նոքա Պարսկայ-Հայոց կ՚յիշե՞ն։

Որ պանդուխտ են օտար հողում տառապեն,
Ինչ խեղճութեամբ իւրեանց փախճան կատարեն,
Տգիտութեան մէջը վաղուց տապալին,
Թողեալ կրօն ուրիշ սփոփանք մի՛ չունին։

Ամեն տեղի Հայերից էլ թշուառ են,
Ցուսահատած աստ եւ անդ միշտ թափառեն,
Զրկուած են իսկ Հայրենիքի հողից,
Նորա ջրից եւ նորա մեղմ օդից։

Ժառանգեցեմք օտարութեան դառն հող,
Լուիկ նջեմք մինչ որ հնչէ վերջին հող,
Սակայն պէտք է որ ես երթամ Հայաստան,
Ցետոյ մեռնիմ, որ անդ մնայ իմ տապան։

Սա 1875 թուին Բագվում լինելով, մասնակից եղաւ Հայ Թատրոնասէր խմբին, մի քանի անգամ դեր կատարելով։ Ա. Գրիգորեանց։

Թէ որ մեռանիմ կ'պատուիրեմ իմ որդուն,
Որ իմ ոսկերքս չ'թողու նա այս հողում,
Տանէ յանձնէ մեր Մասիսի կողքերուն,
Այնտեղ փտեմ խառնուրդ լինեմ հողերուն:

Արձանագրով խեղճուկ տապանս զարդարէ,
Եւ յիշատակ Հայրենաւանդ ինձ կանգնէ,
Ցայնժամ զուցէ հանգստանայ իմ հոգին,
Աճիւն դառնամ նախնեացս հետ միասին:

Հայրենիքիս կարօտելով օրս էանց,
Սակայն ունի յոյս դարձեալ Մ. Բժշկեանց:

Մ.

220.

Երբ ստացար ծերութիւն,
Էլ չի անես սէրութիւն:

Սիրուններն էլ քեզի սիրով չեն նայում,
Դու ում որ տեսնումես, ասումես արի', ե'կ մին զաղարի,
Այդ երեսն ո'չ Թուրքում կայ ո'չ Հայում,
Բարեաւ մաշես, գնա' աստուն էլ ճարի,
Հազի'ր տասը տարի:

Այլոց բամբասում ես, թէ վարքըդ ցած է,
Ուրեմն քեզ ասեն հանդարտակաց է,
Ագամայ այծի պէս միշտ պոչըդ բաց է,
Տմակն տեսնելուս մին խեղճ ոչխարի,
Քցումես շարի:

Սիրտ ուզանքն կու լինի ջերմող հիւանդում,
կամ թէ Պարսկաց մէջին մնացած բանդում,

Սօրանցով ծեր մարդկանց դու սիրտն ես քանդում,
Թէպէտ պառաւ ձին էլ ուտում է գարի,
Մարսելն է բարի:

Փորացաւ չունենալ չաղ միս սիրողն,
Իւր կայքին կու նայի զռնաղ բերողն,
Զուարթ ջահիլ պխոի ակըն քերողն,
Գոլդող ձեռն ո՞նց կու ծակի մուրվարի,
Ցիմար մաւշարի:

Ես քո ձեռից ո՞ւմ արզ անեմ, ծերութիւն,
Քեզնից լաւ էր ինձ պատահէր կուրութիւն,
Ո'չ տեսնէի ո'չ անէի չարութիւն,
Մանգայի արխային ես մարդավարի,
'ի մէջ աշխարհի:

Անվարձ մշակ ե՞ս, թէ տանովլն զո՞ւլ ես,
Ահա' քեզի զանգակ, եթէ որ խուլ ես,
Շատ վախտ տեսնում են, որ գործիդ մէջ ծուլ ես,
Քացով տամ են ասում, գէ' վեր կա'ց կորի',
գնա' էշը քորի:

Ջարկեա'ր, դու երեսուն ութ տարօք ես,
Հերիք ա Մայիֆի սիրտն բորբոքես,
Երբ երգել սկսես, տաղըդ լաւ քօքես,
Կապանքն է թուլանում շատ ցաւազարի,
Ընկնում են բարի:

Աբրահամ Մարտիրոսեան:

221.

Սէրդ սրտումս միշտ վառ է, Քաղցրահայեաց թուխ՛աչերդ,
Ո'վ նազելի իմ հրեշտակ, Ե՞րբ կ'լինի համբուրեմ,
Ո'հ այս ցաւը անտանելի Կ'գա՞յ արդեօ'ք այն վայրկեանը,
Կ'տանջէ ինձ շատ սաստիկ: Որ սուրբ սիրով քեզ գրկեմ:

Արեգնատիպ վարդ այտերդ,
Երբ այն օր ես տեսայ,
Հաւատացի՛ր, նոյն րոպէում
Քեզ հետ սիրով կապուեցայ:

Ուշքս ինձանից վերանումէ,
Երբ ժպտալով նայումես,
Քաղցր լեզուով բարբառելուս,
Սրտիս մէջը հուր կ'վառես:

Խղճա՛ անգութ իմ հատակիս,
Ինձ մի՛ տանջիր դու այսպէս,
Քաղցրիկ դէմքդ ինձ կ'քարշէ,
Իբրև մագնիս դէպի քեզ:

Ուրեմն արի՛, ո՛վ քնքուշիկ,
Ձեռք մի՛ քաշիլ ինձանից,
Թէ ո՛չ Աստուած կ'պահանջէ
Իմ արիւնս քեզանից:

Սմբատ Օխսակեանց

222.

Սիրտ սիրաշար

«Մանեակ չքնաղ» երգի եղանակով.

Սէր սերկածին ո՛ սխրալի սիրաբուն,
Սիրաբուն, ո՛հ սիրաբուն.
Ի տխուր սրտէ մնաց սաեղնի սաստկագոյն,
Սաստկագոյն ո՛հ սաստկագոյն:
Սիրաշաղկապ Թագ սէբէնիդ սիրապանծ,
Սիրապանծ ո՛հ սիրապանծ.
Կապեալ կազմեալ 'ի Ճակատիդ վեհապանծ,
Վեհապանծ ո՛հ վեհապանծ:
Ես սէր ու սիրտ աթափական սիրուհիդ,
Սիրուհիդ, ո՛հ սիրուհիդ.
Սարսափածին անուանական միուհիդ,
Միուհիդ ո՛հ միուհիդ:
Սաւառնեմ ես սարսափելի առ սէլլինդ,
Առ սէլլինդ ո՛հ առ սէլլինդ.
Զիս սեղանորդ առնել արի քեզ վեհիդ,
Քեզ վեհիդ, ո՛հ քեզ վեհիդ:

Սարգիս Փիլոյեանց:

223.

Գիւլլիզարի երգը

Սամավարն տարան յօտէն,
Նոր եմ գալիս եարիս մօտէն,
Ջեմ կշտացել անուշ հոտէն,
Ցնգլ մնգլ չայ կ'բերէ,
Ա՛յ Թուալէրոյ, Թուալէրոյ
Խուձուձ մուձուձ կանէկօ:

Կաքաւահանգի պալի տակին,
Ծածկուել էր ալի տակին,
Աչքս ընկաւ խալի տակին,
Ցնգլ մնգլ չայ կ'բերէ,
Ա՛յ Թուալէրոյ, Թուալէրոյ,
Խուձուձ մուձուձ կանէկօ:

Սամավարի կրանդը ոսկի,
Գիւլլիզարը կ'գայ խօսկի,
Մէկ պուռշուին հազար ոսկի,
Ցնգլ մնգլ չայ կ'բերէ,
Ա՛յ Թուալէրոյ, Թուալէրոյ
Խուձուձ մուձուձ կանէկօ:

Գիւլլիզարի չանեն կլոր,
Վարդ երեսըն է խիստ բոլոր,
Աչքը ունքը ոլոր մոլոր,
Ցնգլ մնգլ չայ կ'բերէ,
Ա՛յ Թուալէրոյ, Թուալէրոյ
Խուձուձ մուձուձ կանէկօ:

Սամավարը սազ է անում,
Գիւլլուզարն նազ է անում,
Պագ տուելու հազ է անում,
Ցնգլ մնգլ չայ կ'բերէ,
Ա՛յ Թուալէրոյ, Թուալէրոյ,
Խուձուձ մուձուձ կանէկօ:

Կարմրավորի Թաւի տակին,
Բաղամարգի ծառի տակին,
Կանաչ ու ալ շալ էր հագին,
Ցնգլ մնգլ չայ կ'բերէ,
Ա՛յ Թուալէրոյ Թուալէրոյ
Խուձուձ մուձուձ կանէկօ:

Գիւլլիզարը շատ կակուղ է,
Արմաւից քաղցր պտուղ է
Գեռ ձեռ չի տուած կ'դողէ,
Ցնգլ մնգլ չայ կ'բերէ,
Ա՛յ Թուալէրոյ, Թուալէրոյ
Խուձուձ մուձուձ կանէկօ:

Աշտարակեցի Խաչիկ:

224.

Պարերգութիւն

Սիրուն աղջիկ, եկ իմ հետ,
Երկու շրջան անենք մենք,
Մէկմը առաջ մէկմն ալ ետ,
Հայու նման թո՛ղ պարենք.
Մէկմը առաջ
Մէկմըն ալ ետ,
Հայու նման թո՛ղ պարենք:

Թո՛ղ սեղմեմ մէկմը կուրծքիս
Շունչ առնէ սիրտս, անուշիկ,
Շուտ, շուտ դարձի՛ր չ'տեսնաս,
Մեզ նկատող աչքեր կան.
Մէկմը առաջ
Մէկմը ալ ետ,
Հայու նման թո՛ղ պարենք:

Դարձի՛ր, դարձի՛ր հոգներ մի,
Շարժէ՛ շուտով, պարուհի,
Թո՛ղ նախանձին մեր վրայ,
Նախանձ սրտերն, եթէ կայ,
Մէկմը առաջ
Մէկմըն ալ ետ,
Հայու նման թո՛ղ պարենք,

Ո՛հ, մէկմը թո՛ղ ինձ, հայկուհի
Շրթունքներդ նայելի,
Համբուրեմ մէկմը, մէկմը միայն,
Ո՛հ, ինչ անուշ, աննման.
Մէկմը առաջ
Մէկմըն ալ ետ,
Հայու նման թո՛ղ պարենք:

Ալ յոգնեցար, փափուկ կոյս,
Ե՛կ պարելէն տանք մենք կոյս,
Շնչենք քիչ մը օդ ազատ,
Խմենք գինի անարատ.
Մէկմը առաջ
Մէկմըն ալ ետ,
Հայու նման թո՛ղ պարենք:

Ա. Հայկունի:

225.

Ո՛ղջ լեր Սոխակ Հայաստանի

«Այգանայ անա» երգի եղանակով:

Սոխա՛կ, ա՛յ Սոխա՛կ, Հայաստան երկրի
Դու ուրախ երգիչ տխուր սրտերի,
Բաց արա՛ նախշուն թեւերդ հազար,
Թռի՛ր սար ու ձոր, հովիտ ու անտառ:

Անուշ գեղգեղէ անթիւ եղանակ,
Թո՛ղ լսէ ձայնդ ամեն Հայ զաւակ,
Մառախլով պատած իրանց սեւ սրտեր,
Թո՛ղ ոգի առնուն, սթափուին աչեր:

Բամբ Սոխակաց քո հատորներիդ,
գործն է միշտ ձայնել Հայկ նահապետիդ,
Արմենակ, Արամ, Վահէ, Տիգրանին,
Արշակ, Վաղարշակ, Վարդան, Վահանին:

Գիշեր և ցերեկ մնած են անքուն,
Հայի զաւակներն տխուր թափառուն,
Թո՛ղ ողբան ու լան անգին կորստեան,
Չիք նոցա այլ ևս համազգի իշխան:

Ինքնակալ Ռուսաց Ալէքսանդր Երկրորդ,
Չէր մեզ բնաւին խապառ աւելորդ
Աստուածն Հայոց այնքան մեզ խղճաց,
Որ մեզ տէր կարգեց կայսրն Ռուսաց:

Սոխա՛կ, դէ՛հ թռի՛ր Հայի երկիրներ,
Հաղորդի՛ր նոցա մեր զգացմունքներ,
Եւ սոցա հետ էլ պատմի՛ր դու նորանց
Ցոյս, ուրախութիւնքս կայսրով Ռուսաց:

Սարգիս փիլոյեանց:

226.

Նուէր առ Սօխակ Հայաստանի

Սօխա՛կ, Սօխակ ես վարդը ո՞ւր է,
Մարդ որսող ես կարթդ ո՞ւր է,
Գիտեմ Հայաստանը կարթ ես շինել,
Հայ զաւակաց վարդ ես շինել.
Երանի՜ քեզ ա՛յ Սօխակ,
Որ Հայաստանի ես խօսնակ:

Դու Սօխակ ես՝ բուրաստան ունեցար,
Բուրաստանդ Հայաստան ունեցար,
Հայաստանն է ոսկէ վանդակ,
Միջի թռչունն քեզ պէս Սօխակ.
Երանի՜ քեզ ա՛յ Սօխակ,
Որ Հայաստանի ես խօսնակ:

Ամէն օր Հայի զաւակաց սիրով
Երգէ՛, կականչէ՛ գողտրիկ ձայներով,
Հայաստանը քեզ բուրաստան բա՛ւ է,
Ուրիշ դրախտից քո մենաստանն լաւ է.
Երանի՜ քեզ ա՛յ Սօխակ,
Որ Հայաստանի ես խօսնակ:

Սարգիս Փիլոյեանց:

227.

Սէր

«Եր հեռանաս» երգի եղանակաւ.

Սիրանուշդ սրտով սիրած սիրելի,
Ես քո սիրով հաշւեալ մաշիմ, նայելի
Իմ սէր քեզ մօտ աւանդ մնաց սիրական,
Սիրոյդ համար կ'տոչորիմ անպայման:

Մորմոքելով խնդրումեմ ես քեզանից,
Անոյշ սէրդ մի՛ կորի՛ր դու ինձանից,
Շատ գեղեցիկ աննման ես, սի՛րուհի,
Օրիորդաց խմբին մէջ դու միուհի:

Ես մի մանուկ սիրոյդ համար մաշուեցայ,
Մտածելով խաբուած սիրոյդ զոհվեցայ,
Երանի՛ թէ յառաջօրէն լինէիր
Իմացած դու ինձանից հեռու չերթայիր:

Հանգուցեալ Եփրեմ Մհերեանց:

228.

„Նամա՛կ իմ բարեւ տա՛ր *)“ երգի հանդէպը

Սօխա՛կ, իմ պատգամն տա՛ր Հայաստանին,
Թէ աւերելո՛վ, սպանելո՛վ, գնալո՛վ,
Ասա՛ ուշք դարձնի նա իմ նամակին,
Ձեռն առնելո՛վ, համբուրելո՛վ, բանալո՛վ:

Սօխա՛կ, նրան պատմի՛ր իմ խեղճ վիճակը,
Ասա՛ որ փախուել է լոյս արեգակը,
Թո՛ղ վե՛ր առնի ձեռքը Հայկեան դիակը,
Հառաչելո՛վ, արտասուելո՛վ, թանալո՛վ:

Սօխա՛կ, իմ ցաւերս արդեօ՛ք կարո՞ղ ես,
Ինչպէս քեզ ասումեմ մի առ մի պատմես,
Ասես, ո՛վ դու թշուառ, մինչեւ ե՞րբ ննջես,
Մութը բանդում լուռ մնալո՛վ, քնելո՛վ:

Սօխա՛կ, նորան ասա՛, թո՛ղ ուրախանայ,
Իւր սեւ քուրձ հագուստը վրայէն հանայ,
Աստուած ողորմած է, մէկ դուռ կ'բանայ,
Մութը բանդից դուրս կանչելո՛վ, հանելո՛վ:

---

*) Տես «Սօխակի» I հատորում 198 երգը.

Սոխա՛կ, ես խաչիկն եմ Աշտարակեցի,
Թշուառ վիճակի մէջ կեանքս մաշեցի,
«Հայաստան» կանչելով լերդս խաշեցի,
Ա՛խ քաշելո՛վ, սիրտ մաշելո՛վ, Ցաւո՛վ:

Աշտարակեցի խաչիկ:

229.

Երազ

«Սոխակի» երգերն երկար կարդալով,
Ո՛չ քուն էի, ո՛չ արթուն, անցեալ գիշերին՝
Տեսի Զարկեարին:

Մօտացաւ ողջունեց, ձեռքիցս բռնեց,
Նստացրեց յանդիման Սահակ արդարին,
Սրբերի շարին:

Աշխարհի իր քաշած դառը վիճակը,
Որ պատմեց ջանս ընկաւ վառման կրակը,
Սա ինքն էր Աբրահամ ձեռքին դանակը,
Զենելու կ'շտապէր անառակ չարին.
Սիրող աշխարհին:

Վրայէն փայլումէր կենսատու զարդը,
Զորս կողմը փռուած էր հոտաւէտ վարդը,
Ասացի երանի՛ է քեզ պէս մարդին,
Որ եղև արժանի երկնից խորանին.
Սուրբ հարսնարանին:

Ինձ պատմեց Մայիսի այն սուրբ շնորհքը,
Թէ ինչպէս պահպանեց Հայոց կրօնքը,
Սուրբ սրտով զննեց Աստուծոյ խորքը,
Վերջումն հասցրաւ ինձպէս տկարին,
Այս սուրբ եթերին:

Թէպէտ և ինձ դրին անզարդ հողի տակ,
Բայց գործքով ու խօսքով ունիմ յիշատակ,
Թո՛ղ կարդան մարդիկը իմ թողած կտակ,
Սլանան մոքերը յաւիտեան վերին,
Կայեան սրբերին:

Այս խօսքին զարթնեցայ, բայց իմ տեսածս,
Ցուեցի երազ էր ամէն լսածս,
Զարմացայ բոլորին անհամբեր լացս,
Կարծեցին գժուել եմ, գիր անել բերին,
Թուղթ տէրտէրին:

Աշտարակեցի խաչիկ:

230.

Պանդխտի հառաչանքը դէպի Սոխակ Հայաստանին

«Ո՞նց գաս իմ Լուսնակ, հեզիկ ու հանդարտ» երգի եղանակով.

Սոխա՛կ, իմ Սոխակ, քաղցրախօս թռչնակ,
Պանդուխտ Հայկազնից մխիթար միայնակ,
Թռի՛ր ու պատմի՛ր իմ ծնողներին,
Որ այս ցաւ, կսկիծ մաշեն գլխովին:

Սոխա՛կ, ասի՛ր որ՝ ցաւիս օգնական,
Չրկայ ոչ բժիշկ և ո՛չ բարեկամ,
Նոր էի հասնում օրերին գարնան,
Թառամեցայ ես՝ պէս վարդ Մայիսեան:

Սոխա՛կ, ասի՛ր որ՝ ձեզ մօտ բերելով,
Ցանկանումեմ ձեզ կրին տեսնելու,
Որ և իմ վերջին բարև տալով,
Մտնեմ գերեզման այնտեղ ննջելու:

Սոխա՛կ, ես այստեղ պանդո՛ւխտ եմ, պանդո՛ւխտ,
Ընդուր յայտնեցի քեզ սրտիս խորհուրդ,

Դէ՛հ սիրուն Սոխակ իմ Հայաստանի,
Թռի՛ր, ո՛հ, թռի՛ր՝ դու նոցա պատմի:

Մկրտիչ Ամիրջանեանց, Սիւնեցի:

231.

Սոխակ Հայաստանի

Սոխակն զարթնել է մերկ բուրաստանում,
Երգում է, թռչկոտում, էլ չի դադարում,
„Վա՛րդ վա՛րդ" է կանչում միշտ և անդադար,
Թէ երբ կ՚ստանայ նորանից մէկ խաբար:

Վարդն սև սուգումն է, խոնչէն չի բացվում,
Արմատն չորցել է, ջուր չի գտնվում,
Ա՜խ, ե՞րբ կըլի որ՝ աղբիւրն բացվի,
Եւ այն խեղճ վարդի արմատն թացվի:

Թո՛ղ Սոխակն երգի վարդն էլ բացվի,
Գուցէ մեր վէրքերին մէկ ճար գտնվի,
Թո՛ղ երգեն անդադար Ազգի երգիչներն,
Որ մանի սրտներս էս անզին սէրն:

Այս սերմն սերմանողին Աստուած միշտ կեանք տայ
Որ ամեն „Սոխակում" մեզ նոր խնդանք տայ,
Երգենք էլ աւելի՝ երգ Հայոց ազգին,
Եւ սրանց տանք տալու Ս. Գրիգորեանցին:

Խեղճիկ Միսկին եմ շատ ունեմ արդու,
Գիշեր ու ցերեկ քնից թամարդու,
Շատ դիւդիւն կայ սրտիս՝ չկայ մէկ բանող,
Ափսո՛ս, որ կըմեռնեմ չի լինիլ հանող:

Միսկին:

Վ.

232.

Մարդկանց վարքն փոխվելայ,
Ճշմարիտն ծախվելայ:

Վրդովմունք ունի աշխարհին, ամպե՛ր դուք ե՞ր էք որոտում,
Ձեր կայծակն է կպչում չարին, որոնք ճշմարտին են նետում:
Նախնիք չէին ըստ ագահի, փող կուտային առանց շահի,
Այժմեանքըն ՚ի ձեռն թամահի, մուրհակաւ փողեր են ուտում:
Ձեն հաւատում դատաստանքն, որ զղջան իրանց չար բանքն,
Կորաւ ճշմարիտ դիւանքն, սուտն սուտով են կարկատում,
Վախում են քոյրըն եղբօրից, որ երկուսն էլ են մին հօրից,
Շատ ենք տեսնում մուրքաւորից, բնական օրէնքն են ատում:
Զարկեա՛ր, Մայիփիցն էլ վախէ, չ՚լինի մի օր նա քեզ ծախէ,
Ջրախօս մի՛ լեր նահախ է, ո՞ւմ ձեռից ո՞ւմ ես գանգատում:

Աբրահամ Մարտիրոսեան:

233.

Վարդ կարմիր թշիկ սպիտակ խալը
Նարաբ կ՚թողնե՞ս, որ մէկ պա՛գ անեմ,
Եդ մառմառ դօշիդ ասղունեայ ծալը,
Փափուկ մատներովս թողնե՞ս բաց անեմ:

Փակուած սնեակիդ դուռը թո՛ղ բացուի,
Մեր մէջ հարադատ սէրը տարածուի,
Կորչի, փչանայ, չարը հալածուի
Դիմացդ հանդէպ նստ ու կաց անեմ:

Ե՛կ դու ինձ լսի՛ր, ազնիւ հոգեաս,
Իմ այս խնդրանաց չքնեիս պատճառ,

Գնանք այն տեղը, ուր կայ նռան ծառ.
Սրտիս խորհուրդը քեզ մօտ բաց անեմ:

Է՜հ, զուր եմ խօսում, գիտեմ չես լսել
Էնքան տասցի սիրտս էլաւ հասել,
Փճնեցիր ծառս, չի թողիր մասել,
Մնաց, որ նստեմ ողբամ, լաց լինեմ:

Աշտարակեցի Խաչիկ:

Տ,

234,

Ուսուցիչ Փլիպպոս Փիլոյեանցի մահուան առթիւ.

«Հեռացել եմ իմ մայրենի» երգի եղանակով:

Տալով մեզի հրաժարական քո բարև,
Ջատուեցիր ա՛խ անդարձ ճամփով արդարև,
Քաղցր ուսումդ քեզ հետ տարար ա՛խ անդարձ,
Անտէր թողլով աշակերտացդ անկասկած:

Մենք առանց քեզ ի՞նչպէս մնամք դեգերուած,
Ինչո՞ւ այդպէս անխօս անշունչ կաս պարկած,
Էդպէ՞ս պէտք է քեզ տեսնէինք անզգայ,
Ո՞ւր է արդեօ՛ք աշխատութիւնդ անխնայ:

Ո՞ւր քո դիմաց գեղեցկութիւնդ նաստեղծ,
Ո՞ւր անուշիկ բարբառդ ախորժ և անկեղծ,
Անուշ լեզուովդ մեզ կանչէիր մեր անուն,
Կրթէիր մեզ աշակերտացս սիրասուն:

Արդ հեռացար մեզ հետդ տար մե՛զ սիրելս.
Էլ այսուհետև ո՞ւր մնամք մեք սրտակեզ,

Լա՛ւ է մեզի մեռնել քեզ հետ արդարև,
Քան թէ մնալ ողբալ 'ի սուգս անճարև:

Այսուհետև պէտք է մնամք երերուն,
Էլ ով պէտք է կանչէ սիրով մեր անուն,
Ո՞ւմը դիմեմք էլ այսուհետ ու՞մ գիրկը,
Ո՞ւմ աղաչենք, որ լցնի մեր խնդիրքը:

Հրաժարական վերջին համբոյրդ սիրալի,
Որ մեզ տուիր մեզ գգուելով փարելի,
Քանի յիշեմք ո՞ւմ սիրտը ա՛խ կ'դադարի,
Ո՞ր անգութի աղեքը չի գալարի:

Ա՛խ բա՛ց արա՛ քոյդ աչերը սևորակ,
Տե՛ս որ մնաց առանց բունել մեր հաւակ,
Մէկ բաց արա՛ քոյդ այն լեզուն անուշիկ,
կանչի՛ր, տաս՛, եկէ՛ք ինձ հետ, իմ որդիք:

Սարգիս Փիլոյեանց:

235.

«Ա՛խ Գլազինկա» երգի եղանակով:

Տո՛ւր ինձ թևեր քո մօտ թռչեմ,
Որ վզովդ ես փաթաթուեմ,
Քնքոյշ կուրծքիդ վերան ընկնեմ,
Գարնան սոխակի պէս երգեմ.
Ա՛խ նազելի՛ս, նազելի՛ս
Մօ՛տս արի, նազելի՛ս:

Ի՞նչ տեսիր ինձնից հեռացիր,
Ինձ այսպէս այրելով թողիր,
Մի՞թէ չես խնայում նազելիս,
Մօտս արի՛, ինձ մի՛ տանջիր.
Ա՛խ նազելի՛ս, նազելի՛ս,
Մօտս արի՛, նազելի՛ս:

Մէ ունքերիդ լինեմ մատաղ,
Որ տեսնելիս քաշւեմ ա՛խ…
Ա՛խ իմ հոգիս, դու իմ հրեշտակ,
Բա՛ւ է տանջես, մօ՛տս արի.
Ա՛խ նազելի՛ս, նազելի՛ս,
Մօտս արի, նազելիս:

Ստեփան Պետրօկոկինօ:

236.

Դիվանի

Տէ՛ր, թէ ստեղծողս դու ես, մի՛ տար մարդոյ ձեռ ինձի,
Թէ սնուցանողս դու ես, մի՛ տար մարդոյ ձեռ ինձի,
Մարդը վարձաւէր հովիւ է, չէ՛ ցաւիլ տիրոջ նման,
Կորչիմ գտանողս դու ես, մի՛ տար մարդոյ ձեռ ինձի:

Դու տացիր հովիւ քաջ, ես եմ ոչխար արածող,
Ո՛չ գազան կարէ մերձենալ, ո՛չ թէ գայլ յափշտակող,
Գայլէն վնաս չեմ կրում, մարդիկ են սաստիկ տանջող,
Թէ կեցուցանողս դու ես, մի՛ տար մարդոյ ձեռ ինձի:

Քանի տարի է կխամահ եմ, ընկած մարդկանց նեռի քով,
Ինչպէս մարդն, որ գնումէր Սաղեմից Երիքով,
Ում այնին է, որ մեռանեմ թէ մարմնով կամ թէ հոգւով,
Իսկ յարուցանողս դու ես, մի՛ տար մարդոյ ձեռ ինձի:

Թէ մարդկօրէն մեղանչել եմ, խնդրումեմ քեզնէն յուսով,
Ինչ արել եմ վիզովս, թո՛ղ քաշեմ տանեմ ուսովս,
Թէ տաս ինձ մարդոյ դատաստան՝ կ՚սպանեն ծարաւ ու սով,
Դու դատի՛ր, դատողս դու ես, մի՛ տար մարդոյ ձեռ ինձի:

Էն ժամանակ ճանանչեցի մարդկութիւնն ընկերաց,
Երբ անյաջող ընկած էի անբախտութեամբ աւերած,

Մին օր չ'տան, է՛յ Կոյր Աշըղ, եարաբ սա՞ղ ես, թէ մեռած,
Զուն որ հարցանողս դու ես, մի՛ տար մարդոյ ձեռ ինձի:

Կոյր-Աշըղ:

237.

Իղձ սրտիս

Տո՛ւք ինձ ձերմակ ճախրասըլաց,
Օդապարիկ երիվար,
Տո՛ւք, զի սլացեալ թուեայց 'ի բաց,
Ի չքնաղիկն իմ աշխարհ:

Այո՛ սլացայց յիմ Հայաստան,
Ցերկիր յաւերժ ծաղկազարդ.
Ուր խոխոջան անմահութեան
Գետք Եդեմայ ալեզարդ:

Ուր բարձրանայ խըրոխտ 'ի վեր,
Արարատն իմ որորան,
Ուր հոտ բուրէ խընկանուէր,
Հօս զուարթարար հայութեան:

Ուր երբեմն պայծառացեալ,
Քաջ բանաստեղծք Թորգոմեան
Քնարօք իւրեանց ոսկեզարեալ,
Գեղգեղէին սրբարան:

Ո՛հ, ածէք ինձ զինն սիգաքայլ,
Սիրտ իմ մաշեալ նուաղի,
Քանի՛ ամք են, զի չեմ տեսեալ
Ըզհայրենիս ցանկալի:

Հայաստան իմ, սուրբ Հայաստան,
Հոգւոյս պայծառ յիշատակ,
Ե՞ր թողեր զիս 'ի բացական,
Վայրս զառնաշունչ, դժնդակ:

Մաշիմ մաշիմ ես ատամնօր,
Ընդ ատեղօք հիւսխի,
Հալիմ... աւա՛ղ ես չքաւոր......
Ո՛հ, Հայրենիք քաղցրալի։

Ս. Շահազիզեանց։

238.

Տգէտ բամբասողները անծանօթ լուրի կ՚սպասեն,
կամ Ֆարմասոն և կամ Լոթրան պատրաստ է քեզ ասեն,
Այնպիսի ողջ մարդիկը խելքերից պակաս են,
Իրանց փորը անօթի, ուրիշի կալը կըկասեն։

Պարապ և անաշխատանք անուսում ցանցառները
Մտքերով չափումեն...... անտառները,
Իբր գազան կըծախեն խեղճ անուշիկ գառները,
Իրանց դատողութեամբ նորանց շարքը կըդասեն։

Ճշմարիտ խօսողները նրանց գերի են դառել,
Ազգութիւնից հեռացած կարծես վերի են դառել,
Կրօնից գայթակղուած յուսով թերի են դառել,
Այսպիսի վատ մարդիկը մեր ազգին շատ վնաս են

Կռիւ տեսնեն կըցնծան, մատներն իրար կըքսեն,
Ուզումեն այնտեղից էլ մի քանի լուրեր լսեն,
Ուրիշներին որկրամոլ հաւատից դառած կ՚ասեն,
Ողջ մարդկանց միսը կուտեն, գիտեն թէ մաքուր պաս են։

Ջի՛ւան, առաջ չը խաղաս՝ քար կըխփեն քո թևին,
Նրանք այնպէս մէկ մարդ են, խաւար կ՚ասեն արևին,
Արդարութիւնը ի՞նչ է, չեն գիտեր ամենևին,
Բարութեան միշտ հակառակ՝ չարութեան մակարդ մաս են։

Ջիւան։

239.

Քնար իմ

Տղայ եմ ես Հայու սէր,   Թէ դողդողայ ոտքիս ուժ,
Թո՛ղ չ՚գտնեմ ինձի տէր,   Գիտեն ձգել իս Անուշ,
Աչքերս յերկինք վեր ուղղած,   Թ՛ող չ՚գտնեմ մէկում աջ,
Միշտ կ՚աղօթեմ առ Աստուած։   Իս կ՚հասնի փրկչիս խաչ։

Թո՛ղ շատ մարդիկ գիս ատեն,   Ճակատագիր բաղդին հետ,
Ուրախ եմ ես այն ատեն,   Թո՛ղ տապալին իս անհետ,
Թ՛ող մահ անգամ սպառնան,   Կ՚հետեւիմ ես սիրով,
Եթէ կ՚ուզեն գիս բառնան։   Տիրոջ ձայնին անսալով։

Հայր մի ունիմ ես յերկին,   Թո՛ղ փասաներ դաւեն դաւ,
Որ պիտ՚ սիրէ իս կրկին,   Խաղաղ է միշտ սրտիս նաւ,
Կեանք է նա միշտ աշխարհի,   Թո՛ղ խրոխտայ դու խուժան,
Եւ կ՚անի ինձ նա բարի։   Թէ դեռ չնչէ Մեհրուժան։

Թող չ՚ունենամ ինձ ծանօթ,   Ես կ՚սիրեմ Հայաստան,
Իս համարեն կեղտ անօթ,   Մինչև մանեմ գերեզման,
Քանի մնամ կենդանի,   Կեանքս է միայն Հայրենիք,
Սիրտս համբեր կ՚տանի։   Որ կ՚հեծէ յամարնիք։

Թէ կարկուտներ իմ գլխուս,   Հայում տղայ Հայ մ՚եմ ես,
Գիտնամ թափեն մինչ՚ի լոյս...   Ջո՛ւզեմ Ներոս ու Գանդէս,
Խաղաղ սրտով իմ ուղի,   Թո՛ղ միշտ Եփրատ իւր ջրով,
Ես կ՚գնամ ՚ի լուղի։   Ցօղէ սրտիկս ՚ի գորով։

Թէ ալիքներ լերան պէս,   Նժդեհ, անտէր, անխնամ,
Իս պաշարեն չորս դիէն,   Թէ միշտ մոլոր ես գնամ,
Ես անխռով նոյն հետ,   Հայոց լուսնակն ու արև,
Կ՚երթամ մինչ իմ յետին կէտ։   Ցուէ՛ք ինձի ձեր բարև։

Քնարս անոյշ իմ ընկեր,
Մեզ կ՚պահէ միայն Տէր
Հնչէ՛ տխուր ՚ի գեղգեղ
Թէ Հայրենեաց սիրես գեղ:

Մուշեղ Մուշեղեանց:

240.

Մուխամմազ և բանք Տէրունական:

Տէր մի տար դատաստան ինձ, ամա՜ն մին ճար ինձ
Որ չունեմ պատասխան ինձ, ամա՜ն մին ճար ինձ:

Մտի սարսանիս տէրունական, չունեմ պատմուճան ինձ,
Արարին վճիռ ծեռս ու ոտքս կապելոյ արժան ինձ,
Քանքարաթաղոյն ծառայի նման արան անպիտան ինձ,
Չունեմ գործք բարի կամ թէ բարութեան վաստակ եւ ջան ինձ
Մնացի լալով կրճել ատամաց խաւարն արտաքսան ինձ:

Ոչխարի նման ընկել եմ չօլեր, որ ես մոլորեցայ,
Անառակի պէս ՚ի հայրենեաց իսպառ բաժանեցայ,
Ընկայ ՚ի ծեռս աւազակաց մարմնով խոցոտեցայ,
Էն քահանային կամ Ղեւտացւոյն դիտես պատահեցայ,
Ով Սամարացի Տէր իմ Յիսուս, դու ես օգնական ինձ:

Ես ՚ի պարտիզի Տէրունական մին անպտուղ ծառ եմ,
Նման յիմարաց ես իւղ չունեմ, լապտերս ինչով վառեմ,
Արտաքսուել եմ տնտեսի նման, մին խեղճ ու անճար եմ,
Պարտատէրն իմ եզ գիս ՚ի բանդի, որ պարտս վճարեմ,
Երկայնամիտ լեր, ով տէր իմ Յիսուս, եկ այս բանդից հան ինձ:

Տիպ եմ տէրունական ես, նման կորուսեալ դրամոյն կընկայ,
Սերմանացանի սերմի նման ՚ի մէջ փշոց ընկայ,
Հեղձուցի հոգիս անցաւորի դարդու ֆիքրին ընկայ,
Ինել եմ ծառայ էս մամոնային, չ՚իմացայ թէ ժանգ ա,
Զոն էղ պատճառի կապեն խուրձն ՚ի բոց հրոյն տան ինձ:

Ի մէջ չարութեան մտել եմ ՚ի քուն նման դռնապանի,
Ի մէջ գիշերին կամ հաւախօսին հոգիս պիտի տանի,

Արբուցանել ջուր կամ կերակրելն յինէն կըհարցանի,
Կ՚կապուի կ՚պապանձուի լեզուն խեղճիկ Իվանի,
Գիտեմ որ լսելու եմ «երթայք յինէն» դառն պատասխան ինձ:

241.

Տրտմեցայ ես այսօր իմ սէր չ՚եկաւ,
Սրտով սիրած հոգւոյ աղբէրս չ՚եկաւ,
Խնամարկող պաշտպան և տէրս չ՚եկաւ,
Խորհրդաւոր սիրոյ մթերս չ՚եկաւ,
Ուրախաւիթ կենաց ընկերս չ՚կաւ:

Աչքերս սկսել են մէկը ծիծաղ մէկը լալ,
Հոգիս լի է տրտմութեամբ, միտքս յինէն արտալած,
Դանակ տաս, արիւն չի գալ, երակներս ցամաքած,
Մահս եկել է մօտացել, սիրտս է սեւագգաց,
Ծառս ՚ի ծաղիկ չորացոյց, ո՞հ սիրականս չ՚եկաւ:

Ա՜խ, մահ, արի՛ միջո՛ց տուր, թո՛ղ լրիւ ասեմ բանս,
Մի՛ աւանդիլ իմ հոգիս, մինչ հասանի սիրականս,
Նրանից ես առանամ և նրան տամ իմ նշանս,
Մէկ մէկու սիրով գրկած, էսպէս գրաւեմ կեանս,
Յաւն ինձ յաղթահարեց, բաղմնցաւ վէրս՝ չ՚եկաւ:

Մա՛հ, ինձ մի՛ նեղացնիլ, մի փոքր եկ համբերի՛,
Թշնամիս չի պատահի անողորմ սիրահարի,
Մո՛վսէս, ուշք վերայ բե՛ր որպէս ախոյեան արի,
Միշտ հանապազ առատ լե՛ր, մի՛ ծնալ սիրով թերի,
Էս մի անցաւոր բան է, սրանով մխիթարուի,
Քեզ պէսն քեզ պատահի՝ ասեմ համբերս չ՚եկաւ:

Մովսէս Գրիգորեանց:

Ց ց

242

Հրաւէր Ազգութեան

Ցանկալի է ինձ, ազգասէր հերոսք,
Ձեր քաղցր անունին ուղերձել նուէր,
Ես ձեզ հետ կամիմ խօսել երկու խօսք,
Ձեզ հաճոյ լինի իմ տկար հրաւէր:

Մեր աչքը ձգենք դէպի Հայրենիք,
Նորա վիճակը մտածենք հանդարտ,
Ո՞րտեղ է նորա փառք, երկիր բնիկ,
Ո՞ւր է երբեմն և կամ ո՞ւր է արդ:

Ասես թէ իբրև մի երկրորդ Ադամ,
Աքսորած, ձգած փափկութեան դրախտից,
Նստած միայնակ, տխուր և տրտում,
Գանգատում է նա իւր ծախող բաղդից:

Եւ ո՞վ կ՚լինի նրան օգնական,
Նորա նորոգման միջնորդ մի ազդու,
Դո՛ւք հայրենասէր, հերոսք պատուական,
Ձեզ պարտ է լինել նրան ձեռնտու:

Իբրև հայրենեաց վեհանձի պաշտպան,
Հոգացէ՛ք Հայոց մի վիճակ պայծառ,
Նրանի՛ է ձեզ թէ դուք միաբան,
Կանգնէք ազգութեան հաստատուն տաճար:

Նոյա շինուածքի նիւթը հոգեղէն,
Բարձէ՛ք, կրեցէք ձեր հոգու լծակով,
Կախեցէ՛ք այն տեղ ոսկեղէն կանթեղ,
Վառեցէ՛ք նորան գիտութեան լուսով:

Իբրև ջանասէր ժրագլուխ եղներ,
Լծուած ազգային վաստակի դութան.
Փոխեցէ՛ք յառաջ ձեր մաքի քայլեր,
Գործելու անխոնջ Հայոց անդաստան:

Քա՛ջ մշակեցէք ազգին Հայազգի,
Ջուր տալով նորան ձեր քրտինք ու սէր,
Որ զուարթ դալար տունկերը Հայկի
Բողբոջին, ծաղկին, լինին պտղաբեր:

Ջանացի՛ր եղէք Հայկական անուն
Շինել աշխարհում սուրբ և պատուական,
Ջնջել ու մաքրել այն կեղտոտ անուն,
Այն տգեղ կնիք չար ազխտութեան:

Սփոփեցէ՛ք սիրով մեր մայր Հայաստան,
Սրբելով նորա արիւնոտ աչեր,
Որ նստած մենակ ողբում է անձայն,
Պարզած դէպի ձեզ դողդոջուն ձեռներ:

Հաւատա՛ կացէք ձեր փոյթ և վաստակ
Երկնքից կ՚առնուն իւրեանց առատ վարձ,
Աստուած ձեզ կ՚տայ պարծանքի նոր թագ,
Որով կ՚լինդաք յաւէտ պարծ ՚ի պարծ:

Հայոց հարազատ մտերիմ որդիք
Կ՚օրհնեն ձեր անուն միշտ լիաբերան,
Ձեր սուրբ անմոռաց գործ ու երախտիք,
Դրոշմելով սրտի տախտակի վերան:

Բայց և յաւէտ ձեր մահից յետոյ,
Ձեր հողի վերայ կանաչին ծաղկներ,
Ձեր միշտ պաշտելի նշխարքին յարգոյ,
Ծխելով անոյշ բանաւոր խունկեր:

Ամեն Հայ անցող ձեր շիրմի մօտից,
Խոկոյն յիշելով ձեր արդիւնք ու երգք,

Կ'բացականչէ իւր սրտի խորքից,
«Ձեզ խաղաղութիւն, կենդանի ոսկերք»:

Ա. Գ. Նազարեանց:

243.

«Ցնորկու ծառին» երգի եղանակով:

Ցնծա սիրուն Հայրենիք, նոր արշալոյս գիտութեամբ, (2)
Ծագեց լուսոյ նոր արփի, երջանիկ յոյս զարգացման, (2)
Տգիտութեան մութ խաւար, կրփարատի մեր մտաց, (2)
Ցօժարակամ միաբան, սիրող լինենք մեր ուսմանց: (2)
Մանկտի ազնիւ Հայկական, բաղդրանուագ երգեցէք, (2)
Նախնի երգեր զողթնական արդեամբք դուք նորոգեցէք, (2)
Ի հարսանիս դիւցազանին, մեր Արտաշէս արքային, (2)
Եւ Սաթինիկ Թագուհւոյն, սխրալի երգս երգէին: (2)
Այս մեր հանդէս զուարճալի, թող նմանի մեր նախնեաց, (2)
Երգենք պարենք սխրալի, 'ի փառս մերոց Հայրենեաց: (2)
Նորոգեցէք Հայկազանց, նախնի դարուց քնշատակ, (2)
Գողթան երգեր յօրինած, երգենք այսօր ներդաշնակ: (2)
Մեր սիրելեաց ողջունեան լցէք լիք լիք բաժակներ, (2)
«Կեցցէ՛» ասենք միաբան, անոյշ արէք եղբայրներ: (2)

Մեսրովբ քահանայ փափազեանց:

Բ.

244.

Առ Հայաստան

«Հայրենիք սրբազան» երգի եղանակով:

Քաղցր է մեզ համար Հայաստան աշխարհ,
Քո վեհապանծ անունդ երգել անդադար:

Քեզ՜ մեր մատաղ սրտեր և մեր բոլոր կեանք,
Զոհել, մայր Հայաստան, քաղցր է մեզ համար:
Թո'ղ մեծ մեծ փառքերով պարծի ազգ օտար,
Քեզնով միայն պարծիլ՝ քաղցր է մեզ համար:
Քան ամեն բարութիւն օտար աշխարհաց,
Քո օրհնեալ հող ու ջուր քաղցր է մեզ համար:
Ազատ հոգւով շնչել քո օդ զովարար,
Քան ամեն վայելքներ քաղցր է մեզ համար:
Փառաւոր պալատներ և մեծ մեծ տներ,
Թո'ղ օտար ազգերի գրաւեն սրտեր:
Քո պարզ և աղքատիկ խրճիթներու մէջ,
Ապրել և մեռանիլ քաղցր է մեզ համար:
Ոչ ոսկի, ո'չ արծաթ և ո'չ սուտ փառքեր,
Քո հարազատ որդւոց չեն կարող պատրել:
Ո'հ, թէ ազատն Աստուած լսելով մեր հայցուած,
Կ'տայ ազատութիւն քո խեղճ զաւակաց:
Դու կ'տեսնես յայնժամ թէ ինչպէս նոքա
Քո փառքիդ, անուանդ կ'լինին պաշտպան:
Այս է ահա՛ մեր ուխտ, այս խոստումն անսուտ,
Այս մեր կեանքի խորհուրդ ընտրած ենք անշուշտ:
Դու մեր փառք ու պսակ և միակ պարծանք,
Ո'վ մայր մեր սիրական, քաղցրիկ Հայաստան:

Սահակ վարդապետ Բաղդասարեանց:

245.

Երգ պանդուխտ Հայկազնւոյ

Քաջ Հայոց մանկունք, ազգասէր մանկունք,
Հայրն օգնեցէ՛ք սիրով, անտրտունջ,
Տեսէ՛ք որքան քաջ էին ձեր նախնիք,
Եւ դուք նմանեցէ՛ք նոցա անմահունչ:

Կ'գայ ժամանակ, որ մեր տէր փրկիչ,
Հատուցանէ մեզ փոխան մեր գործին,
Վասն որոյ մեք միշտ կանգնենք պաշտպանիչ,
Արտով և սիրով խղճոյկ Հայերին:

Չ'թողնենք մտնել ոտք անօրինին,
Մեր Հայրենիքի աւերակաց մէջ,
Դուրս մղենք նոցա Հայաստանէն,
Եւ ձգենք նոցա մեծ երկիւղի մէջ:

Որպէս զի Հային նոր կեանք ընծայենք,
Որ ուրախանայ նա միշտ մեզանով,
Վասն որոյ զէնքեր պատրաստի պահենք,
Որ երկչի Թուրքը կամ Պարսիկը մեզնից:

Միքայէլ Միրզոյեանց:

246.

Քաջդ Կոյս

Քա'ջդ կոյս, ըսէ' ինձ,
Ուսկէ՞ գաս, կերթաս ո՞ւր,
Հովիտներ Հայրենի,
Է՞ր շրջիս դու տխուր:

Ուր Հայեր, քաջ Հայեր,
Քաջերու զաւակներ,
Համբաւ տան աշխարհին,
„Թէ Հայեր չեն մեռեր“:

Ա՛հ, թէ ես քեզ ընկեր,
Գեղանի կոյսդ անբիծ,
Քո սիրոյ հեշտակայ,
Լինէի ննթակայ:

Թէ Հայկայ դիւցազին,
Արեամբը կըպարծին,
Նորա պէս անվեհեր,
Են իրանց բաց կուրծքեր:

Ըսէ' ինձ, դու կոյս չես,
Դու Հայու չես աղջիկ,
Զէյթուն չէ քո բնիկ,
Այն սիրուն գաւառիկ:

Ես Հայ եմ, չեմ օտար,
Չեմ ես Թուրք կամ Պարսիկ,
Հայրենեաց և քեզի,
Ես եմ միշտ սիրահար:

Ս. Հայկունի:

247.

Երգ 'ի վերայ հարսանեաց

Քրիստոս Տէրն մեր գնաց հարսանիք,
Շնորհք տուեց, օրհնեց հարսն ու փեսային,
Աստուածապէս ջուրն գինի փոխարկեց,
Իսկ սէր հրամայեց հարսն ու փեսային:

Պայծառացոյց հարսանիքն գերազանց,
Բոլորքն օրհնուած, էան լուսապանծ,
Տէ՛ր, են օրհնութիւնն խնդրեմ տո՛ւր սրանց,
Պսակն հաստատեց հարսն ու փեսային:

Մարդին՞ գլուխ շինաւ, կընկան օգնական,
Ծնանին մանկունք սիրով միաբան,
Մաքուր, անարատ մնան անբաժան,
Գիրք և օրէնք տուեց հարսն ու փեսային:

Արհամարեց Մովսիսական օրէնքին,
Եւ կընկան չի թողնեն պսակուեն կրկին,
Զուն որ սկիզբանէ մարդ էին և կին,
Անքակ միաւորեց հարսն ու փեսային:

Խմանը արաւ մարմնաւոր պսակին,
Անմահ պսակին էլ ունի ակն,
Տէր պահեսցէ սրանց զարմ ու զաւակն,
Որպէս որ զարդարեց հարսն ու փեսային:

248.

Հանելուկ

Քանդակիչ' բայց կեանք տուող, մի՞թէ դու անմահական ես,
Մտաց տակ չես ենթարկուում, գուցէ դու գերընական ես:

Արարած, բայց անմարմին, բնաւ չկայ քո նմանը,
Սպանես կամ թէ թողուս՝ քո ձեռին է դատաստանը,
Շատերին կեանք ես տալիս, շատին կոխում գերեզմանը,
Եթէ որ դու չի լինես, կրլթարշամի բուրաստանը,
Ձայնդ երկնուստ է գալիս, չեցէ՞ դու դրախտական ես։

Մարդիկն քեզնով են մարդ՝ քո հրամանին են հպատակ,
Մի քիչ որ սատկանում ես, էլ չես թողնում գլխին գտակ,
Տուտդ կարճ, եղերք չունես, պատմութիւնդ երկար կտակ,
գործքովդ ցո՛յց ես տալիս մէկ իշխանութեան նպատակ,
Ուր ես եմ և դու անդ ես, միթէ՞ դու կենդրոնական ես։

Ինչ կուզի շարժուն գութդ կեանքիս հետն ես միացնում,
Հնոցի մէջ խարակուած, վառված սիրտս ես հովացնում,
Ափսո՛ս որ դեռ նոր ծաղկած կեանքիս ծառն ես չորացնում,
Երկիրը տապալումես, դիփ աշխարհն ես դողացնում,
Հողի տակ ման ես գալիս, չէ՞ցէ դու անդնդական ես,

Աշտարակեցի Խաչիկ

Օ.

249.

Աղօթք երեկոյեան

Օ՛ն 'ի հանդէս օրհնութեան,
Ընդ զուարթնոց երգել 'ի պարս՝
Զարկնդ և քնար մեր գոհութեան
Հարցուք յաւէտ էին 'ի փառս։

Ցարփւոյն ՜բանալ վարդամատն,
Զերկնից դրունս լուսեղէն,
Մխեք մեր 'ի սիրտ քև տէր կաթին,
Նոր սէր, նոր երգ բեր գոհութեան։

Եւ արդ ընդ գալ գիշերոյն,
իմաստութիւն ո՛ անքննին,
Ո՛ մեծութիւն անձառ անհուն,
ընկա՛լ զնոյն ձօն մեր սրտին։

Զո՛ր բարութիւն, զո՛ր շնորհ,
ի մեզ հեղեր թաթաղուն,
Ո՛ր բարութիւն, ո՛ր արդ սէր նոր,
կան բաւ 'ի մէնջ ձօն քում սիրոյն։

Ս. Գիւլզատեանց։

250.

Օտարի բնական գխտութիւնիցը,
իմ հայ պապի տուած խրատը լաւ է,
փարիզի զարդարուած չորս անկիւնիցը,
Անւոյ քանդուած մէկ պատը լաւ է։

Ուրիշ տալիք չունեմ Թարց կեանքիս մահէն,
ինձ ի՞նչ կուտան օտարք իրանց մեծ շահէն,
ինձ համար փարիզի վեհ կայսեր գահէն,
Աշոտի քանդուած պալատը լաւ է։

Ի՞նչ հասկանամ անհոտ բուրաստանիցը,
Ո՞վ է գոհ անաշխատ այգեպանիցը,
Անօգուտ, անողորմ մեծ իշխանիցը,
Ազգասէր, ողորմած աղքատը լաւ է։

Զիւանս չեմ տղաս Հայ անունիցը,
Թէ ունիմ Արամայ քաջ արիւնիցը,
Օտար ազգի կողմնապահութիւնիցը,
Հայ եղբօրս տուած գանգատը լաւ է:

Զիւան:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

79 երեսի 8-րդ տողում փոխանակ «կարձաս ներբողիս» պէտք է կարդալ «կարձաս ներբողչիս»: 212 երեսի 15-րդ տողում մի քանի թերթի մէջ տպագրուած է «սիրոյ ուսերով» պէտք է կարդալ «սիրոյ սուսերով»: Իսկ եթէ լինին և այլ տպագրական սխալներ, սորա մասին թո՛ղ ներէ ընթերցողը իմ աչքերի տկար տեսութեանը:

Ա. Գրիգորեանց:

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ.

ԱՒԱԳ ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

ՏՊԱԳՐՈՒԱԾՔԸ

1.) ՀՆԴԿԱՑԻՈՑ ԱՆՑՔԸ 1872 Թ. - - - - - - - 40 կ.
2.) ՄԱՆԿԱԿԱՆ ԼԵԶՈՒ (այբբենարան) 1874 Թ.- 15 կ.
3.) ՍՈԽԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ (լիակատար երգարան հատոր I. 1874 Թ. - - - - - - - - - - - 1 ռ. „ „
4. ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ (վիմատիպ) Հայոց ծխական ուսումնարանների համար 1875 Թ. - 20 կ.
5.) ՍՈԽԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ հատոր II. 1875 Թ. 1 ռ. „ „

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է

„ՍՈԽԱԿԻ“ III Հ.

Յիշեալ գրքերը վաճառվում են Բագուայ Հայոց Մարդասիրական Ընկերութեան գրադարանում եւ պ. Գրիգոր Դիլդարեանցի Թէյի խանութում:

Օտարաքաղաքացի ցանկացողները կարող են դիմել 'ի Բագու, յայտնելով իրանց հասցէն, կամ յիշեալ տեղերը, կամ թէ «ՍՈԽԱԿԻ» հրատարակիչը այս հասցէով. Въ Баку. Аваку Лазаревичу Григорьеву, въ Армянскомъ Училищѣ.

ՍՈԽԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ.

Գրաշար Սահակ տէր-Յովհաննէսեանց:

„ՍՈՒՍԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ“

II Հատորի բաժանորդագրաց անուանական Ցուցակը:

Աստրախանից

	Հատ.
Ախվերդեանց Մկրտիչ - - - - - -	1
Абкаровъ Акимъ. Коллежскій Ассесоръ - - -	1
Բերոյեանց Եղիայ - - - - - - - -	2
Բարղամեանց Յակովբ - - - - -	1
Բալայեանց Յովհաննէս - - - - - -	1
Բէգլարեանց Յովհաննէս- - - - - - -	1
Գուլումեանց Համբարձում - - - - -	1
Գերասիմեանց Խաչատուր- - - - -	1
Գադաշեանց Խաչատուր - : - - -	1
Գաւթեանց Կարապետ - - - - -	1
Գողղեանց Յովհաննէս - - - -	2
Եարամիշեանց Թէոդորոս, Շուշեցի, - - - -	1
Զիալեանց Միխայէլ - - - - -	1
Ժամհարեանց Գերասիմ, Շուշեցի- - - - -	1
Իվազեանց Աստուածատուր - - - - -	1
Լալայեանց Սարգիս - - - - - -	1
Լալայեանց Իսահակ - - - - - -	1
Խաչատրեանց Մարտիրոս- - - - - -	1
Կուզնեցեանց Յովակիմ - - - -	2
Կիտայեանց Յովաննէս - - - - - -	1
Համազասպեանց Յովհաննէս - - - -	1
Մալաֆէյեանց Պետրոս - - - - - -	1
Մախմուրեանց Յակովբ, Շուշեցի - - - -	1
Յովսէփեանց Բողդան Գրիգորիչ - - - -	2
Յովհաննէսեանց Մարգարայ, Շուշեցի - - - -	1
Նազարեանց Ստեփան - - - - - -	1
Նազարեանց Թէոդոս- - - - - -	1
Շահվերդեանց Սողոմոն - - - - - -	1
Փապօվեանց Բաղդասար - - - - - -	1
Փապօվեանց Վարդան - - - - - -	1
Ջմուստեանց Մանասէ, Շուշեցի - - - -	1

Ջանումեանց Ստեփան	1
Սվենիկեանց Մատթէոս	1
Սօրօլեանց Սիմօն	1
Սայադեանց Մկրտիչ	1
Վարդանեանց Արիստակէս, Թաւրիզեցի	1
Տէր Յարգսեանց Մելքոն,	1
Տէր Սարգսեանց Գաբրիէլ	1
Քալաշեանց Յովակիմ	1

Ախալքալաքից

Առվանեանց Յովհաննէս	1
Աղապապեանց Պ. Գ.,	1
Խաչիկեանց Մարտիրոս	1
Մահտեսի Պապեանց Բարսեղ	1
Մաղաքեանց Կարապետ	1
Մաթաֆեանց Ստեփաննոս.	1
Շահմազեանց Պօղոս	1
Զլնկարեանց Օրիորդ Հեղինէ	1
Պիճիկեանց Օրիորդ Կատարինէ	1
Պիճիկեանց Բագրատ	1
Ստեփաննեանց Տիգրան	1
Վարդանեանց Վարդանիկ.	1
Քաջազնունի Գիւլնիսիոս	1
Քէշիշեանց Կարապետ Թիֆլիզեցի	1

Ախալցխայից

Կանցեանց Մեսրովբ քահանայ	1
Գաֆայեանց Մկրտիչ	1
Ղազազեանց Գարեգին, դպիր	1
Պահլաւունի Ղազարոս, դպիր	1
Պօյաճեանց Կարապետ	1
Պօղլինեանց Մարտիրոս	1
Սարդարեանց Աղէքսանդր	1

Ագուլիսից

Առաքելեանց Խաչատուր, դպիր	1
Խոսրովեանց Խոսրով	1
Համբարձումեանց Ստեփան	1
Մնացականեանց Սարգիս	1
Մազմանեանց Կարապետ [1]	1
Շահնազարեանց Մատթէոս	1
Փանեանց Գասպար	1

Գանձակից

Շիրակունի Թէոդորոս վարդապետ, վանահայր Ս. Թարգ. վանից	3
Տէր Յակովբեանց Գրիգորիոս վարդապետ Ս. Էջմիածնայ միաբան	4
Մուրատեանց Մելքիսեդէկ վարդ. Ս. Երուսաղէմայ միաբան [2]	2
Տէր-Յարութիւնեանց Աստուածատուր վարդապետ [3]	1
Եպիսկոպոսեանց Պօղոս քահանայ, գործակալ	1
Տէր-Միքայէլեանց Անդրէաս քահանայ	1
Բաղալեանց Սարգիս քահանայ, Շամշադինայ վիճակի	1
Տէր Զաքարեանց Յովհաննէս քահանայ	1
Ազայեանց աղա	1
Աֆանասեանց Մկրտիչ	3
Առաքելեանց Աբրահամ	4
Ախվերդեանց Գաբրիէլ	1
Աստուածատուրեանց Յովհաննէս	1
Աղաբէգեանց Գրիգոր	1
Եպիսկոպոսեանց Մովսէս	2
Թէմուրեանց, Մնացական բժիշկ	1
Թայիրեանց Աղէքսանդր	1
Իսահակեանց Յովհաննէս	1
Լալայեանց Գրիգոր	1
Լիսիկեանց Յակովբ	3

---

[1]) Նուիրումէ Խոսրով Խոսրովեանցը:

[2]) Սորանից մի օրինակը խորին յարգանքով նուիրումէ Սոխակի հրատարակիչը.

[3]) Նուիրումէ Ն. Տէր-Ներսէսեանցը.

Կարագուլեանց Յովհաննէս .	1
Ղալումեանց Սերգէյ	2
Մալիեանց Աւետիք	1
Մելիքեանց Նիկողայոս	1
Մելիքեանց Կոստանդին	2
Մատինեանց Միհրդատ	1
Շահլամեանց Ներսէս [4])	1
Շահպարոնեանց Միքայէլ, բժշկապետ	5
Ս. Թարգմանչաց Ուսումնարան [5])	1
Տէր-Ներսէսեանց Ներսէս-	4
Տէր-Գէորգեանց Նիկողայոս [6])	1
Տէր-Ներսէսեանց Աբրահամ [*])	,,
Տէր-Աւետիքեանց Աւետիք, մանկավարժ	,,
Տէր-Մաթէոսեանց Պետրոս	,,
Տէր-Պետրոսեանց Գրիգոր	,,
Տէր-Զաքարեանց Համազասպ	,,
Փաթալեանց Յովհաննէս	,,

Դարբանդից

Տէր-Ղազարեանց Արսէն քահանայ	
Աղամջանեանց Աւետիս	1
Աստուածատրեանց Յովհաննէս	,,
Աղաբաբեանց Իվան	,,
Բաբայեանց Իսահակ	,,
Բինաթեանց Յովակիմ	,,
Ջիալեանց Գրիգոր	,,
Ջիալեանց Պօղոս	,,
Իլզարեանց Յովհաննէս	,,
Թոռոմեանց Աւետիս	,,
Իշխանեանց Ռափայէլ	,,
Խուբլարեանց Յակոբ	,,
Հայկազեանց Աւետիս	,,
Միքայէլեանց Աբգար	,,
Միսկինեանց Սարգիս	,,

[4]) Նուիրումն Ն. Տէր-Ներսէսեանցը.

[5]) Նուիրումն «Սոխակի» հրատարակիչը

[6*]) Նուիրումն Ն. Տէր-Ներսէսեանցը.

Շահնազարեանց Աննա	1
Շահիջանեանց Սարգիս	,,
Պօղոսեանց Նիկօլայ	,,
Պերոստեանց Խաչատուր	,,
Սառաջեանց Սօլոմոն	,,
Տէր-Մարտիրոսեանց Գաբրիէլ	
Օրբէլեանց Կարապետ	

Դավրէժից 2

Անդրէաս Արք Եպիսկոպոս	,,
Փափազեանց Մեսրովբ քահանայ	,,
Անտոնեանց Սրապիօն	1
Ասլանավերեանց Գրիգոր	,,
Գորոյեանց Աղեքսանդր	,,
Գիւլզատեանց Սամուէլ	,,
Թումանեանց Աղա մահտեսի Սիմօն	,,
Խուդավերդեան Յարութիւն	,,
Խիրղիմեանց Աղէքսանդր	,,
Համեան Յակովբ, Պօլսեցի	,,
Հայոց դրադարան [7])	2
Մուշեղեանց Մուշեղ Աղէքսանդրապօլցի	1
Նազարբէգեանց Մարգար	,,
Ներսէսեանց Մովսէս	,,
Տէր-Զաքարեանց Օհան	,,
Տէր-Յովհաննէսեանց Օհան.	,,
Ցէնտրալեան Յովակիմ, Պօլսեցի	

Երևանից(8)

Տէր-Յովհաննէսեանց Վահան քահանայ	1
Աւետեանց Ստեփանէ	,,
Գատեանց Գէորգ	,,
Թառոսեանց Գէորգ.	,,

[7]) Նուիրումն «Սոխակի» հրատարակիչը.

[8]) Իմ խորին շնորհակալութիւնը նուիրումեմ պ. Աշտարակեցի Խաչիկին, որ ինքն այլ քաղաքում լինելով Երևանից այսչափ բաժանորդագիր է հրաւիրել «Սոխակի» համար. Ռ. Գ.

Խաչատրեանց մահտեսի Պօղոս	1
Յարութիւնեանց Վասիլ	„
Տէր-Պօղոսեանց տիկին Շողակաթ	„
Տէր-Սարգսեանց Աղէքսանդր	„

Զաքաթալից

Ատովմեանց Յովհան աւագ քահանայ	1
Աղասանդեանց Յարութիւն.	„
Գրիգորեանց Վարդան	„
Խանզուլեանց Աւետիս	„
Հայոց գրադարան I եւ II հատորներ [9])	2
Հայրումեանց Ահարօն	1
Ղարախանեանց Աւետիք	„
Մելիք-Մուրադեանց Ղահրաման	„
Մարգարեանց Ալէքսան	„
Մնացականեանց Մկրտիչ	„

Էնզելից

Արիեանց Խրիստափոր, Ագուլեցի.	1
Գասպարեանց Իւան, Շուշեցի	„
Կուզնեցեանց Գասպար, Բաշտցի	„
Հախումեանց Թուման, Շուշեցի	„
Մինասեանց Կարապետ, Սպահանցի	„
Մելիք-Փաշայեանց Սարգիս, Շուշեցի	„
Յովսէփեանց Դաւիթ, Թաւրիզցի	„
Շաքարեանց Իսրայէլ, Շուշեցի	„
Շահնազարեանց Նազար, Թաւրիզեցի	„
Ոկլով Յակովբ, Աստրախանցի	„
Պարոնեանց Հայրապետ, Շուշեցի.	„
Ստեփանեանց Գէորգ, Շուշեցի	„
Վանիեանց Մկրտիչ, Ագուլեցի	„

Թէհրանից

Բժշկեանց Մկրտիչ.	10

9) Նուիրումէ «Մոխակի» հրատարակիչը

Ղուբայից

Աւշարեանց Աւագ քահանայ	1
Ադամալեանց Աւետիս, Շուշեցի	„
Առստամեանց Դանիէլ	„
Խաչատրեանց Խաչատուր Շուշեցի.	„
Մելիք-Փարսադանեանց Էյվազ, Ղափանցի	„
Յովսէփեանց Ազիզ, Շուշեցի	„
Պետրոսեանց Յովհաննէս, Շուշեցի	„
Սալամբէգեանց Բողդան	„
Սարումեանց Ներսէս	„
Վաքիլեանց Յարութիւն	„
Վաքիլեանց Մինաս	„
Քոչարեանց Սիմոն-	„

Ղզլարից

Քուչուբեգեանց Յովհաննէս (առանձին նամակով-	5

Նոր-Բայազետից

Բուդումեանց Յարութիւն	1
Գէորգեանց Թովմաս	„
Կարապետեանց մահտեսի Վարդան	„
Մամիկոնեանց Յարութիւն 10)	„
Տէր-Խաչատրեանց Խաչատուր, Տիտուլեարնի Սովէտնիկ-	15
Փիլոյեանց Սարգիս	3

Շամախուց

Բաղդասարեանց Սահակ վարդապետ	1
Աւշարեանց միքայէլ	„
Աւշարեանց Մեժնուն	„
Անտօնեանց Յովսէփ	„
Ակունեանց Համբարձում	„
Աշուղեանց մահտեսի Մարգարայ	„
Աթաբէգեանց Մկրտիչ	„
Ամիրեանց Սայադ	„

10) Նուիրումէ Աշտարակեցի Խաչիկը:

Բարամեանց Գէորգ, բժիշկ	1
Գեօզչյեանց Յակովբ-բէգ	,,
Եղիազարեանց Խաչատուր	,,
Զախարեանց Աղեքսանդր	,,
Թումանեանց Մարտիրոս	,,
Լալայեանց Աղեքսանդր	,,
Լալայեանց Իսահակ	,,
Համբարձումեանց Սարգիս	,,
Ղարաղաշեանց Միքայէլ	,,
Մինասեանց Միսակ [11]	,,
Միրզաբէգեանց Աղեքսանդր	,,
Մելիք-Բէգլարեանց Յովսէփ	,,
Մելիք-Շահնազարեանց Աղէքսանդր	,,
Ցերսէտեանց Պօղոս	,,
Զախմախսազեանց Ստեփան	,,
Տէր-Մարկոսեանց Պետրոս	2
Տէր-Խոսյեանց Յարութիւն	1

Ջալալ-Օղլուց

Տէր-Յակովբեանց Գալուստ քահանայ	1
Աղաջանեանց Մկրտիչ	,,
Դաւթեանց Շամիր	,,
Խսահակեանց Ղւկաս	,,
Յակովբեանց Գրիգոր	,,
Յարութիւնեանց Յարութիւն	,,
Յարութիւնեանց Ղրտաշէս	,,
Յակովբեանց Աղեքսանդր	,,
Զիթեանց Սարգիս	,,
Զաղինեանց Խանում	,,
Սարիբէգեանց Մնացական	,,
Տէր-Գրիգորեանց Սարգիս	,,

Ս. Էջմիածնից

Ծմբատեանց Մեսրովբ Եպիսկոպոս	1
Նսայեանց Յովհաննէս	,,

[11] Նուիրումէ Ս. Տէր-Յովհաննէսեանցը.

Մելիք-Օհանջանեանց Գէորգ Բէգ	1
Շահրիմանեանց Փիլիպոս, ոսկերիչ	,,
Սաթունեանց Դաւիթ Սարգաւակ, Աշտարակեցի	,,
Սմբատեանց Գաբրիէլ	,,
Տէր-Թադէոսեանց Վարդան, դպիր	,,
Տօնոյեանց Կարապետ	,,
Տէր-Մարտիրոսեանց Յովհաննէս	,,

Սալաթովից

Բաղդասարեանց Ղւետիք	1
Մկրտումեանց Յարութիւն	,,
Շիմտիկեանց Աղեքսանդր	,,
Ջահանեանց Գաբրիէլ	,,
Փամպուխչեանց Ստեփաննոս	,,
Քամպոտխչեանց Յակովբ	,,

Սիմֆերոպոլից

Սուրէնեանց Յակովբ աւագ քահանայ (առաձին նամակով)	3

Քանարակեռից

Ափթանդիլեանց Միրզայ, Թաւրիզեցի	2
Աղայեանց Յովհաննէս, Թաւրիզեցի	,,
Անանեանց Աւետ, Շուշեցի	,,
Աթաբեկեանց Իւան, Շուշեցի	,,
Բաբայեանց Սիմօն, Աստրախանցի	,,
Բաղդասարեանց Բէգլար, Շուշեցի	,,
Բաղդասարեանց Անդրէաս, Շուշեցի	,,
Բարանչեանց Իսահակ, Շուշեցի	,,
Գրիգորեանց Դաւիթ, Շուշեցի	,,
Գասպարեանց Ներսէսի, Թաւրիզեցի	,,
Դաւթեանց Կարապետ, Շուշեցի	,,
Եզնայեանց Իսահակ Բաքուեցի	,,
Թումայեանց Ստեփան Շուշեցի	,,
Իւզբաշեանց Ռոստամ Շուշեցի	,,
Իւզբաշեանց Բաբայ, Շուշեցի	,,
Խաչատրեանց Գրիգոր Շուշեցի	,,

Ծատուրեանց Յովսէփ, Շուշեցի	2
Կուրջիեանց Շամիր, Շուշեցի	4
Ղարագեօզեանց Նիկոլայ Շուշեցի	1
Մեհրաբեանց Ալեքսան, Ագուլեցի	,,
Յակովբեանց Մկրտիչ, Թաւրիզեցի	,,
Տէր- Յովհաննէսեանց Նիկոլայ	,,

Օդէսայից

Խորասանճեանց Գրիգոր քահանայ	1
Թամսիզեանց Պետրոս	,,
Մինասարեանց մահտեսի Մինաս	,,

Բագուից

Բուդաղեանց Թաթէոս աւագ քահանայ	3
Սապունչեանց Մկրտիչ աւագ քահանայ	1
Տէր-Յովհաննէսեանց Յովհաննէս քահանայ	,,
Տէր-Աբրահամեանց Աբրահամ քահանայ	,,
Միրզաբէգեանց Խորէն քահանայ	,,
Տէր-Ստեփանեանց Ստեփան քահանայ, 'ի Լանքարան	,,
Ապրէսեանց Յակովբ	3
Այվազեանց Գրիգոր	3
Ամիրեանց Թովմաս	2
Աղարեանց Պետրոս	1
Ադամեանց Մինաս, Շուշեցի	,,
Ադամեանց Յակովբ	,,
Ադամենաց Աբգար	,,
Ադամեանց Կարապետ եւ ընկ.	,,
Արզանգուլեանց Մկրտիչ, դպիր	,,
Ադամալեանց Սամուէլ	,,
Բաղիրեանց Սամուէլ	,,
Բաղրեանց Յովհաննէս Շամախեցի	,,
Բունեաթեանց Հայրապետ	,,
Գուրգէնեանց Սահակ	3
Գիլանցեանց Աղեքսանդր	,,
Դիլդարեանց Սամուէլ	,,
Դիլդարեանց Սաղաթիէլ	,,

Դաւթեանց Օհանջան	1
Նարամիշեանց Ալեքսան	,,
Ջօհրապեանց Յակովբ	,,
Էյվազեանց Ռստամբէգ, Զանգազուրցի	,,
Թումայեանց Գրիգոր	3
Թումայեանց Յովսէփ	1
Թաւաքալեանց Յարութիւն	,,
Թաւրիզեանց Աստուածատուր	,,
Թաւրիզեանց Յարութիւն	,,
Իւզբաշեանց Սարգիս, 'ի Խասաւ-իւրթ	5
Լալայեանց Գ. Ս. եւ Կ.	3
Ծատուրեանց Առաքել	2
Կրասիլնիկեանց Ներսէս	3
Կրասիլնիկեանց Սերգէյ	2
Կամսարականեանց Կարապետ	1
Հախումեանց Օհանջան	2
Հախումեանց Հայրապետ	1
Ղարագետեանց Յուստիանէ	,,
Ղարագետեանց Օրիորդ Մագթաղինէ	,,
Ղարագետեանց Յովհաննէս	,,
Մամիկոնեանց Աւետիք	3
Միրզոյեանց Միքայէլ, Աղեքսանդրապօլցի	2
Մելիքեանց Մինաս	2
Մելիքեանց Անդրէաս	1
Միրզաբէգեանց Գէորգ	,,
Միրզաբէգեանց Միրզաջան	,,
Միրզաբէգեանց Օրիորդ Խանում [12]	,,
Միրզաբէգեանց Յովհաննէս [13]	,,
Մաղաթեանց Միքայէլ	,,
Մակարեանց Սահակ	,,
Մայիլեանց Բաբայ	,,
Միրզայ-Աւագեանց Յովհաննէս	,,
Միրզայ-Աւագեանց Գրիգոր	,,
Մետնիկեանց Մաթէյ	,,
Մարգուլեանց Յակովբ	2
Մեհրաբեանց Ղեւոնդ	1

[13]) Նուիրումէ Ս. Տ.-Ց—ցը [12]) Ն. Սահակ Տէր-Յովհաննէսեանցը.

Յօնանեանց Խաչատուր	1
Յովհաննէսեանց Միրզաջան, ի Դ. ուբայ	"
Յովհաննէսեանց Սիմօն	"
Ներսէսեանց Արտեմ	2
Շանաբանդեանց Յովհաննէս	1
Շահկեղանեանց Միկիտ	"
Շահնազարեանց Յարութիւն	"
Ստեփանեանց Սաւատ [13]	"
Սերգէյեանց Աղեքսանդր	"
Սերգէյեանց Մովսէս	"
Սանամեանց Գրիգոր	"
Վարդանեանց Վարդան	2
Վարդանեանց Մկրտիչ	1
Վարձեգուլեանց Յովհաննէս	"
Վարդանեանց Ա.	"
Վարշամեանց Սերգէյ	"
Տէր-Յովհաննէսեանց Սիմօն	"
Տէր-Յովհաննէսեանց Սահակ	"
Տէր-Յակովբեանց Յովհաննէս	"
Տէր-Յակովբեանց Աղեքսանդր	"
Տէր-Գրիգորեանց Աւետիս	"
Տէր-Յովհաննէսեանց Մարգարայ	"
Տէր-Զաքարեանց Գրիգոր	"
Տէր-Խաչատրեանց Ջաւադ	"
Տէր-Յովհաննէսեանց Երեմեայ, դպիր	"
Տէր-Ստեփաննեանց Նիկօլայ	"
Տէրտէրեանց Աւետիս	"
Քալանթարեանց Եգոր	"
Քիւրքչեանց Գէորգ	"

[13]) Նուիրումէ Մ, Ադամեանցը.

Ծանօթութիւն. Մի քանի քաղաքներից «Սոխակի» բաժանորդագրութեան թերթերն ուշ ստանալով, չկարողացայ ժամանակին սորա հետ կցելու, ուստի խնդրումեմ ներողամտութիւն քիշեալ բաժանորդագրներից: Ա. Գրիգորեանց:

Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна

ԳԻՆՆԷ 1 ՌՈՒԲԼԻ․

ՀՀ Ազգային գրադարան
NL0385815

73.208